

*ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ*

**ԹՈՒՐԷԻԱՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
1991-2001 ԹԹ.**



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

GRIGOR ARSHAKYAN

THE POLICY OF TURKEY  
IN SOUTH CAUCASUS  
IN 1991-2001

YEREVAN  
NAS RA "GITUTIUN" PUBLISHING HOUSE  
2009

32(56)

ՆԻ-92


ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ

4219

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
1991-2001 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2009



ՀՏԳ 327 : 94/99  
ԳՄԳ 66.4 + 63.3  
Ա 921

Ֆրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ռ. Ա. ՍԱՖՐԱՍՅԱՆ

Գրախոս՝ պատմ. գիտ. դոկտոր, Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ

*ԱՐՇԱԿՅԱՆ Գ.Մ.*

Ա 921 Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991–2001 թթ.: – Եր.: «Գիտություն» հրատ., 2009. – 212 էջ:

Աշխատությունը նվիրված է 1991-2001 թթ. Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականությանը: Հեղինակի կողմից քննության հիմնական նյութ են դարձել Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության հիմնական նպատակներն ու խնդիրները, դրանց հիմնական ուղղությունները, առաջնահերթությունները և իրականացման մեթոդները: Հետազոտության մեջ լուսաբանվում են ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության վերածակվողունը Հարավային Կովկասում, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի հարաբերությունները, արցախյան հիմնահարցում և վրաց-արխազական հակամարտությունում Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը, Հարավային Կովկասում նրա աշխարհատնտեսական շահերը և հարավկովկասյան տարածաշրջանում ինչպես ռուս-թուրքական մրցակցության, այնպես էլ համագործակցության համար ստեղծված հիմնական նախադրյալներն ու դրանց զարգացման հեռանկարները:

Աշխատանքը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակների համար:

ISBN 978-5-8080-0806-9

ՀՏԳ 327 : 94/99  
ԳՄԳ 66.4 + 63.3

© Գ.Մ. Արշակյան, 2009 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

2008 թ. օգոստոսին վրաց-ռուսական հնգօրյա պատերազմից հետո Հարավային Կովկասն ակնհայտաբար եղավ նոր աշխարհաքաղաքական վերադասավորումների: Հարավային Կովկասի նոր ռազմաքաղաքական հարթության կարևոր դերակատարներից մեկը դարձավ Թուրքիան՝ Ռուսաստանի կողմից Արխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը ճանաչելուց հետո էականորեն ակտիվացնելով իր քաղաքականությունը հարավկովկասյան տարածաշրջանում: Դրա վկայությունն են Թուրքիայի կողմից «Կովկասյան Պլատֆորմի» գաղափարի առաջ քաշելը և հայ-թուրքական հարաբերություններում վերջին ժամանակներս նկատվող ակնհայտ տեղաշարժերը:

2008 թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ-ի և Թուրքիայի նախագահների երևայան հանդիպումից հետո տեղի ունեցած դիվանագիտական քննարկումները կարծես թե իր հանգուցավորումները հասավ 2009 թ. հոկտեմբերի 10-ին, երբ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանյանն ու Սիմեոն Դավթթյուն Տյուրիխի Համալսարանի գլխավոր սրահում ստորագրեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և ՀՀ-ի ու Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունները: Կարող ենք արձանագրել, որ հայ-թուրքական հարաբերությունները դրվեցին որակական նոր մակարդակի վրա:

Թուրքիայի 1991-2001 թթ. հարավկովկասյան քաղաքականության համապարփակ և համալիր ուսումնասիրությունը ներկայումս մեծ կարևորություն է ներկայացնում ՀՀ-ի համար՝ ինչպես ազգային անվտանգության, այնպես էլ հայ-թուրքական ներկա դիվանագիտական քննարկումների և զարգացումների տեսանկյունից: Ուսումնասիրությունն արդիական է և ունի կարևոր նշանակություն Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության հիմնական նպատակներն ու զերակայությունները հստակ պարզաբանելու համար:

Թուրքիայի Հանրապետության հարավկովկասյան քաղաքականության համակողմանի ուսումնասիրությունն ունի կարևոր քաղա-

քական նշանակություն՝ հետխորհրդային առաջին տասնամյակին թուրքիայի արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկի նպատակներն ու առանձնահատկությունները բացահայտելու համար: Չպետք է մոռանալ, որ հարավկովկասյան տարածաշրջանն ավանդաբար մեծ տեղ է զբաղեցրել թուրքիայի արտաքին քաղաքական գերակայությունների մեջ: Հարկ է նշել նաև, որ թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում բավականին լուրջ նշանակություն ունի հարավկովկասյան երկրների և մասնավորապես ՀՀ-ի համար:

Համաձայն մի շարք գիտնականների կողմից առաջ քաշված տեսության՝ խՍՀՄ-ի փլուզման արդյունքում թուրքիան կորցրեց իր նախկին կարևորությունը Արևմուտքի համար, և ի հայտ եկավ նրա աշխարհաքաղաքական մեկուսացման իրական վտանգ<sup>1</sup>:

Սենագրության մեջ մեջ կփորձենք հիմնավորել, որ իրականում խՍՀՄ-ի փլուզմամբ թուրքիայի համար ստեղծվեց նպաստավոր աշխարհաքաղաքական իրավիճակ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր աշխարհաքաղաքական ազդեցությունը հաստատելու համար, ինչին նպաստում էին ՄԱԽ-ի քաղաքական աջակցությունը և վերոհիշյալ տարածաշրջաններում Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) ռազմաքաղաքական դիրքերի թուլացումը: Նման պայմաններում թուրքիան կարողացավ որոշակի հաջողությունների հասնել Հարավային Կովկասում իր նպատակները իրականացնելու տեսակետից:

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից են թուրք-ադրբեջանական հարաբերությունները: Թուրքիան, Ադրբեջանի հետ Կովկասյան լեզվական, պատմամշակութային և քաղաքական սերտ կապեր, խՍՀՄ փլուզումից հետո լավ հնարավորություն ստացավ ամրապնդել իր դիրքերը Ադրբեջանում: 1990-ականների սկզբին թուրք-ադրբեջանական հարաբերությունների ընդլայնման և ամրապնդման համար առանձնակի կարևոր գործոն հանդիսացավ պանթուրքիզմի գաղափարակիր և թուրք-ադրբեջանական սերտ հարաբերությունների

կողմնակից Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ «Ազգային ճակատի» իշխանության գալը Ադրբեջանում:

1990-ականների երկրորդ կեսից Վրաստանի հետ թուրքիայի հարաբերությունների սերտացումը դիտվում է Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության մյուս կարևոր բաղադրիչներից մեկը: Ըստ էության, 1990-ականների կեսերին Անկարային հաջողվեց եականորեն ամրապնդել իր դիրքերը Ադրբեջանում և Վրաստանում, ինչը մեծապես պայմանավորված էր թուրք-արբեջանական և թուրք-վրացական ռազմաքաղաքական շահերի համընկումով և համագործակցության սերտացմամբ: Այս համագործակցությունը թուրքիայի համար լուրջ նախադրյալներ ստեղծեց ընդհանուր առմամբ հարավկովկասյան տարածաշրջանում իր համար չափազանց կարևոր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նախագծեր իրականացնելու համար:

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ձևավորման գործում իր նշանակությունն ունեցավ նաև նրա՝ ՆԱՏՕ-ի անդամ հանդիսանալը: Ադրբեջանն ու Վրաստանը, որդեգրելով ընդգծված արևմտյան կողմնորոշում, թուրքիան դիտում էին որպես տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակող գլխավոր պատմեչ, ինչպես նաև կարևոր գործընկեր ՄԱԽ-ի և ՆԱՏՕ-ի հետ մերձեցման ոլորտում: Ադրբեջանն Ադրբեջանի մեծապես շահագրգռված էին թուրքիան տարածաշրջանային անվտանգության համակարգի անբավարար մաս դարձնելու մեջ: Փաստորեն, հարավկովկասյան այս երկու երկրները թուրքիան դիտում էին որպես օժանդակող ուժ ՆԱՏՕ-ին իրենց հնարավոր անդամակցության հարցում:

Հարկ է նշել, որ Հարավային Կովկասում թուրքիայի և Ռուսաստանի միջև ընթացող հավանաբարություն իր ուրույն տեղն ունեցող թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ՝ հարկադրելով թուրքիային ավելի զուսպ, հավասարակշռված քաղաքականություն իրականացնել Հարավային Կովկասում: Այս համատեքստում ճիշտ է հավելել, որ թուրքիան ՀՀ-ի հանդեպ կիրառեց ճնշման հնարավոր բոլոր միջոցները, բացի ուղղակի ռազմական միջամտությունից:

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության մեջ մեծ կարևորություն էր ներկայացնում նաև թուրք-ուսական առևտրա-

<sup>1</sup> Տե՛ս օրինակ William Hale, Turkish Foreign Policy, 1774-2000, London, 2000, p. 192; Tareq Y. Ismael and Mustafa Aydin, Turkey's Foreign Policy in the Twenty-First Century: A Changing Role in World Politics, London, 2003, p. 140.

տնտեսական համագործակցությունը, որը 1990-ականների երկրորդ կեսից սկսեց արագորեն զարգանալ:

Հավելենք, որ թուրքիան աշխարհատնտեսական լուրջ շահեր էր հետապնդում Հարավային Կովկասում: Թուրքիան հարավկովկասյան և կասպիական ածխաջրածնային հարստությունների շահագործման, ինչպես նաև Աժժովյան ավազանի երկրների տնտեսական համագործակցության կազմակերպության ստեղծմամբ ձգտում էր ոչ միայն ստանալ հսկայական ֆինանսական եկամուտներ, այլև ընդլայնել իր երկկողմ և բազմակողմ տնտեսական կապերը տարածաշրջանի երկրների հետ՝ դրանով իսկ մեծացնելով իր ազդեցությունը ու դերակատարությունը տարածաշրջանում:

Մենագրությունում քննարկվող խնդիրների ուսումնասիրության սկզբնաղբյուրների շարքում են Հայաստանի Ազգային Արևիկի նյութերը: Կարևոր սկզբնաղբյուրներ են նաև ՀՀ արտգործնախարարության պատմադիվանագիտական բաժնի, ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Թուրքիայի բաժնի նյութերն ու տեղեկագրերը, որոնց թվում հատկապես մեծ արժեք են ներկայացնում 1990-ականների առաջին կեսին Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության լուսարանմանն ուղված հոդվածների և փաստաթղթերի ժողովածուները:

Աշխատության շարադրման համար կարևոր նշանակություն են ունեցել պաշտոնական հրատարակումները, քննարկվող շրջանի ակադեմիկոսի հայ և արտասահմանցի պետական-քաղաքական գործիչների հայտարարություններն ու ելույթները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոհիշյալ թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները:

Հետազոտվող թեմայի վերաբերյալ արժեքավոր փաստագրական նյութ է պարունակում պր շրջանի հայերեն, ռուսերեն, անգլերեն և թուրքերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրները, ուսումնասիրությունները և պարբերականները:

Թուրք հեղինակների աշխատություններում կան մի շարք կարևոր փաստեր ինչպես 1990-ականներին Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության, հարավկովկասյան և կասպիական ածխաջրածնային ռեսուրսների շուրջ ընթացող մրցապայքարում Թուրքիայի հետապնդած շահերի մասին, այնպես էլ տվյալ ժամանակահատվածում հետխորհրդային տարածաշրջանում ռուս-թուր-

քական սուր մրցակցության և հետագա համագործակցության համար ստեղծված նախադրյալների մասին<sup>2</sup>:

Հարկ է նշել, որ բազմաթիվ թուրք հեղինակներ իրենց աշխատություններում ոչ միայն խեղաթյուրում են պատմության իրադարձություններն ու նյութերը, միակողմանի ներկայացնում մի շարք պատմական փաստեր և իրողություններ հօգուտ Թուրքիայի շահերի, այլև ելնելով իրենց պանթուրքիստական քաղաքական հայացքներից և նախապատվությունից, նյութերի ընտրողական մոտեցում են ցուցաբերում՝ խիստ գերազնահատելով Թուրքիայի դերը ոչ միայն տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում<sup>3</sup>: Մասնավորա-

<sup>2</sup> Sever Metin, Kafdağı'nın Bu Yüzü: Türkiye'deki Kafkas Kökenliler, İstanbul, Doğan Kitapçılık, 1999, 190 s.; Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., «Русская панорама», 2004, 296 с.; Mustafa Aydın, Turkish Foreign Policy: Framework and Analysis, Ankara, Stratejik Araştırmalar Merkezi, 2005, 70 p.; Mustafa Aydın and Kostas Ifantis, International Security Today: Understanding Change and Debating Strateg, Ankara, Strategic Research Center, 2006, 249 p.; Mustafa Aydın, Regional Cooperation in the Black Sea and the Role of Institutions, Perceptions: Journal of International Affairs, Volume X, Autumn 2005, pp. 57-85; Mustafa Aydın, Turkey and Central Asia: Challenges of Change, Central Asian Survey, Vol. 15, 1996, pp. 157-177; Mustafa Aydın, Ethnic Conflict and Security in Central Asia and Caucasus: The Role of Turkey, Marco Polo Magazine, Vol. 3, 1998, pp. 1-7; Duygu B. Sezer, From Hegemony to Pluralism: The Changing Politics of the Black Sea, SAIS Review, vol. 17, №1, Winter-Spring 1997, pp. 1-30; Duygu B. Sezer, Turkish-Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition, Perceptions: Journal of International Affairs, Volume VI / March – May 2001, pp. 1-11; Mehmet Tütüncü, «The Caucasus Policy of Turkey (1990-97): An Evaluation», in Tütüncü, ed., Caucasus: War and Peace: The News World Disorder and Caucasus, Haarlem: SOTA, 1998, 224 p.; Suat Bilge, An analysis of Turkish- Russian Relations, Perceptions: Journal of International Affairs, Volume II / June-August 1997, pp. 1-12; İdil Tuncer, The Security Policies of the Russian Federation: The "Near Abroad" and Turkey, Turkish Studies, vol. 1, № 2, Autumn 2000, pp. 95-112.

<sup>3</sup> Nazmi Çora, Birleşik Türk Devletleri, İstanbul, «Q-Matris Yayınları», 2004, 227 s.; Zakir AŞA, Solak Ferruh, Türkiye ve Türk Cumhuriyetleri, Ankara, «Vadi Yayınları», 1998, 286 s.; Ramzan Özey, Dünya Platformunda Türk Dünyası, İstanbul, «Aktif Yayınevi», 1999, 353 s.; Toker Yalçın, Büyük Uyanış, İstanbul, «Toker Yayınları», 1992, 256 s.; Zeyno Baran, The Baku-Thilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey, The Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, May 2005, pp. 103-118; Ziya Onis, Turkey and Post-Soviet States: Potential and Limits of Regional Power Influence, MERIA, Volume 5, № 2 - June 2001, pp. 66-74; Mehmet Ögütçü, Caspian Energy "Poker Game" and Turkey: Prospects for a New Approach, the CEPMLP Internet Journal, Volume 8, Abstract 5, April 2001, www.dundee.ac.uk/cepmlp/journal/html/vol8/vol8-5.html.

պես Ռամզան Օզելը «Թյուրքական աշխարհը համաշխարհային քաղաքացիներով» գրքում ոչ միայն չափազանցում է «թյուրքական աշխարհի» դերը և աշխարհաքաղաքական նշանակությունը, այլև ընդգծված վառ գույներով է ներկայացնում «Թյուրքական Միության» (Türk Birliği) գաղափարը և դրանում Թյուրքիային հատկացված դերակատարությանը՝ «օրինակնանցնելով» Թյուրքիայի գերիշխանությունը Բալկաններում և Եվրասիայում<sup>4</sup>:

Մենագրության մեջ քննարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը և ճիշտ ընկալմանը մեծապես նպաստել են Ռ. Սաֆրաստյանի, Ն. Հովհաննիսյանի, Ա. Հովհաննիսյանի, Ա. Ավագյանի, Հ. Դեմոյանի արժեքավոր աշխատությունները, որոնք օգտակար են եղել հատկապես ՀՀ-ի նկատմամբ Թյուրքիայի արտաքին քաղաքականության նպատակները ուսումնասիրելիս: Հիշյալ աշխատությունները պարունակում են կարևոր փաստագրական և վերլուծական նյութ ԼՂ հիմնահարցում Թյուրքիայի դիրքորոշման և դրա դրապատճառների մասին<sup>5</sup>:

<sup>4</sup> Ramzan Özey, Dünya Platformunda Türk Dünyası, «Aktif Yayınevi», İstanbul, 1999, s. 20-57.

<sup>5</sup> Ռ. Սաֆրաստյան, Գնարավոր չէ 21-րդ դարում պատմելներ ստեղծել հարևանների միջև... Երևան, «Ձանգակ-97», 2003, 96 էջ: Ռ. Սաֆրաստյան, Ռուսաստանը և Թյուրքիան Գարավային Կովկասում, աշխարհառաջավարական զինադադար.- 21-րդ դար, թիվ 4, 2005, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, էջ 34-46; Сафрасян Р., Об идеологическом обосновании региональной политики Турции: Концепция Евразии, Южный Кавказ: региональная безопасность и стабильность.- Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой, Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, 2004, сс. 70-77; Сафрасян Р., Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 21, Երևան, «Ձանգակ-97», 2002, էջ 147-155; Ն. Հովհաննիսյան, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 16, Երևան, «Ձանգակ-97», 1996, էջ 9-19; Nicolay Hovhannisyanyan, The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, «Zangak-97», 1999, 112 p.; Оганесян Н., Некоторые особенности этнорегиональной политики Армении, Этническая и региональная политика Армении и Грузии, Материалы Круглого стола 16-19 апреля 1999 г., Ереван, «Эгея», 1999, сс. 53-66; Ն. Հովհաննիսյան, ԽՍՀՄ փլուզումը, «Թյուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-1995-ականների թուրքական հրապարակումների լուսաբանումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդ-

Ռուս հեղինակներ Ե. Ուռազովայի, Գ. Ստաշենկովի Կ. Շոռոխովի, Ա. Ավագյանի, Կ. Գաջիևի, Ա. ժիլգովի, Կ. Հուսեյնովի, Կ. Միսյանի, Ռ. Ավագովայի և այլոց աշխատությունները ևս մեծ դեր են խաղում ուսումնասիրության բեմայի տարբեր ասպեկտների պարզաբանման գործում<sup>6</sup>: Մասնավորապես՝ այս աշխատություններում ատկա են բազմաթիվ նշանակալից փաստեր, որոնք էապես նպաստում են հետխորհրդային տարածաշրջանում և մասնավորապես Գարավային Կովկասում Թյուրքիայի քաղաքականությունը, հարավկովկասյան էթնիկ հակամարտություններում ռուս-թուրքական մրցակցությունը, աղբյուրանական նավթի շուրջ ընթացող մրցապայքարում Թյուրքիայի քաղաքականությունն ավելի հստակ պատկերացնելու համար:

1990-ականներին հետխորհրդային տարածաշրջանում Թյուրքիայի վարած քաղաքականությունը, ինչպես նաև ռուս-թուրքական մրցապայքարում ատկա հիմնական գործոններն ավելի ճիշտ

ներ, թիվ 20, Երևան, «Ձանգակ-97», 2001, էջ 74-81; Ա. Ավագյան, Թյուրք ազգայնամուլների գործունեությունն Արդրբեջանում 1990-1994 թթ., Հայկական բանակ, 3 (49), «Ամսրաս», 2006, էջ 48-56; Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX — первая четверть XX вв.), Ереван, «Гитутюн», 2001, 421 с.; Демоян Г., Турция и Карабахский конфликт, Ереван, «Авторское издание», 2006, 255 с.

<sup>6</sup> Уразова Е., Экономическое сотрудничество Турции и тюрских государств СНГ, М., «АСТИ-ИЗДО», 2003, 208 с.; Старченков Г.И., Нефть и газ в экономике и политике Турции (XIX-начало XX вв.), М., ИВ РАН, 2003, 200 с.; Шорохов В., Политика Турции в Закавказье и национальные интересы России, в Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Европу?, Московский Центр Карнеги, вып. 14, 1997, сс. 46-67; Сваранк А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Монография, Москва, «Гуманитарий», 2002, 600 с.; Гаджиев К.С., Геополитика Кавказа, Москва, «Международные Отношения», 2003, 464 с.; Жильцов С. С., Зонин И. С., Ушаков А. М., Геополитика Каспийского региона, Москва, «Международные Отношения», 2003, 280 с.; Гусейнов В., Каспийская нефть, экономика и геополитика, М., «Олма Пресс», 2002, 380 с.; Митяев В.Г., Внутриполитическое развитие независимого Азербайджана в свете его геополитического положения // Развитие независимый Азербайджан: новые ориентиры: Монография, Т.1 М., РИСИ, 2000; Авакова Р. М., Лисова А.Г., Россия и Закавказье: Реалии независимости и новое партнерство, ИМЭМО РАН, М., «Финстатинформа», 2000, 224 с.

ըմբռնելու համար օգտակար են եղել արևմտյան հեղինակներ Ջ. Բեքզինսկու, Գ. Վինրոուի, Ա. Քորնելի, Է. Դերցհինգի, Պ. Դենզի, Դ. Կրամերի, Ա. Կաուֆմանի, Ա. Բիչկուի և Գ. Ֆուլերի, Ռ. Օլսոնի, Թ. Գոլցի և այլոց աշխատությունները<sup>7</sup>:

Վերջում ցանկանում են խորին շնորհակալություն հայտնել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Աաֆրաստյանին գիտական աշխատանքի ընթացքում իր ցուցաբերած մեծ աջակցության համար: Երախտագիտությանս խոսքերն են հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցություն են ունեցել աշխատության քննարկման, մշակման, խմբագրման և հրատարակման գործում:

<sup>7</sup> Zbigniew Brzezinski and Paige Sullivan, *Russia and Commonwealth of Independent States: documents, data, and analysis*, New York, M.E. Sharpe, 1997, 866 p.; Бжезинский З. Великая Шахматная Доска. Господство Америки и его геостратегические императивы, М., «Международные Отношения», 2002, 256 с.; Gareth M. Winrow *Turkey and the Caucasus: Domestic Interests and Security Concerns*, London, Royal Institute of International Affairs, 2000, 67 p.; Gareth M. Winrow, *Turkey and Newly Independent States of Central Asia and Transcaucasus*, MERIA, Volume 1, № 2 - July 1997, pp. 1-10; M. Gareth Winrow, *Turkey's relations with the Transcaucasus and the Central Asian republics: Perceptions*, *Journal of International Affairs*, March-May, 1996, pp. 128-145; Svante E. Cornell, *Undeclared War*, *Journal of South Asian and Middle Eastern Studies*, vol. 20, № 4, Summer 1997, pp.1-24; Svante E. Cornell, *Turkey and the Conflict in Nagorno Karabakh: A Delicate Balance*, *Middle Eastern Studies*, vol. 34, № 1, January 1998, pp.52-71; Svante E. Cornell, *The Nagorno-Karabakh Conflict*, Department of East European Studies, Uppsala University, 1999, 164 p.; Edmond Herzog, *The New Caucasus*, Armenia, Azerbaijan and Georgia, London, The Royal Institute of International Affairs, 1999, 165 p.; Paul B. Henze, *Turkey's Caucasian Initiatives*, *Foreign Policy Research Institute*, 2001, pp. 81-91; Heinz Kramer, *Will Central Asia Become Turkey's Sphere of Influence - Perceptions*, *Journal of International Affairs*, March-May, 1996, pp.1-7; Stuart Kaufman, *Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War*, London, Cornell University Press, 2001, 263 p.; Michael B. Bishku, *Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus*, *Journal of Third World Studies*, Vol.18 № 2, Fall 2001, pp. 1-8; Graham E. Fuller, *Turkey faces East: New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union*, Santa Monica, Rand Study, 1992, 70 p.; Robert Olson, *Turkish and Russian Foreign Policies, 1991-1997: The Kurdish and Chechnya Questions*, *Journal of Muslim Minority Affairs*, Vol. 18, Issue 2, Routledge, October 1998, pp. 209-228; Thomas Goltz, *Letter From Eurasia: The Hidden Russian Hand*, *Foreign Policy*, № 92, Fall 1993, pp. 92-116.

## ԳԼՈՒԽ 1

### ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՍ ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԻՑ ԴՅՏՈՒ

#### 1.1. ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԶԵԿԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՍ

Դարավային Կովկասը՝ որպես աշխարհաքաղաքական տարածաշրջան, միշտ էլ մեծ հետաքրքրություն է ներկայացրել թուրքիայի համար: 1920-ական թթ. հարավկովկասյան տարածաշրջանի խորհրդայնացումից հետո թուրքիան հարկադրված էր հրաժարվել Կովկասի հանդեպ ունեցած նկրտումներից, քանզի դա հանգեցնելու էր խորհրդային Միության հետ անմիջական առճակատման: 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով հաստատվեց խորհրդա-թուրքական սահմանը, որն ապահովեց 70-ամյա հարաբերական կայունություն: «Սառը պատերազմի» տարիներին ԽՍՀՄ-ի հետ ընդհանուր սահմանի առկայությունը մեծապես բարձրացնում էր թուրքիայի նշանակությունը Արևմուտքի համար, քանզի «Սառը պատերազմի» շրջանակներում Արևելք-Արևմուտք հակամարտության պայմաններում թուրքիան հանդիսանում էր կարևորագույն ռազմավարական և աշխարհաքաղաքական հենակետ Արևմուտքի համար Արևելքից սպառնացող սպառնալիքին դիմադրավելու գործում: Մասնավորապես, խորհրդային վտանգից Արևմտյան Եվրոպային պաշտպանության ընդհանուր համակարգում թուրքիան դիտվում էր որպես ՆԱՏՕ-ի հարավային թև:

Ըստ մի շարք տեսաբանների՝ 1980-ականների վերջին ԽՍՀՄ-Արևմուտք հակամարտության թուլացման և ԽՍՀՄ-ի փլուզման նախաձեռնների ի հայտ գալու պայմաններում թուրքիան սկսեց կորցնել իր նախկին նշանակությունը Արևմուտքի համար: Ասկայն միաժամանակ թուրքիայի համար առաջացան աշխարհաքաղաքական բարենպաստ պայմաններ, մասնավորապես, միջազգային այս փոփոխությունների համատեքստում թուրքիան սկսեց ակտիվացնել հա-

րաբերությունները խՍՀՄ մահմեդական հանրապետությունների հետ: Մասնավորապես, 1990 թ. Թուրքիան և Ադրբեջանը ստորագրեցին միջպետական պայմանագիր<sup>8</sup>: Միաժամանակ նկատվում էր թուրքական քաղաքականության ակտիվացում Կենտրոնական Ասիայում: 1991 թ. ընթացքում ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի հանրապետությունների ու Ադրբեջանի միջև, որոնք ընդգրկում էին տնտեսական, մշակութային, գիտական ոլորտները: Կարևոր նշանակություն ունեցավ 1991 թ. Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի այցը Խորհրդային Միություն, որը, բացի Մոսկվայից, ընդգրկեց նաև Ղազախստանն ու Ադրբեջանը<sup>9</sup>:

1991 թ. խՍՀՄ-ում տեղի ունեցած օգոստոսյան հեղաշրջման անհաջող փորձից հետո, երբ խորհրդային կայսրությունում առկա անջատողական գործընթացներն ավելի արագացան և ստացան անշրջելի բնույթ, Թուրքիայի ղեկավարությունը հնարավորություն ստացավ ավելի ակտիվացնելու իր կապերը վերոհիշյալ հանրապետությունների հետ: Այդ կապակցությամբ 1991 թ. սեպտեմբերին փորձառու ղեկավանգետ և ծանալված պատմաբան Բիլալ Շինձիրի գլխավորությամբ խՍՀՄ ուղարկվեց թուրքական պատվիրակությունը, որն այցելեց խորհրդային թյուրքալեզու հանրապետություններ<sup>10</sup>: Պատվիրակության խնդիրն էր պարզել այդ հանրապետությունների քաղաքական և մշակութային զարգացման հետանկարները: Անկարան փորձում էր հասկանալ, թե նրանք դեպի ուր են կողմնորոշվելու՝ Թուրքիա՞, թե՞ Իրան<sup>11</sup>: Այցը ցույց տվեց, որ 1991 թ. անկախության ուղին բռնած Կենտրոնական Ասիայի և Զարավային Կովկասի թյուրքալեզու երկրների ղեկավարները մեծ ուշադրություն էին ցուցաբերում դեպի Թուրքիան<sup>12</sup>: Այսպիսով, լինելով խորհրդային հսկայածավալ կայսրության հողեփաթրքի վկան՝ Թուրքիան 90-ական թթ. սկզբներին վերանայում է տարածաշրջանային իր գերակայությունները՝ ձգտելով ներթափանցել դեպի Զարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա:

<sup>8</sup> ՀՀ ՊԵ Իրազեկման և Կերտնության Բաժին, Զեկույց P 5, Երևան 1992, էջ 2:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>10</sup> Hürriyet, 25.09.1991.

<sup>11</sup> Heinz Kramer, Will Central Asia become Turkey's Sphere of Influence-Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, p. 3.

<sup>12</sup> Svante E. Cornell, The Nagorno-Karabakh conflict, Department of East European Studies, Uppsala University, 1999, p. 64.

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ այդ նոր շեշտադրումների ի հայտ գալը պատահական չէր. վերոհիշյալ տարածաշրջաններ ներգրավվելու համար Թուրքիան ուներ ներքին և արտաքին դրդապատճառներ: «Սառը պատերազմի» ավարտը Թուրքիան ընդունեց մեծ լարվածությամբ և սպասումներով: Նա լրջորեն անհամազուտում էր, որ «Սառը պատերազմի» ավարտի հետևանքով կարող է կորցնել Արևելք-Արևմուտք հակամարտությամբ պայմանավորված իր աշխարհաքաղաքական նշանակությունը՝ որպես արևմտյան աշխարհի արևելյան սահմանները պաշտպանող հենակետ, ինչն իր հերթին կհանգեցնեք տնտեսական և ռազմական օգնության ծավալների կրճատմանը: Դրա առաջին դրսևորումն էր Թուրքիային հատկացվող ռազմական օգնության չափերը կրճատելու մասին ԱՄՆ Կոնգրեսի կողմից 1990 թ. ընդունված որոշումը<sup>13</sup>: Երկրորդ, 1989 թ. Եվրոպական Դամայքի կողմից Թուրքիայի անդամակցության հայտի մերժումը հաստատեց թուրքերի մտահոգությունն առ այն, որ Եվրոպան հետխորհրդային աշխարհակարգի պայմաններում այլև չունեք Թուրքիայի կարիքը, որպես խՍՀՄ հարավային սահմանների մոտ իր հենարանի<sup>14</sup>: Եվ ի վերջո Զարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նորանկախ թյուրքալեզու հանրապետությունների վրա իր ազդեցության օգնությամբ Թուրքիան ցանկանում էր ոչ միայն վերականգնել իր ռազմավարական կարևորությունը Արևմուտքի համար, այլև օգտագործել այդ գործոնը Եվրոպական Դամայքի վերջնական անդամակցության հարցում<sup>15</sup>:

Ներքին դրդապատճառները ունեին տնտեսական և քաղաքական քաղաքիչներ: Տնտեսական տեսանկյունից նորանկախ իսլամադավան հանրապետությունները թուրքական արտահանման համար հանդիսանում էին նոր շուկա, ինչպես նաև գազի և նավթի նոր ռեսուրսների աղբյուր էին, որոնց կարիքը խիստ զգում էր Թուրքիան<sup>16</sup>: Քաղաքական տեսանկյունից 1989 թ. Եվրոպական Դամայք-

<sup>13</sup> Гаджиев К.С., Геополитика Кавказа, М., 2001, с. 346.

<sup>14</sup> Sabri Sayari, Turkey: The Changing European Security Environment and the Gulf Crisis.- Middle East Journal, Vol. 46, № 1, Winter 1992, p. 11.

<sup>15</sup> Ազիլի Ժանրոսման տես **Baskın Öran**, The Turkish Approach to Transcaucasia and Central Asia, in Ole Hoiris and Sefa Martin Yürükel, eds., Contrasts and solutions in the Caucasus, Aarhus: Aarhus University Press, 1998, p. 462.

<sup>16</sup> Zakir Avşar, Feriuh Solak, Türkiye ve Türk Cumhuriyetleri, Ankara, 1994, s. 7.

քի կողմից թուրքիայի անդամակցության հայտի մերժումից հետո, թուրքիայի հնարավոր նոր դերը՝ որպես թյուրքական համապետությունների համայնքի ղեկավարի էականորեն կարծրացման նրա միջազգային դիրքը, ինչպես նաև կուլտուրայի մեկուսացման մտավայտության խնդիրը<sup>17</sup>:

Այսպիսով, «Սառը պատերազմի» ժամանակաշրջանի կանոնների փոփոխության և թուրքիայի համար վերոհիշյալ նոր աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում նրա արտաքին քաղաքականությունը ենթարկվեց կտրուկ շրջադարձի, վերանայվեց նրա տեղն ու դերը աշխարհում ընդհանրապես, և տարածաշրջանում՝ մասնավորապես: Դա հանգեցրեց նրան, որ ինչպես թուրքիայի ղեկավարության, այնպես էլ հասարակական-քաղաքական մտքի շրջանակներում սկսվեց ակտիվորեն քննարկվել նոր արտաքին քաղաքականություն մշակելու անհրաժեշտության հարցը: Սակայն այս գործընթացում թուրքիայի առջև ծառայել էին որոշակի խնդիրներ: Արտաքին քաղաքական գերակայությունների որոշման հարցի շուրջ թուրքիայում լուրջ քննարկումներ էին զգում, և առկա էին տարբեր դիրքորոշումներ նոր աշխարհակարգի պայմաններում թուրքիայի դերակատարության վերաբերյալ:

Թուրքիան, գտնվելով իր արտաքին քաղաքական գերակայությունների ընտրության կողմնորոշման գործընթացում, իր առջև ուներ հետագա զարգացման հիմնական երեք ուղղություններ: Արդիականացման կողմնակիցները ցանկանում են թուրքիան տեսնել որպես եվրոպական պետություն, հետևաբար նայում են դեպի Արևմուտք: Ծայրահեղ իսլամիստները հավելած են դեպի Մերձավոր Արևելք և մահմեդական թյուրքալեզու համայնքները, ուստի նայում են դեպի Հարավ: Անդրադառնալով պատմությանը՝ ազգայնականները թյուրք ժողովուրդների նոր դերակատարությունը տեսնում են Կասպիական ավազանի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում՝ նայելով դեպի Արևելք: Այս երեք ուղղությունների կողմնակիցների քայլումները հանգեցնում են որոշ անվստահության թուրքիայի տարածաշրջանային դերի հարցում<sup>18</sup>:

<sup>17</sup> Baskin Oran, նշվ. աշխ. էջ 463:

<sup>18</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Бжезинский З.** Великая Шахматная доска, М., 1998, с 161.

Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր գերակայությունների մշակման գործընթացում 90-ականների սկզբներին ակտիվացան «Եվրասիական» ուղղություն կողմնակիցները, ինչի արդյունքում 90-ականների սկզբներից երկրի քաղաքական քննարկումներում կարևոր տեղ էր գրավում «Եվրասիայի ռազմավարությունը», որը համարվում է թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարությունը, նրա միջազգային հարաբերությունները և ազգային անվտանգությունը արտահայտող հիմնական ռազմավարություններից մեկը:

Ժամանակակից թուրքիայի քաղաքական և գաղափարական քննարկումներում «Եվրասիա» եզրին ավելի շուտ տրվում է քաղաքական, քան թե հստակ գիտական իմաստ: Օրինակ, թուրքիայի նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելը վերոհիշյալ տարածաշրջանի բաղկացուցիչ մաս էր համարում Բալկանները, Կովկասը, Կենտրոնական Ասիան, Մերձավոր Արևելքը, Թուրքիան, Իրանն ու Իրաքը, իսկ նախկին փոխվարչապետ և պաթյուրքիստական Ազգային շարժում կուսակցության նախագահ Դևլեթ Բահչեյին Եվրասիայի կազմում ներառում է Բալկանները, Կովկասը և Մերձավոր Արևելքը<sup>19</sup>:

Թուրք վերլուծաբաններն ու հետազոտողները, օգտագործելով Եվրասիայի վերաբերյալ արևմտյան հեղինակների դասական աշխարհաքաղաքական մոտեցումները, փորձեցին կազմել սեփական ռազմավարություններ, որոնք էապես տարբերվում էին արևմտյան հեղինակների տեսակետներից: Մասնավորապես, Մարմարա համալսարանի պրոֆեսոր Ռամզան Օզելը նախապատրաստել էր «Թուրքերի կենտրոնական գերիշխանության» կոնցեպցիան, համաձայն որի, «Ամատուլիան հանդիսանում է «Աշխարհի ամրոցը», ուստի Թուրքիան, տիրապետելով Ամատուլիան, հնարավորություն է ստանում վերահսկելու Բալկաններն ու Եվրասիան: Սրանով իսկ Օզելը, հաշվի առնելով թուրքիայի աշխարհագրական դիրքը, օրինականացնում էր թուրքիայի գերիշխանությունը Բալկաններում և Եվրասիայում»<sup>20</sup>:

<sup>19</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Сафрастьян Р.**, Об идеологическом обосновании региональной политики Турции: Концепция Евразия-Южный Кавказ: региональная безопасность и стабильность. Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой. Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, 2004, сс. 70-71.

<sup>20</sup> См. в том же месте, с. 72.

Թուրքիայի քաղաքական վերնախավում նոր արտաքին քաղաքականության ձևավորման գործընթացի շուրջ քննարկումներն ավելի ակտիվացան 1991 թ. դեկտեմբերին Խորհրդային Միության փլուզումից հետո:

Թեև ԽՍՀՄ-ի և Արևմուտքի միջև մերձեցման գործընթացը բուրբ քաղաքական գործիչների մոտ ստեղծեց մեկուսացման և խոցելիության զգացումներ, մեր կարծիքով, Խորհրդային Միության փլուզումը Թուրքիային նոր ռազմավարական հնարավորություններ ընձեռեց: Կոմունիստական վարչակարգի տապալումը Ռուսաստանում, Չարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում կրոնական և էթնիկական հատկանիշներով Թուրքիայի հետ ընդհանրություն ունեցող հանրապետությունների ի հայտ գալը Անկարայի համար ստեղծեց բարենպաստ պայմաններ: Ինչպես նշում է բուրբ գիտնական Օմեր Քոջամանը «Չեխոսլովակիայի աշխարհակարգը Թուրքիայի համար նոր աշխարհ բացեց, իսկ դրա հետ մեկտեղ՝ հնարավորություն՝ դուրս գալու երկակի մեկուսացումից. մի կողմից Եվրոպայից, որն իրեն մերժել էր, մյուս կողմից՝ արաբական Արևելքից, որն իրեն չէր ընդունում»<sup>21</sup>:

ԽՍՀՄ փլուզումը և Չարավային Կովկասում ինքնիշխան պետությունների ի հայտ գալը հիմնարար կերպով փոխեց Թուրքիայի եվրասիական քաղաքականությունը: Չարավային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից մեծ կարևորություն էր ներկայացնում Թուրքիայի համար: Ուստի Թուրքիան սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու Չարավային Կովկաս: Այդ ուղղությամբ նրա առաջին քայլերից մեկը եղավ Ադրբեջանի և Վրաստանի հետ սերտ հարաբերություններ հաստատելու քաղաքականությունը:

Չարավկովկասյան տարածաշրջանում Թուրքիայի աշխարհատնտեսական շահերը մեծապես պայմանավորված էին Թուրքիայի ծոցումով ոչ միայն ձեռք բերելու իր արդյունաբերական ապրանքների արտահանման նոր շուկաներ, այլև բավարարելու իր տարեցտարի աճող էներգակիրների պահանջարկն ի հաշիվ կասպիական և միջինասիական տարածաշրջանի նավթի և գազի պա-

շարների: Իր տարածքով վերոհիշյալ տարածաշրջանի էներգակիրները դեպի Եվրոպա տարանցման երթուղիների ստեղծումը բարձրացնում էր Թուրքիայի ռազմավարական նշանակությունը որպես կամուրջ Արևմուտքի և կասպիական ու միջինասիական տարածաշրջանի միջև: Թանի որ ճանապարհը դեպի Կասպից ծով և Կենտրոնական Ասիա ընկած էր Չարավային Կովկասով, Թուրքիան շահագրգռված էր այդ տարածաշրջանների քաղաքական կայունությանը և այդ իսկ պատճառով Ադրբեջանի և Վրաստանի անկախությունն ու տարածքային անողջականությունը համարում էր իր ռազմավարական նպատակներից մեկը<sup>22</sup>:

Այս համատեքստում անվտանգության տեսանկյունից թեև Թուրքիայի համար խորհրդային գերտերության կողմից սպառնացող վտանգը վերացել էր, այնուամենայնիվ Չարավային Կովկասում ընթացող ազգամիջյան հակամարտություններն իրենց մեջ պարունակում էին լուրջ վտանգ տարածաշրջանում երկարատև անկայունության ստեղծման տեսակետից: Աս, անկասկած, անցանկալի էր ոչ միայն Թուրքիայի, այլև նրա արևմտյան գործընկերների համար: Այս համատեքստում, ինչպես նշում է Ելենա Ռուազովան. «Թուրքիան, ջանալով ակտիվորեն ներգրավվել հետխորհրդային տարածաշրջանում ընթացող գործընթացներին, փորձում էր ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Դրանով իսկ Թուրքիան ցանկանում էր ՆԱՏՕ-ի հարավային հենակետից դառնալ Արևմտյան և Եվրասիական աշխարհները կապող աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կամուրջ՝ բարձրացնելով իր կարգավիճակը Արևմուտքի աչքերում որպես տարածաշրջանում նոր համընդհանուր տեղեկների «ուղեցուցիչ»<sup>23</sup>:

Թուրքիան Չարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր քաղաքականությունն իրականացնելիս ստացավ Արևմուտքի աջակցությունը, որի դրդապատճառների մասին են վկայում 1992 թ.

<sup>21</sup> Кожман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., с. 85.

<sup>22</sup> Ali Karaosmanoğlu, Turkey Objectives in the Caspian Region, The Security of the Caspian Region.- Oxford: University Press, 2001, p. 151; Mustafa Aydın, Ethnic Conflict and Security in Central Asia and Caucasus: The Role of Turkey.- Marco Polo Magazine, Vol. 3, 1998, p. 45; Mustafa Aydın, Turkish Foreign Policy: Framework and Analysis, Ankara, Stratejik Araştırmalar Merkezi, 2005, p. 63.

<sup>23</sup> Уразова Е., Экономическое сотрудничество Турции и тюрских государств СНГ, М. 2003, сс. 22-23.

նոյեմբերին ԱՄՆ-ի լրատվամիջոցների հրապարակումները, որտեղ նշվում էր, որ Թուրքիան փորձում էր օգնել նոր մահմեդական երկրներին դառնալու աշխարհիկ պետություններ՝ կամրջի դեր կատարելով Արևմուտքի, Բալկանների և Մերձավոր Արևելքի միջև: «Տարածաշրջանում, որտեղ խոր էքնիկական հակասություններ ու թշնամություն կա, Թուրքիայի հետ բարեկամությունը կենսական նշանակություն ունի Արևմուտքի համար»<sup>24</sup>:

Հետխորհրդային ժամանակաշրջանում Թուրքիայի աշխարհաբաղաբական և ռազմավարական նշանակության մեծացումը և Արևմուտքի կողմից այդ փաստի ընդունումը որոշիչ գործոններ հանդիսացան Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսի ձևավորման գործում: Օգտվելով ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի դիրքերի և ուղեցույթային էական թուլացումից և ունենալով Արևմուտքի արջակցությունը՝ Թուրքիայի ղեկավարները սկսեցին հավակնոտ հայտարարություններ անել, թե իբր Թուրքիայի գլխավորությամբ ստեղծվելու է 120 միլիոն բյուրջալեզու բնակչությամբ նոր բյուրջական աշխարհ: Մասնավորապես, Թուրքիայի նախագահ Թուրգուք Օզալը, ի լուր ամբողջ աշխարհի հայտարարեց, որ 21-րդ դարը լինելու է «Թյուրքական դար»<sup>25</sup>:

Իսկ ավելի ուշ նորանկախ բյուրջալեզու հանրապետություններ իր այցելության ժամանակ Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հայտարարեց, որ նոր բյուրջական աշխարհ և նոր քարտեզ է ձևավորվում: Հինգ նոր դրոշմեր իրենց կիսալուսիններով ավելացել են Թուրքիայի դրոշի կողքին: Մեծ բյուրջական աշխարհը տարածվելու է Ադրիատիկից մինչև Հիբանական ծով<sup>26</sup>:

Թուրքիայի պետական շրջանակներում տիրող այս ոգեշնչման պայմաններում կրկին վերածնվեց այսպես կոչված «Թյուրքական միասնության» գաղափարը, որը 90-ականների սկզբներին ակտիվորեն քննարկվում էր բյուրջական մամուլում: Օրինակ, «Յենի Ֆրոնում»

ամսագրի էջերում տեղ գտած «Ուշադրություն դեպի բյուրջական աշխարհը» վերնագրով ծավալուն հոդվածում վերլուծվում են այն լծակները, որոնք Թուրքիան կարող է օգտագործել ներքապանցելու համար նորանկախ բյուրջալեզու հանրապետությունները, մասնավորապես՝ կրոնական գործոնը<sup>27</sup>: Հոդվածում նշվում էր, որ Թուրքիայի ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ իր արտաքին քաղաքաբանության մեջ նա երկարատև միայնության մեջ է եղել: Ըստ հոդվածագրի, Թուրքիան չի պատկանում ո՛չ արաբական աշխարհին, ո՛չ եվրոպային, ո՛չ սլավոնական, ո՛չ էլ անգլո-սաքսոնական աշխարհին: Լինելով մուսուլման՝ թուրքերը չեն կարող վստահել քրիստոնյաներին, լինելով աշխարհիկ պետություն՝ դուրս են մնում նաև իսլամական աշխարհից: «Մեր միակ հույսը մեր բյուրջալեզու եղբայրներն են»<sup>28</sup>:

Աշխարհաքաղաքական որոշ փոփոխությունների համատեքստում Թուրքիան մեծապես փորձեց օգտվել այն հանգամանքից, որ Խորհրդային Միության փոխարեն Դարավային Կուկլատուն հայտնվեցին երեք նորանկախ հանրապետություններ՝ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, իսկ Կենտրոնական Ասիայում՝ հինգ մահմեդական հանրապետություններ՝ Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը և Տաջիկստանը, որտեղ ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացել էր քաղաքական վակուում: 90-ականներից այդ վակուումը լրացնելու համար լուրջ մրցակցություն էր գնում Թուրքիայի և Իրանի միջև: Այդ մրցապայքարում Արևմուտքը ետևակ աջակցություն ցուցաբերեց Թուրքիային, քանզի Արևմուտքը լուրջ մտավախություն ուներ, որ նորանկախ իսլամադավան երկրները կարող էին ընկնել իրանական իսլամափոստական վարչակարգի ազդեցության տակ: Ուստի ԱՄՆ-ի կողմից առաջ քաշվեց «թուրքական մոդելը», որպես հակակշիռ իրանական կրոնապետության<sup>29</sup>: Եւթեք, որ «թուրքական մոդելն», ըստ էության, իրենից ներկայացնում էր մեծամասամբ մահմեդական բնակչություն և ժողովրդավարական հա-

<sup>24</sup> Гаджиев К.С., *Ուշ. աշխ.*, էջ 347:

<sup>25</sup> Jolyon Naegele, Turkey: Foreign Policy Objectives- Part Two, RFE/RL, 13.08.1998, [www.binfo.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe](http://www.binfo.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe); Turkish Daily News, 05.06.1992.

<sup>26</sup> Daniel Pipes, *The Event of Our Era*, New York: Council on Foreign Relations Press, 1994, p.16; Gareth M. Winrow, *Turkey's Relations with the Transcaucasus and the Central Asian Republics. - Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, p. 136.

<sup>27</sup> Սեքեբուսում ըստ, Ամուշ Հովանմիսյան, ԽՍՀՄ-ի փլուզումը. «Թուրք միասնության» գաղափարը և Դարաբայից հարքը (1990-1995-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ).- Մեծավոր և Սիդի Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 20, Երևան, 2001, էջ 76:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>29</sup> Heinz Kramer, *Will Central Asia Become Turkey's Sphere of Influence. - Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, p. 2.

մակարգ ունեցող աշխարհիկ պետություն, որը սերտորեն համագործակցելու էր Արևմուտքի հետ:

Սույն քաշելով «թուրքական մոդելի» գաղափարը՝ ԱՄՆ-ը ցանկանում էր իր ամենավատահիշ դաշնակիցներից մեկի՝ Թուրքիայի օգնությամբ ոչ միայն վերացնել իրանական ապառնալիքը հետխորհրդային տարածաշրջանում, այլև օգտագործել Թուրքիան՝ հասանելու իր գլխավոր նպատակներից մեկին՝ հնարավորինս բուլացնելու Ռուսաստանի ազդեցությունը նորաստեղծ ԱՊՀ տարածաշրջանում: Այս հարցի շուրջ Թուրքիայի և ԱՄՆ-ի շահերը համընկնում էին, քանզի Թուրքիան ոչ միայն եսպես շահագրգռված էր ամրապնդելու իր դիրքերը Ֆարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում, այլև հանդես գալու, որպես Ռուսաստանին հակակշռող գործոն հետխորհրդային տարածաշրջանում: Ուստի Թուրքիան ողջունեց Արևմուտքի դիրքորոշումը, ինչը հնարավորություն էր ընձեռնում նրան ամրապնդելու իր դիրքերը միջազգային բառերաբեմում, մասնավորապես Ռուսաստանի և Իրանի հետ տարածաշրջանային նրցապայքարում:

Նշենք, որ «թուրքական մոդելի» գաղափարն առաջ է քաշվել ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեքքերի կողմից: Նա 1992 թ. սկզբներին Կենտրոնական Ասիայի երկրներ այցելության ժամանակ նորանկախ հանրապետությունների ղեկավարներին խորհուրդ է տալիս օգտագործել «թուրքական մոդելը» իրենց երկրների քաղաքական և տնտեսական զարգացման համար<sup>30</sup>: Սակայն պետք է ընդգծել, որ «թուրքական մոդելի» ռազմավարության հեղինակն իրականում ամերիկյան RAND վերլուծական կենտրոնի առաջատար մասնագետներից պրոֆ. Գրեհմ Ֆուլերն էր<sup>31</sup>: Շուտով «թուրքական մոդելի» իրենց աջակցությունը հայտնեցին նաև ԱՄՆ և Եվրոպական այլ քարտրաստիճան պաշտոնյաներ: Մասնավորապես 1992 թ. փետրվարի 13-ին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Ղեմիրլիլի հետ հանդիպումից հետո ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը Թուրքիային որակեց «որպես ժողովրդավարական, աշխարհիկ պետության մոդել, որը կարող է օրինակ ծառայել Կենտրոնական Ասիայի երկրների համար»<sup>32</sup>: «Թուր-

քական մոդելին» իր աջակցությունը հայտնեց նաև Եվրոպայի հարիրդի գլխավոր քարտուղար Կատրին Լալունդերը, որը 1992 թ. հունիսին Կենտրոնական Ասիայի երկրներ իրականացրած իր այցելության ժամանակ նշել է, որ «Թուրքիան ապահովում է ընդունելի մոդել Ասիայի նորանկախ երկրներից շատերի զարգացման համար»<sup>33</sup>: Թուրքիայի ղեկավարությունը լավ էր հասկանում, թե ինչպիսի կարևորություն է ներկայացնում Արևմուտքի համար, ուստի փորձում էր օգտվել ստեղծված նպաստավոր պայմաններից՝ էականորեն ուժեղացնելու իրենց ազդեցությունը որչ տարածաշրջանում:

«Թուրքական մոդելի» իրականացման գործընթացում 90-ականների հենց սկզբից Թուրքիայի և Եվրոքալեզու երկրների միջև նկատվում էր մերձեցման մեծ ներուժ և ձգտումներ: Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամ և վայելելով Արևմուտքի աջակցությունը, 1990-ականների սկզբներին բացառիկ հետաքրքրություն էր ներկայացնում նորանկախ Եվրոպայում մահմեդական հանրապետությունների համար, ուստի Թուրքիայի ակտիվ ներքափանցումը վերոհիշյալ երկրներ սկզբնական շրջանում վայելում էր տեղի իշխանությունների աջակցությունը, քանզի նրանք Թուրքիայի օգնությամբ ձգտում էին ոչ միայն զարգացնել իրենց տնտեսությունները, Արևմուտքից ստանալ ֆինանսական աջակցություն, այլ նաև ինտեգրվել եվրատլանտյան կառույցներին<sup>34</sup>: Ուստի պատահական չէ, որ նորանկախ մահմեդական երկրները Թուրքիային ցուցաբերում էին բացահրկուց ջրմ վերաբերմունք: Այսպես, Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը, անդրադառնալով Թուրքիային, նշել է. «Նախկինում գոյություն է ունեցել միայն մեկ անկախ թուրքական պետություն, դա եղել է Անատոլյան թուրքերը, որոնք եղել են մեր խորհրդանիշը անկախության համար: Սենք ունենք իսլամ միլիոն թուրք բարայրներ Անատոլիայում: Սենք ընտրում ենք Թուրքիան որպես մեր պետության մոդել»<sup>35</sup>: Ավելի ուշ Թուրքիա կատարած այցելության ժամանակ Ուզբեկստանի նախագահ Իսլամ Բարիժովը ընդգծել է. «Մեր օրինակը Թուրքիան է, մենք մեր երկիրը ստեղծելու ենք այս օ-

<sup>30</sup> Heinz Kramer, նշվ. աշխ. էջ 6.

<sup>31</sup> Ռոբերտ Սաֆրաստյան, Ռուսաստանը և Թուրքիան Գարավային Կովկասում. աշխարհագրաօգնակարական գիմարադար. - 21-րդ դար. 2005, քիվ 4, էջ 36:

<sup>32</sup> Idris Bal, The Turkish Model and the Turkic Republics. - Perceptions: Journal of International Affairs, September-November 1998, p. 5.

<sup>33</sup> Idris Bal, նշվ. աշխ. էջ 5.

<sup>34</sup> Gareth M. Winrow, Turkey and Newly Independent States of Central Asia and Transcaucasus - Middle East Review of International Affairs Journal (MERIA), Volume 1, № 2 - July 1997, p. 6.

<sup>35</sup> Yalçın Tokar, Büyük Uyanış, İstanbul: Tokar Yayınları, 1992, s. 61.

րինակով: Ես պաշտպանում եմ թյուրքական ժողովրդի միավորման գաղափարը, այս միավորումը պետք է տեղի ունենա: Բացի քաղաքական միավորումից, տնտեսական միավորում էլ կարող է տեղի ունենալ, դուք կարող եք դա անվանել թուրքական Ընդհանուր Հուկա<sup>36</sup>»: Իսկ Դրոզստանի նախագահ Սևկար Ականը թուրքիան համեմատել է առավոտյան աստղի հետ՝ նշելով, որ «Թուրքիան առավոտյան աստղ է, որը մյուս թյուրքերին ցույց է տալիս ճշմարիտ ուղին»<sup>37</sup>: Այսպիսով նորանկախ մահմեդական հանրապետությունները թուրքիային դիտում էին իբրև թյուրքալեզու աշխարհի առաջնորդի, իսկ Ուզբեկստանի նախագահ Իսլամ Զարիմովը թուրքիայի նախկին վարչապետ Սուլեյման Դեմիրելի հետ հանդիպման ժամանակ նրա անվանեց ավագ եղբայր:

Թուրքիան նույնպես գործնական քայլեր էր ձեռնարկում՝ զարգացնելու իր հարաբերությունները նորանկախ թյուրքալեզու հանրապետությունների հետ: Սասնավորապես, 1991 թ. հոկտեմբերին թուրքիայի արտաքին գործերի նախարարությունում հատուկ բաժին է ստեղծվում, որը պետք է զբաղվեր նորանկախ թյուրքալեզու հանրապետությունների հետ հարաբերություններով<sup>38</sup>: 1992 թ. սկզբներին թուրքիան հիմնադրեց Թուրքական Համագործակցության և Ջարգացման Գործակալությունը (TİKA), որի նպատակն էր բարելավել հարաբերությունները թյուրքալեզու հանրապետությունների հետ, ինչը կնպաստեր սերտացնելու հարաբերությունները տնտեսական, մշակութային, հեռահաղորդակցության և այլ բնագավառներում<sup>39</sup>:

Թուրքիան մեծապես շահագրգռված էր զարգացնելու տնտեսական հարաբերություններն ԱՊՀ թյուրքալեզու երկրների հետ: Մասնավորապես թուրքիայի կողմից հիմնադրված թուրքական Առևտրի և Ջարգացման Բանկը միլիոնավոր դոլարների վարկեր էր տրամադ-

րում նորանկախ երկրներին: Թուրքական ընկերություններն ակտիվորեն ներգրավված էին նորանկախ հանրապետությունների հեռահաղորդակցության, շինարարության և այլ ոլորտներում: Բացի այդ 1993 թ. թուրքիայում հիմնվեց նախկին ԽՍՀՄ թյուրքալեզու հանրապետությունների հետ տնտեսական կապերի հարցերով հատուկ նախարարություն<sup>40</sup>: Թուրքիան նաև մեծ ֆինանսական ներդրումներ էր անում մահմեդական հանրապետություններում: 1990-ականների սկզբներին թուրքիան ավելի քան 1 միլիարդ դոլարի վարկային գիծ էր քաջել Կենտրոնական Ասիայի հանրապետությունների համար<sup>41</sup>: Թուրքիան, հետխորհրդային տարածաշրջանում իրականացնելով ակտիվ տնտեսական, ֆինանսավարկային քաղաքականություն, դրանով իսկ ծգտում էր հանդես գալ որպես կամուրջ Արևմուտքի և Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի միջև, որի ամենակամառու դրսևորումներից էր թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հայտարարությունը, ըստ որի թուրքիան ԱՊՀ թյուրքալեզու հանրապետությունների համար ծառայում է որպես «պատուհան դեպի արտաքին աշխարհ»<sup>42</sup>:

Այսպիսով, ԽՍՀՄ փլուզման առաջին տարիներին թուրքիան, օգտվելով ստեղծված նպաստավոր պայմաններից, որոշակի հաջողություններ ունեցավ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նորանկախ թյուրքալեզու հանրապետությունների հետ հարաբերությունների զարգացման գործընթացում:

Ալենհայտ է, որ «թուրքական մոդելի» իրականացման մյուս կարևոր նպատակն ուղված էր հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության թուլացմանը: Ուստի թուրքիայի ակտիվ քաղաքականությունը հետխորհրդային հանրապետություններում առաջացնում էր Ռուսաստանի լուրջ մտահոգությունը, որը հանգեցնում էր ռուս-թուրքական հարաբերությունների լարվածության:

Հաշվի առնելով 90-ականների սկզբներին Արևմուտքի և թուրքիայի գնալով մեծացող ներգրավվածությունը հետխորհրդային տարածաշրջանում, Ռուսաստանում առկա ներքաղաքական և տ-

<sup>36</sup> Idris Bal. նշվ. աշխ. էջ 6

<sup>37</sup> Ibid.:

<sup>38</sup> Tercüman, 19.10.1991.

<sup>39</sup> Куратов А. Турция и тюркоязычные государства Центральной Азии: любовь по расчёту? // Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Евразию?, с. 24. Ziya Onis, Turkey and Post-Soviet States: Potential and Limits of Regional Power.- MERIA, Volume 5, № 2, June 2001, p. 2. Kemal Kaya, Turkish Policy Over Central Asia, I C T S (Italian Center for Turkish Studies), Occasional Papers Series, № 01, 2008, p. 4.

<sup>40</sup> Сваранц А. Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002, с. 170.

<sup>41</sup> Saat Bilg, An Analysis of Turkish- Russian Relations. - Perceptions: Journal of International Affairs, Volume II / June-August 1997, p. 10.

<sup>42</sup> ИТАР-ТАСС, 30.08.1995.

ցիալ-տնտեսական ծանր իրավիճակը և արտաքին հարաբերություններում իր համար ոչ բարենպաստ մթնոլորտը, Ռուսաստանը մշակեց արտաքին հարաբերությունների բնագավառում նոր հայեցակարգային մոտեցումներ, որոնք 1993 թ. ապրիլին հռչակվեցին, իբրև պաշտոնական քաղաքականության հիմնադրույթներ: Հենց այդ ռազմավարական մոտեցումներն էլ շուտով վերածվեցին ՌԴ գոլտրիինալ քաղաքականության հիմնադրույթների, որտեղ էական նշանակություն էր տրվում ԱՊՀ-ին<sup>43</sup>: Ռուսաստանի քաղաքական և ռազմական ղեկավարները հայտարարեցին, որ ԱՊՀ-ն հանդիսանում է Ռուսաստանի «լեցնական շահերի ղղրտը»: Մասնավորապես, 1994 թ. փետրվարին Ռուսաստանի ԱԳ նախարար Անդրեյ Կոզիրևը նշեց. «Մենք չենք կարող հեռանալ հարավկովկասյան տարածաշրջանից այսբան հեշտությամբ: Մենք պատմական և աշխարհաքաղաքական շահեր ունենք այստեղ»<sup>44</sup>:

Ռուսաստանը սկսեց ակտիվորեն ներգրավվել և ուժեղացնել իր ազդեցությունը ԱՊՀ երկրներում: Հարավային Կովկասում իր դիրքերը վերականգնելու համար Ռուսաստանը օգտագործեց տարածաշրջանային հակամարտությունները, ինչը ընտան էր ՌԴ արտաքին քաղաքականության հիմնադրույթներից: Այսպես՝ 1993 թ. նոյեմբերի 2-ի ՌԴ նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով հաստատվեց ռուսական ռազմական գոլտրինը, որտեղ որպես առաջնահերթ նպատակներ, նշվում էին հակամարտությունների և ռազմական գործողությունների կանխումը և խաղաղության հաստատումը<sup>45</sup>: Ռուսաստանի և թուրքիայի շահերը անմիջականորեն բախվեցին Հարավային Կովկասում, մասնավորապես հայ-ադրբեջանական և վրաց-աբխազական հակամարտություններում<sup>46</sup>:

Ռուսաստանի ակտիվ ներգրավվածությունը ԱՊՀ ողջ տարածաշրջանում հանգեցրեց նրան, որ թուրքիայի դիրքերը սկսեցին

բուլանալ: Սա անկասկած իր ազդեցությունը ունեցավ «թուրքական մոդելի» քաղաքականության վրա, որն 1993-94 թթ. գնաց ձախողման: «Թուրքական մոդելի» քաղաքականության ձախողումն ուներ մի բանի պատճառներ:

Հնայած 90-ականների հենց սկզբից թուրքալեզու երկրների միջև մերժման մեծ ներուժին և ձգտումներին՝ միջինասիական հանրապետությունների հետագա քաղաքականությունը վկայում է այն մասին, որ վերջիններս, այնուամենայնիվ, գերադասեցին «թուրքական մոդելից» դրական օրինակներ քաղելով հանդերձ, զարգացման սեփական ուղի ընտրել: Նրանք չէին ցանկանում լինել Թուրքիայի ենթակայության տակ գտնվող երկրներ և նախընտրեցին Արևմուտքի, Ռուսաստանի և այլ երկրների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունները զարգացնել ինքնուրույն<sup>47</sup>: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ Թուրքիան տնտեսապես հանձնատարան թույլ երկիր էր: Թուրքիայի տարածաշրջանային հավակնոտ նախագծերը և նրա ջանքերը Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում նախամիջին Անկարայի սահմանափակ կարողությունների պատճառով<sup>48</sup>:

Այսպիսով, ռուսական զորքերի առկայությունը Կրասնանում, ԳԴ-ում և Տաջիկստանում, հզոր տնտեսական լծակները՝ զազը և էներգակիրները, և նրա կարողությունը՝ վերահսկելու տարածաշրջանային հակամարտությունները, ստիպեցին տարածաշրջանի ղեկավարներին ուշադրություն դարձնել Ռուսաստանի ցանկություններին<sup>49</sup>: Սյուս կողմից, «թուրքական մոդելը» կորցրեց իր գրավչությունը ինչպես հետխորհրդային համայնությունների, այնպես էլ Արևմուտքի համար: Թուրքական քաղաքական համակարգը, ի վերջո, այնքան էլ գրավիչ չէր Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի ղեկավարների համար, որոնք քիչ շաի ունեին իրենց ներքներում խրախուսելու ավելի լայն քաղաքական մասնակցություն և բազմակարծությունը: Իր հերթին Արևմուտքը հասկացավ,

<sup>43</sup> Adee Dawisha and Karen Dawisha, *The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia*, New York, 1995, pp. 96-97.

<sup>44</sup> Zbigniew Brzezinski and Paige Sullivan, *Russia and Commonwealth of Independent States: documents, data, and analysis*, New York, 1997, pp. 145-146.

<sup>45</sup> Idil Tuncer, *The Security Policies of the Russian Federation: The "Near Abroad" and Turkey* - Turkish Studies, vol 1, № 2, Autumn 2000, p. 100; Svante E. Cornell, *ճշվ. աշխ.*, էջ 49; Габушев К.С., *ճշվ. աշխ.*, էջ 215:

<sup>46</sup> Այս հակամարտություններին և նրանցում առկա շահերի բախման ավելի համազանցողիկ անդրադարձ կկատարենք 3-րդ գլխում:

<sup>47</sup> Igor Torbakov, *Ankara's Post-Soviet Efforts in the Caucasus and Central Asia: The Failure of the "Turkic World" Model*, [www.casianet.org/departments/insight/articles/eav122602\\_pr.shtml](http://www.casianet.org/departments/insight/articles/eav122602_pr.shtml).

<sup>48</sup> Mustafa Aydın, *Turkey and Central Asia: Challenges of Change* - Central Asian Survey, Vol. 15, 1996, p. 158.

<sup>49</sup> Коджаман О., *ճշվ. աշխ.*, էջ 161:

որ իր սկզբնական մտավայրություններն Իրանի ազդեցության առնչությամբ չափազանցված են<sup>50</sup>։

ԱՆկասկած, 90-ականների սկզբներին Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության կարևոր քաղաքաշիններից էր նաև ԽՍՀՄ փլուզման հետևանքով Թուրքիայում նոր թափով սկիզբ առած պանթյուրքիզմի գաղափարախոսության դրսևորումները։ 90-ականների սկզբներին Թուրքիայի մի շարք գիտնականներ, քաղաքագետներ և որոշ պաշտոնատար անձինք սկսեցին հայտարարել պանթյուրքիզմի քաղաքականության իրականացման անհրաժեշտության մասին։ Ըստ Այդըն Յալչինի, Խորհրդային Միության փլուզումը և կոմունիզմի վարկաբեկումն «ապահովել են հասարակական մտքի աջակցությունը պանթյուրքիզմին»<sup>51</sup>։

Հատկանշական է, որ Թուրքիայի դիվանագիտական շրջանակներն ավելի զգուշորեն էին ձևակերպում պանթյուրքիստական կոնցեպցիայի վերածնունդն՝ այն որակելով ոչ թե սերտորեն փոխկապված թյուրքական քաղաքական միություն, այլ թյուրքական երկրների խումբ, որտեղ Թուրքիան ունենալու էր տնտեսական և քաղաքական ղեկավարող դեր։ Օրինակ, Թուրքիայի արտգործնախարարության դարձրատստիճան պաշտոնյա Բիլալ Սամջըրը արտահայտել էր իր դիրքորոշումը նեոպանթյուրքիզմի գաղափարի վերաբերյալ՝ նշելով, որ այն կարող էր հանգեցնել Սկանդինավյան միության, Արաբական երկրների լիգայի կամ Ամերիկյան երկրների կազմակերպության նման մի միության։ Բնականաբար, Թուրքիան առաջատար դեր էր խաղալու նման կազմակերպության ձևավորման հարցում։ Ըստ նրա, ճիշտ չէր այն որակել որպես պանթյուրքիզմ կամ էքսպանսիոնիզմ, քանի որ, եթե սկանդինավները, արաբները և մյուս ժողովուրդները ունեն նման միություն, ապա թյուրք ժողովուրդներին ևս դա կարելի է<sup>52</sup>։

Ավելի արմատական երանգներ էին պարունակում թյուրքական ծայրահեղ ազգայնականների և պանթյուրքիստների հրապարակումները, որոնց կարծիքով ԽՍՀՄ փլուզման արդյունքում «թյուրքական աշխարհի» միավորման պլաններն իրական հեռանկարներն էին ստացել։ Որպես օրինակ կարող է ծառայել Մարմարայի համալսարանի պրոֆեսոր Ռամզան Օզեյի կողմից հրատարակված «Թյուր-

քական աշխարհը համաշխարհային թատերաբեմում» գիրքը։ Գրքում հեղինակը տալիս է թյուրքական աշխարհի ընդարձակ բացատրությունը, նրա աշխարհաքաղաքական առանձնահատուկ նշանակությունը ներկայում և ապագայում։ Ըստ Օզեյի հավաքումների, «թյուրքական աշխարհի» բնակչության ընդհանուր թիվը կազմում է 250 մլն, որոնց գերակշիռ մեծամասնությունը բնակեցված են եվրասիական տարածաշրջանի տարածքներում՝ Ադրիատիկից մինչև Հիմաստան։ Օզեյը նաև ընդգծում է «թյուրքական աշխարհի» աշխարհաքաղաքական մեծ նշանակությունը և շեշտում է, որ Թյուրքական Միության (Türk Birliği) գաղափարը պաշտպանում են ոչ միայն հետխորհրդային թյուրքական հանրապետությունների ղեկավարները, այլև՝ «թյուրքական աշխարհի» ժողովուրդները<sup>53</sup>։

Ըստ էության, «թյուրքական մոդելի» քաղաքականությունը պանթյուրքիզմի նորագույն դրսևորումներից էր, որը Թուրքիան իրականացնում էր բացառապես, և նրա շրջանակները ընդգրկում էին ԱՊՀ նորանկախ թյուրքալեզու մահմեդական հանրապետությունները։

Պանթյուրքիզմի քաղաքականության իրականացման մեջ առանձնահատուկ կարևորություն էին ներկայացնում նաև Ռուսաստանի մաս կազմող ինքնավար մահմեդական հանրապետությունները<sup>54</sup>։ Թուրքիայի որոշ շրջանակներ ակտիվ քայլեր էին ձեռնարկում ուժեղացնելու իրենց ազդեցությունը Ռուսաստանի մաս կազմող մահմեդական շրջաններում, մասնավորապես՝ Թաթարստանում, Բաշկորտոստանում, Յակուտիայում և հատկապես հյուսիսկովկասյան հանրապետություններում։ Մասնավորապես, թյուրքական հատուկ ծառայություններն ու պանթյուրքիստական կազմակերպությունները մեծ ջանքեր էին գործարարում՝ իրականացնելու տարածաշրջանային ինտեգրման տարբեր նախագծեր՝ «Կովկասյան միություն», «Կովկասի իսլամական համադաշնություն», «Կովկասյան տուն», որի գլխավոր նպատակն էր ստեղծել Ռուսաստանի կազմից դուրս Հյուսիսկովկասյան համադաշնություն կամ միություն։ Իսլամաշրջանային միության» գաղափարը նպատակ էր հետապնդում ստեղծելու միություն, որի մեջ ընդգրկվելու էին Ադրբեջանը, Վրաստանը և հյուսիսկովկասյան հանրապետությունները։ Այս նախագծում մասնակցում

<sup>50</sup> Ziya Onis, նշվ. աշխ., էջ 4։

<sup>51</sup> Цит. по, Коджаман О., նշվ. աշխ., էջ 87։

<sup>52</sup> См. в том же месте.

<sup>53</sup> Ramzan Özey, Dünya Platformunda Türk dünyası, İstanbul, 1999, s. 22-23.

<sup>54</sup> Сваранц А., նշվ. աշխ., էջ 301։

էին պաշտոնական Բարձրի և Թբիլիսիի առաջին դեմքերը, նրանց մերձավոր շրջապատը և աղբրեջանական ու վրացական հատուկ ծառայությունները<sup>55</sup>:

Թեև Թուրքիան պաշտոնական մակարդակով հայտարարում էր, թե չի աջակցում պանթուրքիզմի դրսևորումներին, սակայն դա իրականությանը չէր համապատասխանում: Օրինակ, 1993 թ. Թուրքիայում Թյուրքական Պետությունների և Համայնքների Ընկերակցության, Եղբայրության և Համագործակցության Հիմնադրամի (TÜDEV) ֆինանսավորմամբ Անկարան կազմակերպեց թյուրքական պետությունների և համայնքների ասամբլեաները: Այդ պանթուրքական ժողովին մասնակցելու համար Թուրքիա էին ժամանել պատվիրակություններ ոչ միայն Յուսիսային Կիպրոսից, Կենտրոնական Ասիայից և Հարավային Կովկասից, այլ նաև պատվիրակություններ ՌԴ թյուրքալեզու հանրապետություններից՝ Թարաստանից, Բաշկորտոստանից, Յակուտիայից<sup>56</sup>: Թեև այս ժողովները ոչ պաշտոնական բնույթ էին կրում և չէին արտոնվել Թուրքիայի արտգործնախարարության կողմից, սակայն թուրքական ազդեցիկ քաղաքական գործիչները ներառյալ նախագահ Թ. Օզալը, վարչապետ Ս. Դեմիրելը և ԱԳ նախարար Թ. Չիլլերը հարկ համարեցին ներկա գտնվելու այդ ժողովներին և ելույթ ունենալու: Հիշարժան են հատկապես 1994 թ. Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի խոսքերը. «Երկար տարիների ընթացքում մենք կիսում էինք Ռուսաստանի գերիշխանության տակ գտնվող եղբայրական երկրների ճակատագիրը: Ռուսական գերիշխանությունից ազատված ժողովուրդները պետք է դողան վատակառն անկախության համար: Թուրքիայի հետաքրքրությունը տարածաշրջանային գործերում ելնում է «թյուրքական հասարակության» իրավիճակի հանդեպ նրա խորը պատասխանատվությունից»<sup>57</sup>:

Հատկանշական է, որ բացի Ռուսաստանից Հարավային Կովկասում Թուրքիան իր պանթուրքիզմի քաղաքականության իրականացման գլխավոր խոչընդոտ համարում էր ՀՀ-ն: Թուրքիան Հարավային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու և Աղբրեջանը որպես ցատկահարթակ օգտագործելու միջոցով Կենտրոնական Ասիա ներթափանցելու խնդիր ուներ՝ թյուրքալեզու հանրապետությունների

տնտեսական, քաղաքական և մշակութային միություն ձևավորելու հետահար նպատակով: Ուստի, ՀՀ-ն իր գոյությանը նրա երկարամյակ շահերի խոչընդոտ համարվեց<sup>58</sup>: Դեռևս պանթուրքիզմի հիմնդիրներից Յուսուֆ Աքչուրան Հայաստանը նույնացնում էր «թմբի» հետ: 1920 թ. հունվարի 29-ին Աքչուրան Ստամբուլի համալսարանում ներկաներին դիմելիս, պատճառաբանելով, թե դաշնակիցները նրան իբրև թուրք ուզում են կանգնեցնել երկու եղբայր ժողովուրդների՝ Անատոլիայի և Կովկասի թրթուրյալ միջև, հետևյալ կոչն էր անում. «Պետք է ոչնչացնել Հայաստանը»<sup>59</sup>:

ՀՀ-ն և Արցախը, որպես «Մեծ Թուրան» պետության գլխավոր խոչընդոտ էր համարվում նաև աղբրեջանի Լեսիք Լեսիքազդեի կողմից առաջ քաշված «Աղբրեջանի առաքելությունը՝ Նոր Թուրանի ստեղծման տեսանկյունից» ներթուրանիզմի կոնցեպցիայում, որտեղ հեղինակը նշում էր, որ Նոր Թուրանում ամենակարևոր դիրքը պատկանում էր Աղբրեջանին, քանի որ այն գտնվում էր «Թուրանի սրտում»: Հետևաբար, Աղբրեջանի սպառնացող վտանգը սպառնալիք էր ապագա Թուրան պետության համար: Ուստի պետք էր կանխել Արցախի անջատումն Աղբրեջանից և խանգարել ՀՀ-ի ուժեղացմանը տարածաշրջանում<sup>60</sup>:

Թյուրքական աշխարհի ներսում Աղբրեջանի կարևորությանն է անդրադարձել նաև թուրք հեղինակ Մուգաֆեր Օզդաղը իր «Թուրքիան և թյուրքական աշխարհի աշխարհաքաղաքականությունը» գրքում: Ըստ հեղինակի, աշխարհի թուրքախոս բնակչության մոտ 80%-ը բնակվում է Թուրքիա-Աղբրեջան-Թուրքեստան շրջանում: Այստեղ թուրքախոս բնակչության թիվը հասնում է մոտ 130 միլիոնի: Թուրքիան և Թուրքեստանը թյուրքականության երկու ուժային բևեռն են, իսկ Աղբրեջանը հանդիսանում է այս երկուսը միավորող սրբազան կամուրջ<sup>61</sup>: Նա նաև նշում է, որ իրենց համար գոյություն ունի թյուրքականությունից դուրս, թյուրքական աշխարհին օտար պզերի ազգ, այլ իրենց համար գոյություն ունի փառավոր անցյալով

<sup>55</sup> Հավրոն Չաքրյան, Հայ-թյուրքական հարաբերությունները Անթուրիայի և Միջին Արևելքի քաղաքական գաղափարների ենթատեքստում. - 21-րդ դար, 2003, թիվ 1, էջ 101:

<sup>56</sup> Չարիվանդ, Միացյալ անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 119:

<sup>57</sup> Ավելի մանրամասն տե՛ս Անուշ Դավանճիսյան, նշվ. աշխ., էջ 78-79:

<sup>58</sup> Ավելի մանրամասն տե՛ս Muzaffer Özdamar, Derleyen: Çetin Güney, Türkiye ve Türk Dünyası Jeopolitiği, Ankara, 2003, s. 295.

<sup>55</sup> Сваранц А., նշվ. աշխ., էջ 165.

<sup>56</sup> Gareth M. Winrow, Turkey and Newly Independent States..., p. 4.

<sup>57</sup> Независимая Газета, 10.03.1996.

և փայլուն ապագա ունեցող, մեծ թյուրքական ազգի երկիր հանդիսացող եղբայրական Ադրբեջան<sup>62</sup>։

Այսպիսով, ԳԴՆ իր գոյությամբ խոչընդոտ էր հանդիսանում թյուրքալեզու ժողովուրդների միավորման թուրքական տրամաբանությանը։ Ասկայն այստեղ հարցը միայն թուրքերի ադրբեջանցիներից տարանջատվելը չէր, այլև Դարավայրին Կովկասում Ռուսաստանի թուլացման ամերիկյան ծրագրերն էին, որոնց իրականացման գործում թուրքիան մեծ պատրաստակամություն էր հայտնել։

Պանթյուրքիզմի նմանատիպ դրսևորումների կապակցությամբ թուրքական «Միլլիեթ» թերթին տված հարցազրույցում թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալբերտ Չերնիշևը, անդրադառնալով Կովկասում և Կենտրոնական Ասիայում թուրքիայի ազդեցության ուժեղացմանը և պանթյուրքիզմի դրսևորումներին, նշեց, որ Ռուսաստանը նորմալ է վերաբերվում այդ երկրների հետ թուրքիայի հարաբերությունների զարգացմանը։ Ասկայն այդ հարաբերությունների զարգացմանը չպետք է տեղի ունենա պանթյուրքիզմի շրջանակներում։ Եթե թուրքիայի և այդ հանրապետությունների միջև հարաբերությունները զարգանային ըստ միջազգային նորմերի ու չափանիշների, անհանգստության որևէ պատճառ չէր լինի<sup>63</sup>։

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության կարևոր բաղադրիչներից էր թուրք-ադրբեջանական հարաբերությունները։ Դարավայրին Կովկասում թուրքիան հենց սկզբից նախապատվությունը տվեց Ադրբեջանին։ Թուրք-ադրբեջանական հարաբերությունների ընդլայնման և ամրապնդման համար առանձնակի կարևոր գործոն հանդիսացավ Արուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ «Ազգային ճակատի» իշխանության գալը։ Նրա ժամանակ թուրքիայի և Ադրբեջանի միջև ձեռք բերվեց սկզբնաբային պայմանավորվածություն Բաքու-Ջեյհան նամբատարի կառուցման վերաբերյալ։ Նախագահ ընտրվելուց հետո Էլչիբեյն սկսեց վարել խիստ թուրքամետ և ընդգծված հակաթուրքական քաղաքականություն։ Նա իրեն համարում էր պանթյուրքիզմի գաղափարակիր և թուրք-ադրբեջանական սերտ հարաբերությունների կողմնակից<sup>64</sup>։ 90-ականների սկզբներին

<sup>62</sup> Muzaffer Özdag, Derleyen: Çetin Güney, Եզվ. աշխ., էջ 297.

<sup>63</sup> Milliyet, 26.04.1993.

<sup>64</sup> Graham E. Fuller, Turkey Faces East: New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union, Santa Monica, RAND, 1992, p. 56; Саарану А. Եզվ. աշխ., էջ 167:

Թուրքիայի իշխանությունները հսկայական ուշադրություն էին դարձնում Ադրբեջանին, քանզի Ադրբեջանը կարևոր տեղ էր զբաղեցնում պանթյուրքիզմի և «թուրքական մոդելի» քաղաքականության գործընթացում, ինչպես նաև թուրքիայի համար խիստ կարևոր նշանակություն ունեցող ադրբեջանական նավթը, որի նկատմամբ խիստ մեծացել էր թուրքիայի և Արևմուտքի հետաքրքրությունը։

Ա. Էլչիբեյի հակառուսական տրամադրվածությունն էպպես նպաստում էր Ադրբեջանում թուրքիայի ազդեցության ամրապնդմանը։ Օրինակ, 1992 թ. դեռևս լինելով նախագահի թեկնածու՝ Էլչիբեյը հայտարարել էր, որ Ադրբեջանը չի անդամակցելու ԱՊԴ-ին; 1992 թ. հոկտեմբերին Ադրբեջանի խորհրդարանը միաձայն դեմ էլիբեյին ԱՊԴ-ին Ադրբեջանի անդամակցությանը<sup>65</sup>։ Թուրքիան իր անվերապահ աջակցություն էր հայտնում Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի շրջը հայ-ադրբեջանական հակամարտությունում։ Այս հակամարտությունում թուրքիան ոչ միայն դիվանագիտական, քաղաքական, ֆինանսական, այլ նաև ռազմական աջակցություն էր ցույց տալիս Ադրբեջանին։

Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանն էականորեն խթանեց Արուլֆազ Էլչիբեյի իշխանության տապալումն Ադրբեջանում, որի գլխավոր պատճառը Գյանջալիում Սուրեթ Դուսեյնովի գլխավորությամբ բարձրացրած ապստամբությունն էր։ 1993 թ. հունիսի 4-ին զնդապետ Դուսեյնովի գլխավորած զորքերը, շարժվելով դեպի Բաքու, ստիպեցին Էլչիբեյին հրաժարական տալ և Բաքվից փախչել Նախիջևան, ինչի արդյունքում Ադրբեջանում իշխանության եկավ Նախիջևանի Մեջլիսի նախագահ, Ադրբեջանի կոմկուսի նախկին առաջին քարտուղար Զեյնալը Ալիևը, որն էլ շուտով Սուրեթ Դուսեյնովիին նշանակեց վարչապետ<sup>66</sup>։ Ադրբեջանում տեղի ունեցած իշխանափոխությունը խիստ բացասական արժանացրեց ունեցավ թուրքիայում։ Ալիևի իշխանության օրոք ադրբեջանական ղեկավարությունը որոշակի շտկումներ մտցրեց չափից ավելի միակողմանի թուրքամետ արտաքին քաղաքականության մեջ՝ դադարեցնելով մի շարք

<sup>65</sup> Коджаман О., Եզվ. աշխ., էջ 114:

<sup>66</sup> Յոնան դե Կաալ, Ան այդի: Դայաստանն ու Ադրբեջանը՝ խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007, էջ 303; Paul B. Henze, Turkey's Caucasian Initiatives, Foreign Policy Research Institute, 2001, p. 89; Svante E. Cornell, The Nagorno-Karabakh Conflict..., pp. 35-37.

նավթային պայմանագրերի իրագործումը, որոնցում արևմտյան նավթային ընկերությունները գերակշռող դիրք էին գրավում: Ավելին, Ադրբեջանը ընդգրկվեց ԱՊՀ կազմում<sup>67</sup>:

1993 թ. հունիսի 23-ին Չեչյար Ալիևի հրամանով չեղյալ հայտարարվեցին նախկինում Ադրբեջանի կառավարության և Բաքու-Չեչյան Միջազգային Կոնտրոլի միջև կնքված բոլոր նավթային պայմանագրերը<sup>68</sup>: 1993 թ. սեպտեմբերին Չեչյար Ալիևը չեղյալ հայտարարեց էլչիբեյի վարչակազմի և Թուրքիայի միջև կնքված մի շարք պայմանագրեր, Ադրբեջան մուտք գործելու համար վիզային ռեժիմ մտցրեց Թուրքիայի Գանրապետության քաղաքացիների համար, ինչպես նաև աշխատանքից հեռացրեց Ադրբեջանում աշխատող շուրջ 1600 թուրք ռազմական փորձագետների<sup>69</sup>: Բացի այդ, Չեչյար Ալիևը բանակցություններ սկսեց Ռուսաստանի հետ՝ ռուսական «Լուկոյլ» նավթային ընկերությանը ներգրավելու կասպիական նավթի շահագործմամբ գրավող Ադրբեջանական Միջազգային ընկերության նախագծում, համաձայն որի, 1994 թ. մարտին Բաքում Ռուսաստանին տրամադրեց իր բաժնետոմսերի 10 տոկոսը<sup>70</sup>:

Իշխանափոխության արդյունքում շուտով Ադրբեջանում սկսվեցին էլչիբեյի գլխավորած «Ազգային ժողովրդական ճակատի» անդամների ձեռքակալությունները: Ադրբեջանում իրադարձությունների նման կտրուկ փոփոխությունն առաջացրեց Թուրքիայի խիստ զայրույթը: Այդ կապակցությամբ 1993 թ. հուլիսի 21-ին Ադրբեջան ժամանեց Թուրքիայի ԱԳև առաջին փոխնախարար Օզդեմ Սանբերբը, որը Չեչյար Ալիևին հանձնեց Թուրքիայի նախագահ Դեմիրելի նամակը<sup>71</sup>: Ադրբեջանի նոր իշխանություններին հանձնված նամակում հետևյալն էր ասվում. «Ապավինեք ժողովրդավարությանը, խուսափեք օրենքներից, իրավունքներին ու մարդու ազատություններին հակասող գործողություններից, ներքին համաձայնության եկեք, միավորվեք ու ձեր պայքարն ուղղեք ընդհանուր արտաքին քննադու դեմ»<sup>72</sup>: Թուրքական

<sup>67</sup> Thomas Goltz, Letter From Eurasia: The Hidden Russian Hand.- Foreign Policy, № 92, Fall, 1993, pp. 95-97.

<sup>68</sup> Sabah, 29. 06. 1993.

<sup>69</sup> Svante E. Cornell, Turkey and the Conflict in Nagorno Karbakh: A Delicate Balance.- Middle Eastern Studies, vol. 34, № 1, January 1998, p. 63.

<sup>70</sup> Коджаман О., Զվլ աշխ., էջ 115:

<sup>71</sup> Cumhuriyet, 22.06.1993.

<sup>72</sup> Milliyet, 22.06.1993.

շատ վերլուծաբաններ և գործիչներ Ռուսաստանին մեղադրում էին Ադրբեջանում կատարված հեղաշրջմանն աջակցելու մեջ<sup>73</sup>:

Այս հեղաշրջմանը Ռուսաստանի մասնակցությանն անդրադարձել էր նաև Ա. էլչիբեյը, որը 1993 թ. հուլիսի 7-ին Նախիջևանի Քելեքի գյուղում հարցազրույց էր տվել թուրքական «Յուրիյեթ» թերթին: Ա. էլչիբեյն, անդրադառնալով գնդապետ Գուսեյնովի կողմից իրեն իշխանությունից հեռացնելուն, մասնավորապես նշել էր. «Այս իրադարձությունը պատահական չէր: Ռուսաստանի մատն էր խառը: Ռուսաստանը շատ է ուժեղ, ոչ ոք չի ուզում նրա դեմ դուրս գալ: Իրադարձությունների հետևում նավթի խնդիրն է բացման ված, քանի որ Ադրբեջանն իր նավթով ապագայում ուժեղ երկիր կարող է դառնալ և ժողովրդավարության միջոցով ճիշտ ուղի ընտրել: Ասկայն Մուսկվան չուզեց այդ: Սուրբ Գուսեյնովը մենակ չէր, դուք լավ գիտեք, որ նա որոշ ուժերից քաջակցություն ստացավ: Ռուսաստանը Կովկասում կայունություն չի ուզում»<sup>74</sup>: Ադրբեջանի մի շարք վերլուծաբաններին և քաղաքագետներին կարծիքով Ադրբեջանում էլչիբեյին իշխանությունից հեռացնելը ռուս-թուրքական մրցակցությունում ոչ միայն Ռուսաստանի լուրջ հաղթանակ էր, այլև Թուրքիայի դիվանագիտական և բազմակողմանի նախանշը<sup>75</sup>:

## 1.2. ԹՈՒՐԹԻԱՆ ԵՎ ՎՐԱՑ-ԱՐԻԱՋԱՎԱՆ ՂԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 1991-1994 ԹՁ.

1990-ականների սկզբներին Թուրքիան մեծ շահագրգռվածություն էր ցուցաբերում Գարավայան Կովկասում իր դիրքերի ամրապնդմամբ և այդ ուղղությամբ ակտիվ քայլեր էր ձեռնարկում: Այս հանատեքստում Վրաստանի աշխարհագրական դիրքը ռազմավարական, տնտեսական և քաղաքական տեսանկյունից Թուրքիայի համար մեծ կարևորություն էր ներկայացնում: Ուստի Թուրքիան առանձնահատուկ հետաքրքրությամբ հետևում էր Վրաստանում ընթացող գործընթացներին, մասնավորապես, Վրաստանի անկախացման գործընթացին և վրաց-աբխազական հակամարտությանը:

<sup>73</sup> Milliyet, 18.06.1993.

<sup>74</sup> Hürriyet, 07.07. 1993.

<sup>75</sup> Sabah, 29. 06. 1993.

1991 թ. նոյեմբերի 1-ին Թուրքիան ճանաչեց Վրաստանի անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ հաստատեց միայն 1992 թ. մայիսին՝ ԱՄՆ կողմից Վրաստանի ճանաչումից և Էդուարդ Շևարդնաձեի՝ Վրաստան վերադառնալուց հետո, ինչը պայմանավորված էր Վրաստանում ընթացող քաղաքացիական պատերազմով: Լշեներ, որ 1992 թ. հունվարին Վրաստանում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, ինչի արդյունքում Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան իշխանությունից զրկվեց: 1992 թ. մարտին Վրաստանում հիմնվում է Պետական խորհուրդ, որի ղեկավարությունը ստանձնելու համար նույն ամսին Վրաստան է հրավիրվում Էդուարդ Շևարդնաձեն<sup>76</sup>: 1992 թ. վերջերին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը պաշտոնական այցով ժամանեց Վրաստան: Այցի ընթացքում Ս. Դեմիրելը և Է. Շևարդնաձեն ստորագրեցին Բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը<sup>77</sup>: 1992 թ. դեկտեմբերին Թուրքիան Վրաստանին տրամադրեց 50 մլն. դոլար վարկ՝ ձեռք բերելու գործն և այլ ապրանքներ, ինչը նաև նպատակ էր հետապնդում՝ խթանելու թուրքական մասնավոր ներդրումները երկրում<sup>78</sup>:

Թեև Թուրքիան ճանաչեց Վրաստանի անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ, այնուամենայնիվ թուրք-վրացական հարաբերություններում սկզբնական շրջանում որոշակի լարվածություն էր նկատվում: Թուրքիան ձեռնպահ էր մնում Վրաստանի հետ հարաբերությունները զարգացնելուց, ինչը մեծապես պայմանավորված էր Վրաստանում ընթացող ներքին առձանկանամբ: Բացի այդ, վրաց-արխազական հակամարտությունը, որը սկսվել էր 1992 թ. օգոստոսի 14-ին վրացական զորքերի Աբխազիա ներխուժմամբ, Թուրքիային կանգնեցրել էր դժվարին երկնտարանքի առջև<sup>79</sup>: Մի կողմից, Թուրքիան հարավկովկասյան իր քաղաքակառուցությունն իրականացնելիս մեծ կարևորություն էր տալիս Վրաստանին, մյուս կողմից՝ վրաց-արխազական հակամարտության սկսվելուն

պես՝ Թուրքիայում աննախադեպ կերպով ակտիվացավ արխազական և չերքեզական համայնքների գործունեությունը:

Տարիների ընթացքում Թուրքիայում ձևավորվել էր ազդեցիկ հյուսիսկովկասյան համայնք: Թուրքիայում գոյություն ունեն մոտ 40 հյուսիսկովկասյան ժողովուրդներ՝ արխազներ, կարաբոլիներ, դաշուստանցիներ, ինգուշներ, չեչեններ և այլք, և այս բոլոր ժողովուրդներին անվանում են «չերքեզներ»: Իսկ չերքեզներն իրենց սովորաբար անվանում են ադիգեյցիներ<sup>80</sup>: Լշեներ, որ չերքեզական համայնքը մեծ հարգանք էր վայելում Օսմանյան կայսրությունում<sup>81</sup>: 1990-ականների սկզբներին, ըստ ոչ պաշտոնական տվյալների, Թուրքիայում արխազական սփյուռքը կազմում էր մոտ 500-700 հազար, իսկ ընդհանուր ամսամբ Թուրքիայում բնակվում էին մոտ 2 մլն. հյուսիսկովկասցիներ<sup>82</sup>: Թուրքիայում հյուսիսկովկասցիները մեծամասամբ բնակվում են արևմտյան և կենտրոնական Անատոլիայում, իսկ 1995 թ. համայնքի ունեցած վիճակագրական տվյալներով բնակչության 60 տոկոսը բնակվել են Ստամբուլում, Անկարայում և Սամսունում<sup>83</sup>:

Այսպիսով, Թուրքիայում ժամանակի ընթացքում ձևավորվել էր մոտ 2 միլիոն բնակչություն ունեցող չերքեզական սփյուռքը: Չերքեզական սփյուռքի կյանքում կարևոր դերակատարություն ունեին դեռևս 1908 թ.-ից Թուրքիայում ստեղծված հյուսիսկովկասյան կազմակերպությունները: Մինչև 1980-ականների վերջերը հյուսիսկովկասյան կազմակերպությունների գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր եթնիկ համախմբվածության զարգացմանը և բուրժուական գործընթացի համադրմանը: Խորհրդային Միությունում իրականացվող վերակառուցման քաղաքականությունը հնարավորություն ընձեռեց Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքին այցելելու իրենց նախնիների բնակավայրերը և Յուրտախյին Կովկասից հրավիրելու ուսանողների և քաղաքացիական գործիչների<sup>84</sup>:

<sup>76</sup> Roman Szporluk, National Identity and Ethnicity in Russia and the New States of Eurasia, New York, 1994, p. 287; Glenn E. Curtis, Armenia, Azerbaijan, and Georgia: Country studies, Washington D.C., 1995, pp. 209-210; Carolyn McGiffert Ekedahl and Melvin A. Goodman, The Wars of Eduard Shevardnadze, Pennsylvania, 1997, p. 257.

<sup>77</sup> Manos Karagiannis, The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbajani Oil, <http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>.

<sup>78</sup> Glenn E. Curtis, նշվ. աշխ., էջ 225:

<sup>79</sup> Roman Szporluk, նշվ. աշխ., էջ 294:

<sup>80</sup> Rioks Smeets, Circassia - Central Asian Survey, Vol. 14, № 1, March 1995, p. 111.

<sup>81</sup> Թուրքիայում չերքեզական սփյուռքի մասին ավելի մանրամասն տե՛ս **Авакян Арсен**, Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX — первая четверть XX вв.), Ереван, 2001, с. 421.

<sup>82</sup> Sever Metin, Kafdağı'nın Bu Yüzi: Türkiye'deki Kafkas Kökenliler, İstanbul, 1999, p. 183; Yedi Yıldız, Aylık Bergisi, Mayıs 1994, s. 12.

<sup>83</sup> Egbert Wesseling, The North Caucasian Diaspora in Turkey, [www.kapba.de/CaucasianDiaspora.html](http://www.kapba.de/CaucasianDiaspora.html).

<sup>84</sup> Lowell Bezanis, Soviet Muslim Emigrés in the Republic of Turkey, Central Asian Survey, Vol. 13, № 1 Winter 1994, p. 85.

1992 թ. Կովկասյան Մշակութային Միության նախածնունդամբ 20 այլ կազմակերպությունների հետ ստեղծվեց դաշնային մարմին՝ Կովկասյան Միությունը (Kafkas Demegü), որը շուտով ընդլայնվեց և իր 23 մասնաճյուղերով վերանվանվեց Կովկասյան Մշակութային Միության (Kafkas Kültür Demegü): Այն մինչ օրս հանդիսանում է Թուրքիայում հյուսիսկովկասցիների ամենաազդեցիկ կառույցը<sup>85</sup>:

Հյուսիսկովկասյան համայնքը վրաց-արիսազական հակամարտության ընթացքում ակտիվ լրքիստական գործունեություն էր տանում ոչ միայն Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում, այլև՝ բուն բուրջ հասարակության լայն շրջանակներում: Հաջող լրքիստական գործունեության շնորհիվ Թուրքիայում գործող «Կովկասաբխազական համերաշխության կոմիտեն» Թուրքիայի տարբեր քաղաքական կուսակցությունների աջակցությունը ստացավ: 1992 թ. հոկտեմբերին Թուրքիայի Ազգային Սեծ ժողովում (DBUŞD) թե՛ քննարկումներ ծագեցին մի կողմից՝ արխազներին, մյուս կողմից՝ վրացական իշխանությաններին աջակցող պատգամավորների միջև: Այս քննարկումների արդյունքում Վրաստանի տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա ձեռք բերվեց փոխզիջում: Թուրքիան արխազներին և վրացիներին հումանիտար օգնություն էր ցուցաբերելու հավասարապես: Այս հանգամանքը վկայում է, որ Թուրքիայում ձևավորված արխազ էթնիկ համայնքը խորհրդարանում լրքիստական գործունեության ճանապարհով կարողացավ ազդել Հարավային Կովկասում բուրջական քաղաքականության վրա<sup>86</sup>:

Բացի այդ, Թուրքիայի իշխանությունները չէին խոչնդոտում Թուրքիայում բնակվող չերեզական համայնքին աջակցելու արխազներին, ինչն անհանգստացնում էր պաշտոնական Թրիխիստի<sup>87</sup>: Արխազական համայնքի ակտիվ գործունեության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 1992–1993 թթ. Արխազիայի նախագահ Վլադիսլավ Արծինբան մի քանի անգամ այցելեց Թուրքիա, ու, թեև երբեք Թուրքիայի պաշտոնատար անձանց կողմից ընդունելության չարժանացավ, այնուամենայնիվ արխազական լրքի ակտիվ ազդեցու-

<sup>85</sup> Marje, Sönmez Baykan, Bir Ulus Olmak, Bir Vatana Sahib Olabilirmek İçin Birlekmek Zorundayız, October 1992, pp. 4-5.

<sup>86</sup> Gareth M. Winrow, Turkey and the Caucasus: Domestic Interests and Security Concerns. London, Royal Institute of International Affairs, 2000, p. 33.

<sup>87</sup> Коджаман О., նշվ. աշխ., էջ 146:

թյան արդյունքում Թուրքիայի հասարակական կարծիքի զգալի մասն իր աջակցությունը հայտնեց Արխազիային<sup>88</sup>: Այս ամենը չէր կարող չանհանգստացնել վրացական իշխանություններին, ինչն իր ազդեցությունն էր թողնում բուրջ-վրացական հարաբերությունների վրա:

Թեև վրաց-արխազական պատերազմի ընթացքում Թուրքիայի հասարակության մեծ մասի համակրանքն արխազների կողմն էր, այնուամենայնիվ պաշտոնական ԱՆկարան միշտ էլ հանդես էր գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին: Օրինակ, վրաց-արխազական պատերազմի սկսվելու կապակցությամբ Թուրքիայի ԱԳ նախարար Հիքմեթ Չեթինը նշեց. «Դա Վրաստանի ներքին գործն է»: Իր հերթին Թուրքիայի փոխվարչապետ է. Ինոնյուն խստորեն դատապարտեց Հարավային Օսիային և Արխազիային Վրաստանում տեղի ունեցած ընտրություններին չմասնակցելու համար: Իսկ 1992 թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի Ազգային Սեծ ժողովը հանդես եկավ Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին հայտարարությամբ<sup>89</sup>:

Անդրադառնալով վրաց-արխազական հակամարտությանը՝ պետք է նշել, որ պատերազմի ընթացքում ռուս-վրացական հարաբերությունները լարված բնույթ էին կրում, իսկ ժամանակ առ ժամանակ անմիջական բախման եզրին էին գտնվում, քանզի վրաց-արխազական հակամարտությունում Ռուսաստանը մեծ աջակցություն էր ցուցաբերում արխազական կողմին, ինչը առաջացնում էր Վրաստանի խիստ դժգոհությունը<sup>90</sup>: Ելնելով այս հանգամանքից՝ Վրաստանը ցանկանում էր հակամարտության մեջ անմիջականորեն ներգրավել Արևմուտքին, միջազգային կազմակերպություններին և հասկնապես Թուրքիային:

Այս ցանկությունն էլ ավելի մեծացավ, երբ 1992 թ. հոկտեմբերին արխազական կողմին հաջողվեց գրավել Գագրան, որին անմիջապես հաջորդեց է. Շևարդնաձեի դիմումը ՆԱՏՕ-ին, որում նա խնդրում էր վերջինին աջակցություն ցուցաբերել արխազական հիմնահարցում: Ավելին, Վրաստանի ղեկավարը հայտարարեց, որ չի

<sup>88</sup> Mehmet Tütüncü, The Caucasus Policy of Turkey (1990-1997): Caucasus: War and Peace: New World Disorder in Caucasus, Haarlem: SOTA, 1998, p.195.

<sup>89</sup> Yedi Yıldız, Aylık Dergisi, Ekim 1994, s. 12.

<sup>90</sup> Ghia Nodia, Georgian Perspectives. [www.abkhazia.georgia.parliament.ge/Publications/Georgian/ghia\\_nodia.htm](http://www.abkhazia.georgia.parliament.ge/Publications/Georgian/ghia_nodia.htm).

բացառում թուրքիայի ակտիվ մասնակցությունը խաղաղարար գործընթացին. «ԹՊՂ մասնակցի Ռուսաստանը, բայց թող իր խոսքը ասի նաև Թուրքիան»<sup>91</sup>: Սակայն վրաց-աբխազական պատերազմում Արևմուտքը չօգնեց Վրաստանին: Ըստ որոշ հետազոտողների, որա հիմնական պատճառն այն էր, որ Շևարդնաձեն, խուսաճվելով Արևմուտքի և Ռուսաստանի միջև, բավարար չափով չէր դրսևորում հստակ արտահայտված արևմտյան կողմնորոշում: «Շևարդնաձեի դիմումը Արևմուտքին երբեք հստակ չի եղել, ակահ թե ինչու Արևմուտքը չարժանազանքեց համապատասխան ձևով»<sup>92</sup>:

Իրոք, Վրաստանի ղեկավարության ոչ հստակ դիրքորոշումն էր հիմնական պատճառը, որ վրաց-աբխազական պատերազմում Արևմուտքը չաջակցեց Վրաստանին: Այսպես, 1993 թ. Էդուարդ Շևարդնաձեն, հաշվի առնելով Աբխազիայում ստեղծված բարդ իրավիճակը և Արևմուտքի մերժողական դիրքորոշումը՝ աջակցել Վրաստանին ծագած էթնիկական հակամարտությունում, հարկարդված էր փնտրել Մոսկվայի աջակցությունը: 1994 թ. փետրվարի 3-ին Թբիլիսիում Ռուսաստանը և Վրաստանը ստորագրեցին ռուս-վրացական Բարեկամության և համագործակցության մասին համաձայնագիրը, ինչպես նաև 24 այլ համաձայնագրեր, որոնց թվում էր նաև Վրաստանում ռուսական ռազմավայանների ստեղծման մասին պայմանագիրը, որտեղ հատուկ նշված էր Ռուսաստանի հրավումըրը Վրաստանում 25 տարով ունենալու ռազմավայաններ<sup>93</sup>: Սրան հաջորդեց Վրաստանի հարկադիր անդամակցությունը ԱՊԳ-ին<sup>94</sup>: Վրաստանում տեղի ունեցող վերոհիշյալ իրադարձությունները փոփոխություններ մտցրեցին Վրաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ:

1993 թ. վերջերին և 1994 թ. Թուրքիան սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել Վրաստանին, ինչը պայմանավորված էր հետևյալ

<sup>91</sup> Свободная Грузия, 10.10.1992.

<sup>92</sup> Տե՛ս օրինակ Bruno Coppieters, Alexei Zverev and Dmitri Trenin, *Commonwealth and Independence in Post-Soviet Eurasia*, London, 1998, p. 30.

<sup>93</sup> Zbigniew Brzezinski and Paige Sullivan, նշվ. աշխ., p. 587; Carolyn McGiffert Ekedahl and Melvin A. Goodman, նշվ. աշխ., էջ 270; Douglas W. Blum, *Russia's Future: Consolidation or Disintegration?*, San Francisco, 1994, p. 78.

<sup>94</sup> Robert Ketcherside, Georgia: A Country Out of Control, [www.zombiezodiac.com/rob/ps271.htm](http://www.zombiezodiac.com/rob/ps271.htm); Carolyn McGiffert Ekedahl and Melvin A. Goodman, նշվ. աշխ., էջ 257:

գործոններով: Առաջին, Ռուսաստանն ակտիվ քայլեր էր ձեռնարկում Գարավային Կովկասում վերականգնելու իր գերակա դիրքը, որը սասանվել էր ԽՍՀՄ փլուզման արդյունքում: Երկրորդ, Թուրքիային լուրջ մտահոգություն էին պատճառում ոչ միայն Վրաստանի շուրջ կատարվող իրադարձություններն, այլ նաև Գարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը: Երրորդ, Թուրքիայի համար Վրաստանի նշանակության մեծացումը պայմանավորված էր նաև նրանով, որ 1994 թ. Թուրքիան Վրաստանին սկսեց դիտել որպես Կասպից ծովից հարբեջանական նավթի փոխադրման ուղիների համար մրցակազմում առավել իրական տարանցիկ երկիր<sup>95</sup>: Ուստի Թուրքիան սկսեց ավելի ակտիվորեն քայլեր ձեռնարկել թուրք-վրացական հարաբերությունները բարելավելու համար:

Վրաց-թուրքական հարաբերությունների բարելավմանն էր ուղևորված 1994 թ. հունվարին Վրաստանի ղեկավար Էդուարդ Շևարդնաձեի պաշտոնական այցը Թուրքիա: Այցի ընթացքում է. Շևարդնաձեն և Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը Անկարայում ստորագրեցին հռչակագիր, որտեղ կողմերը հաստատում էին իրենց պարտավորությունը՝ աջակցելու անկախությանը, խաղաղությանը, կայունությանը և ժողովրդավարությանը: Վրաստանի և Թուրքիայի ղեկավարները հայտարարեցին, որ իրենց համագործակցությունն ուղևորված է լինելու ողջ տարածաշրջանի կայունացմանը: Բացի այդ, ստորագրվեցին առևտրական և տնտեսական մի շարք համաձայնագրեր<sup>96</sup>:

Թե՛ Վրաստանը, և թե՛ Թուրքիան, երկկողմ հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված, լուրջ նպատակներ էին հետապնդում: Վրաստանը Թուրքիային համարում էր արժեքավոր դաշնակից տարածաշրջանում և Թուրքիայի օգնությամբ ցանկանում էր ամրապնդել իր անկախությունն, ապահովել այլընտրանքային առևտրի և ներդրումների աղբյուր, որը կհավասարակշռեր Ռուսաստանի ազդեցությունը Վրաստանի տնտեսության վրա: Վերլուծելով վրաց-թուրքական մերձեցման պատճառները՝ թուրք հայտնի վերլուծաբան Չեյնո Բարանը նշում է. «Նախկինում Վրաստանն օս-

<sup>95</sup> Куджаман О., նշվ. աշխ., էջ 147:

<sup>96</sup> Manos Karagiannis, *The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil*,

<http://ourworld.compuserve.com/HOME/PAGES/USAZERB/413.htm>.

մանցիների դեմ պայքարելու համար ռուսներից խնդրում էր օգնություն, սակայն այսօր Վրաստանը ռազմական, տնտեսական և քաղաքական աջակցություն է ստանում Թուրքիայից»<sup>97</sup>:

Մյուս կողմից, 90-ականների սկզբներին հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումներին Թուրքիայի ակտիվ ներգրավմանն աջակցելով՝ Վրաստանը ցանկանում էր ոչ միայն բուլցանցե Զարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերն, այլ նաև Թուրքիայի հետ սերտ հարաբերությունների օգնությամբ զարգացնել հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ: Վրաստանը գտնում էր, որ Թուրքիայի, որպես ՆԱՏՕ-ի կարևորագույն անդամ-պետության հետ հարաբերությունների ամրապնդումն էական ազդեցություն կունենա Վրաստանի և ՆԱՏՕ-ի միջև հարաբերությունների զարգացման գործում<sup>98</sup>: Ուշագրավ է, որ Վրաստանի ղեկավար էդուարդ Շահրոմանեն 1992 թ. մարտին Անկարա կատարած այցելությունից վերադառնալուց հետո հայտարարել էր, որ «վրաց-թուրքական հարաբերությունները մոտ են ռազմավարական լինելուն»<sup>99</sup>: Թուրքական որոշ հետազոտողներ նույնիսկ համարում են, որ Վրաստանն իր իրական անկախության համար պարտական է Թուրքիային: Նրանց կարծիքով, Թուրքիայի հարևան լինելու հանգամանքը թույլ տվեց Վրաստանին նախկինում գոյություն ունեցող առևտրային համակարգի գրեթե համընդհանուր կործանման ֆոնի վրա վերակազմավորել իր արտաքին կապերը: Ասահմանային Սարայի-Բաթում կետի բացումը հսկայական ազդեցություն ունեցավ Վրաստանի արտաքին տնտեսական կապերի վրա: Թուրքիայի հետ սահմանակետերը Վրաստանի համար դարձան պատուհան ղեկի արտաքին աշխարհ<sup>100</sup>:

<sup>97</sup> Սեքերունը **puan Singh Gajendra**, Russian Bear Calls on Gray Wolf: Asia Times Online, 31.08.2004,

[http://www.atimes.com/atimes/Central\\_Asia/FH28Ag01.html](http://www.atimes.com/atimes/Central_Asia/FH28Ag01.html).

<sup>98</sup> **Achim Wennmann**, Renewed Armed Conflict in Georgia? Options For Peace Policy in a New Phase of Conflict Resolution, Program for the Study of International Organization(s), Graduate Institute of International Studies, Geneva, May 2006, p. 25.

<sup>99</sup> **Оганесян Н.**, Некоторые особенности этнорегиональной политики Армении, Этническая и региональная политика Армении и Грузии.- Материалы круглого стола 16-19 апреля 1999 г., Ереван, 1999, с. 58.

<sup>100</sup> **Sbu orh'ashly Gulyetkian B.**, Турция-Южный Кавказ: анализ современной ситуации, Южный Кавказ: региональная безопасность и стабильность.- Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой. Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, 2004, с. 58.

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նա, ունենալով բավականին սերտ հարաբերություններ Ադրբեջանի հետ, Վրաստանի հետ հարաբերությունների բարելավմամբ ակնկալում էր ուժեղացնել իր ազդեցությունը ողջ տարածաշրջանում: Թուրքիայի համար թուրք-վրացական բարիդրացիական հարաբերությունները կարևոր էին նաև նրանով, որ Թուրքիայի հարաբերություններն իր հարևան երկրներից Իրանի, ԳՅ-ի և Սիրիայի հետ բավականին լարված էին, ուստի տրանսպորտային բեռնափոխադրումների բնագավառում Վրաստանը շատ կարևոր նշանակություն ուներ Թուրքիայի համար<sup>101</sup>:

Չատկանշական է, որ Աբխազիան Վրաստանի դեմ իր անկախության համար մղվող պատերազմում նույնպես մեծ ակնկալիքներ ուներ Թուրքիայից և հատկապես Թուրքիայի չեքոքազական համայնքից, ուստի ակտիվ ջանքեր էր գործադրում այդ ուղղությամբ: Վրաց-աբխազական պատերազմի ամենաթեժ պահին՝ 1993 թ. հունվարի 27-ին, Աբխազիայի նախագահ Վախիսլավ Արծինբաև կոչով դիմեց Աբխազիայից դուրս գտնվող բոլոր աբխազներին և չեքոքազներին վերադառնալու Աբխազիա: Լա, մասնավորապես, ասում էր. «...Մեր զինված պայքարին աջակցելու եկան Զուխսիսային Կովկասի մեր եղբայրները, Թուրքիայում, Սիրիայում, Զորդանանում ապրող աբխազները, կաբարդիները, ադիգեյցիները, ինչպես նաև մեզ աջակցելու եկան հայերը, ռուսները, թաթարները: Սրանով պատերազմի շրջանակներն ընդլայնվեցին: 6 ամիս ընթացող այս պատերազմում թշնամին մեծ կորուստներ ունեցավ: Անհայտիսի հանգամանքներում աշխարհում ապրող բոլոր չեքոքազներին կոչ եմ անում հնարավոր ամեն ինչ անել մեր հայրենիքին օգնելու համար»<sup>102</sup>:

Թուրքիան նույնպես բավականին լուրջ կարևորություն էր տալիս Աբխազիային և թուրք-աբխազական հարաբերություններին: Աբխազիան, որը կարևոր դիրք էր գրավում սեծովյան ավազանում և կովկասյան տարածաշրջանում, ռազմավարական և տնտեսական տեսանկյունից մեծ նշանակություն ուներ Թուրքիայի համար: Աբխազիայի հետ հարաբերություններում Թուրքիան իր քաղաքական

<sup>101</sup> **Manos Karagiannis**, The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil,

<http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>,

<sup>102</sup> Yedi Yıldız, Ayık Dergisi, Ocak 1993, s. 11-12.

նպատակները հետապնդելիս օգտագործում էր թուրք-աբխազական մշակութային և տնտեսական հարաբերությունները: Թուրքիայի դեկավարությունը բավականին հետևողական քաղաքականություն էր վարում Աբխազիայում թուրքական մշակութային տարրերի ներմուծման և ընդլայնման հարցերում: Թուրքական մշակույթի ներթափանցումն Աբխազիա լայն թափ էր ստացել դեռևս Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակ, երբ 16-րդ դարում թուրքական իշխանությունները բռնի ուժով իսլամը ներմուծեցին Աբխազիա, իսկ 17-րդ դարի սկզբին Աբխազիայում իսլամի ազդեցությունը բավականին ուժեղացավ: Սակայն Աբխազիայում իսլամը հասարակական մակարդակով այդպես էլ լայն տարածում չստացավ, և ըստ ոչ պաշտոնական տվյալների այսօր Աբխազիայի բնակչության միայն 20-30 տոկոսն է իսլամադավան<sup>103</sup>: Հավելենք, որ 90-ականների սկզբներից Թուրքիայի դեկավարության անմիջական աջակցությամբ Աբխազիայում լայն թափ ստացավ իսլամի և թուրքերենի տարածումը, որն անկասկած ուղված էր Աբխազիայում ուղղափառ քրիստոնեության ազդեցության շրջանակների թուլացմանը և հատկապես ռուսական մշակութային գերակայությանը<sup>104</sup>:

Անդրադառնալով տնտեսական հարաբերություններին՝ ընդգծենք, որ Թուրքիան բավականին մեծ ուշադրություն է դարձնում Աբխազիայի տնտեսության մեջ թուրքական կապիտալի ակտիվ ներթափանցմանը, որը բավականին աշխուժացավ հատկապես վերջին տասնամյակում: Աբխազիայում թուրքական կապիտալը հատկապես կենտրոնացված է ածխի արդյունահանման ու վերամշակման ոլորտում և անշարժ գույքի առջ ու վաճառքի բնագավառում<sup>105</sup>: Հատկանշական է, որ ըստ ոչ պաշտոնական տվյալների ածխի արդյունահանման ու վերամշակման ոլորտում Աբխազիայի դեկավարները թուրքական ընկերությունների հետ ստորագրել են թքվարչալի ածխի արդյունահանման շուրջ երկու նախագիծ-պայմանագիր՝ 10 տարվա ժամկետով, որոնց իրականացման արդյունքում Աբխազիայի պետությունը կհամալրվի մոտ 100-140 մլն. դոլարով<sup>106</sup>: Բացի այդ թուրքական կազմակերպությունները Աբխազիա են բերում տարբեր

տեսակի մթերքներ և վառելիք, ու դուրս են տանում այնտեղից բանկարժեք փայտանյութ և գունավոր մետաղ: Օրինակ, միայն 1999 թ. Աբխազիայից դուրս է տարվել 38 հզ/մ<sup>3</sup> փայտանյութ, 32 հզ/տ մետաղաջարդոն և 40 հզ/տ գունավոր մետաղ: 2000 թ. Գագրա քաղաքի միայն փայտային տնտեսությունը Թուրքիա է տարել ավելի քան 50 հզ/մ<sup>3</sup> փայտանյութ<sup>107</sup>:

Եսպիտով, վրաց-աբխազական հակամարտությունում Թուրքիայի ներգրավմամբ էականորեն շահագրգռված էին թե՛ վրացական կողմը, և թե՛ աբխազական կողմը, ինչը վրաց-աբխազական հակամարտությունում Թուրքիային տալիս է շատ շահեկան դեր:

Ինչպես վերը նշվեց, Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքը շոշափելի դեր է ունեցել Աբխազիայի համար վրաց-աբխազական հակամարտությունում: Վրաց-աբխազական պատերազմի սկսվելուն պես Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքն ակտիվորեն ներգրավեց հակամարտության մեջ: Վրացական զորքերի Աբխազիա ներխուժումից 2 օր անց՝ 1992 թ. օգոստոսի 16-ին Կովկասյան Միության (Kaf-Dev) նախաձեռնությամբ Ստամբուլում և Անկարայում կազմակերպվեցին հզոր ցույցեր ընդդեմ վրացական զորքերի Աբխազիա ներխուժման և Թուրքիայի կառավարության պատիվ դիրքորոշման: Ցույցերին մասնակցում էին հազարավոր հյուսիսկովկասցիներ: Կովկասյան Միությունը սկսեց ակտիվ լրբիստական քաղաքականություն վարել, որը կենտրոնացված էր Թուրքիայի և Ռուսաստանի ուղղությամբ:

1992 թ. օգոստոսի 22-ին Թուրքիայի հյուսիսկովկասյան կազմակերպությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ դատապարտելով Վրաստանի ներխուժումն Աբխազիա: Առաջին անգամ չերեքզական համայնքը հանդես եկավ որպես միասնական ուժ: Հյուսիսկովկասյան կազմակերպությունների նախաձեռնությամբ ոչ միայն հարյուրավոր կամավորներ մեկնում էին Աբխազիա և պայքարում ընդդեմ վրացական զորքերի, այլ նաև հսկայական չափերի դրամական և պարենային օգնություն էր ցուցաբերվում Աբխազիային<sup>108</sup>: Դրան հաջորդեց 1992 թ. օգոստոսին ադիգեյցիների և աբ-

<sup>103</sup> Կարեն Վերանյան, Աբխազիան աշխարհաքաղաքական շահերի խաչմերուկում... 21-րդ դար, 2005, 4, էջ 52:

<sup>104</sup> Լույն տեղում, էջ 53:

<sup>105</sup> Լույն տեղում, էջ 54:

<sup>106</sup> Լույն տեղում:

<sup>107</sup> Էդուարդ Արրահամյան, Թուրքիայի ռազմավարական շահերն ու անկայտ Աբխազիան, <http://www.miq.org/print/?l=arm&dir=2&news=2058>.

<sup>108</sup> Egbert Wesselink, The North Caucasian Diaspora In Turkey, <http://www.kapba.de/CaucasianDiaspora.html>.

խազներին միջազգային Միության նախագահ Յուրի Կալմիկովի հայտարարությունը, որտեղ նա նախազգուշացնում էր Վրաստանի ղեկավար Է. Շևարոճևանին, որ եթե Վրաստանը սկսի համընդհանուր զորահավաք, ապա, ի պատասխան դրա, նա կոչ կանի հյուսիսկովկասցիների համայնքին զինվելու ընդդեմ վրացիների<sup>109</sup>։

1992 թ. մոտ 150 հյուսիսկովկասցիներ են ժամանել Թուրքիայից պաշարելու Աբխազիայի կողմում<sup>110</sup>։ Բացի այդ, բավականին մեծ թվով կամավորներ Հորդանանից և Սիրիայից ժամանել են Աբխազիա, որոնցից շատերը մնացել են այնտեղ պատերազմից հետո։ Այդ կապակցությամբ բավականին հետաքրքիր դիտարկում էր արել Դելսինկյան «Human Rights Watch» կազմակերպությունը։ Ըստ կազմակերպության դիտարկման, «Աբխազական ղեկավարությունը երախտապարտ էր, որ պատերազմի ժամանակ չերեքեզական սպիտուքից նստացել էր ոչ միայն նշանակալից ֆինանսական աջակցություն, այլ նաև բավականաչափ թվով մարտիկներ»<sup>111</sup>։

1993 թ. հունիսի 20-25-ը ՌԴ-ի Մայկոպ քաղաքում տեղի ունեցավ Չերքեզների Համաշխարհային Կոնգրեսը։ Կոնգրեսի շրջանակներում իրականացրած միջոցառումներից հետո՝ 1993 թ. սեպտեմբերի 1-ին, Աբխազիա վերադառնալիս Չերքեզների Համաշխարհային Կոնգրեսի անդամ, նրա տպագիր օրգանի՝ «Nart Gazetesi» գլխավոր խմբագիր Նեզուլ Շարիանը «Yedi Yildiz» ամսագրին տված հարցազրույցում հանգամանորեն անդրադարձել էր կոնգրեսի շրջանակներում իրականացված միջոցառումներին և քննարկված հարցերին։ Նեզուլ Շարիանը մասնավորապես նշել էր, որ իրենց հայրենիքի մասինը կազմող Աբխազիայում պատերազմ սկսվելուց պես, այն պաշտպանելու համար բավականին մեծ թվով արխազներ և հյուսիսկովկասցիներ Թուրքիայից, Սիրիայից և աշխարհի մյուս մասերից ժամանեցին Աբխազիա՝ օգնելու իրենց եղբայրներին։ Ըստ նրա, մեծ թիվ էին կազմում նաև Թուրքիայից և արաբական երկրներից ժամանած կամավորները և ընդհանրապես թուրք հասարակությունը մեծ համակրանքով էր վերաբերվում Աբխազիային<sup>112</sup>։

Ինչպես վեր նշվեց, Թուրքիայի հասարակության մեծ մասը համակրանքով էր վերաբերվում արխազներին։ Այս համատեքստում հիշատակման է արժանի այն, որ, ըստ որոշ տվյալների, թուրքական հետախույզությունը և պանթուրքիստական կազմակերպությունները նույնպես մասնակցել են վրաց-աբխազական հակամարտությանը։ Մասնավորապես, Թուրքիայի տարածքում, թուրքական հետախույզության և պանթուրքիստական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ ձևավորվում էին կամավորական խմբեր, որոնք, մասնակցելով ռազմական գործողություններին, աջակցել են արխազական կողմին։ Կամավորների հավաքագրումը կատարվում էր Թուրքիայում բնակվող արխազ մահմեդականների թվից։ Այս գործին ակտիվ աջակցություն է ցուցաբերել թուրքական «Աբխազիայի հետ համերաշխության համայնք» կազմակերպությունը<sup>113</sup>։

Վրաց-աբխազական հակամարտությունում Աբխազիային շոշափելի աջակցություն են ցուցաբերել ոչ միայն Վրաստանի և Աբխազիայի երկին փոքրամասնությունները՝ հայերը, ռուսները, ուկրաինացիները, թուրքերը, հույները և մյուսները, որոնք արխազների հետ միասին պայքարել են վրացական զորքերի դեմ, այլ նաև Հյուսիսային Կովկասի հանրագլխության ժողովուրդները՝ չեչենները, ադղերները, չերքեզները և մյուսները<sup>114</sup>։

1994 թ. վրացական կողմի պարտությամբ ավարտվեց վրաց-աբխազական հակամարտությունը։ 1993 թ. դեկտեմբերի 1-ին ժնևում ՄԱԿ-ի հովանու ներքո և ՌԴ միջնորդությամբ, կողմերը ստորագրեցին Փոխընդունման մասին հուշագիրը, որով նախատեսվում էր կրակի դադարեցում բանակցությունների վարման շրջանում և պատանդների փոխանակում<sup>115</sup>։ Իսկ 1994 թ. ապրիլի 4-ին Մոսկվայում ստորագրվեց 2 կարևոր փաստաթուղթ՝ Փախստականների և տեղահանված անձանց կամավոր վերադարձի և Զաղաքական միջոցներով վրաց-աբխազական հակամարտության կարգավորման մասին հայտարարության ընդունումը<sup>116</sup>։

<sup>109</sup> Сваранц А. Ընվ. աշխ., էջ 491։

<sup>114</sup> Vyacheslav Chirikba, The Georgian-Abkhazian Conflict: In Search of Ways Out, [http://www.circassianworld.com/Conflict\\_Georgian\\_Abkhazian.html](http://www.circassianworld.com/Conflict_Georgian_Abkhazian.html).

<sup>115</sup> Stuart Kaufman, Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War, London, 2001, p. 122, SIPRI Yearbook 1995, Oxford 1995, p. 251.

<sup>116</sup> Зверев А., Спорные Границы на Кавказе. Этнические конфликты на Кавказе, 1988-1994г., Глава 1, VUB University Press, 1996, с.18; Alexander Krylov, The Georgian-Abkhazian conflict,

<http://www.kapba.de/TheGeorgian-AbkhazianConflict.html>.

<sup>109</sup> Egbert Wesselink, The North Caucasian Diaspora In Turkey, <http://www.kapba.de/CaucasianDiaspora.html>.

<sup>110</sup> Ibid.:

<sup>111</sup> Ibid.:

<sup>112</sup> Ավելի մանրամասն տե՛ս Yedi Yildiz, Aylik Dergisi, Eylül 1993, s. 4-6.

Նկատենք, որ բացի Աբխազիայից Թուրքիան մեծ ուշադրություն էր դարձնում նաև արևելյան սեփական ավազանում կարևոր դիրք գրառեցնող Աջարիային, որի բնակչության գերակշիռ մեծամասնությունը մահմեդական է: Թուրքիան ուշադիր հետևում է Աջարիայի շուրջ ընթացող գործընթացներին և հատկապես 1921 թ. Կարսի պայմանագրի հավանական վերանայման խոսակցություններին<sup>117</sup>: Չարկ է նշել, որ 1990-ականներին պաշտոնական Թբիլիսիի և Բաթումի միջև ստվա էր լուրջ լարվածություն՝ ինչը մեծապես պայմանավորված էր Աջարիայի իշխանությունների ինքնուրույնության դրսևորումներով: Թեև Աջարիան՝ հանձնիս նրա նախկին ղեկավար Սևան Աբաշիձեի բազմիցս հավաստիացնում էր, որ Աջարիայի Ինքնավար Չանրապետությունը արտաքին, այդ թվում և արտաքին տնտեսական քաղաքականության հարցերում ընդունում է պաշտոնական Թբիլիսիի իրավասությունը, այնուամենայնիվ ինքնավար հանրապետությունում միջազգային ներդրումների, համատեղ ձեռնարկությունների, առևտրի և միջհամայնային համագործակցությանն առնչվող հարցերում վերջնական որոշումները ընդունվում էին Բաթումիում, այլ ոչ թե՝ Թբիլիսիում: Վերոհիշյալ հարցերում Աջարիան հատկապես շատ համաձայնագրեր էր կնքում հարևան Թուրքիայի հետ, որի հետ նա պահպանում և զարգացնում էր սերտ տնտեսական և այլ հարաբերություններ<sup>118</sup>: Չավելենք, որ ի տարբերություն Աբխազիայի, Աջարիայի հետ Թուրքիան ունի նաև ցամաքային սահման:

Չատկանշական է, որ 1990-ականներին պաշտոնական Թբիլիսիի և Աջարիայի միջև ընթացող այս մրցակցության ընթացքում Աջարիայի ղեկավարը չէր խորշում վերջնագրի լեզվով խոսել պաշտոնական Թբիլիսիի հետ: 1999 թ. ամռանը, երբ Թբիլիսիի և Բաթումիի միջև կրկին սրվեցին հարաբերությունները, Սևան Աբաշիձեն նախազգուշացրեց, որ Վրաստանի կենտրոնական իշխանությունների կողմից Աջարիայի տնտեսական շրջափակման շարունակվելու պարագայում տեղի իշխանությունները որոշում կկայացնեն՝ գործածելու 1921 թ. Թուրքիայի և Անդրկովկասի խորհրդայնացված երեք հանրապետությունների միջև կնքված Կարսի պայմանագիրը: Խոսքը գնում է վերոհիշյալ պայմանագրի կետերից մեկի մասին, համա-

ձայն որի թուրքական նավերը աջարական նավահանգիստներ ազատ էլունուտի իրավունք էին ստանում՝ առանց որևէ մաքսային վերահսկողության<sup>119</sup>: Ուշագրավ է, որ Աջարիայի իշխանությունները իրենց դիրքորոշումը փաստարկում էին նրանով, որ 1993 թ. Կարսի պայմանագիրը վավերացվել էր Վրաստանի խորհրդարանի կողմից<sup>120</sup>: Այսպիսով, պաշտոնական Թբիլիսիի և Բաթումիի միջև ընթացող լարվածության պայմաններում Թուրքիան կարող է հնարավորություն ստանալ՝ ամրապնդելու իր դիրքերը Աջարիայի ներքաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտներում:

### 1.3. ԹՈՒՐԹԻԱՅԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՅԻ ԵՎՍՍԱՄԱԲ ԵՎ ԼՂ ԳԻՆԱՎԱՐՈՐԸ (1991-1994 թթ.)

ԽՄՄՍ փլուզումից և հայոց անկախ պետականության վերականգնումից հետո հայ-թուրքական հարաբերությունները եղել են ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային հիմնախնդիրների կարևորագույն բաղկացուցիչ: Անկախության ձեռք բերումից ի վեր ԳՅ-ն միանգամից առնչվեց մի շարք բարդ խնդիրների հետ, որոնց լուծումը կենսական նշանակություն ուներ նորանկախ հանրապետության համար: Այդ խնդիրներից մեկն էլ տարածաշրջանի ամենաազդեցիկ երկրներից մեկի՝ Թուրքիայի հետ բնակամոտ դրացիական հարաբերությունների հաստատումն էր: Նորանկախ ԳՅ-ի ռազմաստրատեգիական դիրքը ստիպում է, շրջանցելով որոշ խուշընդոտներ, բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան բոլոր երկրների հետ:

1991 թ. սեպտեմբերից սկսած հայ-թուրքական բնականում հարաբերությունների հաստատմանն ու հետագա զարգացմանն ուղղված ջանքերը պայմանավորված են եղել նախևառաջ մի շարք կարևոր քաղաքական խնդիրներով: Նախևառաջ դա ՌԴ-ի արտաքին քաղաքականության թուլությունն էր Գարաբախի Կովկասում, ինչը պայմանավորված էր Ռուսաստանի ներքին անկայունության և Արևմուտքի կողմից գործադրած ճնշումներով: Այդ պատճառով ԳՅ-ն ստիպված էր իր արտաքին քաղաքականությունը իրականացնել՝

<sup>117</sup> Կարեն Վերանյան, նշվ. աշխ., էջ 49:

<sup>118</sup> Գալջիև Կ.Տ., նշվ. աշխ., էջ 165:

<sup>119</sup> Գալջիև Կ.Տ., նշվ. աշխ., էջ 166:

<sup>120</sup> Независимая Газета, 05.08.1999.

հեմվելով միայն իր ուժերի վրա, որը նպատակ էր հետապնդում երաշխավորել խաղաղությունը տարածաշրջանում և երկրի բնակչունը զարգացում: Թուրքիայի հետ նորմալ կապերի հաստատումը թելադրված էր նաև լուրջ տնտեսական նպատակներով. ԽՍՀՄ-ի փլուզումը և նորանկախ հանրապետությունների միջև օր-օրի կտրվող կապը, տնտեսության սկսած դեզինտեգրացումը, ինչպես նաև նախկին կոմունիկացիաների անհուսալիությունը՝ կապված ներքին անկայության հետ: Հարևան երկրներ Վրաստանն ու Ադրբեջանը ՀՀ-ին ստիպեցին նոր ուղիներ փնտրել արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու, ինչպես նաև արտաքին շուկա դուրս գալու համար, ինչը կարևոր էր նախևառաջ ՀՀ-ն հզոր արդյունաբերական պոտենցիալը պահպանելու համար: Դա ստիպեց այլընտրանքային ուղիներ փնտրել նախ և առաջ Իրանով և Թուրքիայով:

ԼՂ հակամարտության ընթացքում Թուրքիան Ադրբեջանին ցուցաբերեց քաղաքական, ռազմաֆինանսական և դիվանագիտական մեծ աջակցություն: Նկատի ունենալով այդ հարցի կարևորությունը՝ անհրաժեշտ է մանրամասն անդրադարձ կատարել այդ աջակցության դրսևորումներից յուրաքանչյուրին:

ԽՍՀՄ փլուզման շեմին Թուրքիան բավականին լուրջ մտավախություն ուներ՝ կապված Հայաստանի անկախության ձեռքբերման հնարավոր հետևանքների հետ: Ուստի պատահական չէ, որ դեռևս 1990 թ. սկզբներին թուրք հայտնի հրապարակախոս Իլիան Սելչուքը գրում էր, որ եղբայրական Ադրբեջանի անկախացումը սքանչելի մի նպատակ էր: Սակայն այդպիսի նպատակադրումն ինքնին ենթադրում էր անկախության ճանապարհին քայլերել նաև Հայաստանին: Վերջինիս անկախացման պարագայում Թուրքիան անխուսափելիորեն հայտնվելու էր Հունաստան-Հայաստան արջաքնի մեջ: Մինչդեռ այդ երկու երկրները պահանջատիրական հավակնություններ ունեին Անատոլիայի նկատմամբ<sup>121</sup>: Սակայն ավելի ուշ ՀՀ ՊԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ մի հայտարարությամբ, որը փարատեց Թուրքիայի մտավախությունը: Նա մասնավորապես նշեց, որ Հայաստանը քաղաքակիրթ երկրներին արժանավայել հարաբերություններ պետք է հաստատեր ամխտիր բոլոր հարևանների, այդ թվում՝ Թուրքիայի հետ<sup>122</sup>: Թուրքիայի նախագահ

Ռուզուլթ օզալը դրական արձագանքեց Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությանը: 1991 թ. հունվարի 7-ին նա, թուրքական հեռուստատեսությամբ պատասխանելով «32-րդ օր» հաղորդաշարի հեղինակ, հայտնի թուրք հրապարակախոս Մեհմեթ Ալի Բիրանդի հարցերին, ընդգծեց, որ Թուրքիան ծրագրում է տնտեսական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ<sup>123</sup>: Անշուշտ, այս հայտարարությունը կարող էր դրականորեն ազդել հայ-թուրքական հարաբերությունների վրա, սակայն Թուրքիան դեռևս չուներ հստակ դիրքորոշում Հայաստանի նկատմամբ և, բացի դրանից, ձգտում էր հասնել նրան, որ պաշտոնական երևանը չնեղառեք ցեղապանության խնդիրը իր արտաքին քաղաքական օրակարգում:

Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումը մասամբ հստակեցնելու նպատակով 1991 թ. ապրիլին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վուլքան Վուրալը եռօրյա պաշտոնական այցով ժամանեց Հայաստան: Այս այցը վերջին 70 տարվա ընթացքում առաջինն էր, ուստի սպասվում էր, որ այցը կխթանի հայ-թուրքական հարաբերությունները և նոր մակարդակի կարծրացնի երկկողմ հարաբերությունները: ՀՀ ՊԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Վուրալի հետ հանդիպման ժամանակ նշեց. «Հայաստանը փոխվում է, և այս նոր աշխարհում պետք է նոր մտածողությամբ հարևան երկրներ լինենք: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխափոխվել համագործակցության: Հայաստանը որևէ տարածքային պահանջներ չունի Թուրքիայից»<sup>124</sup>: Վուրալի հետ հանդիպման ժամանակ էլ նախորոշվեցին երկու պետությունների կողմից հարաբերությունները զարգացնելու գերակայությունների տարբերությունը: Եթե Հայաստանի համար երկկողմ հարաբերությունների օրակարգում առաջնային էին տնտեսական հարաբերությունների զարգացմանն առնչվող խնդիրները, ապա թուրքական կողմի համար առանձնակի կարևորություն ունեին արցախյան հիմնահարցի կարգավորումն ու հայ-թուրքական զոյություն ունեցող սահմանի ճանաչման հարցերը<sup>125</sup>: Վուլքան Վուրալի այցը լայն արձագանք ստացավ ոչ միայն Հայաստանում, այլ նաև՝ Թուրքիայում:

<sup>121</sup> Հակոբ Օսթրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 11:

<sup>122</sup> Լուրջ տեղում:

<sup>123</sup> Ազգ. 27.04.1991:

<sup>124</sup> Независимая Газета, 14.05.1991.

<sup>125</sup> Ուրբեմ Ասֆրաստյան, Գնարավոր չէ 21-րդ դարում պատեններ ստեղծել հարևանների միջև..., Երևան, 2003, էջ 39:

Հայաստանի ղեկավարների հետ հանդիպումից հետո թուրք դիվանագետ, պատասխանելով թուրքական «Հյուրիյեթ» թերթի թրքակից հարցերին, ընդգծել էր, որ Հայաստանի նորագույն ղեկավար մարմինների կողմից Թուրքիայի նկատմամբ որդեգրած նոր քաղաքականությունն արդիական էր և համապատասխանում էր երկու ժողովուրդների շահերին<sup>126</sup>։ Այսպիսով, թուրք դիվանագետի այցը Հայաստան դիտվում էր որպես լավ նախադրյալ երկկողմ դեկլարացիոնական հարաբերությունների հաստատման համատեքստում։

Սակայն շուտով հայ-թուրքական հարաբերություններում լուրջ տարածայնություններ ի հայտ եկան։ Բանն այն է, որ 1991 թ. մայիսի 11-ին «Аргументы и факты» օրաթերթում հրատարակվեց Լևոն Տեր-Պետրոսյանի հարցազրույցը, որտեղ նա, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին, նշեց, որ Եվրոպայում 1920-1921 թթ. հարատև հեղափոխության գաղափարի մատուցումից հետո, Խորհրդային Ռուսաստան և մի քանի քանի ուղղեց դեպի Արևելք՝ ձգտելով ստանալ Թուրքիայի և Իսահանգական ժողովուրդների համակրանքը։ Այդ նպատակին հասնելու համար Հայաստանն անդամատվեց Ռուսաստանը Կարսի մարզը գիշեց Թուրքիային, իսկ Լեոնային Ղարաբաղը՝ Ադրբեջանին<sup>127</sup>։ Այս մեկնաբանությունները լուրջ դժգոհություն առաջացրեցին թուրքական կողմի մոտ, ուստի պատասխանն իրեն երկար սպասել չտվեց։

Մտավայում Թուրքիայի դեպքությունները, հանձին դեպքան Վ. Վուրալի, հանդես եկավ բողոքի նուստայով, որտեղ մասնավորապես ասվում էր. «Հայաստանի հարևանության գտնվող ոչ մի պետական միավոր չի կարող և չպետք է մի կտոր հող տա ՀՀ-ին ...պատմական փաստերի բողոքարկումը և առավել ևս դրանց խեղաթյուրումը անբուլկատրելի է»<sup>128</sup>։

Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերություններում որակական նոր փուլ սկսվեց ՀՀ-ի անկախության հռչակումից յետո։ 1991 թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ-ում անցկացվեց անկախության հանրաքվեն, որին հաջորդեց անկախության հռչակումը Պերագույն

Խորհրդի կողմից։ 1991 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով Թուրքիայի կառավարությունը ճանաչեց ՀՀ-ի անկախությունը՝ ի թիվս նախկին ԽՍՀՄ անդամաբաժնույնների։ Այդ կապակցությամբ 1991 թ. դեկտեմբերի 24-ին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Ղեմիրլին ուղերձով դիմեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին։ Ուղերձում Ղեմիրլինը կոչ էր անում ՀՀ-ին Թուրքիայի և մյուս հարևանների հետ իր հարաբերությունների մեջ հավասարին մնալ միջազգային իրավունքի հիմնական և հատկապես տարածային ամբողջականության ու ասիանների անձեռնմխելիության սկզբունքներին, ղեկավարվել քարիդրացիության սկզբունքներով և կատուցել իր քաղաքականությունը դրանց հիման վրա<sup>129</sup>։ Թուրքիան, թեև ճանաչեց ՀՀ-ի անկախությունը, այնուամենայնիվ, չչտապեց ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել։ Նա, վկայակոչելով Հայաստանի նկկախության հռչակագիրը, իր քայլը պատմաաբանեց ՀՀ-ի հողային պահանջներով<sup>130</sup>։ Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար թուրքական կողմը որպես անհրաժեշտ նախապայման էր համարում ՀՀ-ի կողմից պաշտոնապես հրաժարումը Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից։

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար հետագայում Թուրքիան ՀՀ-ին ներկայացրեց մի քանի այլ նախապայման, որոնք են՝ չհիշատակել 1915 թ. հայոց ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, ճնշում գործադրել Լեոնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի գերակայությունը ու տարածքային ամբողջականությունը<sup>131</sup>։ Անշուշտ, ՀՀ-ի ղեկավարությունը մերժեց միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմանները։ Ըստ էության ՀՀ-Թուրքիա միջպետական հարաբերությունները իմնվում են ՍԱԿ-ի և ԵՄԿԿ-ի իրավապայմանագրային համակարգի, Եվրատիրոդի կառույցների, Սևծովյան տնտեսական համագործակցության հռչակա-

<sup>126</sup> Hürriyet, 02.05.1991.

<sup>127</sup> Аргументы и факты, 11.05.1991, ըստ **Киреев И.**, Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XXI века, М., Клафт+ ИВ РАН, 2001, с. 366.

<sup>128</sup> Независимая Газета, 14.05.1991.

<sup>129</sup> Հայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 326, ցուցակ 9, գրք 192, թերթ 1-2:

<sup>130</sup> Ավելի մանրամասն տես Արամ Անանյան, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության արդի համատեքստում, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2004, էջ 6:

<sup>131</sup> Լիկուլայ Ղուկանճիսյան, Սերժանկոբաբեյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը.- Սերժանկո և Սիջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 16, Երևան, 1996, էջ 14:

գրի, Եվրոպայում սովորական սպառազինությունների կրճատման պայմանագրի և Վիեննայի համաձայնագրի համաձայնագրի շրջանակներում ստանձնած փոխադարձ պարտավորությունների հիման վրա:

Թեև Թուրքիան ցուցադրաբար հրաժարվեց ԴՅ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց, պաշտոնական Անկարան ձգտում էր որոշակի հարաբերություններ հաստատել ԴՅ-ի հետ, մասնավորապես տնտեսական բնագավառում: Անհայն այս համալուծչատուր հատկանշական էր պաշտոնական Անկարայի դիրքորոշումը, որը հավանություն տվեց «Ալարկո Դոլինգ» բաժնետիրական ընկերության խորհրդի նախագահ Իցհակ Ալաթոնի ծրագրին և պատրաստակամություն հայտնեց Տրապիզոնի նավահանգիստը ԴՅ տրամադրության տակ դնելու<sup>132</sup>:

Համաձայն Ալաթոնի ծրագրի, միջինասիական հանրապետությունների՝ Ուզբեկստանի, Դրոզդստանի, Տաջիկստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի հունը, այդ քվում՝ բնական գազն ու նավթը ԴՅ-ի վրայով պետք է փոխադրվեր Տրապիզոն, իսկ այդտեղից պետք է կազմակերպվեր դրա դուրսբերումն արևմտյան շուկաներ<sup>133</sup>: Ըստ այս նախագծի, Տրապիզոնի նավահանգիստը ԴՅ-ի համար դառնում էր ազատ առևտրի հատուկ գոտի, որի շնորհիվ նա ոչ միայն ճեղքում էր շրջափակումը, այլև վեր էր ածվում միջազգային տարանցիկ կետի Միջին Ասիա-Արևմուտք առևտրատնտեսական կապերում: Ծրագրով նախատեսվում էր նաև անհապաղ բացել Մարգարա-Ալիջան սահմանային կետը և ձեռնամուխ լինել Երզրում-Տրապիզոն երկաթգծի կառուցմանը, որպեսզի հնարավոր լիներ ապահովել Գյումրիի երկաթուղային հաղորդակցությունը Տրապիզոնի նավահանգստի հետ<sup>134</sup>: Նախագծի ֆինանսավորումն ու իրականացումը Ալաթոնի ընկերության հետ միասին ստանձնում էր ԱՄՆ-ում Զայկական Համագումարի նախագահ Գրայր Գովնանյանի «Գովսոն քամփրնի» ընկերությունը: Այս նախագիծը իրականացնելու նպատակով Իցհակ Ալաթոնը և Գրայր Գովնանյանը Մոսկվայում ստորագրեցին «Գովսոն-Ալարկո» համատեղ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին համաձայնագիրը<sup>135</sup>: Ալաթոնի ծրագիրը բավա-

կանին շահավետ էր ԴՅ-ի համար և լայն հեռանկարներ էր բացում նրա առջև: Ուստի ԴՅ-ն մեծ ուշադրություն էր դարձնում դրան: Հատկանշական է, որ ամերիկյան «Գովսոն» ընկերությունը թուրքական «Ալարկո» ընկերության հետ թուրք-ամերիկյան բաժնետիրական ընկերություն ստեղծելիս, ելակետ էր ընդունում ԴՅ-ի կառավարության հանձնարարությունը: Ծրագրի շուրջ թուրքական իշխանությունների հետ բանակցելու նպատակով հայկական կողմը ներկայացնում էր «Մոսիտոնրատրոյի» ընկերության տնօրեն Վարդգես Արծրունին: 1991 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելին ուղղված ամսակազմ ԴՅ վարչապետի պաշտոնակատար Հրանտ Բագրատյանը նրան ամվանում է ԴՅ ներկայացուցիչ<sup>136</sup>:

Հատկանշական է, որ Թուրքիայի իշխանությունները նույնպես շահագրգռվածություն ցուցաբերեցին այդ նախագծին և հատկապես մեծ գոհունակությամբ էին վերաբերվում ԴՅ-ի առաջարկություններին: Այդ կապակցությամբ պաշտոնական Անկարան, ի դեմս ԱԳ նախարար Սաֆա Գիրայի, իր գոհունակությունը հայտնեց հայկական կողմի առաջարկությունների կապակցությամբ: Նա այսպես է գնահատել ԴՅ-ի նախաձեռնությունը. «Թուրքիան բարյացակամությամբ է նայում իր բոլոր հարևաններին, որոնք հրաժարվում են ամեն տեսակի բջճամանքից և ձգտում են բարեկամական հարաբերություններ ունենալ իր հետ: Այս առումով մենք դրական ենք գնահատում հայկական կողմի ձեռնարկած քայլերը: Սա դրական ազդեցություն կունենա նաև մեր գործարարների համար, որոնք ձգտում են ընդլայնել իրենց առևտրական գործունեությունն ու ինտեգրումը համաշխարհային տնտեսության մեջ»<sup>137</sup>: Թուրքիան, պատրաստակամություն հայտնելով ԴՅ-ի հետ ընդլայնել առևտրատնտեսական կապերը, համաձայնվելով տրամադրել Տրապիզոնի նավահանգիստը, միևնույն ժամանակ փորձեց հայ-թուրքական հարաբերությունները տնտեսական հարթությունից տեղափոխել քաղաքական հարթություն:

Թուրքիայի ղեկավար շրջանակները սկսեցին հանդես գալ դարաբաղյան հիմնահարցում միջերդրի դեր ստանձնելու պատրաստակամության մասին հայտարարություններով: Այս կապակցությամբ Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը, 1992 թ. հունվարին մասնակցելով թուրք հայտնի հրապարակախոս Մեհմեթ Ալի Բի-

<sup>132</sup> Հակոբ Չաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական ..., էջ 15:

<sup>133</sup> Ազգ. 23.11.1991:

<sup>134</sup> Նույն տեղում:

<sup>135</sup> Ազգ. 07.12.1991:

<sup>136</sup> Հակոբ Չաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական..., էջ 16-17:

<sup>137</sup> Milliyyet, 10.10.1991.

րանդի «32-րդ օր» հեռուստահաղորդմանը, նշեց, որ Թուրքիան մեծապես կնպաստի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը, միայն թե ԳԴ-ն ու Ադրբեջանը շարունակեն վստահել իրան<sup>138</sup>:

1992 թ. փետրվարից սկսած՝ ԼՂ հիմնահարցը դարձավ կարևոր քաղաքական գործոն ԳԴ-ի հետ Թուրքիայի հարաբերություններում: Առաջին անգամ դա իր դրսևորումը ստացավ խոջալուի դեպքերից հետո: 1992 թ. փետրվարին դարաբաղյան ուժերը չեզոքացրին Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կարևոր հենակետերից խոջալուն, որը և առիթ հանդիսացավ Թուրքիայի համար՝ իսկույն հրաժարվելու Ալաթոնի ծրագրից<sup>139</sup>: Այսպիսով, Ալաթոնի ծրագրի կապակցությամբ նկատվող հայ-թուրքական որոշակի մերձեցումը լուրջ փորձությունների առջև կանգնեց և լարված բնույթ ստացավ:

Շուտով ԳԴ-ի հետ մերձեցման Թուրքիայի միտումները վերածեցին հակահայկական տրամադրությունների: Խոջալուի գրավման կապակցությամբ 1992 թ. մարտի 4-ին Իզմիրում ելույթ ունենալով՝ Թուրքիայի նախագահ Թուրգուք Օզալը կառավարությունից պահանջեց «հայերի ոճրագործությունների դեմ վճռական միջոցների դիմել»: Այնուհետև նա սպառնաց թուրքական ռազմական ուժերով կանգնեցնել հայերի առաջխաղացումը<sup>140</sup>: Խոջալուի գրավումը լայն արձագանք ստացավ Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում:

Թուրքիայի ղեկավարությունը, տեղի տալով խոջալուի գրավման հետևանքով երկրում առաջացած դժգոհություններին, սկսեց ԳԴ-ի նկատմամբ ճնշում գործադրելու քաղաքականություն իրականացնել: Սասնավորապես, Օզալը այս օրերին հայ-թուրքական սահմանի մոտ Կարս-Ասրիդամիշ-Իզդիր երկայնքով սկսվեցին թուրքական երրորդ կորպուսի «Չմեռ-92» զորավարությունները, որոնք մեծ անհանգստություն առաջացրին ԳԴ-ում: Թուրքական «Միլիչեթ» թերթն, այդ կապակցությամբ, հարցազրույց վերցրեց ԳԴ ճախագահի օգնական Լևոն Ջուրաբյանից: Վերջինս նշեց, որ Թուրքիան զինավարժությունների անցկացման մասին բոլոր միջազգային իրավական նորմերի համաձայն, նախևառաջ պարտավոր էր տեղեկացնել ԳԴ կառավարությանը: Ըստ Ջուրաբյանի, նույնիսկ ԱՂԳ զինվորա-

կան հրամանատարությունը տեղյակ է դարձել զինավարժությունների մասին միայն դրանց սկսվելուց հետո<sup>141</sup>: Հատկանշական է, որ այն ժամանակ, երբ Թուրքիան ԳԴ-ին մեղադրում էր խոջալույում «ոճրագործություն» իրականացնելու քառադրեջանական աղբյուրների կողմից, և մասնավորապես 1992 թ. Բաքվում տեղի ունեցող իրադարձությունների մասնակիցների վկայություններով ապացուցվում է, որ խոջալույում տեղի ունեցած դեպքերը, որոնք խաղաղ բնակչության շրջանում զոհերի պատճառ դարձան, Ադրբեջանում իշխանության համար պայքարի և քաղաքական ինտրիգների արդյունքն են: Այսպես, Ադրբեջանի այն ժամանակվա նախագահ Ալազ Մուբալիբովը վկայել է. «Խոջալուի վրա հարձակումը անակնկալ չէր, հայերը միջանցք էին ստեղծել՝ բնակչությանը գյուղը լքելու հնարավորություն ընձեռնելով»<sup>142</sup>: Նա նաև նշում է, որ Ադրբեջանի շրջանի սահմանի մոտակայքում խաղաղ բնակչությունից կազմված շարասյան վրա կրակ էին քացել Ադրբեջանի ժողովրդական ճակատի զինված ջոկատները՝ ընդգծելով, որ «խոջալու գյուղի բնակչության գնդակահարությունը բացահայտորեն կազմակերպված էր այն ուժերի կողմից, որոնք ձգտում էին Ադրբեջանում իշխանության անցնել»<sup>143</sup>: Այսպիսով ակնհայտ է, որ Թուրքիան որևէ լուրջ դրակապատճառ չուներ հակահայկական հիստերիա բարձրացնելու:

Խոջալուի գրավումից հետո ազատագրվեց Շուշին, սպա և քացվեց Լաչինի միջանցքը: Շուշիի գրավման և Լաչինի միջանցքի քացման հետևանքով ակնհայտ լարվածություն էր նկատվում հայ-թուրքական հարաբերություններում: Հայկական ուժերի կողմից Շուշիի ազատագրումից հետո Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը քննարկելու համար Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը, ելույթ ունենալով կառավարության արտահերթ նիստում, հայտարարեց, որ Շուշիում տեղի ունեցած «ադրբեջանցիների նկատմամբ հայերի իրականացրած հերթական ահաբեկչությունն է: Այսուհետ Թուրքիան չի կարող հանդես գալ որպես կողմնակի դիտորդ, քանզի ակնհայտ է դարաբաղյան հակամարտությունն ուժային միջոցով լուծելու փորձը»<sup>144</sup>: Իր հերթին Թուրքիայի ԱԳ ճախա-

<sup>138</sup> Ազգ. 01.02.1992:

<sup>139</sup> Ղակոբ Չաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական..., էջ 21:

<sup>140</sup> Hurriyet, 05.03.1992.

<sup>141</sup> Milliyet, 21.02.1992.

<sup>142</sup> Независимая Газета, 02.04.1992.

<sup>143</sup> Новое Время, 06. 03. 2001.

<sup>144</sup> Независимая Газета, 13.05.1992.

րար Դիքսնթ Զեքինը զգուշացրեց ԳԴ-ին, որ թուրքիան երբեք թույլ չի տա ուժային միջոցով Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի փոփոխությունը, և որ ԳԴ-ն պատասխանատու է լինելու նման գործողության հետևանքով ի հայտ եկող լուրջ հետևանքների համար<sup>145</sup>:

1992 թ. մայիսին թուրքիայի և ԳԴ-ի հարաբերությունները ծայրաստիճան լարվեցին: 1992 թ. մայիսին լուրեր տարածվեցին, թե իբր հայկական ուժերը գրոհել են Նախիջևանի Սադարակ քաղաքի շրջակայքում գտնվող քարծուները<sup>146</sup>: 1992 թ. մայիսին, ի պատասխան Նախիջևանի վրա հայերի հավանական հարձակման լուրերին, ԱՆկարայում սկսեցին ակտիվորեն քննարկել թուրքական ռազմական ներխուժման հնարավորությունը, որի իրավական հիմք թուրքիան համարում էր Կարսի 1921 թ. պայմանագիրը: Այդ կապակցությամբ թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար Մուհիթթին Ֆիսուռնուլուն հայտարարեց, որ «բոլոր անհրաժեշտ պատրաստություններն իրականացվել են, և քանակն ԱՆկարայի հրամաններն է սպասում, որպեսզի հարձակվի»<sup>147</sup>: Իր հերթին թուրքիայի ռազմական ուժերի գլխավոր շտաբի պետ զեներալ Դոդան Գյուրեշը հայտարարել էր, որ պատրաստ է դարաբաղյան հակամարտության զուտ ուղարկել այնքան զինվոր, որքան կհնդրի Ադրբեջանի կառավարությունը<sup>148</sup>: Թուրքիայի այս ռազմատենչ հայտարարությունները լուրջ մտահոգություն առաջացրեցին Ռուսաստանի ղեկավար շրջանակներում, որոնք հասկանում էին, որ թուրքիան ձգտում էր օգտագործել նախատվոր առիթը հարավկովկասյան հակամարտություններում իր դերակատարությունը ուժեղացնելու համար:

Ուստի Ռուսաստանի պատասխանն իրեն երկար սպասել չտվեց: ՄԴԳ Կոլեկտիվ Ձինված Ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Եվզենի Շապոշնիկովը հայտարարեց, որ «Թուրքիայի ներխուժումը (Ղայաստան: Գ.Ա.) կարող է հանգեցնել Երրորդ Զամաշ-

խարհային պատերազմի»<sup>149</sup>: Այս նախազգուշացումը լուրջ արձագանք ստացավ թուրքիայում: Թուրքիան լապես անհանգստացավ ռուս-թուրքական բախման հավանականությանը, ուստի և ձեռնպահ մնաց իրավիճակի հետագա լարումից ու փորձեց ավելի հավասարակշռված դիրք ընդունել:

Այս պարագայում ուշազրավ է հատկապես թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հարցազրույցը, որում, մեկնաբանելով իր կառավարության որոշեցրած դիրքորոշումը՝ Դեմիրելը նշեց. «Դեշտ է խոսել ներխուժման մասին: Եթե մենք մտնեինք Նախիջևան, մենք ի վիճակի չէինք լինի հեռանալ այնտեղից մոտակա 20 տարվա ընթացքում: Բացի այդ, Արևմուտքը կմեղադրեր թուրքիային նման գործողության համար, որը կունենար այնպիսի արդյունք, թե իբր հայ-ադրբեջանական հակամարտությունը վերածվում է «Քրիստոնյա-Մահմեդական» հակամարտության»<sup>150</sup>: Առանձնահատուկ իշխատական է արժանի այն փաստը, որ ԳԴ-ի վրա թուրքիայի չհարձակման կարևորագույն դրոյապատճառներից էր նաև այն, որ 1992 թ. գարնանը ԳԴ-ի տարածքում առկա էր միջուկային զենք, ինչի մասին է վկայում 1992 թ. մարտին Ռուսաստանի փոխնախագահ Ռուզդեյի հայտարարությունը, համաձայն որի ԳԴ-ի և Ադրբեջանի տարածքում առկա էր միջուկային զենք<sup>151</sup>:

Զմայած Ռուսաստանի կողմից թուրքիային ուղղված հստակ ազդանշաններին՝ վերջինը սկսեց ակտիվորեն ներգրավվել ԼՂ հիմնահարցի մեջ և լայնածավալ օգնություն ցուցաբերել Ադրբեջանին: Մասնավորապես, 1991-1992 թթ. ԼՂ-ում Ադրբեջանի ծավալած ռազմական գործողություններին աջակցելու նպատակով թուրքիան երկու գաղտնի գործողություն իրականացրեց:

Նախ՝ 1991 թ. կեսերին թուրքիայից օդային ճանապարհով՝ Նախիջևանի վրայով, Ադրբեջան փոխադրվեցին 5000 ավտոմատ, նոնա-

<sup>145</sup> Levon Chorbajian, Patrick Donabedian and Claude Mutafian, *The Caucasian Knot: The History of Geopolitics of Nagorno-Karabagh*, London, 1994, p. 33.

<sup>146</sup> Howard Witt, *War's Ebb and Flow a Cycle of Revenge.*- Chicago Tribune, p. 1, 27.05.1992.

<sup>147</sup> See William Hale, Turkey, the Black Sea and Transcaucasia, in «Transcaucasian Boundaries», New York, St. Martin's Press, 1996, p. 64.

<sup>148</sup> Turkish Daily News, 27.05.1992.

<sup>149</sup> See Amberin Zaman, *Azerbaijan Looks to Ankara.- The Middle East*, № 213, 11.07.1992, p. 8; Graham E. Fuller, *Գլվ. աշխ.*, էջ 50; Turkish Daily News, 21.05.1992; Mustafa Aydin, *New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament*, p. 17, <http://www.sam.gov.tr/sampapers.php>; Nazmi Çora, *Birleşik Türk Devletleri*, Istanbul, 2004, s. 40.

<sup>150</sup> See Michael B. Bishku, Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus.- *Journal of Third World Studies*, Vol. 18 № 2, 2001, pp. 1-2; Turkish Daily News, 21.05.1992.

<sup>151</sup> См. об этом Ельцин Б., *Записки президента*, М., 1994, с. 226.

կանետեր և ռազմական հանդերձանք<sup>152</sup>: Իսկ 1992 թ. մարտ-ապրիլ ամիսներին Ադրբեջանի Գաբալա քաղաքի մոտակայքում գտնվող ԼԳՆ բազայում թուրք զինվորականները պատրաստեցին 450 արքեր-ջանցի կամավորներ, որոնց Ադրբեջանում անվանում էին «Համալսարանական գումարտակ», քանզի կամավորները հավաքագրվել էին Բաքվի համալսարանի ուսանողներից: 1992 թ. մայիսին այս գումարտակն ուղարկվեց Շուշին պաշտպանելու, սակայն հաջողություն չունեցավ<sup>153</sup>: 1992 թ. հուլիսի 5-ին թուրքական «Ջուռհուրիյեթ» օրաթերթը նշել էր, որ թուրքական 10 զենքավեր զոհվում են Ադրբեջանում և վարժեցնում են նրա ռազմական ուժերը<sup>154</sup>: Բացի այդ, ըստ ռուսական ռազմական հետախուզության տվյալների, 1992 թ. սեպտեմբերի դրությամբ ադրբեջանական բանակում կար 670 թուրք զինծառայող, այդ թվում՝ 550 զինվոր, 112 սպա և 8 զենքավա<sup>155</sup>:

Թուրք-ադրբեջանական հարաբերությունների ընդլայնման և ամրապնդման համար առանձնակի կարևոր գործոն հանդիսացավ էլիթեյի գլխավորած ժողովրդական ճակատի իշխանության գալը: Ուստի պատահական չէ, որ տվյալ ժամանակաշրջանում Ադրբեջանի նորընտիր նախագահ Ա. էլիբեյի ռազմական խորհրդակալն նշանակվեց թուրք զենքերալ Յաշար Դեմիրբուլակը, որը շուտով դարձավ նաև Ադրբեջանի Անվտանգության Խորհրդի անդամ<sup>156</sup>:

Սակայն թուրքիան, հաշվի առնելով միջազգային իրավիճակը և իր հենարավորությունները, խուսափում էր դարաբայան հակամարտությանն անմիջականորեն միջամտելուց: Մասնավորապես, 1992 թ. հուլիսի 3-ին Ռուսաստանում թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալը «Бакинский рабочий» թերթին տված հարցազրույցում հայտարարեց, որ թեև թուրքիան պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության գաղափարը, նա աջակցում է Դարաբայան հակամարտության խաղաղ կարգավորմանը և մերժում է հակամարտությանը ցանկացած ձևի ռազմական ներգրավվածությունը<sup>157</sup>: Ուս-

<sup>152</sup> Bhatti Robin, Bronson Rachael, NATO's Mixed Signals in the Caucasus and Central Asia - Survival, vol. 42, Autumn 2000, № 3, pp. 134-135.

<sup>153</sup> Ibid.:

<sup>154</sup> Levon Chorbajian, Patrick Donabedian and Claude Mutafian, նշվ. աշխ., էջ 34:  
<sup>155</sup> Արսեն Ավագյան, Թուրք ազգայնամուտների գործունեությունը Ադրբեջանում 1990-1994 թթ.: Հայկական բանակ, 3(49), 2006, էջ 50:

<sup>156</sup> Демоян Г., Турция и Карабахский конфликт, Ереван, 2006, с.111:

<sup>157</sup> See Mohiaddin Mesbahi, Central Asia and the Caucasus After the Soviet Union Domestic and International Dynamics, Gainesville: University Press of Florida, p.112.

տի թուրքիայի ղեկավար շրջանակները որոշեցին ոչ պաշտոնական, անուղղակի օգնություն ցույց տալ Ադրբեջանին, ինչը նրանք իրականացրեցին Ազգայնական շարժում կուսակցության (ԱՀԿ) և նրա առաջնորդ Ավիարսլան Թյուրքեշի միջոցով: Դրա վրա օրինակներից է ԱՀԿ-ի և Ադրբեջանի նախագահ էլիթեյի միջև ձեռք բերված պայմանավորվածությունը, որի արդյունքում Բաքվի մերձակայքում կառուցվեց «գորշ գայլերի» «Ռուզգար» անունը կրող ճամբարը, որտեղ բացի զինավարժություններից, դասավանդվում էր նաև դիվերսիայի մարտավարություն<sup>158</sup>: Շուտով էլիթեյի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ճամբարում վարժվող ազգայնամուտների զինելու նպատակով մի զիշերակ ընթացքում թուրքիայից Ադրբեջան տեղափոխվեց երկու ինքնաթիռ զենք ու զինամթերք, որոնք Բաքվի օդանավակայանում համընկեցին էլիթեյի փկնագործի հրամանատարին<sup>159</sup>: Հավելենք, որ «Ազերի եղբայրներին օգնելու» կարգախոսով «Գորշ գայլերը», որոնք հանդիսանում էին Ա. Թյուրքեշի գլխավորած թուրքական «Ազգայնական շարժում կուսակցության» մի մասնիկը, զենքի կոչեցին թուրք ազգայնականներին: «Գերչեք» շաբաթաթերթի տվյալներով, մինչև 1992 թ. հունիսը Նախիջևանի և Ադրբեջանի տարածքում տեղակայված էր մոտ 3 հազար թուրք կամավորական<sup>160</sup>: Թուրք կամավորների իր անդրադարձել նաև թուրքական «Հյուրիյեթ» թերթը՝ նշելով, որ հայերի դեմ կռվելու նպատակով թուրքիայից Բաքու են ժամանել մի խումբ կամավորներ: Թերթը մեջբերում է թուրք կամավոր Քեմալ Չաքրոլի խոսքերը. «Մենք պարող-դանցանք համակերպվել այն մտքի հետ, որ մեր պայանակալն հողերը անցնում են հայերի ձեռքը: Մենք չէինք կարող տանը նստել, երբ մեր ազերի եղբայրները ռազմաճակատում զոհվում են»<sup>161</sup>:

Այսպիսով ակնհայտ է, որ թուրքիան բավականին մեծ ռազմական աջակցություն էր ցուցաբերում Ադրբեջանին: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ մինչև 1992 թ. վերջը թուրքիայից Ադրբեջան են ժամանել ավելի քան 5-6 հազար թուրք զինվորներ և սպաներ, ապա կարելի է խոսել թուրքիայի, որպես Լեռնային Դարաբաղի հակամարտության մասնակից կողմի մասին: Հաջիև, անդրա-

<sup>158</sup> Արսեն Ավագյան, նշվ. աշխ., էջ 53:

<sup>159</sup> Առյուծ տեղում:

<sup>160</sup> Gerçek, Haftalık Haber Dergisi, № 1, 14.06.1992, s.12.

<sup>161</sup> Hüriyet, 26.07.1993.

դյառնալով թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությանը, նշում է, որ չի կարելի բացառել այնպիսի իրավիճակ, երբ շուտով թուրքական զենքը կդառնա արդրբեջանական ներմուծման կարևորագույն հողվածներից մեկը: Եվ այդ զենքն այսպես թե այնպես կարող է հայտնվել Յուլիսային Կովկասում<sup>162</sup>:

Զնայած Թուրքիայի և ՌԴ-ի միջև նկատվող լարվածությանը, Թուրքիան խրախուսում էր ՌԴ-ի հետ շփումները: Այս շրջանակներում ուշագրավ էր 1992 թ. հունիսի 23-26-ը Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ հայկական պատվիրակության այցելությունը Թուրքիա: Սևծովյան Տնտեսական Դամագործակցության Կազմակերպության հռչակագրի ստորագրման արտոդակարգի շրջանակներում տեղի ունեցավ ՌԴ Մախազաիի և Թուրքիայի վարչապետ Ա. Դեմիրելի հանդիպումը: Դանդիպման ընթացքում, անդրադառնալով ՌԴ-Թուրքիա երկկողմ հարաբերություններին, ՌԴ Մախազաիը նշեց, որ երկկողմ հարաբերությունները չպետք է կախման մեջ դրվեն հայարդրբեջանական հարաբերություններից, ինչին ի պատասխան, Դեմիրելն ընդգծեց, որ իրենք համաձայն են, բայց այնտեղ արյուն է հեղվում, և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող միակ հանգամանքը շարունակվող զինված ընդհարումներն են<sup>163</sup>: Նշենք, որ ՌԴ Մախազաիի Թուրքիա կատարած այցելությունից հետո հայ-թուրքական հարաբերություններում նկատվեց որոշակի դրական տեղաշարժ:

ՌԴ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունները բարելավելու և հաստակային առևտրատնտեսական կապերը զարգացնելու նպատակով 1992 թ. հունիսի 5-7-ը Իզմիրում տեղի ունեցող թուրքական տնտեսության զարգացման վերաբերյալ երրորդ կոնգրեսին մասնակցելու համար Թուրքիա մեկնեց հայկական պատվիրակությունը փոխվարչապետ Դրանտ Բագրատյանի գլխավորությամբ: 1992 թ. հունիսի 5-ին Իզմիրի ճախնագապետի գրասենյակում տեղի ունեցավ Դ. Բագրատյանի և Ա. Դեմիրելի հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ դիվանագիտական և սոցիալ-տնտեսական հարաբերություններ հաստատելու, Դարարաղի և Նախիջևանի շուրջ նկատվող լարվածությանն անջվող հարցեր: Բագրատյանը Դեմիրել-

լին լիդանցեց ՌԴ Մախազաիի նամակը, որում առաջարկվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել կողմերի միջև, ինչպես նաև նշվում էր, որ ՌԴ-ն պահանջներ չունի Նախիջևանի նկատմամբ և պատրաստ է համաձայնագիր կնքել նրա հետ<sup>164</sup>: Սեր կարծիքով այս երկու այցելությունները կարծես թե որոշակի խթան հանդիսացան հայ-թուրքական հարաբերություններում, քանզի այդ այցելություններից շատ չանցած՝ 1992 թ. օգոստոսի 23-25-ը, Թուրքիայի փոխարտգործնախարարի տեղակալ Բիլգին Ունանը, Բալկանների և Կովկասի վարչության տնօրենի տեղակալ Ջանդան Ազերը և ԱԳ գլխավոր քարտուղար Ալթայն այցելեցին Երևան<sup>165</sup>: Երկկողմ հանդիպումների ժամանակ կայանալով հայկական կողմը հայտարարեց, որ ՌԴ-ն պատրաստ է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագիր ստորագրել Թուրքիայի հետ, որին ի պատասխան՝ Ունանը նշեց, որ մինչ այդ ՌԴ-ն պետք է ճանաչի ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Այս հարցի կապակցությամբ հայկական կողմն ընդգծեց, որ ՌԴ-ն, անդամակցելով ՄԱԿ-ին, արդեն իսկ պարտավորվել է հարգել տարածքային ամբողջականության սկզբունքը<sup>166</sup>: Այնուամենայնիվ, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համաձայնագրի շուրջ բանակցությունները շարունակվեցին և մեծ մասամբ ամբողջական տեսք ստացան, բացառությամբ մեկ հարցի՝ գոյություն ունեցող սահմանների ճանաչման հարցի ձևակերպման: Կողմերը պայմանավորվեցին բանակցությունները շարունակել և ավարտի հասցնել 1993 թ. ծնունդը<sup>167</sup>:

Թուրքիայի և ՌԴ-ի միջև հարաբերություններում նկատվող դրական տեղաշարժի միտմանը նույնիսկ չվճասեց 1992 թ. սեպտեմբերի 17-ին ՌԴ արտգործնախարար Րաֆֆի Դովհաննիսյանի՝ Երկուպայի ստորիդի Ստամբուլյան հանդիպման ժամանակ Թուրքիայի հասցեին բավականին կոշտ հայտարարություններով հանդես գալը: Իր ելույթում Րաֆֆի Դովհաննիսյանն անդրադարձավ Դայոց ցեղաս-

<sup>162</sup> Гаджиев К.С., *Նշվ. աշխ.*, էջ 351:

<sup>163</sup> Դայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 70, թերթ 10-12:

<sup>164</sup> Դայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 70, թերթ 6-9:

<sup>165</sup> Киреев И., Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе 21 века, М., Клафт+ ИВ РАН, 2001, с. 366.

<sup>166</sup> Киреев И., *Նշվ. աշխ.*, էջ 366.

<sup>167</sup> Gerard J. Libaridian, *Modern Armenia: people, nation, state*, Chicago, Transaction Publishers, 2004, pp. 269-270.

պանուբյան հիմնահարցին, Թուրքիային մեղադրեց ԳԴ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատելու, ինչպես նաև Դարաբաղի խնդրում չեզոքություն չպահպանելու և ԵԱՀԽ-ին ԳԴ-ի անդամակցությանը խանգարելու համար<sup>166</sup>։ Անշուշտ, այս ելույթը բողոքի մեծ պլեբ բարձրացրեց Թուրքիայում։ Թուրքիայի արտգործնախարար Գիքմեթ Չեքինը, անդրադառնալով Րաֆֆի Դովհաննիսյանի ելույթին, նշեց, որ Եվրոխորհրդի Ստամբուլյան ժողովն այն տեղը չէր, որտեղ պիտի օգտագործվեին նման անհիմն պնդումներ<sup>167</sup>։ Իսկ Եվրոխորհրդում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ արտակարգ ու լիազոր դեսպան Այոննեմ Բյոքսուլը հայտարարեց, որ Րաֆֆի Դովհաննիսյանի ելույթը գարմաթե ու վիշտ է առաջացրել բուրբակյան կողմի մոտ՝ նշելով, որ Դովհաննիսյանի հրահրիչ ու ագրեսիվ ելույթը չի կարող Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների ծագող մի երկրի քաղաքական կամքի արտահայտությունը լինել<sup>170</sup>։ Րաֆֆի Դովհաննիսյանի ելույթը ոչ միանշանակ ընդունվեց ԳԴ-ի ղեկավար շրջանակներում։ ԳԴ վերադառնալուց հետո ԳԴ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հարկադրեց Րաֆֆի Դովհաննիսյանին հրաժարական ներկայացնել, որի ամենակարևոր պատճառը բերևա Թուրքիայի հետ հարաբերությունների խնդրում նրա և նախագահի հայացքներում առկա տարբերությունն էր<sup>171</sup>։ Դրանով իսկ ԳԴ-ի ղեկավարությունը հայտնում էր, որ այս ելույթը չէր արտահայտում պաշտոնական Երևանի տեսակետը։

Չնայած Րաֆֆի Դովհաննիսյանի կոշտ հայտարարություններին, 1993 թ. սկզբին, երբ սոցիալ-տնտեսական ճգնաժամը ԳԴ-ում հասավ իր գագաթնակետին, Թուրքիայի ղեկավարությունը թույլատրեց իր տարածքով փոխադրել արտասահմանից ԳԴ առաջվող մարդասիրական օգնությունը։

Բացի այդ, ԳԴ և Թուրքիայի միջև հարաբերություններում առկա լարվածությունը հաղթահարելու և երկկողմ հարաբերությունները կարգավորելու նպատակով 1992 թ. սեպտեմբերի վերջին ԱՄՆ-ում տեղի ունեցավ ԳԴ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և Թուրքիայի ԱԳ նախարար Գ. Չեքինի հանդիպումը։ Դանդիպումից հետո Գ. Չեքին-

ընդ հարցազրույց տվեց «Միլլիյեթ» բերթին, որտեղ նա նշեց, որ ԳԴ-ի և Թուրքիայի հարաբերություններում կարևորը Ադրբեջանի հարցն է՝ հավելելով, որ հայկական զինված ուժերը պետք է հետ քաշվեն Ադրբեջանի տարածքից, և այնուհետև Դարաբաղի քաղաքական իրավիճակը պետք է քննարկվի Մինսկի հանդիպման ժամանակ։ «Այս հարցերի շուրջ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից ես գտա որոշակի ըմբռնում՝ նշելով, որ Դարաբաղի քաղաքական ապագան կքննարկվենք հետո, հիմա անհրաժեշտ է կարգավորել մյուս խնդիրները»<sup>172</sup>։ Թվում էր, թե այս հանդիպման ընթացքում ծնեք բերված որոշակի փոփոխամածայնությունները կնպաստեին երկկողմ հարաբերությունների բարելավմանը, սակայն երբ հայկական ուժերը 1993 թ. ապրիլին գրավեցին Քելբաջարը, հայ-թուրքական հարաբերությունները կրկին ծայրաստիճան լարվեցին։

Թուրքիայի հակազդեցությունը հայերի կողմից Քելբաջարի գրավմանը չափազանց կտրուկ էր։ Այդ օրերին Թուրքիայի քաղաքական և ռազմական շրջանակներում ակտիվորեն սկսեց քննարկվել Դարաբաղյան հակամարտությանը Թուրքիայի հնարավոր ռազմական միջամտության հարցը։ Այդ կապակցությամբ «Գյուլիյեթ» բերթը գրում էր, որ «հայ-ադրբեջանական պատերազմի ընդլայնման հնարավորությունը ստիպեց Թուրքիային ռազմական պատրաստության վիճակի բերել Երրորդ բանակի զորամիավորումները։ Ինչպես հայտնում են զինվորական աղբյուրները, Սարիղամիշում, Աշքելյում, Կարսում, Արդահանում և Դումլույում գտնվող սահմանապահ զորքերը համալրվել են, և թուրքական ռազմական օդանավերը մշտական հեթոթապա թռիչքներ են իրականացնում»<sup>173</sup>։

Դատկանշական է, որ Քելբաջարի գրավումը Թուրքիայի համար լավ առիթ հանդիսացավ՝ ԳԴ-ն լիակատար շրջափակման ենթարկելու։ 1993 թ. ապրիլին, կապված Քելբաջարի իրադարձությունների հետ, Թուրքիայի կառավարությունը, ԳԴ-ն ներկայացնելով որպես դարաբաղյան հակամարտության մասնակից և մեղադրելով նրան Ադրբեջանի նկատմամբ բացահայտ ագրեսիա իրականացնելու մեջ, փակեց H-50 միջազգային օդային միջանցքը, արգելեց իր օդային տարածքով դեպի ԳԴ գնացող օդանավերի թռիչքները, փակեց Գյում-

<sup>166</sup> Cumhuriyet, 18.09.1992.

<sup>167</sup> Anatolia news agency, 18.09.1992.

<sup>170</sup> Anatolia news agency, 18.09.1992.

<sup>171</sup> Milliyet, 18.11.1992.

<sup>172</sup> Milliyet, 29.09.1992.

<sup>173</sup> Hürriyet, 08.04.1993.

րի-Կարս երկաթգծին, ինչպես նաև արգելեց իր տարածքով մարդա-սիրական օգնության առաքումը 33<sup>174</sup>։ Իր հերթին խիստ ելույթով հանդես եկավ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը, ով այդ օրերին պաշտոնական այցով գտնվում էր Ղրղզստանում. «Ի՞նչ կլինի, եթե 33-ի սահմանի մոտ զորախաղեր անցկացնենք, և մեր ռումբերից ե-րեքն ընկնի 33-ի տարածքը։ Ի՞նչ կլինի, եթե Նախիջևան մեկ-երկու զորամիավորում մտցնենք։ Նախիջևանի հետ կապված ենք պայմա-նագրով։ Ի՞նչ կլինի, ո՞վ մեզ ինչ կանի, ո՞վ պիտի գա միջամտի։ Ռ՝վ կարողացավ միջամտել Բոսնիայի դեպքերին։ 3ամաշխարհային քա-ղաքականության մեջ առանց ռիսկի դիմելու ոչնչի չենք հասնի»<sup>175</sup>։

Քիչելեկում Թուրքիայի դեսպանությունում տված հարցազրույցի ժամանակ անդրադառնալով Քելրազարի գրավմանը՝ Օզալը ճշել էր. «Մենք խորհրդակցում ենք Ռուսաստանի հետ, լուծումներ ենք որո-նում, բայց հաշվի առնող չկա։ Վերևից և ներքևից միջանցք բացեցին և փաստորեն այդ շրջանը կապեցին 33-ին։ Այլևս դարբաղյան խնդիր չկա, կան 33-ի նկրտումները Մեծ 3այաստանի վերաբերյալ։ Կարծում եք, այստեղ կանգ է առնելու, ուրիշ բան չի անելու... Ինձ մի հարցրեք, 33 մտնել պետք է, քե ոչ։ Բայց Թուրքիան պետք է լավ հաշվարկի իր քայլերը»<sup>176</sup>։ Ուշագրավ է, որ Օզալի հայտարարու-թյունից անհանգստացած՝ Թուրքիայի ԱԳ նախարար 3. Չեթինը լքեց Թուրքիայի դեսպանության շենքը, իսկ երեկոյան հրաժարվեց մեկ-նաբանել նախագահի խոսքերը<sup>177</sup>։ Դա նշանակում էր, որ Թուրքիայի նախագահի ռազմաշունչ հայտարարությունը ինքնաբուխ էր և չէր արտացոլում երկրի դեկլարության ընդհանուր դիրքորոշումը։

Ի տարբերություն Օզալի ռազմաշունչ հայտարարությունների, Թուրքիայի վարչապետ Ա. Դեմիրելն ավելի զգույշ և հավասարա-կշռված հայտարարություն արեց։ Նա դեմ էր հակամարտությանը Թուրքիայի ռազմական միջամտությանը, ուստի անդրադառնալով ռազմական միջամտության հնարավորությանը՝ Թուրքիայի վարչա-

պետը հայտարարեց. «...3այաստանի մեջքին կանգնած են ԱՄՆ և Ֆրանսիան։ Այդ պատճառով արտագործնախարարությունն ինձ խոր-հուրդ չտվեց բանակցել Էլիթնոնի և Միտերանի հետ։ Բացի այդ, Թուրքիայում կան ուժեր, որոնք պահանջում են անցնել սահմանը։ Ես դրանց պատասխանում եմ, որ գնալը հեշտ է, բայց այնտեղ ում հետ եմ հանդիպելու, ամերիկացիների»... Այնտեղ իմ դեմ դուրս կգա Ռուսաստանը, Կարմիր բանակը»<sup>178</sup>։

Փաստորեն Քելրազարի գրավումից հետո 33-ի նկատմամբ Թուր-քիայի ուժ չկիրառելը մեր կարծիքով պայմանավորված էր հետևյալ պատճառներով։ Երկրի նախագահի ազդեցիվ տրամադրվածությունը աջակցություն չէր գտնում վարչապետ Ա. Դեմիրելի, ԱԳ նախարար 3. Չեթինի և Գլխավոր Շտաբի կողմից։ Վերջինները գտնում էին, որ 33-ի վրա հարձակումը կհանդիպի միջազգային հանրության, մասնավորա-պես ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կոշտ ընդդիմությանը։ Իսկ արտաքին իմ-նական պատճառը այն էր, որ 33-ի վրա հարձակումը նշանակում էր պատերազմ Ռուսաստանի դեմ։

Թուրք-հայկական լարված հարաբերությունների մթնոլորտում 1993 թ. հուլիս-օգոստոսին հայկական ուժերը նոր հաջողություններ ունեցան։ ԼՂՀ պաշտպանական բանակին հաջողվեց գրավել Աղդա-մը և Ֆիզուլին, Ջարայիլը և Ջանգելանը, որը բողոքի մեծ ակիբ բարձրացրեց Թուրքիայում։ 3այկական ուժերի հաջողությունների կապակցությամբ 1993 թ. հուլիսի 25-ին Թուրքիայի նախագահ Ա. Դեմիրելի մտավայրում տեղի ունեցավ Թուրքիայի Անվտանգու-թյան խորհրդի դեմիսիա նիստը։ Նիստից հետո 3. Չեթինը լրագրող-ներին հայտնեց, որ օգտվելով Աղբյուրներից և ներքին անվայրույթու-նից՝ հայերը նոր տարածքներ էին նվաճել՝ հայերին զգուշացնելով, որ այդ տարածքները չեն կարողանալու իրենց ձեռքում պահել։ «33-ն շատ բան է վճարելու այս տարածքների համար»<sup>179</sup>։ Իսկ Ա. Դեմի-րելը, պատասխանելով «Ջունիուրիյեթի» թղթակցի հարցին, քե ար-դյո՞ք «Աղբյուրներից հետ ռազմաշունչ համագործակցության պայմա-նագրի կնքման հարցն օրակարգի մեջ է», ասաց, որ ամեն ինչ հնա-րավոր է՝ հավելելով, որ նախ պետք է ամրացնելին հարցի քաղաքա-կան հիմքը, բանցիկ հայերի ազդեցիկ համաշխարհային հասարա-

<sup>174</sup> 33 ԱԳ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժնի, 3այաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 5, 3այաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, 3ա-սարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան 2005, էջ 109։

<sup>175</sup> 33 ԱԳ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժնի, 3այաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 5, 3այաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, 3ա-սարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան 2005, էջ 109։

<sup>176</sup> Milliyet, 08.04.1993.

<sup>177</sup> Ibid.:

<sup>178</sup> Sabah, 05.04.1993.

<sup>179</sup> Hürriyet, 26.07.1993.

կայնության օրակարգի համար առաջնային խնդիրներից չէ: «Նախ՝ հարցը մտցնենք այդ օրակարգի մեջ: Մնացած քայլերը կկատարենք ելնելով իրավիճակից»<sup>100</sup>:

Այսպիսով, Թուրքիայի և ՀՀ-ի միջև հարաբերությունները բավականին լարված բնույթ էին կրում, ուստի չէր բացառվում նաև թուրքական ռազմական միջամտությունը դարաբաղյան հակամարտությանը: Թուրքիայի որոշ քարծրաստիճան պաշտոնյաներ նույնիսկ բացեփրաց խոսում էին դրա մասին: Օրինակ, հայկական ուժերի կողմից Քելբաջարի գրավումից հետո հերթական անգամ ռազմաշունչ հայտարարությամբ հանդես եկավ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը՝ հայտարարելով, որ Թուրքիան ընդլայնելու էր ռազմական համագործակցությունը Ադրբեջանի հետ և զենք էր ուղարկելու այդ երկիր՝<sup>101</sup>: Հայկական ուժերի հաջողություններից անհանգստացած Թուրքիան 1993 թ. սեպտեմբերի սկզբներին հայ-թուրքական սահմանի երկայնքով տեղակայեց ավելի քան հիսուն հազարանոց զորք<sup>102</sup>: Այդ օրերին Թուրքիայի վարչապետ Թ. Չիլեբը հարջագրույցներից մեկում սպառնաց «զնվ Թուրքիայի խորհրդարան և պատերազմ հայտարարել ՀՀ-ին, եթե հայերը դիպչեն Նախիջևանին»<sup>103</sup>:

Հատկանշական է, որ թուրքական ռազմական ներխուժման հնարավորության մասին իր հուշերում անդրադարձել է այդ տարիներին ՀՀ-ում Չունաստանի դեսպան Լեոնիդաս Խրիզանտոպուլոսը: Իր հուշերում նա նշում է, որ 1993 թ. հոկտեմբերի սկզբներին Թուրքիան, օգտվելով Ռուսաստանում ստեղծված խորհրդարանական ճգնաժամից, ձգտում էր հարված հասցնել ՀՀ-ին և Վրաստանին: 1993 թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ-ի զինված ուժերը Թուրքիայի հնարավոր հարձակմանը դիմակայելու նպատակով բերվեցին ամենաբարձր պատրաստության<sup>104</sup>: Ըստ Խրիզանտոպուլոսի, Մոսկվայում բռնկված պետական հեղաշրջման դեկավր, Ռուսաստանի խորհրդարանի նախագահ Ռուսլան Խասբուլատովի և Թուրքիայի վարչապետ Թանուս

Չիլեբի միջև գոյություն է ունեցել զաղտնի բանավոր պայմանավորվածություն, համաձայն որի հակաեղեցիկյան ուժերի հաղթանակի պարագայում թուրքական զինված ուժերը պատրաստվում էին հարվածել ՀՀ-ից<sup>105</sup>:

Այնուամենայնիվ Թուրքիան խուսափեց անմիջական մասնակցություն ունենալ ԼՂ հակամարտությունում՝ սոսկ ընդլայնելով իր ռազմա-ֆինանսական աջակցությունը Ադրբեջանին: Թեև Թուրքիան պաշտոնապես չէր մասնակցում հայ-ադրբեջանական հակամարտությանը, սակայն միայն 1993 թ. նա պաշտոնապես Ադրբեջանին 30 մլն. դոլարի վարկ հատկացրեց՝ զենք զննելու համար<sup>106</sup>: Բացի այդ, թուրքական կառավարությանը դեղորայքի և պարենամթերքի բողի տակ 1992 թ. արդեջանցիներից մատակարարեց զենք և զինամթերք, այդ թվում՝ 5 հազար «Ստինգեր» տեսակի հրթիռներ, հրթիռային կայանք, ականներ և ակամանետեր<sup>107</sup>: Այսպիսով, Թուրքիան դարձավ դարաբաղյան հակամարտության անմիջական մասնակից՝ նաև իր անուղղակի մասնակցությունը բերելով Ղարաբաղում ընթացող ռազմական գործողություններին:

Թուրքիան ԼՂ հակամարտությունում Ադրբեջանին բացի ռազմաֆինանսական աջակցությունից նաև հսկայական դիվանագիտական աջակցություն է ցուցաբերել:

Թուրքիան, 1991 թ. սկսած, պատրաստակամություն հայտնեց միջնորդ հանդիսանալ ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործում: Սկզբնական շրջանում Թուրքիան կարծես փորձում էր ակնհայտ ադրբեջանամետ քաղաքականություն չկարել Ղարաբաղյան հակամարտությունում: Այսպես, այն բանից հետո, երբ Ադրբեջանը վերացրեց ԼՂ-ի ինքնավարության կարգավիճակը, Թուրքիայի վարչապետ Սուլեյման Ղեմիլբեյը դիմեց իր ադրբեջանցի գործընկերոջը՝ Հասան Հասանովին՝ կոչ անելով ադրբեջանական կողմին ձեռնապահ մնալ կտրուկ քայլերից, «չենթարկվել սադրանքներին և չբարդացնել իրավիճակը»<sup>108</sup>: Սակայն հոջալուի գրավումից հետո Թուրքիան հանդես եկավ կտրուկ հայտարարություններով և սկսեց ակտիվ հակահայկական դիվանագիտական գործունեություն ծավա-

<sup>100</sup> Cumhuriyet, 27.07.1993.

<sup>101</sup> See Svante E. Cornell, Undeclared War: The Nagorno-Karabakh Conflict Reconsidered. - Journal of South Asian and Middle Eastern Studies, vol. 20, № 4, Summer 1997, p. 14.

<sup>102</sup> Michael B. Bishku, նշվ. աշխ., էջ 3:

<sup>103</sup> Ibid.

<sup>104</sup> Leonidas T. Chrysanthopoulos, Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton and London, 2002, pp. 76-77.

<sup>105</sup> Leonidas T. Chrysanthopoulos, նշվ. աշխ. էջ 78:

<sup>106</sup> Hürriyet, 23.12.1993:

<sup>107</sup> Gerçek, Haftalık Haber Dergisi, № 1, 14.06.1992, s. 10.

<sup>108</sup> Ազգ. 11.12.1991.

ել: 1992 թ. փետրվարին Վաշինգտոնում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ հանդիպման ժամանակ թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը կոչ էր արել ամերիկյան կողմին ձեռնպահ մնալ ԼՂ հարցում ԳԴ-ին աջակցելուց: Ավելի ուշ անդրադառնալով այդ հարցին՝ Ս. Դեմիրելը նշեց, որ Լեռնային Ղարաբաղի նարցի շուրջ Ադրբեջանի հետ պայքարում ԳԴ-ին աջակցելը հղի է տարածաշրջանային պատերազմով, որի ընդարձակման պարագայում թուրքիան չի կարող չեզոքություն պահպանել<sup>189</sup>:

Թուրքիայի հակահայկական ակնհայտ քայլերից էր նրա փորձը՝ 1992 թ. սկզբներին խոչընդոտել Եվրոպայի Անվտանգության և Դաժնագործակցության հորիզոնի (ԵԱՀԿ) ԳԴ-ի անդամակցությանը<sup>190</sup>: Թուրքիան նույնիսկ սպառնաց վետո դնել ԵԱՀԿ-ին ԳԴ-ի անդամակցությանը<sup>191</sup>: Որպես պատրվակ, թուրքական կողմը հայտարարեց, թե իբր ԳԴ-ն թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ ունի: Սակայն ի վերջո թուրքիան ստիպված էր հրաժարվել իր նախնական դիրքորոշումից: Դասկանշական է, որ 1992 թ. գարնանը Թ. Օզալը, անդրադառնալով Ղարաբաղում տեղի ունեցող ռազմական գործողություններին, նշել էր, որ թուրքիան չեզոք դիրք կգրավի, եթե ռազմական գործողությունները չընդլայնվեն, հակառակ դեպքում դա դժվար կլինի անել. քանզի թուրքիայում բնակվում են մոտ 2-3 մլն ադրբեջանցիներ<sup>192</sup>:

Դեռևս 1992 թ. սկզբներին թուրքիայի ղեկավար շրջանակները լավ էին գիտակցում, որ ռազմական ներխուժումը Կովկաս մեծապես վնասելու է Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, ուստի պատահական չէ, որ 1992 թ. մայիսին թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը, պաշտոնական այցով գտնվելով Ադրբեջանում, թեև նշել էր, որ «Այսօր մեր եղբայրների արյունը հոսում է Ղարաբաղում, և դուք զիտեք, որ թուրքիան կանգնելու է ձեր թիկունքին ու երբեք չի լքելու ձեզ», դրա հետ մեկտեղ հասկացրել էր, որ աջակցությունը լինելու է դիվանագիտական ասպարեզում<sup>193</sup>:

Ղարաբաղում և Նախիջևանի շուրջ ստեղծված իրադարձությունների կապակցությամբ 1992 թ. մայիսի 20-ին թուրքիայի Ազգային Սեծ ժողովի հատուկ նիստում քննարկվեց «ԳԴ-ի կողմից Նախիջևանի և Ղարաբաղի դեմ սամնազերծված ագրեսիայի հարցը»: Դիմնական զեկույցով ելույթ ունեցավ թուրքիայի ԱԳ նախարար Գ. Չեքինը՝ հայտարարելով, որ մինչև այս պահը թուրքիան այս հարցում աշխատել էր չեզոք դիրք գրավել, և նրա դիվանագիտական ջանքերն ուղված էին եղել հարցի խաղաղ կարգավորմանը, սակայն այսուհետև թուրքիան բոլոր միջազգային ատյաններում սատար էր կանգնելու Ադրբեջանին: «Թուրքիան սահմանների փոփոխություն թույլ չի տա: Այստեղից ծագող բոլոր հետևանքների համար պատասխանատու է ԳԴ-ն»<sup>194</sup>: Այսպիսով սկիզբ դրվեց թուրքիայի ակտիվ դիվանագիտական աջակցությանը Ադրբեջանին:

Թուրքիան ակտիվացրեց իր դիվանագիտական գործունեությունը միջազգային ասպարեզում հատկապես 1993 թ. ապրիլից, երբ հայկական ուժերը գրավեցին Քելբաջարը: Ի պատասխան դրա, նա հանդես եկավ կտրուկ հայտարարություններով և քայլեր ձեռնարկեց, որպեսզի միջազգային հանրությունը դատապարտի այդ քայլը: Անկարան նախագրուշացրեց համաշխարհային հանրությանը, որ եթե Ադրբեջանի դեմ ուղված հայկական հարձակումները չկանգնեցվեն, թուրքիան պատասխանատու չէ հեռարվոր հետևանքների համար: Այդ կապակցությամբ 1993 թ. ապրիլի 3-ին Ս. Դեմիրելը համոզես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ աշխարհը և ԳԴ-ն ճիշտ չգնահատեցին թուրքիայի համբերատարությունը՝ հայտնելով, որ իրենց համբերության բաժակը լցվել է և թուրքիան դիմելու է ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնին<sup>195</sup>: Իսկ ապրիլի 7-ին թուրքիայի ԱԳ հրավիրվեցին ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնի անդամ երկրներից Ռուսաստանի, Սեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ղեկավարները, որոնց նախագրուշացվեցին թուրքիայի հնարավոր միջամտության մասին: Թուրքիայի ԱԳ և ներկայացուցիչները, ներկայացնելով հնարավոր միջամտության անհրաժեշտությունը, հայտարարեցին, որ «Կախրուտմ հարձակումները նույնպես անարժազանք մնացին, և կատարվեց միջամտություն»<sup>196</sup>:

<sup>189</sup> Nicolay Hovhannissyan, The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, 1999, p. 53.

<sup>190</sup> Ազգ, 25.04.1992.

<sup>191</sup> Демоян Г., Գժ, աշխ., էջ 71:

<sup>192</sup> См. в том же месте.

<sup>193</sup> Svante E. Cornell, Turkey and the Conflict in Nagorno Karbakh..., pp. 63-65; Michael B. Bishku, Գժ, աշխ., էջ 1:

<sup>194</sup> Milliyet, 21.05.1992.

<sup>195</sup> Cumhuriyet, 04.04.1993.

<sup>196</sup> Hürriyet, 04.08.1993.

Անկարան նաև հանդես եկավ մի շարք դիվանագիտական նախաձեռնություններով, հատկապես ՄԱԿ-ում և ԵԱՀԿ-ում: Այսպես, 1993 թ. ապրիլի 30-ին ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնը ներդրուցեց իր առաջին № 822 բանաձևը, որն առնչվում էր ԼՂ հակամարտությանը: № 822 բանաձևը պահանջում էր դադարեցնել բռնությունները, հայկական կողմից պահանջում էր ուժերը դուրս բերել Քելբաջարից և մյուս տարածքներից, ինչպես նաև կոչ էր անում վերսկսել բանակցությունները ԵԱՀԿ շրջանակներում<sup>197</sup>:

Իսկ 1993 թ. մայիսի 3-ին ԱՄՆ, Ռուսաստանի և Թուրքիայի ներկայացուցիչների կողմից կազմված խաղաղարար նախաձեռնության փաստաթուղթը ներկայացվեց հակամարտող կողմերին: Ըստ այս եռակողմ նախաձեռնության, հայկական ուժերը պետք է դուրս բերվեին Քելբաջարից, այնուհետև հաստատվելու էր զինադադար, որին հաջորդելու էր ԵԱՀԿ շրջանակներում հակամարտության կարգավորմանը ուղղված համապարփակ նախագծի մշակումը: Սակայն այս նախաձեռնությունը հակամարտող կողմերի հավանությանը չարժանացավ<sup>198</sup>:

Ղարաբաղում ռազմական գործողությունների դադարեցման նպատակով 1993 թ. հուլիսի 29-ին ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնի կողմից ընդունվեց № 853 բանաձևը: Վերոհիշյալ բանաձևը դատապարտում էր արդեթյանական հողերի գրավումը և կոչ էր անում անհապաղ «հայկական զորքերը դուրս բերել Ադղամի շրջանից և Ադրբեջանի մյուս գրավված տարածքներից», ինչպես նաև շարունակել բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում<sup>199</sup>:

Ֆիզուլիի, Ջարայիլի և Ադղամի մոտակա շրջանի վրա հայերի հարձակումներից հետո, Թուրքիան այդ հարցը 1993 թ. օգոստոսին մտցրեց ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնի քննարկմանը: Այդ հարցի վերաբերյալ օգոստոսի 18-ին ընդունած հայտարարության մեջ հորիզոնը պահանջեց անհապաղ, ամբողջությամբ և անվերապա հորին դուրս բերել հայկական զորամիավորումները Ֆիզուլիից, Քելբաջարից, Ադղամից և գրավված մյուս շրջաններից: Բացի այդ, կոչ

էր արվում ԳԴ-ին՝ օգտագործելու իր բացառիկ ազդեցությունը՝ իրականացնելու դա և ձեռք բերելու հավաստիացումներ, որ ԼՂԴ հայկական ուժերը չեն ընդլայնի իրենց գործողությունները<sup>200</sup>: Հատկանշական է, որ Թուրքիան համառոտեց անունը, որի հայտարարությունն անտեսելու դեպքում «ագրեսորների դեմ» պետք է պատժամիջոցներ կիրառել: Սակայն դա ի սկզբանե դատապարտված ձեռնարկում էր, քանի որ Ռուսաստանը, որպես Անվտանգության հորիզոնի մշտական անդամ, կօգտագործեր իր վետոյի իրավունքը:

1993 թ. հոկտեմբերին ռազմական գործողությունները կրկին լայն թափ ստացան: Այդ կապակցությամբ 1993 թ. հոկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնի կողմից ընդունվեց № 874 բանաձևը, որով կոչ էր արվում անհապաղ հրադադար հաստատել, վերացնել հենահաղորդակցային և տրանսպորտային բոլոր խոչընդոտները<sup>201</sup>: Սակայն վերոհիշյալ բանաձևերը որևէ նպաստ ազդեցություն չունեցան ԼՂ հակամարտության կարգավորման գործում: Ուստի 1993 թ. նոյեմբերի 12-ի ՄԱԿ-ի Անվտանգության հորիզոնի ընդունեց ԼՂ հակամարտության վերաբերյալ իր չորրորդ՝ № 884 բանաձևը, որով դատապարտվում էր հայկական ուժերի կողմից Ջանգելանի և Գորադիզի գրավումը, և կոչ էր արվում ԳԴ-ին՝ օգտագործելու իր ազդեցությունը՝ Ղարաբաղում հակամարտությունն ավարտի հասցնելու համար<sup>202</sup>:

Չավենեք, որ Ռուսաստանի բացառիկ միջնորդության շնորհիվ 1994 թ. մայիսի 12-ին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները դադարեցվեցին և հաստատվեց զինադադար<sup>203</sup>: Հատկանշական է, որ նոյեմբերի 1994 թ. Քիշկեյան զինադադարի համաձայնագրի ստորագրումից հետո Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց բանակցային գործընթացում, մասնավորապես ջանալով ԼՂ-ում «տեղակայվելիք» միջազգային խաղաղապահ ուժերում թուրքական ստորաբաժանում ընդգրկել, որի հիմնական նպատակն էր ապահո-

<sup>197</sup> Freddy De Pauw, Turkey's Policies in Transcaucasia, - Contested borders in the Caucasus, VUB University Press, 1996, pp. 118-119;

<http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0801.htm>.

<sup>198</sup> Carol Migdalovitz, Armenia-Azerbaijan Conflict CRS Issue Brief, Congressional Research Service . The Library of Congress, Updated December 4, 2001, p. 7.

<sup>199</sup> Ibid.:

<sup>200</sup> Carol Migdalovitz, նշվ. աշխ., էջ 7:

<sup>201</sup> Freddy De Pauw, Turkey's Policies in Transcaucasia, - Contested borders in the Caucasus, VUB University Press, 1996, p. 118-119, <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0801.htm>.

<sup>202</sup> Carol Migdalovitz, նշվ. աշխ., էջ 8:

<sup>203</sup> Edmund Herzing, The New Caucasus, Armenia, Azerbaijan and Georgia, London, 1999, p. 67.

ԹՈՒՐԻՔԻԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅՅԻՆ ԿՈՎԿԱՍԱՆ 1995-2001 թթ.  
(ԵԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՊԵԿՏ)

2.1. ԹՈՒՐԻՔԱՅԻ ԵԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ-Ի ԵՎԱՍՏԱՄԲ 1995-2001 թթ.

վել իր ռազմական ներկայությունը հարավկովկասյան տարածաշրջանում: Թուրքիայի ռազմական նկրտումների վառ օրինակ է Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր Շտաբի պետ Դոդան Գյուրեշի 1994 թ. հուլիսին Բաքվում արած հայտարարությունը: Ի պատասխան լրագրողների այն հարցադրման, որ հայկական կողմը դեմ է լինելու Թուրքիայի ռազմական ներկայությանը Ղարաբաղում, Գյուրեշն աներկիմաստ ձևով պատասխանեց. «Սերբերը նույնպես դեմ էին բուրջական ներկայությանը, սակայն ներկայումս Բոսնիայում գտնվում է 1500 թուրք զինվոր»<sup>204</sup>: Սակայն Թուրքիայի բոլոր այդ ջանքերն ու գործողություններըրը եական հաջողություն չունեցան:

Այսպիսով, զնահատելով Թուրքիայի քաղաքականությունը ՀՀ-ի հանդեպ միջազգային հարաբերությունների տեսության տեսանկյունից, կարելի է այն բնութագրել որպես հարկադրման «coercion» քաղաքականություն, որի նպատակն էր հասնել նրան, որ ՀՀ-ն ստիպված լինի ենթարկվել Թուրքիայի հարկադրանքներին: Որպես հարկադրման միջոց օգտագործվում էին վերը նշված նախապայմանները<sup>205</sup>:

Թեև Թուրքիան հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՀՀ-ի հետ, այնուամենայնիվ 90-ականների սկզբին, ելնելով Հարավային Կովկասում իր ռազմավարական, քաղաքական և տնտեսական նպատակներից, որոշակի քայլեր ձեռնարկեց ՀՀ-ի հետ հարաբերությունների հաստատման ուղղությամբ, հատկապես առևտրատնտեսական ոլորտում: Սակայն Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի հաղթանակները Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում հակահայկական տրամադրություններ առաջացրին, և 1992 թ. փետրվարից սկսած՝ ԼՂ հիմնահարցը դարձավ կարևոր քաղաքական գործոն ՀՀ-ի հետ Թուրքիայի հարաբերություններում, ինչի արդյունքում Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը սկսեց պայմանավորել հիմնականում այդ հիմնահարցում առաջընթացով:

1994 թ. մայիսի 12-ին Ռուսաստանի միջնորդությամբ դարաբաղյան հիմնահարցում հակամարտող կողմերի միջև հրադադարի հաստատումից հետո Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերը բավականին ուժեղացան, ինչի արդյունքում փաստորեն կասկածի տակ դրվեցին Հարավային Կովկասում ՌԴ-ի ազդեցությանը հավակնջելու և հայ-ադրբեջանական հակամարտությունում որոշիչ դեր խաղալու Թուրքիայի հնարավորությունները:

Սիսա այս համատեքստում ուշազրավ էին Թուրքիայի քաղաքական դիրքորոշման փոփոխության դրսևորումները՝ մասնավորապես ՀՀ-ի հետ փոխհարաբերություններում բարելավման միտումներ հանդես բերելը: Անկարայի կողմից հայ-թուրքական հարաբերությունների բարելավման փորձերի շրջանակներում տպավորիչ էր 1995 թ. փետրվարին Թուրքիայի ԱԳ նախարար Մուրադ Քարաչալընի հայտարարությունը, ըստ որի Թուրքիան դեմ չէր ՀՀ տարածքով

<sup>204</sup> Демоян Г., *նշվ. աշխ.*, էջ 128:

<sup>205</sup> Ավելի մանրամասն տես Սաֆրաժյան Ք., Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания, Արևմտիկ և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2002, քիվ 21, էջ 147-155:

կասպիական նավթամուղի անցկացման հնարավորությանը<sup>206</sup>։ ԳԴ-ի նկատմամբ թուրքիայի քաղաքականության փոփոխությունների համատեքստում հիշատակման է արժանի այն փաստը, որ 1995 թ. փետրվարին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռիչարդ Չոլբրուքը ԱՆԿարայում ԳԴ-ի հետ փոխհարաբերությունների բարելավման կոչով դիմեց թուրքիայի ղեկավարությանը, որը խիստ արձագանք ստացավ Ադրբեջանում։ Այդ կապակցությամբ 1995 թ. փետրվարի 27-ին Ադրբեջանի նախագահ Չեյդար Ալիևի խորհրդական Վաֆա Գուլուզադեին հայտարարել էր. «Քանի դեռ հայերը դուրս չեն եկել Ադրբեջանի գրավյալ տարածքներից, Երևանի հետ հարաբերությունների կարգավորումը թուրքիայի կողմից դավաճանություն է արդրեջանցիների նկատմամբ»<sup>207</sup>։ Հատկանշական է, որ թուրքիան ոչ միայն տեղի չտվեց ադրբեջանական հայտարարությանը, այլև զայրույթով պատասխանեց Բաքվի արձագանքին՝ ընդգծելով, որ «թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քննաձեռնարկ չի առաջնորդվում»<sup>208</sup>։

Ի պատասխան 90-ականների երկրորդ կեսին թուրքիայի կողմից ԳԴ-ի հետ հարաբերությունների բարելավման փորձերին և հայտարարություններին՝ ԳԴ իշխանությունները ևս ընդառաջ քայլեր ձեռնարկեցին։ Մասնավորապես, 1995 թ. փետրվարին ԳԴ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավոր խորհրդական, հատուկ հանձնարարություններով դեսպան ժիրայր Լիպարիոյանի գլխավորությամբ հայկական պատվիրակությունը ժամանեց թուրքիա՝ մասնակցելու ԱՆԿարայում անցկացված «ԱՄՆ/տանգրությունը, կայունութունը, բարգավաճումը և անկախությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում» միջազգային գիտական կոնֆերանսին, որին մասնակցում էին նաև Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի, թուրքիայի, Ադրբեջանի, Եվրամիության և ԵԱԿԿ Մինսկի խմբի պաշտոնական ներկայացուցիչները<sup>209</sup>։

Թուրքիա կատարած այցի ընթացքում հայկական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի, վարչապետ Թանսու Չիլլերի և այլ բարձրաստիճան պաշ-

տոնյաների հետ, որոնց ընթացքում շոշափվեցին երկկողմ հարաբերություններին առնչվող խնդիրներ<sup>210</sup>։ Ըստ թուրքական «Յուրիյե» քերթի, Ա. Դեմիրելիի հետ հանդիպման ժամանակ թուրքիայի նախագահը նշեց, որ եթե հայերը հետ քաշվեն գրավված արդրեջանական տարածքներից և Շուշի քաղաքից, թուրքիան կարձագանքի ԳԴ-ի ակնկալիքներին<sup>211</sup>։

1995 թ. մարտին Կոպենհագենում ՍԱԿ-ի կողմից կազմակերպված սոցիալական զարգացումների և հիմնախնդիրների զագաթաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Ա. Դեմիրելի և Լ. Տեր-Պետրոսյանի հանդիպումը, որի ընթացքում Դեմիրելը, ԳԴ-ի նախագահին ներկայացնելով ԼՂ հակամարտության հետևանքով թուրքիային հասցրած վնասները, ընդգծեց, որ այս հակամարտությունը խանգարում է թուրքիային Միջին Ասիա դուրս գալ, ինչպես և ուշացնում է նավթամուղի ծրագրի իրականացումը։ Եշելով, որ Ադրբեջանի հետ խնդիրների լուծման դեպքում թուրքիան ԳԴ-ին կարող է անհրաժեշտ օգնություն ցույց տալ, Դեմիրելը նշեց. «Ի՞նչ վառ կտին, եթե նավթամուղն անցնի ձեր երկրով։ Լուծե՛ք ձեր խնդիրներն Ադրբեջանի հետ։ Դրանք վնաս են հասցնում մեզ»<sup>212</sup>։

ԳԴ-ի հետ հարաբերությունների բարելավմանն էր ուղղված 1995 թ. ապրիլին թուրքիայի կառավարության որոշումը՝ բացել իր օդային տարածքը դեպի ԳԴ և այնտեղից ուղևորվող օդանավերի համար։ Այդ կապակցությամբ 1995 թ. մայիսի 20-ին թուրքիայի արտգործնախարարությունը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որտեղ մասնավորապես նշվում էր, որ «Թուրքիայի կառավարությունը որոշել է վերաբացել H-50 օդային միջանցքը, որը փակվել էր 1993 թ. սկզբին դեպի ԳԴ և Հայաստանից դուրս բոլոր թռիչքների համար»<sup>213</sup>։ Այս ֆոնի վրա թուրքիայում մեծ արձաքանց ստացավ 1995 թ. հունիսի 27-29 Ստամբուլի էսենյուրկի շրջանի քաղաքապետ Գյուլբերուզ Չափանի պատվիրակության այցը Երևան, և մասնավորապես վերջինի այցելությունը Ծիծեռնակաբերդում Եղեռնի զոհերի հուշահամալիր, որպես հարգանքի մատուցում<sup>214</sup>։ Սա առաջին և

<sup>206</sup> Независимая Газета, 18.02.1995.

<sup>207</sup> Հանրո Չարթյան, Պարաբալյան հիմնախարը հայ-թուրքական... էջ 38:

<sup>208</sup> Cumhuriyet, 25. 02. 1995.

<sup>209</sup> Ազգ, 21.02.1995:

<sup>210</sup> Ազգ, 28.02.1995:

<sup>211</sup> Hürriyet, 01.03.1995.

<sup>212</sup> Hürriyet, 13.03.1995.

<sup>213</sup> ԳԴ ԱԿ, Սերժավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 7:

<sup>214</sup> Հանրո Չարթյան, Պարաբալյան հիմնախարը հայ-թուրքական ... էջ 34:

մինչ օրս միակ դեպքն է, երբ Թուրքիայի պաշտոնատար անձն այցելել է Ծիծեռնակաբերդի Եղեռնի զոհերի հուշահամալիր:

Նշենք, որ 1995 թ. աշնանը հայ-թուրքական հարաբերությունները նորից թուրքական լրատվամիջոցների և հասարակական-քաղաքական շրջանակների ուշադրության կենտրոնում էին: Մասնավորապես, 1995 թ. սեպտեմբերի 23-ին թուրքական «Յուրիյեթ» թերթը անդրադարձավ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի Իզդիր կատարած այցին, որի ընթացքում Թուրքիայի նախագահը անդրադարձել էր հայ-թուրքական հարաբերություններին: Ըստ թուրքական թերթի, սեպտեմբերի 21-ին Թուրքիայի նախագահ Դեմիրելը ժամանել էր Իզդիր, որտեղ իզդիրցիների հետ հանդիպման ժամանակ, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին հետ բարիդրացիական հարաբերությունների մեջ է: Մենք բացեցինք Արդահանին մերձակա Թուրքգյոզու սահմանային անցակետը: Այժմ հերթը Աքթաշի, ապա Դոզուի և այնուհետև Ալիջանի սահմանային անցակետինն է: Դրանք հերթականությամբ կրացվեն: Բայց ըստի որ ԳԳ-ն գրավել է Ադրբեջանի տարածքների մեկ քառորդ մասը, ապա նման պայմաններում մենք ոչ մի դուռ չենք կարող բացել»<sup>215</sup>:

Թուրքիայի և ԳԳ-ի հարաբերությունների միջև առկա խոչընդոտները հաղթահարելու նպատակով ՄԱԿ-ի 50-ամյակի շրջանակներում Նյու Յորքում կազմակերպված միջոցառումների ժամանակ ՄԱԿ-ի թուրքական ներկայացուցչությունում տեղի ունեցավ Ս. Դեմիրելի և Լ. Տեր-Պետրոսյանի հանդիպումը, որի ընթացքում ջնջարկվեցին հայ-թուրքական հարաբերությունների բարելավման և ԼԴ - հիմնահարցի կարգավորմանն առնչվող մի շարք հիմնահարցեր: Հանդիպման ընթացքում Թուրքիայի նախագահը մասնավորապես նշեց, որ ԳԳ-ի և Թուրքիայի միջև հարաբերություններն ավելի արդյունավետ կլինեն, եթե ԳԳ-ն իր գործերը հեռացնի Ադրբեջանի գրաված տարածքներից, մասնավորապես Լաչինի միջանցքից, ինչից նա մեծ օգուտ կքաղի՝ հավելելով, որ Լաչինի միջանցքից գործերի հեռացումը խիստ կարևոր է Թուրքիայի համար, և այնտեղից մի օրու գործի հեռացումը Թուրքիան կընդունի, իբրև համագործակցության նշան հայկական կողմից»<sup>216</sup>:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, հատկապես տնտեսության բնագավառում համագործակցության հաստատման ուղղությամբ մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում ԳԳ-ին սահմանակից Թուրքիայի նահանգների ղեկավարները, որոնց կարծիքով այդ նահանգների տնտեսական զարգացումն ուղղակիորեն կապված էր Թուրքիայի և ԳԳ-ի միջև սահմանային առևտրական կապերի հաստատման հետ: Այս համատեքստում նշենք, որ 1995 թ. հոկտեմբերին «Կարսի ազատագրման 75-րդ տարեդարձի առթիվ հանդիսություններին մասնակցելու նպատակով» Ս. Դեմիրելը ժամանեց Կարս և հանդիպեց ԳԳ-ին սահմանակից Թուրքիայի Կարսի և Իզդիրի նահանգավետերի հետ: Վերջինս անդրադարձել էր Կարսի և սահմանամերձ շրջանների սահմանային դոմենը բացելու անհրաժեշտությանը՝ կարևորելով հայ-թուրքական սահմանի շուտափույթ բացումը: Դեմիրելն այս հարցը կրկին կապել էր հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հետ և անդրադառնալով հայ-ադրբեջանական հակամարտության հարցին՝ հայտարարել էր, որ Թուրքիան երբեք թույլ չի տա, որ դարաբաշտյան հարցում Ադրբեջանի դեմ որևէ անարդարություն գործադրվի»<sup>217</sup>:

Թուրքիան ժամանակ առ ժամանակ փորձեր էր անում բարելավելու հայ-թուրքական հարաբերությունները և միջնորդի դեր ստանձնելու հայ-ադրբեջանական հակասություններում: Դրա վառ օրինակներին էր 1996 թ. փետրվարի 6-ին Թուրքիայի նախագահի կողմից ԳԳ-ի և Ադրբեջանի նախագահներին հղած ուղերձները: Փետրվարի 22-ին Թուրքիայի նախագահի բանագնաց, արտակարգ և լիազոր դեսպան Ալիան Քամալը Բաքվից ժամանեց Երևան և հանդիպեց Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, որի ընթացքում ԳԳ նախագահը և թուրք դիվանագետը կարծիքներ փոխանակեցին դարաբաշտյան հիմնախնդրի շուրջ, ինչպես նաև շեշտվեցին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավորությունը: Թուրք դիվանագետը ԳԳ նախագահին փոխանցեց Դեմիրելի ուղերձը, որում վերջինը կոչ էր անում արագացնել և խորացնել դարաբաշտյան հիմնահարցի կարգավորման գործընթացը: Թուրքիան իր աջակցություն էր հայտնում բազմակողմ, ինչպես նաև ուղղակի բանակցությունների գործընթացին»<sup>218</sup>:

<sup>215</sup> Hürriyet, 23.09.1995.

<sup>216</sup> Ազգ. 26.10.1995:

<sup>217</sup> Milliyet, 30.10.1995.

<sup>218</sup> Ազգ. 13.02.1996.

Այսպիսով, բեն որևէ եական տեղաշարժեր չկային ԳԴ-ի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունում, այնուամենայնիվ 90-ականների երկրորդ կեսից հայ-թուրքական շփումներն ավելի ինտենսիվ բնույթ ստացան և, ինչպես բուրքական քաղաքական շրջանակները, այնպես էլ թուրքական լրատվամիջոցներն ավելի մեծ ուշադրություն դարձրեցին-երկկողմ հարաբերություններին և դրանց զարգացման հնարավորությանը:

Թուրքիայի և ԳԴ-ի միջև առկա խոչընդոտները հաղթահարելու և երկկողմ հարաբերությունները բարելավելու նպատակով 1996 թ. սեպտեմբերի 30-ին Նյու Յորքում ԳԴ ԱԳ նախարար Վահան Փափազյանը հանդիպեց Թուրքիայի փոխվարչապետ և ԱԳ նախարար Թամու Զիլլերի հետ: Դանդիպման ընթացքում կողմերը բննարկեցին հայ-թուրքական հարաբերությունները և ԼՂ հիմնահարցը: Թամու Զիլլերը բավականին ուշագրավ հայտարարությամբ հանդես եկավ՝ նշելով, որ Թուրքիան պատրաստ էր ԳԴ-ի հետ հարաբերություններ հաստատել, ամզամ բացել սահմանը, եթե ԳԴ-ն գոնե չնչին զիջումներ կատարեր ԼՂ հարցում<sup>219</sup>:

Այս կոնտեքստում հատկանշական է, որ ԳԴ-ին սահմանակից Թուրքիայի նահանգների ղեկավարները ակտիվորեն շարունակում էին հանդես գալ Թուրքիայի և ԳԴ-ի միջև սահմանային առևտրական կապերի հաստատման օգտին և այդ կապակցությամբ բազմիցս դիմել էին Թուրքիայի ղեկավարությանը: Այս հիմնահարցի շրջանակներում հատկապես մեծ ակտիվություն էր ցուցաբերում Կարսի նահանգապետը: Այսպես, 1996 թ. հոկտեմբերի 23-ին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ հանդիպման ընթացքում Կարսի նահանգապետը շրջանի տնտեսական զարգացման համար խնդրել էր նախագահին բացել Թուրքիայի և ԳԴ-ի միջև գտնվող Կարսի սահմանային դարպասը՝ կարևորելով դրա կենսական նշանակությունը շրջանի համար: Ի պատասխան Դեմիրելը, սահմանների բացման հարցը կրկին անգամ պայմանավորել էր արդրեջանական գործոնով՝ հայտարարելով. «Աշխարհը պետք է իմանա, որ մենք Արդրեջանի բիկունքին ենք: Բայց մենք նաև խաղաղություն ենք ուզում: Մենք ԳԴ-ի հետ Մոսկվայեն քննամուրթուն չենք ուզում: Մենք աշխատում ենք, որ Արդրեջանն ու ԳԴ-ն մերձանան»<sup>220</sup>:

<sup>219</sup> Հայաստան-Թուրքիա, նշվ. աշխ., էջ 110:

<sup>220</sup> Ազգ. 25.10.1996:

Թեև Թուրքիան խուսափում էր ԳԴ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց, այնուամենայնիվ շարունակում էր ուղղակի շփումները ԳԴ-ի պաշտոնական շրջանակների հետ: 1997 թ. փետրվարի 26-28-ին ԳԴ ժամանեց Թուրքիայի արտգործնախարարության պատվիրակությունը՝ բաղկացած Թուրքիայի ԱԳ Կովկասի ղեկավարամետի փոխտնօրեն Սիմեթ Էրօզանից և Ռուսաստանում Թուրքիայի ղեկավարության երրորդ քարտուղար Օզլեմ Էրզուլնից: Այցելության շրջանակներում թուրք դիվանագետները հանդիպեցին ԳԴ ԱԳ փոխնախարարներ Վարդան Օսկանյանի և Սերգեյ Մանասարյանի հետ, որի ընթացքում կողմերը քննարկեցին հայ-թուրքական հարաբերությունները և ԼՂ հակամարտության շուրջ ընթացող գործընթացները: Այցի ընթացքում կողմերը պայմանավորվեցին շարունակել երկու երկրների ԱԳ-ների մակարդակով հանդիպումները, ինչպես նաև փոխանակել երկկողմ հարաբերություններին առնչվող պայմանագրերի և արձանագրությունների նախագծեր<sup>221</sup>:

Թուրքիայի և ԳԴ-ի միջև քաղաքական շփումների հետ զուգընթաց, զարգանում էին նաև ակտիվ հայ-թուրքական տնտեսական շփումները: Այս համատեքստում, անդրադառնալով ԳԴ-ի և Թուրքիայի միջև տնտեսական հարաբերությունները զարգացնելու և երկկողմ միջպետական կապեր հաստատելու փորձերին, առանձնահատուկ ինչատակման է արժանի 1996 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 1-ը «Յրագրամաշ» գործարանի տնօրեն, ԳԴ ԱԳ պատգամավոր Թելման Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ հայ գործարարների պատվիրակության այցելությունը Թուրքիա, որի ընթացքում մի շարք կարևոր հանդիպումներ տեղի ունեցան Թուրքիայի գործարար և քաղաքական շրջանակների հետ: 1996 թ. հուլիսի 29-ին Թելման Տեր-Պետրոսյանը հանդիպեց Թուրքիայի Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Թուրքուլ Թյուրքեշի հետ, որը թուրք հայտնի ազգայնական Ալփարուսան Թյուրքեշի որդին էր: Դանդիպման ընթացքում Թ. Թյուրքեշը հանդես եկավ բավականին կառուցողական հայտարարությամբ՝ նշելով, որ Թուրքիան և ԳԴ-ն տարածաշրջանի երկու կարևոր երկրներ են, ուստի, ամեն առիթով և ամեն տեղ կողմերի երկխոսությունը նպաստելու է տարածաշրջանի խաղաղությանը:

<sup>221</sup> ԳԴ ԱԳ, Սերժավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 8:

ըրև համագործակցությանը: Ըստ Թյուրքեշի, Թուրքիայի և ԴԴ-ի միջև կարելի է ստեղծել այնպիսի համագործակցություն, որը կարող է ներառել հսկայական ծրագրեր՝ սկսած արդյունաբերական ներդրումներից, մինչև առօրյա առևտուր՝ շեշտելով, որ ներկայումս անկարելի է հստակ ժամանակ նախատեսել այս բոլորի իրագործման համար<sup>222</sup>:

Այցելության շրջանակներում Թելման Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակության հանդիպումը Ստամբուլի էսենյուրթ շրջանի քաղաքապետ Գյուրբյուզ Զափանի և թուրքական գործարար շրջանակների հետ անցավ բավականին ջերմ մթնոլորտում: Չանդիպման ընթացքում Գյուրբյուզ Զափանը, քննադատելով իր երկրի ղեկավարությանը, մասնավորապես ասաց, որ Թուրքիայի ղեկավարները ծավալուն աշխատանք էին տանում ներքին հասարակական կարծիքն իրենց ցանկության համաձայն ձևավորելու գործում, ինչն ակնհայտ էր աշխարհի բոլոր հետամնաց և տկար երկրներում, որտեղ ղեկավարները կեղծ թշնամիներ էին ստեղծում հասարակական կարծիքի համար և այնուհետև իրենք էլ սկսում էին հավատալ դրան: «Ես այն տարածաշրջանում կարող եմ խաղաղ և համատեղ ապրել: Դետևաբար, սահմանները պետք է բացվեն»<sup>223</sup>:

Գատկանշական է, որ ոչ միայն թուրքական քաղաքական շրջանակները, այլ նաև լրատվամիջոցներն ակտիվորեն քննարկեցին Թ. Տեր-Պետրոսյանի այցը Թուրքիա: Այսպես, թուրքական «Յենի Յուլ-ջըլ» թերթը, անդրադառնալով հայ գործարարների այցին Նշել էր, որ թեև ԴԴ նախագահի եղբայր Թ. Տեր-Պետրոսյանի այցելությունը գործարարների մակարդակի այցելություն էր, այնուամենայնիվ այն կարևոր էր նաև միջպետական հարաբերությունների տեսանկյունից, քանզի կողմերի միջև հաստատվելիք առևտրական համագործակցության համար նպաստավոր հող նախապատրաստելու նպատակով անհրաժեշտ է պետությունների համաձայնությունը<sup>224</sup>:

Ի պատասխան 1996 թ. հուլիսի 28-ին հայ գործարարների Թուրքիա կատարած այցին, օգոստոսի 6-ին թուրք-հայկական տնտեսական հարաբերությունը զարգացնելու նպատակով ԴԴ ժամանեց թուրք գործարարների պատվիրակությունը՝ Կարսի արդյու-

նաբերական և առևտրի պալատի նախագահ Մեհմեդ Յուլմազի գլխավորությամբ: ԴԴ գործարար շրջանակների հետ հանդիպման ժամանակ Մեհմեդ Յուլմազը Նշել էր. «Մեր գլխավոր նպատակը Գյումրիի և Կարսի միջև եղած սահմանադրան բացումն է, որի փակ լինելու պատճառով երկրորդ պլան է մղված համագործակցությունը արդյունաբերության ոլորտում: Դա ցանկանում են թե՛ Թուրքիայի ղեկավարները, և թե՛ ժողովուրդը: Կարս-Մայաստում համագործակցությունը կարող է զարգանալ սննդի և տեքստիլ արդյունաբերության բնագավառներում»<sup>225</sup>:

Թուրքիայի և ԴԴ-ի միջև ընթացող ակտիվ տնտեսական շփումների շրջանակներում բավականին ուշագրավ էր տնտեսական հարաբերություններն ակտիվացնելու և երկկողմ գործարար շրջանակների համագործակցությունը խթանելու նպատակով 1997 թ. մայիսին Ստամբուլում՝ Սևծովյան տնտեսական համագործակցություն կազմակերպության շրջանակներում անցկացվող բիզնես-խորհրդի նիստի ժամանակ Արսեն Դազարյանի և Քասն Սոյաքի նախագահությամբ հայ-թուրքական և թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովների հիմնադրման փաստը: Ըստ հանձնաժողովի հիմնադիրների, Թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովի աշխատանքներն ուղևած էին երկու երկրների միջև տարերայնորեն զարգացող առևտրատնտեսական կապերի կորոզիցմանը և դրանց ավելի կազմակերպված բնույթ հաղորդելուն, ինչպես նաև ԴԴ-ի և Թուրքիայի միջև երրորդ երկրների միջոցով ծավալվող առևտրի զարգացմանը՝ հինարավորին չափ տարբեր ոլորտներում: Այդ նպատակով հանձնաժողովը ջանում էր ապահովել հայ և թուրք գործարարների միասնական գործունեությունը տնտեսական ապարտեզում<sup>226</sup>:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է Նշել, որ, չնայած հայ-թուրքական և թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովները ջանքեր էին գործադրում՝ ակտիվացնելու հայ-թուրքական գործարար շրջանակների համագործակցությունը և նպաստելու հայ-թուրքական սահմանի բացմանը, Թուրքիան շարունակում էր ԴԴ-ի հանդեպ վարել իր որդեգրած նախկին քաղաքականությունը, ինչի վառ ապացույցն էր 1997 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի նախագահ

<sup>222</sup> Ազգ., 31.07.1996:

<sup>223</sup> Ժամանակ, 01.08.1996:

<sup>224</sup> Yeni Yüzyıl, 04.08.1996.

<sup>225</sup> Ազգ., 10. 08. 1996:

<sup>226</sup> www.tabde.org.

Սուլեյման Դեմիրելի ելույթը Կարսում, որտեղ անդրադառնալով հայ-թուրքական սահմանի բացմանը՝ նա այդ հարցը պայմանավորել է «Ադրբեջանի գրավյալ տարածքներից հայկական զորքերի լիակատար դուրսբերման» հետ: Նա մասնավորապես հայտարարեց, որ թուրքիայի և ԳԴ-ի միջև սահմանային դռան բացումը քաղաքական խնդիր է և մի քանի գրոշանոց առևտրի համար իրենք ադրբեջանցիների դժվար կացության մեջ չեն գցելու»<sup>227</sup>:

Այսպիսով, կարող ենք մշել, որ հայ-թուրքական մերձեցման միտումները որևէ եական արդյունքի չհասնեցին: Ինչպես նախկինում, այնպես էլ 90-ականների երկրորդ կեսին թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները շարունակում էր պայմանավորել հիմնականում ադրբեջանական գործոնով և ԼՂ հիմնահարցի կարգավորված չլինելով՝ միաժամանակ ջանալով պահպանել երկկողմ շփումները և երկխոսության հնարավորությունները: Այստեղ բերև տեղին է հիշել Սուլեյման Դեմիրելի դիպուկ խոսքերը հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ: Դեռ 1993 թ. հունվարին, զբաղեցնելով վարչապետի պաշտոնը, կարևորելով հայ-թուրքական շփումների նշանակությունը թուրքիայի ազգային շահերի տեսանկյունից, նա մատնանշել էր. «Պարտավոր ենք ԳԴ-ի հետ զսնվել այնպիսի հեռավորության վրա, որ չպառավել երկխոսության հնարավորությունները: Սա մեծ քաղաքականություն է: Թշնամության հիմքի վրա պետական քաղաքականություն չեն կառուցում»<sup>228</sup>:

Բացասաբար մոտենալով ԳԴ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը՝ թուրքիայի քաղաքական շրջանակներն ակնհայտ շահագրգռվածություն էին ցուցաբերում ԳԴ-ում Լ. Տեր-Պետրոսյանի իշխանության պահպանմամբ: Մինչև 1998 թ. ԳԴ-ի հանդեպ «մեղմ» քաղաքականության շնորհիվ թուրքիան պահպանում էր «չնչին երկխոսության» պարտանք, որի հիմքում ընկած էին առևտրատնտեսական հարաբերությունների հեռանկարով ԳԴ-ին հրապուրելու և Գարավային Կովկասում իր քաղաքական ակտիվությունն ամրապնդելու Անկարայի ծգությունները: ԳԴ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականն անորոշության մեջ գցեց թուրքիային:

Հիշատակման է արժանի թուրքական պաշտոնական շրջանակների արձագանքը նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականի կապակցությամբ, որը հետևեց անմիջապես: Պետնախարար Ահաթ Ահդեման այս ամենը որակել էր որպես Բաբու-Ջեյհան խողովակաշարի կառուցման բշնամիների ծեռքի գործ, ինչը վտանգելու էր կայունությունը Կովկասում<sup>229</sup>:

Թուրքական լրատվամիջոցները նույնպես ակտիվորեն քննադեցին ԳԴ-ում կատարված փոփոխությունները: Այս առնչությամբ թուրքական «Հյուրիյեթ» օրաթերթի գործադիր տնօրեն Էրթուրուլ Օզջյոզը նույն թերթի 1998 թ. փետրվարի 14-ի համարում Տեր-Պետրոսյանի հրաժարականը վերջին տարիների թուրքական արտաքին քաղաքականության խոշորագույն ծախուղուն համարեց: Նա մասնավորապես գրել էր, որ թուրքիան պետք է աջակցեր Տեր-Պետրոսյանի պես չափավոր նախագահին, այլ ոչ թե նրան իր ճակատագրին դեմ հանդիման թողներ<sup>230</sup>: Իսկ թուրք գիտնական Սեյի Աքթաշը, 1998 թ. հունիսի 18-ին պատասխանելով «Ասդողյուր» հանդեսի թղթակցին, հետևյալ կարծիքն էր արտահայտել. «Թուրքիան Տեր-Պետրոսյանի հրաժարականով կորցրեց իր խոշորագույն հաղթանակը: Լևոն Տեր-Պետրոսյանը թուրքիայի համար մեծ շան էր»<sup>231</sup>:

Չավելեց, որ ԳԴ նախագահի հրաժարականից հետո ԳԴ-ում կայացած արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքին մասնակցելու նպատակով ԵԱԳԿ-ի շրջանակներում թուրքիայից ԳԴ ժամանեցին թուրք պատգամավոր դիտորդներ և լրագրողներ, որոնք ընտրությունների ընթացքն ակտիվորեն լուսաբանեցին իրենց պարբերական մամուլում: Մասնավորապես, 1998 թ. մարտի 13-ին Ստամբուլից երևան ժամանեց թուրքական պատվիրակությունը, որի կազմում էր Եվրախորհրդի դիտորդ, ԹԱՄԺ-ի պատգամավոր Ջեֆի Զամին, ԵԱԳԿ դիտորդ, պատգամավոր Թեքմ Էներենը, ինչպես նաև այլ քաղաքական գործիչներ և լրագրողներ, որոնք հանդիպումներ ունեցան նախագահի թեկնածուների հետ, այցելեցին տարբեր ընտրատարածքներ: Պատգամավոր Ջեֆի Զամինին ընդունեց ԱԳ նախարարի պաշտոնակատար Վ. Օսկանյանը, այնուհետև՝ ԳԴ նախագահի պաշտոնակատար, վարչապետ Ռոբերտ Քոչարյանը: Վ. Օսկանյանի հետ

<sup>227</sup> Ազգ. 01.11.1997:

<sup>228</sup> Գալոթ Զաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական..., էջ 37:

<sup>229</sup> Turkish Daily News, 15.02.1998.

<sup>230</sup> Hürriyet, 14.02.1998.

<sup>231</sup> Ibid.:

հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգացմանը վերաբերող հարցեր: Թուրք պատգամավորը մասնավորապես հույս էր հայտնել, որ անկախ նրանից, թե ով կլինեն նորընտրյալ նախագահը, նա պետք է բաջ գիտակցեր հայ-թուրքական հարաբերությունների զարգացման անխուսափելիությունը<sup>232</sup>: Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո Ռ. Քոչարյանի ընտրությունը նախագահի պաշտոնում, ինչպես նաև Թուրքիայում ներքաղաքական սուր պայքարն իրենց ուղղակի անդրադարձն ունեցան Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վրա:

Չնայած Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին և քաղաքական իրադարձությունների փոփոխությանը ՀՀ-ում, այնուամենայնիվ հայ և թուրք մի շարք գործարարներ շարունակեցին ջանքեր գործադրել հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու և Հայաստան-Թուրքիա սահմանադուրը բացելու ուղղությամբ: Դրա վառ օրինակներից էր հայ-թուրքական գործարար համագործակցությունը զարգացնելու նպատակով 1998 թ. փետրվարի 3-6-ը ՀՀ Արդյունաբերողների և գործարարների միության հրավերով երևան 25 հոգանոց թուրքական պատվիրակության ժամանումը: Պատվիրակության կազմում էին ՍԾՏՀ գլխավոր քարտուղար, դեսպան Մուստաֆա Աքչինը, ՍԾՏՀ-ի Գործարար Խորհրդում ՀՀ-ի ներկայացուցիչ Սամսոն Օզարարատը, Ստամբուլի Առևտրի պալատի նախագահ Սիմեթ Քուչչուլուն, հայ և թուրք գործարարներ, թուրք լրագրողներ<sup>233</sup>:

Այցի ընթացքում թուրքական պատվիրակությունն ունեցավ մի շարք կարևոր հանդիպումներ: Պատվիրակությանն ընդունեց ՀՀ վարչապետ և նախագահի պաշտոնակատար Ռ. Քոչարյանը, ԱԳ նախարարի պաշտոնակատար Վ. Օսկանյանը, Առևտրի և արդյունաբերության նախարար Գառնիկ Նամնազուլյանը: Պատվիրակությունը ելուզվ Հիդրակի և Արմավիրի մարզկենտրոններում, այցելեց Մարագրա-Ալիջան սահմանագիծը: Այցի վերջում կողմերը ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի, նախատեսվում էր 1998 թ. ապրիլի 15-17-ը ՀՀ-ում կազմակերպել հայ-թուրքական բիզնես-ֆորում, ինչպես նաև թուրքական ապրանքների ցուցահանդես վաճառք և այլն<sup>234</sup>:

Թև Թուրքիայի քաղաքական և հասարակական շրջանակները բավականին ցավազին ընդունեցին Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը և Ռոբերտ Քոչարյանի նախագահ ընտրվելը, այնուամենայնիվ Թուրքիայի ղեկավար շրջանակները փորձեցին համագործակցության եզրեր գտնել ՀՀ-ի նոր ղեկավարության հետ և ակտիվացնել երկկողմ շփումները: Այդ նպատակին էր ուղված հաստկապես 1998 թ. ապրիլի 10-ին Ս. Գեմիրլիչի շնորհավորական ուղերձը ՀՀ նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանին<sup>235</sup>:

Չնայած դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը, ՀՀ-ի և Թուրքիայի միջև քաղաքական և դիվանագիտական շփումները շարունակվեցին, որի ընթացքում երբեմն փորձեր արվեցին փոխօժանության եզրեր գտնել: Սասնափորապես, 1999 թ. օգոստոսի 16-ին Թուրքիայում տեղի ունեցան ուժգին երկրաշարժի կապակցությամբ աշխարհի տարբեր երկրներից ցավակցական ուղերձներ հղվեցին և օգնություն ուղարկվեց Թուրքիա: ՀՀ-ն նույնպես ցավակցեց և օգնության պատրաստակամություն հայտնեց: Ռ. Քոչարյանը 1999 թ. օգոստոսի 17-ին ցավակցական մամակ էր հղել Ս. Դեմիրլիչին, որտեղ իր ցավակցությունն էր հայտնում զոհվածների ընտանիքներին ու ներձավորներին<sup>236</sup>:

1999 թ. օգոստոսի 17-ին՝ նախ Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Նաբի Շենտոյի, ապա հաջորդ օրը՝ Թուրքիայի արտգործնախարարի առաջին տեղակալ Քորքմազ Հաքթամիրի հետ հեռախոսազրույցի ընթացքում ՀՀ արտգործնախարարի տեղակալ Արմեն Բայրուրդյանը ցավակցություն հայտնեց և նշեց, որ ՀՀ-ն պատրաստ է մի քանի ժամվա ընթացքում Թուրքիա ուղարկել փրկարար ցուկատներ և անհրաժեշտ սարքավորումներով ու իրերով բեռնավորված մի ինքնաթիռ: Սակայն այնուհետև օգոստոսի 19-ին Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Նաբի Շենտոյը զանգահարել էր Արմեն Բայրուրդյանին և տեղեկացրել, որ Թուրքիայի իշխանությունները շնորհակալություն են հայտնում ցավակցական մամակի ու օգնության առաջարկի համար և հայտնում են, որ ներկայումս փրկարար աշխատանքներում ընգրկված էին բավարար թվով մարդիկ և հայ փրկարարների կարիքը չէր զգացվում<sup>237</sup>:

<sup>232</sup> Ազգ. 17.03.1998:

<sup>233</sup> ՀՀ ԱԳ, Սերձավոր և Սիլվին Արևելյի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 7:

<sup>234</sup> Արմենյանես գործակալություն, 4-6.02.1998: ՀՀ ԱԳ, Սերձավոր և Սիլվին Արևելյի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 7:

<sup>235</sup> ԱԳ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 3, գործ 159, էջ 68:

<sup>236</sup> ԱԳ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ 243, էջ 191:

<sup>237</sup> ԱԳ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ 243, էջ 353:

1999 թ. հոկտեմբերի 27-ին ԳՀ-ում տեղի ունեցած ողբերգական դեպքերի կապակցությամբ ԳՀ նախագահին, ի թիվս այլ պետությունների ղեկավարների, իրենց ցավակցական ուղերձներն էր հղել Թուրքիայի ղեկավարությունը: Ռ. Քոչարյանին ուղարկած իր ցավակցական ուղերձում Թուրքիայի նախագահին իր ցավակցություններն էր հղել հայ ժողովրդին և ցանկացել էր արագ վերականգնում գրոհի ժամանակ վիրավորվածներին<sup>238</sup>:

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչական գործողության հետևանքով զոհված ԳՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի, ԳՀ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանի և խորհրդարանում զոհված մյուս պատգամավորների հուղարկվողությանը մասնակցելու նպատակով հոկտեմբերի 31-ին Թուրքիայից ժամանեց պատվիրակություն, որի կազմում էին պետնախարար Մեհմեդ Ալի Իրտենչեփքը, Թուրքիայի խորհրդարանի խոսնակի ներկայացուցիչ Ալի Ըլքքսոյը և Թուրքիայի ԱԳ ներկայացուցիչ Ռեւալ Չևիթոզը: Այդ ընթացքում թուրքական պատվիրակությունը հանդիպեց ԳՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի հետ: Դանդիպման ընթացքում թուրքական պատվիրակության ղեկավար Իրթենչեփքը ասաց, որ ԳՀ-ն Թուրքիայի հարևանն է, և նրա դեմ որևէ նախապաշարմունք չունեն: Եթե միջազգային հանրության սպասելիքների ուղղությամբ ԳՀ-ն դրական քայլեր ձեռնարկի, ապա կփոխվի մթնոլորտը Կովկասում, կայունությունից և համագործակցությունից կշահեն տարածաշրջանի բոլոր երկրները: Թուրքիան ցանկանում է, որ այս ուղղությամբ առաջխաղացում լինի<sup>239</sup>: Նման մակարդակով թուրքական կողմը երբևէ ԳՀ չէր այցելել:

Չնայած Թուրքիայի և ԳՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության փաստին, այնուամենայնիվ Թուրքիայի և ԳՀ-ի բարձրատիժան պաշտոնյաների միջև հանդիպումներն ու շփումները շարունակվում էին: Այս համատեքստում հատկապես հետաքրքրական էր 1999 թ. նոյեմբերի 18-19 Ստամբուլում եՄԳԿ գազաթափոլով շրջանակներում Ս. Դեմիրելի և Ռ. Քոչարյանի հանդիպումը: Դանդիպման ընթացքում Թուրքիայի նախագահը, նշելով, որ ԳՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կախված է ԳՀ-ի և Ադրբեջանի միջև հակամարտության լուծումից, ասաց, որ Թուրքիան ցանկանում է խաղաղություն տարածաշրջանում, և եթե

խաղաղություն հաստատվի, այն նպաստելու է Թուրքիայի, ԳՀ-ի, Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունների զարգացմանը: ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծման արդյունքում ԳՀ-ն կարող է ներառվել տարածաշրջանի նախաձեռնողային նախագծերում: Դրան ի պատասխան, Ռ. Քոչարյանը նշել է. «Ոչ մեկը չունի որևէ պատրանքներ, որ մենք կարող ենք զիջումներ անել այդ տարածաշրջանային նախագծերի կապակցությամբ»<sup>240</sup>:

Թուրքիայի և ԳՀ-ի միջև քաղաքական հարաբերությունների և դիվանագիտական շփումների համատեքստում բավականին ուշագրավ էր 2000 թ. Կովկասում անվտանգության և կայունության մեխանիզմ հիմնելու շուրջ երկու երկրների նախագահների միջև ընթացող նամակագրությունը: 2000 թ. հունվարին Վրաստան կատարած այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը կոչ արեց ստեղծել Կովկասյան կայունության Պակտ<sup>241</sup>: Այդ կապակցությամբ նա միջազգային հանրությանը կոչ արեց ուշադրություն դարձնել կովկասյան տարածաշրջանի վրա: Մի շարք երկրների նախագահներին, այդ թվում և ԳՀ նախագահին հղված նամակներում Թուրքիայի նախագահը նշում էր Կովկասում բազմակողմանի և հաստատուն համագործակցության առկա ներուժի մասին:

2000 թ. հունվարի 21-ին Ռ. Քոչարյանին հղած նամակում Թուրքիայի նախագահը, անդրադառնալով Վրաստանի և Ադրբեջանի նախագահների հետ հանդիպման արդյունքում Կովկասում կայունություն և խաղաղություն ստեղծելու հեռանկարների առջնությունը ձեռք բերված պայմանավորվածություններին, գրել էր, որ Կովկասում որոշ հիմնահարցերի կարգավորված չլինելը ոչ միայն խոչընդոտում էր հարավկովկասյան տարածաշրջանում կայունության հաստատմանը, այլև ստվերի տակ էր թողնում այն հնարավորությունները, որոնք կարող էին օգտագործվել բազմակողմանի և ամուր համագործակցության մթնոլորտի զարգացման համար՝ ընդգծելով, որ դրանցից գլխավորը հանդիսանում էր ԼՂ հիմնահարցը<sup>242</sup>:

2000 թ. փետրվարի 29-ին Ռ. Քոչարյանը պատասխան նամակ ուղարկեց Թուրքիայի նախագահին, որտեղ ԳՀ նախագահը, դրական համարելով տարածաշրջանում անվտանգության կարգավոր-

<sup>238</sup> ԱԳ նպատադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գրք 243, էջ 366:

<sup>239</sup> Նույն տեղում, էջ 369:

<sup>240</sup> Անդիմաքս գործակալություն, 26.11.1999:

<sup>241</sup> Turkish Daily News 17.01.2000.

<sup>242</sup> ԱԳ նպատադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գրք 63, էջ 9-10:

ման որոշակի ձևեր ստեղծելու գաղափարը, և ընգծելով խաղաղության և կայունության համար առկա տարածաշրջանային գործընթացների կառուցողական չլինելը, առաջարկել էր 3+3+2 կարգավորման բանաձևը, որը կներառեր կովկասյան երեք երկրների ներկայացուցիչներին, երեք հարևան երկրներին, ինչպես նաև Եվրամիությանը և Միացյալ Նահանգներին<sup>243</sup>:

Նամակագրության շրջանակներում բավականին ուշագրավ էր 2000 թ. մայիսի 4-ին թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի 33 նախագահ Ռոբերտ Զոչարյանին ուղարկած նամակը, որտեղ թուրքիայի նախագահը, բարձր գնահատելով 33 նախագահի աջակցությանը տարածաշրջանում խաղաղությունը և կայունությունը խթանելու և ամրապնդելու ուղված գաղափարին, վստահություն էր հայտնում, որ կհաջողվեր գտնել 4ովկասում հարատև խաղաղության և կայունության պահանջներին անհրաժեշտ հիմնական պարամետրերը՝ շեշտելով, որ տարածաշրջանում վստահելի բազմակողմանի համագործակցության մեխանիզմ ունենալու գլխավոր նախորդյալը գոյություն ունեցող հակամարտությունների և մասնավորապես ԼՂ հակամարտության կարգավորումն է<sup>244</sup>:

Այնուամենայնիվ որևէ զարգացում 33-ի և թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման և սահմանների բացման ուղղությամբ այդպես էլ տեղի չունեցավ, ինչի պատճառն իր հարաբերությունները 33-ի հետ աղբյուրական գործոնով պայմանավորելու պաշտոնական ԱՆկարայի քաղաքականության շարունակությունն էր:

Թուրքիայի պաշտոնական քաղաքականության շարունակման ամենակազմառու դրվագներից է 2000 թ. հունիսին 33-ի և թուրքիայի միջև հարաբերություններում առաջացած սոհամ միջադեպը, որը ոչ միայն քննադատվեց 33-ի կողմից, այլ նաև բավականին խիստ քննադատության արժանացավ թուրքիայի որոշ շրջանակներում: Բանն այն է, որ Կարսի քաղաքապետարանի և Կարսի 4ովկաս համալսարանի կողմից համատեղ կազմակերպած «4ովկասի կայունության պակտին ուղղված Կարս քաղաքի համաժողով»-ին մասնակցելու նպատակով 2000 թ. հունիսի 28-ին թուրքիա ժամանած 33 պատվիրակությանն արգելեցին մասնակցել համաժողովին և անմի-

ջապես վտարեցին երկրից<sup>245</sup>: Վերոհիշյալ միջադեպը բավականին լայն քննարկման առարկա դարձավ թուրքիայում և լուսաբանվեց թուրքական մամուլում: 3այ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ իրենց դիրքորոշումները հրապարակայնորեն արտահայտեցին նախկին արտգործնախարար Մուրաթ Քարայալչընը և Շշմաբիտ ուղի կուսակցության նախագահ, նախկին վարչապետ Թանուշ Զիլչերը: 3ամաժողովին մասնակցած Մուրաթ Քարայալչընը, այս միջադեպը, որպես սկանդալ որակավորելով, ասաց, որ ցնցված է, քանզի դա զաղտնի մի ժողով չէր: 4ովկասյան կայունության պակտի կայացումից անմիջապես առաջ այս դեպքի ծագելը մեծ դժբախտություն է<sup>246</sup>: Արձագանքելով Կարսի համաժողովից հայկական պատվիրակության վտարմանը՝ Զիլչերը նշեց, որ 33-ի և թուրքիայի հարաբերություններն Աղբյուրանի հետ կապելը մինչ օրս խնդիրների առիթ է տվել: Աղբյուրանի և 33-ի միջև երկխոսության միջոցով համաձայնության հասնելու համար հարկավոր է, որ թուրքիան ազդեցիկ դեր ստանձնի: Այս տարածաշրջանում թուրքիան պետք է հստակեցնի իր դիրքորոշումը: «Այս տեսակետից Կարսում տեղի ունեցածը շատ տգեղ է, և ամենար է, որ մենք այն ընդունենք»<sup>247</sup>:

Թուրքական լրատվամիջոցները նույնպես ակտիվորեն քննարկեցին Կարսի վեհաժողովը: «Միլլիյեթ» օրաթերթն անդրադարձել էր համաժողովին մասնակցած Ա. Դեմիրելի ելույթին, որտեղ թուրքիայի նախագահն անդրադարձել էր նաև ԼՂ հիմնահարցին: Դեմիրելը, մասնավորապես, նշել էր. «Տիրությանը հայտարարում եմ, որ 33-ն անվախություն ձեռք բերելուն պես՝ Դարաբաղում խնդիր հարուցեց: Աղբյուրանցիների կոտորածներ տեղի ունեցան: Դարաբաղից և նրա շրջակա տարածքներից աղբյուրանցիները տեղահանվեցին: Մենք հայտարարել ենք, որ 33-ի նկատմամբ անցյալի հետ կապված որևէ խնդիր չունենք...»<sup>248</sup>: Թեև թուրքիայի պաշտոնական շրջանակները Կարսի համաժողովից 33-ի պատվիրակության վտարման հիմնական պատճառ նշում էին ԼՂ հիմնահարցը, այնուամենայնիվ այս միջադեպում ոչ պակաս կարևոր դերակատարություն է ունեցել 33-ի արտաքին քաղաքականության մեջ 3այոց ցեղասպանության միջազգային ճանաչ-

<sup>243</sup> Milliyet, 29.06.2000.

<sup>244</sup> Milliyet, 30.06.2000.

<sup>247</sup> Hürriyet, 01.07.2000.

<sup>248</sup> Milliyet, 29.06.2000.

<sup>243</sup> ԱԳԼ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 64, էջ 3-4:

<sup>244</sup> ԱԳԼ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 63, էջ 20-21:

ման ներառելը, որպես արտաքին քաղաքականության գերակա խնդիր: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ տվյալ ժամանակաշրջանում ԱՄՆ-ում հայկական ազդեցիկ լոբիի ջանքերի շնորհիվ քննարկվում էր Դայոց ցեղասպանության ճանաչման հարցը, որը, անշուշտ, խիստ մտահոգում էր թուրքական իշխանություններին:

Ինչպես արդեն նշվեց, 1998 թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո հայ-թուրքական հարաբերություններում պաշտոնական երևանի դիրքորոշման մեջ առաջ քաշվեց Դայոց ցեղասպանության խնդիրը: Ի տարբերություն Լևոն Տեր-Պետրոսյանի, ԴՀ Նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանը Դայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը ներառեց արտաքին քաղաքականության գերակա խնդիրների շարքում, որի մասին առաջին անգամ հրապարակավ ելույթ ունեցավ 1998 թ. հոկտեմբերին ԱՎԿ-ի ամբիոնից: ԴՀ նախագահը մասնավորապես նշել էր. «Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թ. ցեղասպանությունն իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել... Այս չարիքի դեմ պայքարի անհրաժեշտության հարաճուն ըմբռնման վկայությունն են նաև ներկա դատասկզբին հայերի ցեղասպանության դատապարտումն ու ընդունումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից»<sup>249</sup>:

Դայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը ԴՀ արտաքին քաղաքականության մեջ ներառելը բավականին ցավազին ընդունվեց Թուրքիայում: Ցեղասպանության իրողության հերքման խնդիրը թուրքական իշխանությունների օրակարգի հարց դարձավ: Ցեղասպանության ճանաչման պահանջների վերացումը հանդիսանում է ԴՀ-ի հետ հարաբերությունների բարելավման համար Թուրքիայի առաջ քաշած նախապայմաններից մեկը: Բնականաբար, այս հարցում թուրքական իշխանությունների մտակալության հիմքում հիմնականում ընկած են միջազգային տարրեր ատյաններում ու արտասահմանյան խորհրդարաններում Դայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ քննարկումները:

Անկարան եռանդուն միջոցներ է ձեռնարկում դրանց դեմ սպառնալով համապատասխան միջոցների դիմել՝ ոչ միայն վերանայելով իր հարաբերությունները Դայոց ցեղասպանության ճանաչ-

ման հարցը քննարկող երկրների հետ, այլև ԴՀ-ի հանդեպ ուղղակի պատժամիջոցներ կիրառելու միջոցով: Պաշտոնական Անկարան շատ զգայուն է արձագանքում հատկապես ԱՄՆ-ում կամ եվրոպական երկրներում հայկական լոբիի ունեցած հաջողություններին:

Դայոց ցեղասպանության ճանաչման հարցն առանձնապես արդիական դարձավ 2000 թ. հոկտեմբերի 1-ին, երբ Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովում ընդունվեց օրինագծի փաթեթ Դայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Այդ կապակցությամբ հոկտեմբերի 1-ին Թուրքիայի Ազգային Սեծ ժողով (ԹԱՄԺ)-ը հանդես եկավ հայտարարությամբ, ուր մասնավորապես ասվում էր. «...Հիշեցնում ենք ԴՀ իշխանություններին, որ հրաժարվեն այս սխալ ճանապարհից և վերջ տան Թուրքիայի դեմ երրորդ երկրների հաստատություններում նախաձեռնությունների շարունակմանը՝ որոնելով Թուրքիայի հետ բարիդրացիաբար ապրելու ճանապարհներ»<sup>250</sup>:

2000 թ. հոկտեմբերի 3-ի երկույան Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Կեչարեզյանը Թուրքիայի վերաբերյալ Թուրքիայի նախագահի մամուլի ծառայության կողմից արված հայտարարության համաձայն, Սեզերը շեշտել է Կոնգրեսում օրինագծի անցկացման դեմ ԱՄՆ-ի վարչակազմի ջանքերի մոբիլիզացման և արդյունավետության մեծացման անհրաժեշտությունն ու խնդրել էր Քլինթոնին անձնական մասնակցություն ցուցաբերել այդ գործում<sup>251</sup>:

Ըստ թուրքական ՋԼՄ-ների, ԱԳՆ-ի և Գլխավոր Շտաբի կողմից պատրաստվել էր 10 կետից բաղկացած գործողությունների ծրագիր, որի կիրառման առաջին փուլի արդյունքում նախ՝ դադարեցվելու էր Երևան-Ստամբուլ չարտերային թռիչքը, իսկ 2000 թ. հոկտեմբերի 15-ից ԴՀ-ի բաղաբացիների նկատմամբ կիրառվելու էր մուտքի վիզայի նոր ռեժիմ: Թուրքական լրատվամիջոցներն, ավելի հեռուն գնալով, որպես օրինագծի բացասական հետևանք, համարում էին հայ-թուրքական հարաբերությունների սկզբունքային վերանայումը՝ դրանք հասցնելով «Թուրքիայի և Կիպրոսի հունական մասի միջև գոյություն ունեցող հարաբերությունների մակարդակին»<sup>252</sup>:

<sup>249</sup> Zaman, 02.10.2000.

<sup>251</sup> Radikal, 05.10.2000.

<sup>252</sup> Sabah, Yeni Safak, 7-16.10.2000.

<sup>249</sup> Արամ Անանյան, նշվ աշխ., էջ 9:

Անկարայի արձագանքները շատ ավելի խիստ էին Ֆրանսիա-յում Դայոց ցեղասպանության ճանաչման կապակցությամբ: 2001 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի Սենատի կողմից Դայոց ցեղասպանության օրինագծի ընդունումը, ինչպես նաև հունվարի 29-ին Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակի կողմից վերոհիշյալ օրինագծի վավերացնելը, խիստ դժգոհության ալիք բարձրացրեց Թուրքիայի դեկավար շրջանակներում: Այդ կապակցությամբ իրենց դժգոհությունը հայտնեցին Սիմեդ Սեզերը, Թուրքիայի վարչապետ Մետուհ Յըլմազը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Մասնավորապես, Թուրքիայի նախագահի խոսնակը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ նախագահ Սիմեդ Սեզերն իր փսոսանքն էր հայտնում Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակին Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ընդունած այսպես կոչված հայոց ցեղասպանության օրինագիծը վավերացնելու կապակցությամբ: Նախագահ Սեզերը դատապարտում էր այս որոշումը, որը վնասակար ազդեցություն էր ունենալու թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա<sup>253</sup>:

Այսպիսով, Դայոց ցեղասպանության միջազգայնացումը Թուրքիայի կողմից ընկալվում է, որպես իրական վտանգ: Այն բարձրացվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգ՝ առաջնային խնդրի վերածվելու և հայ-թուրքական հարաբերություններում ԼՂ հիմնահարցը ետին պլան մղելու պոտենցյալ հնարավորությամբ: Մյուս կողմից, ակնհայտ է դառնում, որ Թուրքիան արագ հակամիջոցներ է կիրառում այս խնդրի միջազգայնացումը կանխելու համար: Սակայն պետք է նշել, որ պաշտոնական Անկարան կանգնած է իր դիրքերը թուլացնելու լուրջ վտանգի առջև: Ժամանակի հետ ավելի է դժվարանում քարոզչական նույն քաղաքականության արդյունավետ իրականացումը:

Դամենայն դեպս, նման քաղաքականությունը վերանայելու կոչով արդեն հանդես են գալիս տասնյակ հազարավոր Թուրքիայի քաղաքացիներ: Նրանցից շատերին հենց այդ պատճառով չի թույլատրվում վերադառնալ սեփական հայրենիք: Որպես օրինակ՝ նշենք Ֆրանկֆուրտում հիմնված «Լիոթյուն ընդդեմ ցեղասպանության» թուրքական հասարակական կազմակերպությունը, որի տասնյակ հազարավոր անդամները Թուրքիայի Ազգային Սեն ժողովից պա-

հանջում են արդարացի գնահատական տալ 20-րդ դարի սկզբին անենամծ ոճիրին՝ Դայոց ցեղասպանությանը: 1999 թ. ապրիլի 11-ին թուրքական իշխանություններին ուղարկված 11 200 մարդու կողմից ստորագրված ուղերձում, որոնցից ավելի քան 10 000-ը արտասահմանում բնակվող Թուրքիայի քաղաքացիներ են, մասնավորապես ասվում էր. «Մենք ցանկանում ենք, որ Անատոլիա-Միջին Արևելք չխաթարական դիրքն ընդգրկող տարածքում բնակվող ժողովուրդների միջև առելության և վրեժխնդրության փոխարեն թագավորեն սերն ու բարությունը, պատերազմի ու ավերածությունների փոխարեն՝ խաղաղությունը, բարեկամությունը ու եղբայրությունը: Քանի որ մեր կազմակերպությունում մեծ է Թուրքիայի Զանապախությունից քաղաքացիների բիվը, մեր երկրում իրականացված ցեղասպանությունների ճանաչումը և գիտակցումը, մեր կարծիքով, կենսական նշանակություն ունի: Մենք չենք ցանկանում, որ թուրք ժողովուրդը 21-րդ դար բնակոխի ցեղասպանության բեռի տակ կքած...»<sup>254</sup>:

2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո սկզբունքորեն վերանայվեց շատ երկրների արտաքին քաղաքականությունը: Ահաբեկչության դեմ պայքարում Թուրքիայի ստանձնած կարևոր դերը մեծապես բարձրացրեց նրա աշխարհաքաղաքական նշանակությունը՝ Արևմուտքի համար այդ երկիրը դարձնելով իսլամական արմատականության և ահաբեկչության դեմ պայքարում կարևորագույն աջակիցներից մեկը: Թուրքիայում շատ լավ գիտակցում էին, որ 2001 թ. հունվար-փետրվար ամիսներին էրկիրը ցնցած տնտեսական ճգնաժամն ահաբեկչության դեմ պայքարում ԱՄՆ-ի հետ համագործակցության միջոցով հաղթահարելու իրական հնարավորություններ էին առաջացել: «Միլիլիթ» օրաթերթն Արժույթի Միջազգային Գիմնադրամի և Զամաշարիային բանկի կողմից Թուրքիային 14 մլրդ. դոլար վարկի տրամադրումն ուղղակիորեն կապել է հակաահաբեկչական պայքարում Թուրքիայի ունեցած «հանգուցային նշանակության հետ»<sup>255</sup>:

Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում և մամուլում ակտիվ քննարկվում էր այդ, որ Թուրքիայի նշանակության աճն իր ուղղակի ազդեցությունն էր ունենալու տարածաշրջանային զարգացումների, մասնավորապես՝ հայ-թուրքական հարաբե-

<sup>253</sup> Akşam, 01.01.2001.

<sup>254</sup> Ազգ. 25. 04. 2000:

<sup>255</sup> Milliyet, 20.02.2002.

րությունների և ԼՂ հիմնահարցի վրա<sup>256</sup>։ Դրա մասին էր վկայում այն փաստը, որ 2002 թ. հունվարի 29-ին Թուրքիայի նախագահի նախագահությանը տեղի ունեցած Ազգային Անվտանգության խորհրդի (ԱՄԽ) 2002 թ. առաջին նիստի ժամանակ հատուկ քննարկման էր արժանացել նաև ԴՀ-ի հետ տնտեսական հարաբերությունների հարցը։ Ըստ «Ձու միտիդե» օրաթերթի, ԱՄԽ-ն մեկ անգամ ևս նշել էր, որ ԴՀ-ի հետ հարաբերությունների զարգացումը կապված էր երկու նախապայմանների՝ գրավված աղբյուրների և հողերից հայկական ուժերի հետքաշման և Հայոց քեղասպանության ճանաչման պահանջներից հրաժարվելու հետ<sup>257</sup>։

## 2.2. ԹՈՒՐԻԱՅԻ ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՂԲԵՋԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՏ 1995-2001 թթ.

1990-ականների սկզբներից ի վեր Թուրքիան մեծապես շահագրգռված էր Հարավային Կովկասում իր դիրքերի ամրապնդմանը, ուստի ակտիվ քայլեր էր ձեռնարկում այդ ուղղությամբ։ Մասնավորապես, Թուրքիան ձգտում էր սերտ ռազմաքաղաքական հարաբերություններ հաստատել Ադրբեջանի և Վրաստանի հետ՝ ջանալով վերոհիշյալ երկրներն ընդգրկել իր ռազմավարական ուղեծրի մեջ։ Այս համատեքստում Թուրքիային էապես օգնում էր այն հանգամանքը, որ Ադրբեջանն ու Վրաստանը, որոնց երկու ընդգծված արևմտյան կողմնորոշում, Թուրքիային դիտում էին, որպես գլխավոր պատենչ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ճանապարհին, ինչպես նաև գլխավոր գործընկեր ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ մերձեցման ուղիորդում։ Ադրբեջանն ու Վրաստանը մեծապես շահագրգռված էին Թուրքիային տարածաշրջանային անվտանգության համակարգի անցակետի մասնակից դարձնելու մեջ։ Փաստորեն, հարավկովկասյան այս երկու երկրները Թուրքիան դիտում էին որպես գլխավոր խթանող ուժ ՆԱՏՕ-ին իրենց հնարավոր անդամակցության հարցում։ 90-ականների երկրորդ կեսից թուրք-ադրբեջանական և թուրք-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները թևակոխեցին համագործակցության նոր փուլ։

<sup>256</sup> Yeni Safak, 16.01.2002.

<sup>257</sup> Cumhuriyet, 01.02.2002.

ԻսԴՄ փլուզումից հետո հարավկովկասյան տարածաշրջանում Ադրբեջանը հանդիսանում է Թուրքիայի գլխավոր դաշնակիցը, ուստի վերջինիս հսկայական ջանքեր է գործադրում ուժեղացնելու իր դիրքերն Ադրբեջանում և ակտիվորեն աջակցում է Ադրբեջանին թե՛ ռազմական, և թե՛ քաղաքական ոլորտներում։ 1994 թ. մայիսին դաբաբադյան հակամարտությունում զինադադարի հաստատումից հետո էլ Թուրքիան շարունակում է ռազմական և քաղաքական լուրջ աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին։

Սակայն Հեյդար Ալիևի իշխանության ամրապնդումն Ադրբեջանում ոչ միանշանակ արձագանք ստացավ Թուրքիայում։ 1995 թ. գարնանը թուրք-ադրբեջանական հարաբերությունները խիստ սրվեցին։ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը 1995 թ. մարտի 17-ին Ադրբեջանում կազմակերպված հեղաշրջման փորձի մեջ մեղադրեց Թուրքիայի գաղտնի ծառայություններին։ Այս կապակցությամբ Ադրբեջանի նախագահը Թուրքիայի նկատմամբ հանդես եկավ կոշտ հայտարարությամբ՝ նշելով, որ Թուրքիայում գոյություն ունեն որոշակի շրջանակներ, որոնք համակրում են ինչպես առանձին ծայրահեղականներին, այնպես էլ զինված խմբավորումներին, որոնք փորձում են խարխել Ադրբեջանի կայունությունը։ Նմանատիպ գործողությունները չեն կարող չթթագնել մեր երկրների միջև առկա բարիդրացիական հարաբերությունները<sup>258</sup>։

Հատկանշական է, որ թուրքական մի շարք լրատվամիջոցներ, անդրադառնալով Ադրբեջանում 1995 թ. մարտի 17-ին Ռուջան Ջավադովի գլխավորությամբ կազմակերպված հեղաշրջման փորձին, նշել էին, որ դրան իրենց ակտիվ մասնակցություն էին ունեցել Թուրքիայի որոշ նախարարներ և հետախուզության գործակալության՝ MIT-ի մի շարք պաշտոնյաներ, ինչպես նաև Հեյդար Ալիևի խորհրդական, Թուրքիայի քաղաքացի, պրոֆեսոր Ֆերման Դեմիրջուլը<sup>259</sup>։ Ֆերման Դեմիրջուլը հեղաշրջման փորձի նախարարական բազմիցս հանդիպել էր Ռուջան Ջավադովի, էլ չիբեյի ռեժիմի ընթացքում ԱԳ նախարար Թոֆիկ Կասումովի և ադրբեջանական «Գորշ գայլեր» կազմակերպության ղեկավար Իսկանդեր Գամիդովի հետ<sup>260</sup>։

<sup>258</sup> Sabah, 24.03.1995; Zaman, 29.03.1995.

<sup>259</sup> Cumhuriyet, 6-10.11.1996; Yeni Yuzyl, 08.11.1996.

<sup>260</sup> Митрев В.Г., Внутриполитическое развитие независимого Азербайджана в свете его геополитического положения. Независимый Азербайджан: новые ориентиры: Монография. Т. 1. М., РИСИ, 2000. с. 48.

Սակայն պաշտոնական ԱՆկարան անմիջապես հերքեց այդ մեղադրանքները: Թուրք-ադրբեջանական լարված հարաբերությունները բարելավելու, Ադրբեջանում հեղաշրջման փորձի հետևանքով առաջացած տարածայնությունները հաղթահարելու և նախկին սերտ համագործակցությունը վերականգնելու նպատակով Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերը 1995 թ. ապրիլին ժամանեց Բաքու: Ադրբեջանի նախագահի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետը ներողություն էր խնդրել Ալիևից հեղաշրջմանը մասնակցած «անվերահսկելի աջակողմյան խմբավորման» գործողությունների համար՝ միևնույն ժամանակ հերքելով թուրք պաշտոնյաների մասնակցությունը դրանում<sup>261</sup>:

90-ականների երկրորդ կեսից թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական հարաբերությունները սկսեցին ինտենսիվորեն զարգանալ: Մասնավորապես, ռազմական ոլորտում Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրվեցին մի շարք կարևոր համաձայնագրեր երկկողմ ռազմական համագործակցության և ռազմավարական գործընկերության վերաբերյալ: Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության զարգացման էր ուղված 1996 թ. հունիսի 11-ին ստորագրված թուրք-ադրբեջանական համաձայնագիրը, համաձայն որի, երկու երկրները համագործակցելու էին սպայական անձնակազմի ռազմական պատրաստության, ռազմական արդյունաբերության և տեխնոլոգիաների ոլորտներում: Բացի այդ, ձեռք բերվեց համաձայնություն ռազմական փորձի փոխանակման և համատեղ զորավարություններ անցկացնելու հարցերի շուրջ<sup>262</sup>: Հատկանշական է, որ Թուրքիայի Գլխավոր Շտաբի պետ գեներալ Իսմայիլ Հաքբը Զարադային թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը որակել էր որպես «ճոր ռազմական միություն»<sup>263</sup>:

Երկկողմ հարաբերություններն ամրապնդելու նպատակով 1997 թ. մայիսի 5-8-ը Ադրբեջանի նախագահ Նեյջար Ալիևը պաշտոնական այցով ժամանեց Թուրքիա: Թուրքիայի նախագահի հետ հանդիպման արդյունքում երկու երկրների նախագահները ստորագրեցին

«Ուզմամբարական Յամագործակցության Համաձայնագիրը», համաձայն որի, նոր թափ էր ստանալու գոյություն ունեցող ռազմավարական համագործակցությունը քաղաքական, տնտեսական, ռազմական և անվտանգության ոլորտներում: Վերոհիշյալ համաձայնագրով խստորեն դատապարտվում էր ԳԴ-ի «ազրեսիան» Ադրբեջանի նկատմամբ, և Լեռնային Ղարաբաղը համարվում էր Ադրբեջանի անբաժանելի մասսիվը<sup>264</sup>: Թուրքիայի վարչապետ Լեռնային Երաքանի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետը, նշելով, որ Թուրքիան և Ադրբեջանը եղբայր երկրներ են, հայտարարեց, որ յուրեքներ ու ադրբեջանցիներն ունեն միևնույն արժատները և միևնույն հավատքը: Թուրքիան հպարտանում է անկախ Ադրբեջանի գոյությանը և ցանկանում է, որ Ադրբեջանում միշտ իշխի բարեկեցությունը<sup>265</sup>:

90-ականների վերջերին Բաքվի և Անկարայի միջև ռազմական համագործակցության ընդլայնման լուրջ միտումներ էին նկատվում: Դրա վրա օրինակներ էր այն, որ թուրքական ուսումնական հաստատություններում սովորում էին ավելի քան 400 ադրբեջանական զինծառայողներ, իսկ ադրբեջանական բանակում ծառայում էին մինչև 70 թուրքական սպաներ<sup>266</sup>: Միաժամանակ, պաշտոնական Բաքում կողմ էր արտահայտվել ադրբեջանական բանակը հյուսիսատլանտյան դաշինքի չափանիշներին համապատասխանեցմանը: Այդ երկու պետությունների ռազմական համագործակցությունը գնալու ուսանում էր ռազմական դաշինքի ձև, որն ուներ հստակ արտահայտված հակահայկական ուղվածություն<sup>267</sup>: Այս համաձայնագրում պատահական չէր, որ Ադրբեջան իրականացնում էր զինված ուժերի բարեփոխման լայնամասշտաբ ծրագրեր, որտեղ Թուրքիայի դերը, թերև, դժվար էր թերագնահատել:

Դեռ այս նպատակին էր ուղված 1998 թ. ապրիլին Թուրքիայի Չինված Ուժերի Գլխավոր Շտաբի պետ Իսմայիլ Հաքբը Զարադայի այցը Բաքու, որտեղ ռազմական ոլորտում սերտ համագործակցության ուղված բանակցություններից հետո ապրիլի 14-ին հայտարարեց, թե Թուրքիան կհամաձայնի դարաբաղյան հակամարտության

<sup>261</sup> Turkish Daily News, 14.04.1995.

<sup>262</sup> Шорохов В., Политика Турции в Закавказье и национальные интересы России, в: Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Евразию? - Московский Центр Карнеги, вып. 14, 1997, с. 49.

<sup>263</sup> Независимое Газета, 19.09.1996.

<sup>264</sup> www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintaribi/1997/nisan1997.htm.

<sup>265</sup> Ibid.:

<sup>266</sup> Гаджиев К.С., Ելվ. աշխ., էջ 354:

<sup>267</sup> См. в том же месте.

կարգավորման այնպիսի տարբերակին միայն, որը չի խախտի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Նա նաև նշել էր, որ թուրքիան մեծ նշանակություն է տալիս եՄԳԿ Միևնույն խմբին, որը թույլ չի տա, որ տարածաշրջանի որևէ երկիր գործի այնպես, ինչպես ինքն է ցանկանում<sup>268</sup>: Փաստենց, որ հենց նրա այցի հետ էր կապված թուրքիայի կողմից Ադրբեջանին F-16 կործանիչներ վաճառելու մասին լրատվության արտահոսքը: Ադրբեջանի պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցիչ զնդապետ Ռամիզ Մեկրիով հերքեց նման լուրերը, սակայն թուրք մեկնաբանները, ոչ մի զարմանալի բան չտեսնելով դրանում, դա «ճորձալ բիզնես» որակեցին<sup>269</sup>:

Ադրբեջանի հետ ռազմական ոլորտում սերտ համագործակցությունը, վերջինիս անկախությունից ի վեր, թուրքիան արդարացնում էր դեռ 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական Մոսկվայի պայմանագրով, որից ելնելով, Անկարան Նախիջևանն այսօր էլ դիտում է, որպես իր պրոտեկտորատ: Դեռևս Մոսկվայի պայմանագիրն են վկայակոչում թուրք քաղաքական գործիչները Ադրբեջանի հետ ռազմական համագործակցության մասին խոսելիս<sup>270</sup>:

Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմաքաղաքական համագործակցության նոր փուլ սկսվեց 1999 թ. ապրիլին Ալիևի Անկարա կատարած այցից հետո, որի ընթացքում թուրքիան և Ադրբեջանը ստորագրեցին ռազմավարական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը: Ալիևի և Գեմիլիկի միջև ռազմական համագործակցության մասին ստորագրված պայմանագրում մասնավորապես ասվում էր, որ թուրքիան երաշխավորում էր Ադրբեջանի անվտանգությունը ցանկացած ագրեսիայի դեպքում և պատրաստ էր ռազմական ու քաղաքական օժանդակություն ցուցաբերել վերջինիս<sup>271</sup>: Բնականաբար, ներկայացված ռազմավարական համագործակցության շրջանակներում նկատի են առնվում երեք հնարավոր թշնամիներ՝ Ռուսաստանը, Իրանը և ԳԳ-ը:

2000 թ. հուլիսի 12-13-ին թուրքիայի նախագահ Սիմեթ Սեջեր Սեզերի այցն Ադրբեջան մեծ արծազանք ստացավ թե՛ թուրքական, և թե՛ ադրբեջանական մամուլում, բանգի դա թուրքիայի նորընտիր

նախագահի առաջին այցն էր Ադրբեջան: Կողմերը քննարկեցին թուրք-ադրբեջանական ռազմավարական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված քայլերը, ԼՂ-ի հիմնահարցը և ԳԳ-ի հետ հարաբերությունները: Թուրքիայի նախագահի այցը կոչված էր ցույց տալու թուրք-ադրբեջանական եղբայրության անսասանությունը, և ԳԳ-ի նկատմամբ վարվելիք թուրքական քաղաքականության մեջ որևէ փոփոխումներ չլինելը: Այցի շրջանակներում ելույթ ունենալով Ադրբեջանի խորհրդարանում՝ Սեզերը նշեց, որ Անատոլիայի թուրքերն ու Ադրբեջանի թուրքերը նույն ժողովուրդն են, և որ իրենց լեզուն, մշակույթը, ծիսակատարությունները, եպոսները, հեղուները, երգերը նույնն են: Անդրադառնալով ԼՂ-ի հակամարտության խնդրին՝ Սեզերը հայտարարեց, որ թուրքիան կողմնակից է ԼՂ-ի հիմնահարցի խաղաղ ճանապարհով լուծմանը Ադրբեջանի տարածքային ամբողջականության սահմաններում: Թուրքիան Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման կողմնակից է և չի ընդունի հիմնահարցի լուծման որևէ տարբերակ, որի հետ համաձայն չլինի Ադրբեջանը<sup>272</sup>:

Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցությունն ամրապնդելու նպատակով 2001 թ. մարտի 12-ին ինգոլյա պաշտոնական այցով Անկարա ժամանեց Ադրբեջանի նախագահը, որի ընթացքում բավականին լուրջ քննարկումներ ընթացան թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության հեռանկարների շուրջ: Անհրաժեշտ է հիշատակել, որ դեռ մինչև Ալիևի այցը թուրքական լրատվամիջոցները հայտնել էին, որ թուրքիան \$3 մլն. ռազմական օգնություն էր հատկացնելու Ադրբեջանին: Անկարա մեկնելուց առաջ Ալիևը թղթակիցների այն հարցին, թե արդյոք նախատեսվում էր թուրքիայի հետ ռազմական պայմանագիր կնքել, պատասխանել էր. «Մենք սերտ հարաբերությունների մեջ ենք թուրքիայի Գլխավոր Շտաբի հետ»<sup>273</sup>:

Ալիևի այցի օրերին Բաքվում էր գտնվում թուրքիայի Գլխավոր Շտաբի ռազմավարության վարչության պետ Նուսրեթ Թաշդեյենը, որին ընդունեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը: Դանդիպումից հետո տեղի ունեցած համատեղ մամուլի ասուլիսում Թաշդեյենը նշեց, որ երկու երկրների միջև ռազմական

<sup>268</sup> Turkish Daily News, 15.04.1998.

<sup>269</sup> Ibid.:

<sup>270</sup> Zerkalo/internet newspaper from Azerbaijan, 13.02.1999.

<sup>271</sup> Демоян Г., *նշվ. աշխ.*, էջ 133:

<sup>272</sup> Sabah, 14. 07.2000.

<sup>273</sup> Turkish Daily News, 13.03.2001.

համագործակցության ընդլայնումը տալիս է դրական արդյունքներ՝ ընդգծելով, որ NATO-ի հովանու ներքո իրականացվող «Համագործակցություն Հանուն հաղաղության» ծրագրի շրջանակներում հարաբերությունները ծառայում են երկու երկրների շահերին: Նա ավելացրեց, որ անհնար է Հարավային Կովկասում հասնել խաղաղության, քանի դեռ չի լուծվել ԼՂ հիմնահարցը Արդրեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում<sup>274</sup>:

Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցությունը զարգացնելու նպատակով 2001 թ. օգոստոսի 25-ին եռօրյա պաշտոնական այցով Բաքու ժամանեց Թուրքիայի Գլխավոր Շտաբի պետ Յուսեփի Քվլրբջոլուն: Վերոհիշյալ այցի կարևորություն է նրանում, որ այն տեղի ունեցավ կասպիական նավթահանքերի շուրջ ադրբեջանա-իրանական հարաբերությունների խիստ լարվածության պայմաններում, որը հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Միաժամանակ այս այցելությանը Թուրքիան բացահայտ ցույց տվեց, որ աջակցում է հովանավորում էր Ադրբեջանին: Դրա վրա ապացույցն այն էր, որ Քվլրբջոլուի այցից մի քանի օր առաջ Թուրքիան Ադրբեջանին էր նվիրել F-5 տեսակի 10 ռազմական ինքնաթիռ, որոնք օգոստոսի 24-25-ին ցուցադրական թռիչքներ կատարեցին Բաքվում, ինչպես նաև ռազմանավ՝ Կասպից ծովում օգտագործելու նպատակով: Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հաղորդման համաձայն, Քվլրբջոլուի այցը և ինքնաթիռների ցուցադրական թռիչքները նախատեսվել էին երեք ամիս առաջ<sup>275</sup>: Սակայն իրողությունն այն էր, որ Ադրբեջանը պաշտոնյաները բացահայտ հայտարարեցին, որ Իրանի և ՀՀ-ի դեմ պայքարում, ի դեմս Թուրքիայի, դարձյալ իրենց կողքին տեսնում էին հզոր աջակցի<sup>276</sup>:

Այցի շրջանակներում Թուրքիայի Գլխավոր Շտաբի պետը հանդիպեց Ադրբեջանի նախագահ Չեյդար Ալիևի հետ: Ալիևի հետ հանդիպումից անմիջապես հետո վարչապետի և կառավարության անդամների ներկայությամբ Չեյդար Ալիևը Քվլրբջոլուին պարզապես Ադրբեջանի չքանշումով՝ երկու երկրների հարաբերություններին զարգացման գործում մեծ ներդրում ունենալու համար: Արարո-

<sup>274</sup> Zaman, 16.03.2001.

<sup>275</sup> Zaman, 24.08.2001.

<sup>276</sup> Ibid.:

դրությունից հետո Ալիևը, անդրադառնալով թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական հարաբերություններին, նշեց, որ Թուրքիան և Ադրբեջանի ռազմական հարաբերությունները բնակոխել են ռազմավարական համագործակցության: Թուրքիայի հետ հարաբերությունները հատուկ կարևորություն ունեն ԼՂ հիմնահարցի լուծման գործընթացում՝ ընդգծելով, որ Թուրքիան մեծ դերակատարություն է ունեցնել Ադրբեջանի ազգային քանակի ձևավորման գործընթացում<sup>277</sup>: Իր հերթին զենքալ Քվլրբջոլին, շնորհակալություն հայտնելով բարձր պարգևի համար, հայտարարեց, որ Թուրքիան որոշել է շարունակել ռազմական համագործակցությունն Ադրբեջանի հետ, և որ իրեն նվիրած մեղալը այս համագործակցության խորհրդանիշն է, որը հավերժ շարունակվելու է երկու երկրների միջև<sup>278</sup>:

Թուրք-ադրբեջանական ռազմական հարաբերությունների հետագա ամրապնդման տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացնում 2001 թ. հոկտեմբերի 1-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի եռօրյա պաշտոնական այցը Թուրքիա: Թուրքիայի Գլխավոր Շտաբի պետ Յուսեփի Քվլրբջոլուի հետ հանդիպման ժամանակ կողմերը ընձարկեցին Թուրքիայի և Ադրբեջանի զինված ուժերի համագործակցության հետագա զարգացման, ինչպես նաև ռազմական արդյունաբերության բնագավառում համագործակցությանն առնչվող հարցեր: Երկու կողմերն էլ հայտարարեցին, որ սերտորեն համագործակցելու են ահաբեկչության և անջատողականության դեմ պայքարում՝ հատկապես 2001 թ. սեպտեմբերի 11-ի ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական իրադարձություններից հետո: Բացի այդ, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, Թուրքիան Ադրբեջանին ցուցաբերելու էր ռազմական օգնություն՝ մատակարարելով ռազմական սարքավորումներ և մոդեռնիզացնելով ադրբեջանական ռազմական տեխնիկաները<sup>279</sup>:

Այսպիսով, Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների կողմից բազմիցս հնչեցրած «մեկ ազգ, երկու պետություն» բանաձևն ամուր արմատներ էր ձգել երկկողմ հարաբերություններում: 90-ականների երկրորդ կեսից Թուրքիան շարունակում է ռազմաքաղաքական աջակցությունն Ադրբեջանին՝ մշտապես խորացնելով իր հարաբերություն-

<sup>277</sup> Anatolia news agency, 25.08.2001.

<sup>278</sup> Ibid.:

<sup>279</sup> Turan, 03.10.2001.

ներն այդ երկրի հետ և պաշտպանելով նրա շահերը միջազգային ասպարեզում: Դրանով լուրջ նախադրյալներ էին ստեղծվում թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության հետագա ընդլայնման համար, բանգի բե՛՝ թուրքիան, և բե՛՝ Ադրբեջանն էապես շահագրգռված են հարաբերությունների հետագա զարգացմամբ:

Անդրադառնալով թուրք-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին՝ Եշենք, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանն առաջորեն դարձավ թուրքիայի ամենակարևոր արտաքին քաղաքական գործընկերներից մեկը: Թուրքիայի համար Վրաստանի այդչափ մեծ կարևորությունը հիմնականում պայմանավորված էր երկու գլխավոր գործոններով: Առաջին գործոնը նա էր, որ թուրք-հայկական հարաբերությունները ԽՍՀՄ փլուզումից ի վեր լարված բնույթ էին կրում, ուստի Վրաստանը Թուրքիայի համար հանդիսանում էր դեպի Կենտրոնական Ասիա տանող հիմնական դարպաս: Երկրորդ գործոնը գլխավորապես կապված էր Թուրքիայի էներգետիկ քաղաքականության հիմնական նախագծի՝ Բաքու-Տեյխան նավթամուղի հետ և այդ նախագծում Վրաստանի դերակատարության հետ՝ որպես նավթամուղի տարանցիկ երկիր: Ուստի 90-ականների երկրորդ կեսից, գրեթե չթաքցնելով իր ռազմավարական պայմանավորվածություններն Ադրբեջանի հետ, Անկարան ակտիվ ջանքեր էր գործադրում նաև Վրաստանին իր ռազմավարական ուղեծրի մեջ ընդգրկելու ուղղությամբ: Թուրքիան հատկապես ձգտում էր ընդլայնել իր համագործակցությունը Վրաստանի հետ քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում: Թուրքիայի այս գործունեությանն էապես նպաստեց այդ հանգամանքը, որ 90-ականների երկրորդ կեսից Վրաստանը հետևողականորեն շարունակում էր դեպի ՆԱՏՕ իր ռազմաքաղաքական ինտեգրումը և համագործակցությունը ԱՄՆ-ի, Թուրքիայի, ՆԱՏՕ-ի հետ:

1995 թ. Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի դրե՛ կազմակերպված մահափորձը հանգեցրեց նոր աշխարհաքաղաքական նախաձեռնությունների և տեղաշարժերի Դարավային Կովկասում: Այդ մահափորձի գլխավոր հետևանքը բերու էրավ այն, որ Վրաստանը փոխեց իր քաղաքական կողմնորոշումը՝ քայլեր ձեռնարկելով Արևմուտքի հետ սերտ հարաբերությունների հաստատման ուղղությամբ, որն ակնհայտ հակառուսական ուղվածություն ուներ<sup>280</sup>:

Ահա այս համատեքստում լուրջ տեղաշարժեր նկատվեցին թուրք-վրացական հարաբերություններում: Մասնավորապես, 1996 թ. մարտի սկզբին ԹԱՄԺ-ի նախագահ Մուսթաֆա Քալենլին ժամանեց Վրաստան: Մուսթաֆա Քալենլին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հետ հանդիպման ժամանակ, որպեսզի գնահատելով Վրաստանում ընթացող քաղաքական գործընթացը, հանձնվածություն հայտնեց, որ ժողովրդավարական ուղիով ընթացող Վրաստանը կդառնա խաղաղության և կայունության երաշխիքը տարածաշրջանում: Նա նաև իր գոհունակությունն արտահայտեց այն փաստի վերաբերյալ, որ Վրաստանի առևտրական հաշվեկշիռի մեջ այդ պահին Թուրքիան գրավում էր առաջին տեղը: Անդրադառնալով երկրորդ հարաբերությունների զարգացման հեռանկարներին՝ Քալենլին ընդգծեց, որ Թուրքիան դիտում է վրաց-թուրքական փոխհարաբերությունները որպես երկու իրավահավասար, բարեկամական երկրների հարաբերություններ<sup>281</sup>:

Թուրք-վրացական հարաբերություններն ամրապնդելու նպատակով 1996 թ. ապրիլին պաշտոնական այցով Թուրքիա մեկնեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի գլխավորած պատվիրակությունը: Ըստ թուրքական աղբյուրների, Սուլեյման Դեմիրելը Վրաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ շեշտեց, որ Վրաստանի նախագահի այցն Անկարա նպաստելու է երկու երկրների հետագա և արդեն գոյություն ունեցող կապերի զարգացմանը: Թուրքիայի և Վրաստանի սերտ համագործակցությունը տարածաշրջանային հարցերի շուրջ սերտորեն կապված է երկու երկրների շահերի հետ<sup>282</sup>:

Իր հերթին Վրաստանի նախագահին իր գոհունակությունն է հայտնել երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման տեմպերով՝ Եշելով տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման գործընթացում Թուրքիայի մեծ դերակատարություն մասին: Նա, մասնավորապես, շնորհակալություն հայտնելով Թուրքիայից Վրաստանի տարածքային ամբողջականությանը ցուցաբերվող աջակցության համար, ընդգծեց, որ հնարավոր չէ Կովկասում խաղաղությունը և կայունությունը վերականգնել առանց Թուրքիայի աջակցության<sup>283</sup>: Արխագական և հարավօսական հիմնա-

<sup>281</sup> Gia Tarkhan-Mouravi, The Georgian-Abkhazian Conflict in a Regional Context. - Chapter 6, Part 1, Vrije Universiteit Brussel, August 1998, p. 8:

<sup>282</sup> Turkish Daily News, 04.04.1996.

<sup>283</sup> Ibid.:

<sup>280</sup> Gia Tarkhan-Mouravi, The Georgian-Abkhazian Conflict in a Regional Context. - Chapter 6, Part 1, Vrije Universiteit Brussel, August 1998, p. 7.

խնդիրներում Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը, որը ենթադրում էր Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանում, մեծապես նպաստեց մի շարք ոլորտներում՝ մասնավորապես տնտեսական և ռազմաքաղաքական ոլորտներում թուրք-վրացական հարաբերությունների զարգացմանը՝ Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի բնորոշմամբ Թուրքիան վերածելով «Վրաստանի երկարաժամկետ ռազմավարական գործընկերոջ»<sup>284</sup>։ Բացի այդ, ռազմական ոլորտում համագործակցության շրջանակներում Թուրքիան սկսեց աջակցել Վրաստանին ռազմական կրթության և Վրաստանի ազգային բանակի կազմավորման գործընթացում<sup>285</sup>։

Շարունակում էր զարգանալ նաև թուրք-վրացական հարաբերությունների իրավապայմանագրային հենքը։ 1998 թ. մարտի 13-ին Վրաստան Թուրքիայի վարչապետ Մեսութ Յըլմազի պաշտոնական այցի ժամանակ ստորագրվեցին համաձայնագրեր առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման վերաբերյալ, ինչպես նաև քննարկվեցին կասպիական ենթակայությունների Բաթու-Ջեյհան ուղիով արտահանելու վերաբերյալ մի շարք հարցեր<sup>286</sup>։ Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հետ հանդիպումից հետո լրագրողների հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետը, Նշելով, որ թուրք-վրացական հարաբերություններում որևէ խնդիրներ կամ տարածայնություններ գոյություն չունեն, Վրաստանը որակեց որպես երկիր, որի հետ Թուրքիան ուներ «համատեղ շահեր, և որի հետ Թուրքիան ձգտում էր ամրապնդել համագործակցությունը բոլոր բնագավառներում»՝ լինելով անկախ և ինքնիշխան երկիր, որը նախընտրում էր ապահովել խաղաղությունն ու կայունությունը Գարաբային Կովկասում<sup>287</sup>։ Իր հերթին Էդուարդ Շևարդնաձեն, Յըլմազի այցելությունը որակելով բեկումնային, նշեց, որ Թուրքիան միշտ էլ դժվարին օրերին եղել է Վրաստանի կողքին։ Ծանր օրերին, երբ Վրաստանի կենդանի մնալը վտանգի էր ենթարկված, չնայած Թուրքիայում առկա աբխազամետ լոբիի ճնշմանը, Թուրքիան վարկեր և մարդասիրական օգ-

նություն է տրամադրել Վրաստանին, ինչպես նաև պաշտոնապես սատարել է իր հարևանի տարածքային ամբողջականությունը<sup>288</sup>։

Թուրք-վրացական ռազմական հարաբերություններն ինտենսիվորեն սկսեցին զարգանալ հատկապես 90-ականների վերջերին։ Ռազմական ոլորտում թուրք-վրացական համագործակցության զարգացմանն էապես նպաստեց 1998 թ. ապրիլի 15-ին Վրաստանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի Գլխավոր Շտաբի միջև կնքված «ռազմական ոլորտում համագործակցության և փոխադարձ համաձայնության համաձայնագիրը»։ Համաձայնագրում հատուկ ընդգծված էր Անկարայի և Թբիլիսիի միջև ռազմական համագործակցության «ռազմավարական» սպեկտրը։ Ըստ համաձայնագրի, Թուրքիան աջակցելու էր վրացական զինված ուժերի նյութա-տեխնիկական բազայի ձևավորման և կադրերի պատրաստման գործընթացում։ Բացի այդ, Անկարան պատասխանատվություն ստանձնեց ֆինանսավորելու վրացական բանակի մոդեռնիզացիան և կառուցելու որոշ ռազմական կառույցներ<sup>289</sup>։

Թուրք-վրացական ռազմական համագործակցությունն ընդլայնելու և ձեռք բերված պայմանավորվածություններն իրականացնելու նպատակով 1999 թ. մարտի 1-ին Վրաստան ժամանեց թուրքական ռազմական պատվիրակությունը Թուրքիայի հատուկ նշանակության զորքերի հրամանատար Էնգին Ալանի գլխավորությամբ։ Վրաստանի ռազմական ղեկավարության հետ հանդիպումների արդյունքում ստորագրվեց թուրք-վրացական ռազմական համագործակցության համաձայնագիրը, որի շրջանակներում Թուրքիան Վրաստանին էր հատկացնելու 5.5 մլն. դոլար ռազմական օբյեկտների վերակառուցման և վերազինման, վրացական ռազմական ակադեմիայի կրթական կենտրոնի կառուցման և վրացական բանակի ֆինանսավորման համար։ Բացի այդ Անկարան պատրաստվեց ֆինանսավորել Գորիի ռազմավորմադաշտի վերակառուցման աշխատանքները, ինչպես նաև հատկացված դրամաշնորհով վրացական նավատորմի համար գնել նավիզացիոն սարքավորումներ<sup>290</sup>։

<sup>284</sup> Mustafa Aydın, Turkish Policy Toward the Caucasus, [www.ciaonet.org/olj/co/co\\_jul02/co\\_jul02f.pdf](http://www.ciaonet.org/olj/co/co_jul02/co_jul02f.pdf).

<sup>285</sup> Ibid.:

<sup>286</sup> Независимое Газета, 24.03.1998.

<sup>287</sup> Manos Karagiannis, The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil.

<http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>:

<sup>288</sup> Manos Karagiannis, The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil, <http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>:

<sup>289</sup> Гаджиев К.С., Գլխ. աշխ., էջ 355:

<sup>290</sup> Авакова Р.М., Лисова А. Г., Россия и Закавказье: Реалии независимости и новое партнерство, ИМЭМО РАН, М., 2000, с. 74, Независимая Газета, 01.10.1999.

Այս համատեքստում ուշադրության է արժանի 1998 թ. մայիսին Վրաստանի և Թուրքիայի միջև համատեղ «Կովկասյան Անազոնիա-98» զորավարժությունների իրականացման հանգամանքը, որն իրականացվեց սեփական Փոքի և Բաթում նավահանգիստների ավազանի շուրջ ձեռքբերված համաձայնագրի շրջանակներում: Թուրքիայի կողմից ֆինանսավորված զորավարժությունների նպատակն էր համատեղ փոխգործակցության մեխանիզմների մշակումը՝ վնասազերծելու նախարարի փոխարամիջոցների համար սպառնալիք ներկայացնող նավերը: Բացի այդ, միայն 1998-1999 թթ. Թուրքիան վրացական զինված ուժերին և սահմանապահներին տրամադրեց մոտ 10 մլն. դոլար<sup>291</sup>:

Ուզման կողմից թուրք-վրացական հարաբերությունների ակտիվացման և համագործակցության հետագա զարգացման նպատակով կողմնորդ 1999 թ. մարտին ստորագրեցին ռազմական աջակցության և համագործակցության մասին պայմանագիրը, որը շրջանակներում Թուրքիայի կողմից ցուցաբերվելիք ռազմական աջակցությունը ծառայելու էր Վրաստանի անկախության ամրապնդմանը, ինչպես նաև Արևմուտքի և մասնավորապես, ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի հարաբերությունների զարգացմանը<sup>292</sup>:

2000 թ. հունվարի 14-15-ին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի պաշտոնական այցը Վրաստան լուրջ քննարկման առարկա դարձավ տարածաշրջանում: Խնդիրը կայանում է նրանում, որ Վրաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ Դեմիրելը հանդես եկավ նախաձեռնությամբ՝ ստեղծել «Կովկասյան Կայունության Պակտ»: Մասնավորապես, զուգահեռներ տանելով Բալկանների և Կովկասի միջև՝ Դեմիրելը նշեց, որ Եվրոպան և ԵՄԿԿ-ն պետք է ներգրավվեն այս ծրագրի մեջ, որի հաջողությունը կախված էր նաև ԱՄՆ-ի աջակցությունից: Դեմիրելի խոսքերով՝ «տարածաշրջանի կայունությանն ուղիված պակտի ստեղծման ծրագիրը ԵԱԳԿ անդամ բոլոր երկրների խնդիրն է»<sup>293</sup>:

<sup>291</sup> Гаджиев К.С., Ելվ. աշխ., էջ 355-356, Независимая Газета, 12.05.1998.

<sup>292</sup> Գրիգոր Արշակյան, Թուրքիայի ռազմաքաղաքական հարաբերությունների Վրաստանի հետ 1995-2001 թթ. - Չայկական քանակ. 4 (54), 2007, էջ 12:

<sup>293</sup> Turkish Daily News 17.01.2000: Դեմիրելը մասնավորապես նշել էր. «Մտանք բաժանման գծերի, ժողովրդավարական և քաղաքակրթական Եվրոպայի համար Կովկասի կայունությունը առանցքային է: Մեր գլխավոր նպատակն է ճշում գործարկել քաղաքակիրթ երկրների վրա, որպեսզի վերջիններս ավել ուշադրություն դարձնեն Կովկասյան տարածաշրջանին»:

Դեմիրելի այցը հստակ ազդանշան էր Ռուսաստանին: Նկատի ունենալով Ռուսաստանը՝ Դեմիրելն ասաց, որ ոչ մի պետություն չպետք է ձգտի իր գերիշխանությունը հաստատել երիտասարդ պետությունների վրա: Ընդհակառակը, այդ երկրներին պետք է օգնել զարգացնել տնտեսությունը և ժողովրդավարությունը, որ վերջիններս ի վիճակի լինեն կանգնել «իրենց սեփական ուղեքի վրա»<sup>294</sup>: Դրանով Դեմիրելը ընդգծում էր, որ կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանն այլևս չունի մենաշնորհային դիրքեր:

Բացի այդ, Թուրքիան և Վրաստանը պայմանավորվեցին երկու երկրների միջև համագործակցության ամրապնդման նպատակով բացել արդեն երրորդ ցամաքային Չըղզըր-Աքբաշ անցակետը: Թուրքական կողմը նաև պատրաստակամություն հայտնեց ստանձնելու Վրաստանի ռազմական օդաչուների մարզելու գործը<sup>295</sup>: Այսպիսով, Դեմիրելի այցը Վրաստան մեկ անգամ ևս հաստատեց Թուրքիայի ցանկությունը ավելի հաստատուն դիրքեր ունենալու Միջին Արևելքի և Կովկասի տարածաշրջանում և այստեղ առաջնորդի դերը ստանձնելու նրա հավակնությունները:

Երկկողմ ռազմական համագործակցության խորացման էր միտված 2001 թ. հունվարին է. Շևրոդանծեի պաշտոնական այցը Թուրքիա, որի ժամանակ կողմնորդ ստորագրեցին համաձայնագրեր ռազմարդյունաբերության, սահմանում ակնների վերացման ուղղությամբ համագործակցության մասին: Ռազմարդյունաբերության ոլորտում գործակցությունը ներառելու էր կրթության, տեխնիկական աջակցության և այլ հարցեր, որի նպատակն էր՝ Վրաստանի բանակը համապատասխանեցնել ՆԱՏՕ-ի չափանիշներին<sup>296</sup>:

Կարևորելով համաձայնագրի ստորագրումը՝ նախագահ Սեֆերը նշեց, որ իրենք շեշտել են այն կարևորությունը, որ Թուրքիան տալիս է իր մտերիմ բարեկամ և ռազմավարական գործընկեր Վրաստանի անկախությանը և տարածքային ամբողջականությանը: «Թուրքիան ցանկացած գնով աջակցելու է Վրաստանի ջանքերին ուղիված քաղաքական կայունության բարելավմանը»<sup>297</sup>:

<sup>294</sup> Turkish Daily News, 17.01.2000.

<sup>295</sup> Türkiye, 17.01.2000.

<sup>296</sup> Radikal, 30.01.2001, Cumhuriyet, 30.01.2001.

<sup>297</sup> Cumhuriyet, 30.01.2001.

Մինչ Շևարդնաձեի ԱՆկարա ժամանելը, 2001 թ. հունվարի 28-ին թուրքիայի պաշտպանության նախարարը, օդային ուժերի հրամանատարի և այլ զենքերակների հետ միասին, մասնակցեց թուրքիայի օդային ուժերի կողմից երեք անուն արդիանականացված և 1.5 մլն. դոլար կազմած Մառնեուլիի ռազմաօդային բազայի բացման արարողությանը: Նախատեսվում էր, որ այդ բազայում աշխատելու էին նաև թուրք զինվորականներ: «Միլլիյեթի» հաղորդմամբ, թուրքիայի պաշտոնական շրջանակները համարում էին, որ բազան ռազմավարական կարևորություն էր կրում «թե՛ Ռուսաստանի ճնշումներից նեղվող Վրաստանի, թե՛ տարածաշրջանային ուժ հանդիսացող թուրքիայի տեսակետից»<sup>298</sup>: Այցի կարևոր քաղաքական արդյունքներից մեկը երկու երկրների համատեղ հայտարարություն ընդունումն էր, որում շեշտվեց, որ կողմերը շարունակելու էին ջանքերը տարածաշրջանում կայունության և անվտանգության մեխանիզմներ հիմնելու, մասնավորապես Կովկասի Կայունության Պակտ ստեղծելու ուղղությամբ<sup>299</sup>:

2001 թ. հուլիսի 3-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց թուրքիայի պաշտպանության նախարար Սարահաթթին Չաքմաթօղլուն, որի ընթացքում քննարկվեցին ռազմական բնագավառի համագործակցության խնդիրներ, մասնավորապես, Վրաստանի տարածքից ռուսական ռազմակայանների դուրս բերման ժամկետների ուշացման վերաբերյալ: Այս խնդրի կապակցությամբ Չաքմաթօղլուն հայտնեց, որ թուրքիան ամբողջովին աջակցում է Վրաստանին ռուսական զորքերի դուրս բերման հարցում՝ բուրջ-վրացական ռազմական համագործակցությունը համարելով բավականին լուրջ: Եղուարդ Շևարդնաձեի հետ հանդիպման ժամանակ Չաքմաթօղլուն նշեց, որ նախորդ տարիների ընթացքում թուրքիան դարձել էր Վրաստանի հիմնական գործընկերը ոչ միայն առևտրի, այլ նաև ռազմական ոլորտում: Թուրքիան արդեն ավելի քան 12 մլն. դոլար է տրամադրել Վրաստանի ռազմական ոլորտի զարգացման համար: «Ավնիայտ է, որ թուրքիան և Վրաստանը դարձել են լավ գործընկերներ, հատկապես ռազմական ոլորտում»<sup>300</sup>:

2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական իրադարձություններից հետո թուրքիան ավելի ակտիվացրեց իր համագործակցությունը Վրաստանի հետ հատկապես անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարում: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ստացավ 2001 թ. նոյեմբերի 7-8-ին թուրքիայի նախագահ Սինեդ Սեզերի այցը Վրաստան: Է. Շևարդնաձեի հետ հանդիպման ժամանակ կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին՝ ստորագրել համաձայնագիր ահաբեկչության դեմ պայքարում կամագործակցելու վերաբերյալ: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Սեզերը հայտարարեց, որ այդ հարցի քննարկման ժամանակ նա Վրաստանի նախագահին առաջարկել էր համաձայնագիրը դարձնել եռակողմ՝ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև<sup>301</sup>:

Ըստ թուրքական լրատվամիջոցների, Շևարդնաձեի հետ հանդիպումից հետո թուրքիայի նախագահը հեռախոսազրույց էր ունեցել Ադրբեջանի նախագահ Ալիևի հետ՝ նրան նույնպես առաջարկելով թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքել անվտանգության հարցերին վերաբերող պայմանագիր<sup>302</sup>:

Յավելենք, որ 2002 թ. ապրիլի 29-30-ը թուրքիայի Տրապիզոն քաղաքում տեղի ունեցավ թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպում: Երեք երկրների նախագահների հանդիպումից հետո տեղի ունեցան այդ երկրների բարձրաստիճան պատվիրակությունների բանակցությունները, որոնց շրջանակներում թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ԵԳ նախարարների կողմից ստորագրվեց համապարփակ պայմանագիրը՝ թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև «Սիտեկության, կազմակերպված հանցավորության, թմրանյութերի ապօրինի վաճառքի, արժույթի լվացման, մարդկանց առևանգման, զենքի մաքսանենգության և այլ հանցագործությունների դեմ համատեղ պայքարի վերաբերյալ», որը իրավական հիմք է տեղծում այս բնագավառում եռակողմ համագործակցություն ծավալելու համար<sup>303</sup>:

<sup>298</sup> Milliyet, 30.01.2001.

<sup>299</sup> Radikal, 30.01.2001.

<sup>300</sup> Коммерсант, 04.07.2001.

<sup>301</sup> Caspian news agency, 09.11.2001.

<sup>302</sup> Turkish Daily News, 17.11.2001.

<sup>303</sup> Star, 01.05.2002, 525ci gazetesi, 02.05.2002.

### ԳԼՈՒԽ 3

#### ԹՈՒՐԲ-ՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԱԸ 1991-2001 ԹԹ.

#### 3.1 ԹՈՒՐԲ-ՈՒՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 1991-2001 ԹԹ.

Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության ակտիվացման պատճառներն էին խՍՀՄ փլուզումը և նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների անկախացումը, ինչը Թուրքիայի դեկավարությանը հիմք էր տալիս կարծելու, թե Ռուսաստանի հարավային սահմաններում գոյացել է քաղաքական վակուում: Մինչդեռ իրականում Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը նոր դուրսի մուտք առանձնահատուկ կերպով ընդգծվում էր Կովկասի և Կենտրոնական Ասիայի նշանակությունը Ռուսաստանի համար, և վերջինը պետք է ավելի ակտիվ դեր խաղար վերոհիշյալ տարածաշրջանների անվտանգության և տնտեսական հարաբերություններում<sup>304</sup>: Այսպիսով, ակնհայտ դարձավ, որ Հարավային Կովկասը դառնալու էր թուրք-ռուսական աշխարհաքաղաքական մրցակցության թատերաբեմ:

ԽՍՀՄ փլուզմամբ խախտվեց գոյություն ունեցող հաշվեկշիռը ռուս-թուրքական հարաբերություններում, որի հետևանքով այդ հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ և անիրաժեշտություն առաջացավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև նոր իրավա-պայմանագրային հարաբերություններ հիմնել: Այդ ուղղությամբ երկու երկրներն էլ սկսեցին քայլեր ձեռնարկել: 1992 թ. հունվարի 20-22-ին տեղի ունեցավ Թուրքիայի ԱԳ նախարար Չիքմեթ Չեթինի այցը Մոսկվա, որին հաջորդեց փետրվար ամսին Ռուսաստանի ԱԳ նախարար Անդրեյ Կոզիրևի այցը Անկարա: Այս հանդիպումների արդյունքում հող պատրաստվեց վերջնական ռուս-թուրքական հիմնարար պայմանագրի ստորագրման համար, որը տեղի ունեցավ 1992 թ.

մայիսի 25-26-ին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի Մոսկվա պաշտոնական այցի ժամանակ: Այս այցի շրջանակներում ստորագրվեց «Թուրքիայի Հանրապետության և ՌԴ միջև Հարաբերությունների Սկզբունքներին առնչվող պայմանագիրը»<sup>305</sup>: Այս պայմանագիրը երկու երկրների միջև հարաբերությունների իրավական հիմքը հանդիսացավ, որտեղ նաև պատրաստակամություն էր ցուցաբերվում բարելավել այդ հարաբերությունները:

1993 թ. փետրվարի 28-ին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը հայտարարեց, թե ելել է ժամանակը, երբ միջազգային կազմակերպությունները, ներառյալ ՄԱԿ-ը, պետք է Ռուսաստանին տրամադրեն նախկին խՍՀՄ տարածքում խաղաղության և կայունության երաշխավորողի արտակարգ լիազորություններ<sup>306</sup>: Իր հերթին 1993 թ. Ռուսաստանի ԱԳ նախարար Անդրեյ Կոզիրևը հայտարարեց, որ Հարավային Կովկասը Ռուսաստանի համար հատուկ հետաքրքրությունների, հատուկ պատասխանատվության տարածաշրջան է<sup>307</sup>: Թուրք-ռուսական հարաբերությունների բարելավմանն էր ուղղված 1993 թ. մարտի 1-ին Չիքմեթ Չեթինի պաշտոնական այցը Մոսկվա և հատկապես 1993 թ. սեպտեմբերի 8-9-ին Թուրքիայի վարչապետ Ամենսու Չիլլերի պաշտոնական այցը Մոսկվա, որի ժամանակ ստեղծվեցին համատեղ կոմիտեներ և աշխատանքային խմբեր հեռահաղորդակցության, արդյունաբերության և բարձր տեխնոլոգիաների փոխանակման բնագավառներում<sup>308</sup>:

Հարկ է նշել, որ 90-ական թվականների երկրորդ կեսից երկու երկրների միջև հարաբերություններում գերակայող էին կայունացման միտումները: Նրանց սկիզբը կարելի է համարել 1995 թ. ստորագրված անվտանգության մասին համաձայնագիրը, որը նախատեսում էր կազմակերպված հանցագործությունների և ահաբեկչության դեմ պայքարում երկու երկրների միջև համագործակցության

<sup>304</sup> Singh Gajendra, Russian bear calls on gray wolf, Asia Times Online, 31.08.2004, [http://www.atimes.com/atimes/Central\\_Asia/FH28Ag01.html](http://www.atimes.com/atimes/Central_Asia/FH28Ag01.html).

<sup>305</sup> Թոմաս ղե վաալ, նշվ. աշխ., էջ 326; Zbigniew Brzezinski and Paige Sullivan, նշվ. աշխ., էջ 145; Idil Tuncer, The Security Policies of the Russian Federation: The "Near Abroad" and Turkey - Turkish Studies, vol. 1, № 2, Autumn 2000, p. 104.

<sup>306</sup> Carolyn McGiffert Ekedahl and Melvin A. Goodman, նշվ. աշխ., էջ 258:

<sup>307</sup> Singh Gajendra, Russian bear calls on gray wolf, Asia Times Online, 31.08.2004, [http://www.atimes.com/atimes/Central\\_Asia/FH28Ag01.html](http://www.atimes.com/atimes/Central_Asia/FH28Ag01.html).

<sup>304</sup> Roy Allison, Military Forces in the Soviet Successor States, Adelphi Paper, Volume 33, Issue 280, London, The International Institute for Strategic Studies, 1993, p. 40.

հաստատում<sup>309</sup>; Նշենք, որ թուրքական տարածաշրջանային քաղաքականության ռազմավարությունը, պահպանելով հանդերձ իր հակառուսական ուղվածությունը, կորցրեց նախորդ տարիների ազդեցիկությունը: Թուրքիայի ղեկավարության համար ակնհայտ դարձավ պանթյուրքիստական գաղափարների վրա հիմնված քաղաքականության անարդյունավետությունը: Բացի այդ չունենալով անհրաժեշտ տնտեսական ներուժ և չհիմնադրել այլ արտաքին ուժերի հետ մրցակցության՝ Թուրքիան ստիպված էր հրաժարվել իր հավակնոտ ծրագրերից Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Ինչ խոսք դա հանգեցրեց Ռուսաստանի հետ մրցակցության մեղմացմանը և Նախադրյալներ ստեղծեց թուրք-ռուսական հարաբերությունների հետագա զարգացման համար: Թուրք-ռուսական հարաբերությունների առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ այդ հարաբերությունները ընդհանուր էին մի կողմից աշխարհաքաղաքական մրցակցության, մյուս կողմից անմխաղեպ տնտեսական համագործակցության պայմաններում:

Այնուամենայնիվ 90-ական թվականներին թուրք-ռուսական հարաբերություններում առկա էին մի շարք հիմնահարցեր, որոնք լարվածության մեջ էին պահում երկկողմ հարաբերությունները: Կովկասյան տարածաշրջանում թուրք-ռուսական մրցակցության քստերաբեմունտ հիմնականում չէջնական և քրդական գործոններն էին, հայ-ադրբեջանական և վրաց-աբխազական հակամարտություններն էին, 90-ականներին ռուսական ռազմակայանների հիմնումը Վրաստանում և ԴՀ-ում, որը Թուրքիայի կողմից դիտվում էր, իբրև էվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի խախտում, ինչպես նաև կասպիական նավթի արտահանման ուղիների շուրջ թուրք-ռուսական մրցապայքարը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան ակտիվորեն քննքեր էր գործադրում թուլացնելու Ռուսաստանի ռազմական և քաղաքական ազդեցությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում: 1991 թ. աշնանը Չեչնիայի անկախության հռչակումը հիանալի հնարավորություն ընձեռեց Թուրքիային նվազեցնելու Ռուսաստանի ներկայությունը և ազդեցությունը Կովկասում: Սակայն Թուրքիան ի վիճակի չէրավ լիարժեքորեն օգտվելու ընձեռնված հնարավորությունից,

քանզի նա հարկադրված էր զինված պայքարի մեջ մտնել քրդական ազգայնական շարժման հետ:

Քրդական հարցը և չէջնական հիմնախնդիրը կարևոր դեր են խաղացել 1990-ական թվականներին ռուս-թուրքական հարաբերություններում: Չեչնիայում աշխարհաքաղաքական գերակշռության պահպանումը կենսական նշանակություն ուներ Ռուսաստանի համար, քանզի այն հնարավորություն էր ընձեռնում ամրապնդել իր դիրքերը Կովկասում և Կենտրոնական Ասիայում:

Թուրք-ռուսական հարաբերություններում անշուշտ բացասական ազդեցություն է ունեցել Չեչենական հարցը: Ռազմական հակամարտությունը Չեչնիայում սկսվեց 1994 թ., այն բանից հետո, երբ ՌԿ կառավարության որոշմամբ ռազմական գործողություններ սկսվեցին գեներալ Ջոհար Դուդաևի ղեմ: Նշենք, որ Չեչնիայում ռազմական գործողությունների կապակցությամբ Թուրքիայի արտգործնախարարությունը նախ հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ «Գոզգնիի ռմբակոծումը լուրջ անհավատությունների տեղի է տալիս»: Սակայն 1994 թ. դեկտեմբերին Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը փոխվեց և Թուրքիայի արտգործնախարարությունը հանդես եկավ նոր հայտարարությամբ, որտեղ նշվում էր, որ Չեչնիան հանդիսանում է Ռուսաստանի բաղկացուցիչ մասը և, որ պաշտոնական ԱՆկարան աջակցում է Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը: Բացի այդ հայտարարության մեջ հատուկ ընդգծվում էր, որ ԱՆկարան շատ լավ գիտակցում է Ռուսաստանի հիմնախնդիրները Չեչնիայում, քանզի Թուրքիան ունի մանաստիպ խնդիրներ կապված Թուրքիայում թուրք անջատողականների հետ<sup>310</sup>:

Չեչենական հակամարտությունը լուրջ բանավեճերի հանգեցրեց Թուրքիայում՝ կապված այն հարցի շուրջ, թե ինչպիսի քաղաքականություն պետք է որդեգրի Թուրքիան Ռուսաստանի նկատմամբ: Բանն այն է, որ Թուրքիայում բնակվում էին մեծ թվով քնիվ չեչեններ, չերքեզներ և դաղստանցիներ, որոնք անտարբեր չէին Չեչնիայում տիրող զարգացումների հանդեպ: Հատկանշական է, որ թուրքական հասարակությունը, մեծ մասամբ, նույնպես համակրանքով էր վերաբերվում չեչեններին: Ոստի պատահական չէ, որ չեչ-

<sup>309</sup> Ռուբեն Սաֆրասյան, Ռուսաստանը և Թուրքիան Գարալային Կովկասում..., էջ 38:

<sup>310</sup> Vladimir I. Danilov, Some Features of Russian-Turkish Relations in the 1990s, Perceptions: Journal of International Affairs, December 2001- February 2002, p. 2:

նական պատերազմի սկսելուն պես թուրք հասարակական տարբեր շերտերի կողմից ոչ միայն խոշոր ցույցեր կազմակերպվեցին ի պաշտպանություն Չեչնիայի, այլ նաև ֆինանսական խոշոր աջակցություն ցուցաբերվեց Չեչնիային: Թեև չկա որևէ պաշտոնական աղբյուր, որը ցույց կտար, թե թուրքական հասարակությունը որքան ֆինանսական միջոցներ է հատկացրել չեչենական կազմակերպություններին, այնուամենայնիվ տարբեր աղբյուրներ, այդ թվում և «Չյուրիլեթ» թերթը նշում է, որ այդ գումարը կազմել է մոտ 20 միլիոն դոլար<sup>311</sup>: Նշենք, որ 1990-ականների սկզբներին, ըստ թուրքական աղբյուրների, Թուրքիայում բնակվում էին ավելի քան 5 միլիոն հյուսիսկովկասյան եթնիկ ծագմամբ Թուրքիայի քաղաքացիներ, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել ինչպես արխազական, այնպես էլ չեչենական հակամարտություններում<sup>312</sup>:

Ի տարբերություն թուրքական հասարակության լոնդոնյա արծազանքերին, Թուրքիայի կառավարությունը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, ըստ որի այս հակամարտությունը հանդիսանում էր Ռուսաստանի ներքին գործը: Թուրքիան չէր ցանկանում բացահայտորեն աջակցել չեչեններին, քանզի նա ուներ իր սեփական խնդիրները կապված քրդական հիմնահարցի հետ: Միևնույն ժամանակ թուրք պաշտոնյաները վախենում էին, որ Ռուսաստանի ջանքերը ճնշելու ապստամբությունը Չեչնիայում կարող էր սկիզբ դնել նրան, որ Ռուսաստանը կփորձեր ներառել որջ Կովկասը՝ Եւրոպայի Արդրեջանն ու Վրաստանը իր ազդեցության ոլորտում, որը ոչ միայն հնարավորություն կտար Ռուսաստանին ավելի մոտիկացնել իր ռազմական ներկայությունը Թուրքիայի սահմաններին, այլև խոչընդոտել Թուրքիայի փորձերը՝ ընդլայնել իր ազդեցությունը Կովկասում: Գաղթականների արտագաղթը Չեչնիայից Ռուսաստան լուրջ խնդիրներ ստեղծեցին Թուրքիայի համար, քանզի Թուրքիան հարկադրված էր ապաստան տրամադրելու հազարավոր գաղթականների Չեչնիայից:

Տարածայնությունները այս հիմնահարցերի շուրջ ստիպեցին Թուրքիային ավելի զգույշ քաղաքականություն վարել Ռուսաստանի հանդեպ՝ նրան պրովոկացիայի ենթարկելուց խուսափելու համար:

Բանն այն է, որ Թուրքիան չէր ցանկանում տեսնել ռուսական ազդեցության ամրապնդումը Կովկասում, որը Թուրքիայի համար դարձել էր ռազմավարական կարևոր տարածաշրջան: Հատկանշական է, որ NLSO-ի ընդլայնման հարցում Թուրքիայի նախնական անհանգստության հիմնական պատճառներից մեկն էլ հանդիսանում էր այն, որ Թուրքիան վախենում էր, որ դա կստիպի Մոսկվային փորձելու ընդլայնել իր ռազմական ներկայությունը Կովկասում:

Հատկանշական է, որ թեև հակամարտության սկզբում Թուրքիան հայտարարել էր, որ նախընտրում է հակամարտությունը լուծվի մարդու իրավունքների հարցման և ՌԴ տարածքային անբողջականության հիմքի վրա, այնուամենայնիվ 1995 թ. երբ հակամարտությունը լայն թափ ստացավ, Ռուսաստանը մեղադրեց Թուրքիային՝ Չեչնիա գնեց և անգամ կամավորներ ուղարկելու համար<sup>313</sup>: Ռուսաստանը նաև իր խիստ դժգոհությունը հայտնեց այն բանի կապակցությամբ, որ Թուրքիան սերտ կապեր էր հաստատել Չեչնիայի նախահան Տոհար Դուդակի հետ՝ ընդգծելով Դուդակի այցը Թուրքիա և նրա հանդիպումները թուրքական ռազմական պաշտոնյաների հետ<sup>314</sup>: Թուրքիան չեչենական սերտ կապերին էր անդրադարձել նաև Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան Վալտեր Շոնյան: Նա մասնավորապես նշել էր. «Եթե թուրքերը ցանկանում են օգնել չեչեններին, երբ նրանք ամեն օր հեռախոսով խոսում են Դուդակի հետ, թող մի օր նրան ասեն անձնատուր լինի, որը կփրկի չեչեններին պատերազմից»<sup>315</sup>:

Այս կոնտեքստում ուշագրավ է 1995 թ. հուլիսի 20-ին Ռուսաստանի փոխվարչապետ և ռուս ամենաազդեցիկ դիվանագետներից մեկի, 80-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբներին Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալբերտ Չերնիշևի այցը Թուրքիա: Չերնիշևի առաքելության հիմնական նպատակն էր համաձայնության գալ Թուրքիայի ղեկավարության հետ՝ կանխելու թուրքական և հյուսիսկովկասյան կազմակերպությունների կողմից չեչեններին ուղարկվող սննդամթերքի, զենքի և կամավորների հուսքը: Ժամանակվա Թուրքիա՝ նա հայտարարեց, որ «Ռուսաստանի և

<sup>311</sup> Milliyet, 18.10.1995.

<sup>312</sup> Cumhuriyet, 14.03.1994.

<sup>313</sup> Robert Olson, Turkish and Russian Foreign Policies, 1991-1997: The Kurdish and Chechnya Questions, Journal Of Muslim Minority Affairs, Vol. 18, Issue 2, October 1998, p. 214.

<sup>311</sup> Milliyet, 28.11.1995.

<sup>312</sup> Mustafa Aydin, Turkey and Central Asia, Central Asian Survey, Vol. 15, № 2, June 1996, p. 169.

Թուրքիայի միջև գոյություն չունի չեչենական հարց»։ Միևնույն ժամանակ նա, ակնհայտորեն նկատի ունենալով քրդական հարցը և Թուրքիայի պատերազմը ընդդեմ քրդերի, նշել էր. «Մենք պետք է միմյանց հասկանանք։ Մարդիկ, ովքեր ապրում են ապակե տներում չպետք է քարեր չպրտեն»<sup>316</sup>։

Թուրքիայի նախագահ Մուլեյման Դեմիրելի հետ հանդիպումից հետո Չերնիշևը հայտարարեց, որ Թուրքիայի կառավարությունը իրեն հավաստիացրել էր, որ Թուրքիայի տարածքում գործող թուրքական և չեչենական կազմակերպությունները չեն կարող վնասել Թուրքիայի և Ռուսաստանի միջև հարաբերություններին։ Չերնիշևը, ընդգծելով, որ Ռուսաստանը և Թուրքիան փոխհամաձայնության են եկել չեչենական և քրդական հարցերի շուրջ, հայտարարեց. «Թուրքիան և Ռուսաստանը միևնույն նախի մեջ են գտնվում։ Եթե նաև սուզվի, մենք երկուսս էլ կտուգվենք։ Ռուսիի մեզ անհրաժեշտ է գտնել միջոցներ մնալու մակերեսի վրա»<sup>317</sup>։

Ծնայած Թուրքիայի տված երաշխիքներին, այնուամենայնիվ Թուրքիան շարունակում էր աջակցություն ցուցաբերել չեչեններին։ Այսպես, 1996 թ. հուլիսին Թուրքիայի ծախակողմյան Աշխատավորների կուսակցության գլխավոր քարտուղար Դոզու Փերինջեկը մեղադրանքով հանդես եկավ Թուրքիայի վարչապետ Թանուշ Գիլերի դեմ՝ նրան մեղադրելով այն բանի համար, որ նա օգտագործել էր գաղտնի ֆոնդի գումարների մի մասը՝ չեչենների և «մյուս» գաղտնի խմբավորումների համար զենք գեներ և մատակարարելու համար<sup>318</sup>։

Ինչ խոսք Թուրքիայի կառավարությունը իբրևում էր բոլոր այս մեղադրանքները։ Թուրքիայի կառավարությունը փորձում էր վարել նրբանկատ և հավասարակշռված քաղաքականություն Ռուսաստանի և չեչեն խմբավորումների և Թուրքիայում նրանց աջակիցների հետ իր հարաբերություններում։ Այս քաղաքականությունը թույլ տվեց չեչեն խմբավորումներին Աստանոլում հիմնել «Իչկերիայի Չեչենական Հանրապետության գլխավոր ներկայացուցչությունը»՝ Չեչնիայի փոխվարչապետ Սինդե Լուխայալի գլխավորությամբ<sup>319</sup>։

Սա լուրջ դժգոհություններ առաջացրեց Ռուսաստանում։ Այս կապակցությամբ 1996 թ. դեկտեմբերին Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Վադիմ Կուզնեցովը թուրքական լրատվամիջոցներից տված հարցազրույցում լրջորեն նախազուշացրեց, որ եթե «որև երկիր քայլեր իրականացնի ճանաչելու Իչկերիայի Հանրապետությունը, ապա դա կունենա չափազանց լուրջ հետևանքներ»՝ ներառյալ Ռուսաստանի կողմից դիվանագիտական հարաբերությունների խզումը<sup>320</sup>։ Այս պարագայում հիշատակվում է արժանի թուրք հայտնի քաղաքագետ Իսհան Մաբրի Չաղլայանգիլի խոսքերը։ Նա մասնավորապես նշել էր. «Նրանք ովքեր պատմավորում են կիսել դեռևս չապակեմած ռուսական արջի մորթին, պետք է զգույշ լինեն»<sup>321</sup>։

Առաջին չեչենական պատերազմը ավարտվեց 1997 թ. Չեչնիայում ստորագրված զինադադարի համաձայնագրով, որի արդյունքում չեչեն ամբատողականները գրեթե ստացան անկախություն։ Եթե առաջին չեչենական պատերազմը փորձում էր ժամանակ Թուրքիան ինչ որ կերպ աջակցում էր Չեչնիային, ապա զինադադարից հետո թուրքական կառավարությունը քայլեր ձեռնարկեց՝ հեռու մնալու այս հավանարտությունից։ Դրա վառ օրինակն էր այն, որ Թուրքիան չուղարկեց անգամ որևէ պաշտոնյայի՝ մասնակցելու Չեչնիայի նորընտիր նախագահ Ալվան Մապխարովի ինագուրացիայի կապակցությամբ կազմակերպված արարողությանը։ Ակնհայտ է, որ Թուրքիան չէր ցանկանում փչացնել Ռուսաստանի հետ հարաբերությունները։ Թուրքիան իր այս քաղաքականությանը հետևեց երկրորդ չեչենական հակամարտության ժամանակ, որը սկսվեց 1999 թ. հոկտեմբերին։ Հատկանշական է, որ Չեչնիայում ռազմական գործողությունների վերսկսելուց քիչ անց՝ 1999 թ. Նոյեմբերին, Թուրքիայի վարչապետ Էջլիթը այցելեց Ռուսաստան։ Ռուսաստանի ղեկավարության հետ հանդիպման ժամանակ էլեկթր վերահաստատեց Թուրքիայի դիրքորոշումը չեչենական հիմնահարցի կապակցությամբ՝ նշելով, որ չեչենական հակամարտությունը Ռուսաստանի ներքին գործն է<sup>322</sup>։

Էջլիթի այս հայտարարությունը լուրջ քննադատության արժանացավ իր կողակիցին գործընկեր ԱՀԿ ղեկավար և փոխվարչապետ Դևլեթ Բաիշելիի կողմից, որի արդյունքում կապակցություն կառավարու-

<sup>316</sup> Hüriyet, 21. 07.1995.

<sup>317</sup> Ibid.

<sup>318</sup> Hüriyet, 10.06.1996.

<sup>319</sup> Lowell Bezanis, Open Media Research Institute (OMRI), p.1. № 176, September 11, 1996, p. 11, Barry Rubin, Kemal Kirazci, Turkey in World Politics: An Emerging Multiregional Power, Boulder, CO, Lynne Rienner, 2001, p. 66.

<sup>320</sup> Turkish Daily News, 13.12.1996.

<sup>321</sup> Vladimir I. Danilov, Ելվ աշխ., էջ 2-3:

<sup>322</sup> Avrasya İşbirliği, Perspektif, № 24, İstanbul, January 2000, p. 12.

բյուռնու ճգնաժամ ստեղծվեց<sup>323</sup>։ Փաստենք, որ ռուսական զորքերի հարձակումը Չեչնիայի վրա և ընդհանրապես Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը հովվատուս լուրջ անհանգստություն առաջացրեց Թուրքիայի ղեկավար շրջանակներում։

Այս կապակցությանը իր դիրքորոշումն հայտնեց Թուրքիայի նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելը, որը ԵԱԴԿ գազաթափուղվից հետո հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ «ԵԱԴԿ մասնակից երկրները չեն կարող տարածաշրջանային հիմնահարցը համարել որպես իրենց ներքին գործը։ Այլապես նրանք կարող են մեկուսացվել։ Ռուսաստանի քաղաքականությունը չեչենական հակամարտության առնչությանը կարող է մեկուսացնել Ռուսաստանին»<sup>324</sup>։

Այսպիսով կարող ենք նշել, որ թեև Թուրքիան չեչենական հակամարտության սկզբնական շրջանում ուղղակի կամ անուղղակի կերպով ակտիվորեն աջակցում էր Չեչնիային, ապա հետագա իրադարձությունները հանգեցրեցին նրան, որ Ռուսաստանին հաջողվեց հասնել նրան, որ Թուրքիան մեծապես բուլացրեց իր միջամտող քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ և հատկապես Չեչնիայի դեմ պատերազմի ժամանակ։ Այս համատեքստում հատկապես կարևոր նշանակություն է ունեցել Բրդական Բանվորական Կուսակցության գործողությունները Թուրքիայում։

Ռուսաստանը իր հերթին արդյունավետորեն օգտագործեց «Բրդական գործունը»՝ նվազեցնելով Թուրքիայի քաղաքականության ակտիվությունը Չեչնիայի հարցում։ Սա հատկապես նկատելի էր 1994-1996 թթ.։ Ռուսաստանը, չեչենական հակամարտությունում տեսնելով Թուրքիայից չեչեն ապստամբներից ցուցաբերվող աջակցությունը, ձեռնարկեց լուրջ հակահարված, որի արդյունքում Թուրքիան սկսեց անհամեմատ ավելի զուսպ արտաքին քաղաքականություն իրականացնել ոչ միայն չեչենական հիմնահարցի առնչությամբ, այլ նաև կովկասյան և կենտրոնական ասիական տարածաշրջաններում Ռուսաստանի հետ հարաբերություններում։ Ռուսական այդ հակահարվածը «Բրդական գործուն էր»։

Բրդական հարցը 1994-1996 թթ. կարևոր դերակատարություն ունեցավ ռուս-թուրքական հարաբերություններում։ Թուրքական կա-

ռավարության ջանքերը՝ ջախջախելու քրդական ազգայնական շարժումը, Թուրքիայի քաղաքականությունում սկսեց գերակայել 1991 թ.-ից հետո։ 1994 թ. քրդական հարցը սկսեց նշանակալի դեր խաղալ թուրք-ռուսական հարաբերություններում, քանզի հենց այդ ժամանակ Ռուսաստանը պատերազմական գործողություններ սկսեց Չեչնիայի դեմ։ 1994 թ.-ից Ռուսաստանը սկսեց հմտորեն օգտագործել Բրդական գործունը՝ կանխելու Թուրքիայից չեչեններին ցուցաբերվող աջակցությունը։

Նշենք, որ 1994 թ. փետրվարին Բուրդիստանի Միության և «Բուրդիստանի Ազատագրական ճակատի» նախաձեռնությամբ Մոսկվայում կազմակերպվեց «Բուրդիստանի պատմությունը» անվանված կոնֆերանս։ Երբ հայտնի դաժավ, որ Ռուսաստանի Ազգությունների և Ռեզիդուլ Բաղաքականության նախարարությունը հանդիսացել էր կոնֆերանսի կազմակերպիչներից մեկը, Թուրքիայի արտգործնախարարությունը իր բողոքը հայտնեց Ռուսաստանի դեսպանին, որը հերքեց բոլոր պնդումները՝ նշելով, որ նմանատիպ կոնֆերանսներ պապազայում չեն թույլատրվի։ Իր հերթին դեսպանը զգուշացրել էր, որ Թուրքիան պետք է ավելի զգույշ լինի Չեչնիայի հետ իր հարաբերություններում<sup>325</sup>։

Թուրք-ռուսական լարվածության պայմաններում, հատկապես ուշադրավ էր ԱՊԳ քրդական կազմակերպությունների խորհրդածուղովի անցկացման փաստը 1994 թ. հոկտեմբերին Մոսկվայում, որի արդյունքում Բրդական Բանվորական Կուսակցության (ԲԲԿ) գլխավորությամբ հիմնվում է «Բրդական Միությունը»։ Այս պարագայում հետաքրքիր էր պաշտոնական Մոսկվայի դիրքորոշումը, որը ձեռնպահ էր մնացել որևէ գործողություններից ընդդեմ խորհրդածուղովի, չնայած այն փաստին, որ կազմակերպիչներն իրենք ընդունեցին ԲԲԿ-ի հետ իրենց կապը<sup>326</sup>։

1994 թ. վերջերից, երբ ռուսական զինված ուժերը սկսեցին ինտենսիվորեն գրոհել Չեչնիայի վրա, Ռուսաստանի թույլությունները Մոսկվայում բացվեց ԲԲԿ-ի Մոսկվայում բյուրոն, որը առաջ բերեց պաշտոնական Թուրքիայի խիստ դժգոհությունը։ Ի պատասխան Ռուսաստանում Թուրքիայի դեսպանի բողոքներին, ռուս պաշտոնյա-

<sup>323</sup> Turkish Daily News, 17.03.1994.

<sup>326</sup> Erset Aydinli, Russia's Kurdish Card In Turkish-Russian Rivalry, Caspian Crossroads Magazine, Volume 2, Issue № 3, Winter 1997, p. 11.

<sup>323</sup> Star, 10.11.1999.

<sup>324</sup> Milliyet, 20.11.1999.

ները պատասխանեցին, որ Մոսկվայում ՔԲԿ-ի բյուրոն բացվել էր «միայն քրդական մշակութային գործունեության համար»<sup>327</sup>։

1994 թ. վերջերին թուրք-ռուսական հարաբերություններում լարվածությունը էլ ավելի սրվեց, երբ Թուրքիայում հայտնի դարձավ, որ Մոսկվայում անցկալվելու էր միջազգային կոնֆերանս, որտեղ քննարկվելու էր Ռուսաստանում և Թուրքիայում բնակվող քրդերի պրոբլեմները։ Իրադարձությունների զարգացումը հանգեցրեց նրան, որ 1995 թ. հունվարին Թուրքիայի և Ռուսաստանի միջև լարվածությունը մեծացավ, երբ Ալի Յիզիթը և Նեջդաթ Բուլդանը՝ Թուրքիայի խորհրդարանի երկու նախկին քուրդ պատգամավորները, որոնք բանտարկությունից խուսափելու համար փախել էին Նեյրոպա, այցելեցին Մոսկվա, որպեսզի պարզեն ռուսական իշխանությունների դիրքորոշումը՝ Մոսկվայում հիմնելու Քրդական խորհրդարան Արտերկրում (KPE)։ Թեև Ռուսաստանի արտգործնախարարությունը նորից հերքեց ՔԲԿ-ի հետ ռուս պաշտոնատար անձանց կապը, այնուամենայնիվ շուտով Մոսկվայում ՔԲԿ-ի ղեկավարությանը հիմնվեց «Քրդական Տունը»<sup>328</sup>։

Մի կողմից քրդական կազմակերպությունների ակտիվ գործունեությունը Ռուսաստանում, մյուս կողմից Ռուսաստանի աջակցությունը քրդական շարժմանը հարկադրեցին Թուրքիային հասկանալու իրավիճակի լրջությունը և քայլեր ձեռնարկելու ընդդեմ ՔԲԿ-ի և մյուս քրդական կազմակերպությունների։ Այդ կապակցությամբ 1995 թ. հունվարին Մոսկվա ժամանեցին Թուրքիայի ՆԳ նախարար Նաիթ Մեթթեեն և ազգային անվտանգության այլ բարձրաստիճան պաշտոնյաներ։ Երկօրյա բանակցությունների արդյունքում Թուրքիան և Ռուսաստանը ստորագրեցին «Համաձայնագիր ընդդեմ ահաբեկչության», ըստ որի երկու երկրները պատրաստակամություն հայտնեցին փոխանակել հետախուզական տվյալներ՝ ահաբեկչությունը կանխարգելու համար։ Բանակցություններից հետո Ռուսաստանի ՆԳ նախարարը հայտարարել էր, որ «ՔԲԿ-ն Ռուսաստանում չի լինելու օրինական կազմակերպություն»<sup>329</sup>։

Թուրք-ռուսական կարծես թե հավասարակշռված և փոխըմբռնված հարաբերությունները 1995 թ. ապրիլից նորից սկսեցին լարված բնույթ կրել։ 1995 թ. ապրիլի 24-ին KPE-ի երկու անդամները՝

որ՝ Ռուստամ Բրոնը և Ասիրի Սերիֆը, պաշտոնական Մոսկվայից մեծիմաստանալով Մոսկվայում հիմնել քրդական գրասենյակ, աջակցություն ստացան Դումայի անդամների կողմից։ Ռուսաստանի խորհրդարանի անդամ Սիխալիլ Բուռլակովը հայտարարեց, որ անջակցում է քրդական հարցին։ Նա մասնավորապես նշել էր. «Մենք Թուրքիային չենք դիտում որպես անկախ երկիր, այլ միայն որպես ՆԱՏՕ-ի գործիք, և պահանջում ենք, որ Թուրքիան Հյուսիսային Իրաքում քրդերին ոչնչացնելու համար հեռացվի դաշինքից»<sup>330</sup>։

Թուրք-ռուսական հարաբերությունները էլ ավելի սրվեցին 1995 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, երբ Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավորները Դումայի Արտաքին հարաբերությունների համաձայնագրից հեռացան 4-ի կարգի Ռուսիոնովի գլխավորությամբ համաձայնագրից հեռացնելու 30-նոյեմբերի 1-ը ընդունել KPE-ի երրորդ միջազգային համաժողովը։ Համաժողովը պաշտոնապես չէր ճանաչվել պաշտոնական Մոսկվայի կողմից, սակայն թուրքերի համար ակնհայտ էր, որ համաժողովը չէր կարող տեղի ունենալ, եթե չլիներ Ռուսաստանի ՄԳ-ի լուռ համաձայնությունը։ Այս կապակցությամբ Թուրքիայի արտգործնախարարությունը երկկողմ հարաբերությունները որակեց որպես «խորը վերք, որը միայն Ռուսաստանը կարող է վիրակապել»<sup>331</sup>։

Իսկ թուրքական մամուլը այս համաժողովը որակեց որպես «ռուսական դավաճանություն»։ Սա այսպես անվորված էր այն հանգամանքով, որ համաժողովին մասնակցել էին Թուրքիայի խորհրդարանի նախկին չորս քուրդ պատգամավորներ Ալի Յիզիթը, Նիզամիթթեին Թոզուլը, Ռեմզի Քարթալը և Ասիմուր Քիլիջը, որոնք 1994 թ. փախել էին Թուրքիայից՝ բանտարկվելուց խուսափելու համար<sup>332</sup>։ Նշենք, որ համաժողովի ժամանակ Թուրքիայի կողմից չենցանձերին ցուցաբերվող օգնության առնչությամբ բավականին կոշտ էլույթ ունեցավ 4-ի կարգի Ռուսիոնովը՝ նշելով, որ «Եթե Թուրքիան հանուն ՉՉԵ-միայի միջամտում է Ռուսաստանի ներքին գործերին, ապա մենք դիտում ենք ինչպես կանխենք այդ»<sup>333</sup>։ Այսպիսով KPE-ի այս կիսապաշտոնական ճանաչումը խզեց փետրվարին և հուլիսին ձեռք բերված թուրք-ռուսական փոխհամաձայնությունները։

<sup>327</sup> Ersel Aydinli, նշվ. աշխ., էջ 11։

<sup>328</sup> Ibid: p. 13.

<sup>329</sup> Hurriyet, 25.01.1995.

<sup>330</sup> Hurriyet, 25.04.1995.

<sup>331</sup> Hurriyet, 02.11.1995.

<sup>332</sup> Hurriyet, 03.11.1995.

<sup>333</sup> Hurriyet, 01.11.1995.

Փաստենք, որ Թուրքիայի ԱԳև անմիջապես իր դժգոհությունները հայտնեց Ռուսաստանին: Պաշտոնական Անկարան հայտարարեց, որ Մոսկվայում անցկացված KPE-ի համաժողովի հետևանքով առաջացած «վերքի բուժումը» Մոսկվայի պատասխանատվություն է: Եթե Ռուսաստանը «չվիրակապի վերքը, Թուրքիան ստիպված կլինի համարժեք քայլեր ձեռնարկել»<sup>334</sup>:

Թուրք-ռուսական հարաբերությունները ավելի սրվեց, երբ ռուսական որոշ պաշտոնատար անծիթ սկսեցին բացահայտորեն իրենց համակրանքը հայտնել քրդերի և քրդական կազմակերպությունների նկատմամբ: Այսպես, 1996 թ. մայիսի 22-ին Ռուսաստանի Պետական Դումայի Արտաքին հարաբերությունների համեմատողովի անդամ Ալեքսանդր Նեվզորովը բացահայտորեն հայտարարեց, որ ԲԲԿ ահաբեկչական կազմակերպություն չէ՝ ընդգծելով. «Մենք ԲԲԿ-ն ահաբեկչական կազմակերպություն ենք համարում: Եթե անհրաժեշտություն լինի մենք ընդունակ ենք օգտագործել քրդական հարցը Թուրքիայի հետ մեր հարաբերություններում...»<sup>335</sup>:

Փաստենք, որ գեներալ Յուրի Եֆերեմովը, որն ավելի հեռու գնալով, մասնավորապես նշել էր. «...անկախ Քրդական պետություն պետք է ստեղծվի: Քրդերը չունեն արդյունավետ զենքեր, սակայն նրանք շատ մարդկային ուժ ունեն: Եթե մենք կարողանանք լուծելու Դ՜Դ-ի և Ադրբեջանի միջև առկա տարածայնությունները և նրանց գրավել մեր կողմը, ապա մենք ի վիճակի կլինենք գեներալատկարել քրդերին Դ՜Դ-ի վրայով: Օգնելով քրդերի մենք օգնում ենք մեզ»<sup>336</sup>:

Այս համատեքստում հիշատակման է արժանի ռուս հայտնի հետազոտող Ա. Օռլովի դիպուկ խոսքերը: Ըստ Օռլովի «Թուրքիայի երկպառակից և նրա ձգտումը միջամտել Ռուսաստանի շահերին կանխելու համար անհրաժեշտ է թուլացնել Թուրքիայի ներքին կայունությունը: Դրա համար առաջին բանը ինչ պետք է անի Ռուսաստանը, դա Դ՜Դ-ի և Իրանի հետ դաշինք կազմելն է: Ավելի ուշ այս դաշինքի մեջ կարող է ներառվել Իրաքն ու Վրաստանը, իսկ հետանկարում նաև անկախ Քրդական պետությունը»<sup>337</sup>:

Նշենք, որ վերոհիշյալ հայտարարությունները լուրջ դժգոհություններ առաջացրեցին Թուրքիայում: Թուրք-ռուսական հարաբե-

րությունները բարելավելու նպատակով 1996 թ. հուլիսի 18-ին Թուրքիայի խորհրդարանին նախագահ Մուսթաֆա Քալեմչին այցելեց Ռուսաստան: Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրոյին և Պետական Դումայի նախագահ Գենադի Սելեզնյովի հետ հանդիպման ժամանակ հիմնական թեմաներն էին եղել քրդական և չեչենական հիմնահարցերը<sup>338</sup>:

Գենադի Սելեզնյովի հետ հանդիպման ժամանակ Մուսթաֆա Քալեմչին մասնավորապես քննադատել է ռուս օրենսդիրներին՝ նշելով, որ «ԲԲԿ ահաբեկչական կազմակերպությանը աջակցություն է տալուում Ռուսաստանը: Խնդրում են թույլ տվ լուրք, որպեսզի Դուման և Ռուսաստանը օգտագործվեն ԲԲԿ ահաբեկչ մարդասպանների հետ կապված կազմակերպությունների կողմից: Որպես թուրքաշատ խորհրդարանի պատգամավորներ, մեզ այս հանգամանքները շատ են վշտացնում»: Անդրադառնալով Չեչնիայի հիմնախնդրին՝ Քալեմչին հայտարարել էր, որ Թուրքիան պաշտպանում է Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը և ինչպե՞ր հայտնել, որ չեչենական հիմնահարցը կլուծվի չեչենների իրավունքների պաշտպանության շրջանակներում»<sup>339</sup>:

1996 թ. օգոստոսի վերջին թուրք-ռուսական հարաբերությունները նորից սրվեցին: Դա պայմանավորված էր նրանով, որ թուրքական և ռուսական լրատվամիջոցներին հաջողվել էր Մոսկվայից 250 կմ. հեռավորության վրա գտնվող Յարուսլավ քաղաքի մոտակայքում հայտնաբերել քրդական ճամբար, որը ղեկավարվում և ֆինանսավորվում էր ԲԲԿ-ի կողմից: Ըստ թուրքական և ռուսական լրատվամիջոցների ճամբարը օգտագործվում էր ԲԲԿ վիրավոր անդամների բուժման համար որպես կլինիկա, որտեղ գտնվում էին Իրանից, Թուրքիայից և Իրաքից ժամանած քրդեր: Այդ կապակցությամբ Ռուսաստանում Թուրքիայի դեսպանատունը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ վերոհիշյալ ճամբարը չէր կարող ստեղծվել առանց ռուսական իշխանությունների թույլատվության: Հայտարարության մեջ նշվում էր, որ դեսպանատունը ջանքեր էր գործադրել ճամբարի փակման ուղղությամբ, սակայն որևէ եական արդյունքի չէր հասել<sup>340</sup>:

<sup>334</sup> Hüriyet, 02.11.1995.

<sup>335</sup> FBIS-SOV, 22.05.1996, Cumhurriyet, 21.05.1996, Hüriyet, 22.05.1996.

<sup>336</sup> Cumhurriyet, 21.05.1996.

<sup>337</sup> Hüriyet, 27.06.1997.

<sup>338</sup> FBIS-SOV, 18.07.1996.

<sup>339</sup> Robert Olson, նշվ. աշխ., էջ 223-224:

<sup>340</sup> Ersel Aydinli, նշվ. աշխ., էջ 15.

Սա հանգեցրեց նրան, որ սեպտեմբերի 7-ին Ռուսաստանի արտագործնախարարությունը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որտեղ նշվում էր, որ թուրքական լրատվամիջոցների հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը: Ըստ ԱԿ-ի, «վերոհիշյալ ճամբարը որևէ առնչություն չունի ՔԲԿ-ի հետ: Այն օգտագործվում է Ռուսաստանի և ՀՀ-ի բողոքի կողմից միայն մշակութային նպատակների համար: Ծանթարուն որևէ զենքի փորձարկումների հարմարանքներ չեն եղել»<sup>341</sup>:

Հավելենք, որ թուրք-ռուսական հարաբերություններում առկա լարվածությունը կարգավորելու նպատակով 1996 թ. դեկտեմբերին պաշտոնական այցով Ռուսաստան ժամանեց թուրքիայի ԱԳ նախարար Թանսու Չիլլերը: Այցի ընթացքում Մոսկվայում ստորագրվեց «Համագործակցության Համաձայնագիր ընդդեմ Ահաբեկչության»: Ըստ համաձայնագրի Ռուսաստանը չէր աջակցելու ՔԲԿ-ի և այլ քրդական ազգայնական կազմակերպություններին, իր հերթին թուրքիան չէր աջակցելու չեչեններին և կովկասյան մյուս խմբավորումներին, որոնք պայքարում էին Ռուսաստանի դեմ<sup>342</sup>: Ուշագրավ է, որ քրդական հիմնահարցի շուրջ թուրք-ռուսական հարաբերություններին թերևս ամենազխաժող փորձությունը կապված էր 1997 թ. ՔԲԿ առաջնորդ Աբդուլա Օջալանի Ռուսաստան կատարած այցի հետ, որի նպատակն էր խուսափել թուրքական իշխանությունների հետապնդումից: Սակայն Ռուսաստանի ղեկավարության ջանքերի շնորհիվ ամենակարճ ժամանակաշրջանում Օջալանին երկրի տարածքից հեռացնելը եպես նպաստեց թուրք-ռուսական հարաբերությունները գերծ պահել լարվածությունից:

Այսպիսով կարող ենք մշել, որ Ռուսաստանը կարողացավ ավելի արդյունավետ օգտագործել «Քրդական գործոնը» կանխելու համար թուրքական ներթափանցումը Չեչենական պատերազմ քան թուրքիան՝ օգտագործելով «Չեչենական գործոնը»: Անկախաձ 90-ական թվականներին քրդական ազգայնական շարժումը եսկանորեն նվազեցրեց թուրքիայի ձգտումները՝ ազդեցիկ դերակատարություն ունենալու ոչ միայն Կովկասում և Կենտրոնական Ասիայում, այլ նաև Եվրոպայում. հատկապես Կիպրոսում և Բալկաններում՝ Բոսնիական հակամարտության ժամանակ: 90-ականների երկրորդ

կեսին քրդական և չեչենական հարցերը կորցրեցին իրենց սրությունը թուրք-ռուսական հարաբերություններում, սակայն, երբեմն այդ հիմնահարցերը իրենց մասին հիշեցնել են տակալ:

Հարավային Կովկասի թուրք-ռուսական մրցակցության բառերաբեծում կարևոր տեղ էին զբաղեցնում Հարավային Կովկասում ազգամիջյան հակամարտությունները: Հարավկովկասյան հակամարտություններում իր միջնորդական նախաձեռնությունների միջոցով Ռուսաստանը փորձում էր ամրապնդել իր ազդեցությունը տարածաշրջանում և խափանել թուրքիայի ծրագրերի իրագործումը: Այդ տեսակետից իր ուրույն տեղը ունի ԼՂ հակամարտությունը, որը դարձավ Հարավային Կովկասում թուրք-ռուսական հակասությունների կիզակետը<sup>343</sup>: Ղարաբաղյան հակամարտության ընթացքում թուրքիան, որդեգրելով ակնհայտ աղբյուրանման կեցվածք, հսկայական ռազմաֆինանսական և դիվանագիտական աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին: Այս համատեղստում ՀՀ-ն, ելնելով իր ռազմավարական և անվտանգության շահերից, սկսեց մերժեցնել Ռուսաստանի հետ, որը մտահոգված էր Ադրբեջանում թուրքիայի դիրքերի ամրապնդմամբ: Հայ-ռուսական մերժեցումը հանդիսացավ ՀՀ-ի հանդեպ թուրքիայի դիրքորոշման կոշտացման պատճառներից մեկը:

1992 թ. մայիսին թուրքիայի և ՀՀ-ի հարաբերությունները ծայրաստիճան լարված մթնոլորտում էին գտնվում, ինչը կապված էր նրա հետ, որ 1992 թ. մայիսին լուրեր էին տարածվել, թե իբր բախումներ էին տեղի ունեցել ադրբեջանական անկլավ Նախիջևանի և ՀՀ-ի սահմանների մոտ: Լարվածությունը ուժեղացել էր նաև այն պատճառով, որ թուրքիան հայտարարել էր, որ Կարսի 1921 թ. պայմանագիրն իրեն իրավունք է տալիս միջամտել հակամարտությանը: Այդ կապակցությամբ թուրքիայի զինված ուժերի հրամանատարությունը հայտարարել էր, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ է ղարաբաղյան հակամարտության գոտի ուղարկել այնքան զինվոր, որքան կինդրի Ադրբեջանի կառավարությունը<sup>344</sup>:

Թուրքիայի այս ռազմատենչ հայտարարությունները լուրջ մտահոգություն առաջացրեցին Ռուսաստանի ղեկավար շրջանակներում: Ուստի Ռուսաստանի պատասխանն իրեն երկար պապսել

<sup>341</sup> Hürriyet, 7. 09.1996.

<sup>342</sup> Turkish Daily News, 18.12.1996.

<sup>343</sup> Ուրբեմ Սաֆրասայան, Ռուսաստան և թուրքիան Հարավային Կովկասում..., էջ 37:

<sup>344</sup> Turkish Daily News, 27.05.1992.

չտվեց: 1992 թ. մայիսին վերոհիշյալ միջադեպից մի քանի օր անց ԳՀ ժամանեց Ռուսաստանի նորանշանակ պաշտպանության նախարար Պավել Գրաշչովը և ՌԴ նախագահ Բորիս Ելցինին ներկայացուցին Գեմալի Բուրբուլիսը: Նրանք ժամանել էին երևան՝ վերահաստատելու Թուրքիայի հետ ԳՀ-ի սահմանը պաշտպանելու և «թուրքական սպառնալիքը» հետ մղելու Մոսկվայի հանձնառությունը<sup>345</sup>: Այս նախագուշացումը լուրջ արձագանք ստացավ Թուրքիայում, որը ստիպված էր որդեգրել ավելի զուսւս կեցվածք:

ԼՂ հակամարտությունում Թուրքիայի և Ռուսաստանի միջև մրցակցություն էր ընթանում նաև հակամարտությունում որպես միջնորդ հանդես գալու հարցի շուրջ: Թուրքիան ակտիվ ջանքեր էր գործադրում՝ ներգրավելու ԼՂ հակամարտության բանակցային գործընթացում: Ռուսաստանը Թուրքիային չէր ընդունում, որպես լուրջ միջնորդ կողմ ԼՂ հակամարտության բանակցային գործընթացում՝ իրավամբ գտնելով, որ այդ հարցում ԳՀ-ի և Ղարաբաղի բացասական դիրքորոշման պայմաններում Թուրքիան չի կարող ակտիվ դերակատարություն ունենալ հակամարտության կարգավորման գործում: Ուստի Մոսկվան Թուրքիային վերապահում էր միայն երկրորդական դեր, որը ոչ մի կերպ չէր կարող համեմատելի լինել իր դերակատարության հետ<sup>346</sup>: Ռուսաստանը մերժում էր նաև ողջ տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության ուժեղացման միտումները՝ Գարավային Կովկասը համարելով իր բացառիկ շահերի գոտի: Այսպես, 1993 թ. ապրիլին Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալբերտ Չեռնիշչևը թուրքական լրատվամիջոցներին տված հարցազրույցում նշել էր. «Ոմանք կարծում են, որ Թուրքիան պետք է լցնի վակուումը, սակայն վակուում գոյություն չունի: Ռուսաստանը խորը պատմական, տնտեսական և քաղաքական շահեր ունի տարածաշրջանում»<sup>347</sup>:

Չարավային Կովկասում և ԼՂ հակամարտության շուրջ Թուրքիայի և Ռուսաստանի միջև մրցակցությունը շարունակվեց նաև հակամարտությունում զինադադարի կնքումից հետո: 1994 թ. հունիսին ԼՂ հակամարտությունում թուրքական դիրքորոշումն ավելի կղշտացավ, երբ Թուրքիայի Վլխավոր Շտաբի պետ զեներալ Գյուրեշը հայտարարեց, որ ադրբեջանական բանակին աջակցելու համար պատ-

րաստ է թուրքական զորքեր ուղարկել: Այդ բոցաշունչ ելույթը որևէ շարունակություն չունեցավ, քանզի Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաշչովը անմիջապես համոզեց եկավ հակադարձ ելույթով՝ նշելով, որ Ռուսաստանը թույլ չի տա թուրքական բանակի միջամտությունը՝ հավելելով, որ «Ռուսաստանն իր սեփական շահերն ունի Ադրբեջանում»<sup>348</sup>:

Ռուսաստանի բացառիկ միջնորդության շնորհիվ 1994 թ. մայիսի 12-ին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները դադարեցվեցին և հաստատվեց զինադադար, ինչը մեծապես նպաստեց տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի ամրակայմանը և հեղինակության բարձրացմանը: Ռուսաստանի և ԳՀ-ի միջև հարաբերությունների սերտացումն, ինչպես նաև Ռուսաստանի դիրքերի ամրակայմանը հարավկովկասյան տարածաշրջանում լրջորեն մտահոգում էր թուրքական ռազմական շրջանակներին: 1994 թ. կեսերին Թուրքիայի զինված ուժերի Վլխավոր Շտաբի պետ Պոլան Գյուրեշը հայտարարեց, որ Կովկասում և Ղրիմում իր քաղաքականության հետևանքով Ռուսաստանն ավելի մեծ սպառնալիք էր Թուրքիայի համար, քան «սառը պատերազմի» ողջ ժամանակաշրջանում<sup>349</sup>:

Անդրադառնալով վրաց-աբխազական հակամարտությունում Թուրքիա-Ռուսաստան մրցակցությանը՝ նշեց, որ վրաց-աբխազական հակամարտությունն իր ուրույն տեղն է ունեցել 1990-ականների սկզբներին ընթացող ռուս-թուրքական մրցակցության համատեքստում, քանզի թե՛ Թուրքիան, և թե՛ Ռուսաստանն այս հակամարտությունում ունեին իրար հակասող սեփական շահեր, ուստի ռուս-թուրքական շահերի բախումն անխուսափելի էր:

Թե՛ սկզբնական շրջանում Թուրքիան արխազական հիմնահարցում իրեն բավականին զուսպ էր պահում, ինչը պայմանավորված էր մի կողմից՝ Վրաստանի հետ սերտ համագործակցությամբ, մյուս կողմից՝ Թուրքիայի հասարակական կարծիքի արխազամետ դիրքորոշմամբ և մեծ չերթեզական սփյուռքի առկայությամբ, ապա 1993 թ. վերջերին և 1994 թ. Թուրքիան սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել Վրաստանին: Դրա պատճառն այն էր, որ Թուրքիան մտահոգված էր Չարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի ու-

<sup>345</sup> Թոմաս դե Վասալ, նշվ. աշխ., էջ 287-288:

<sup>346</sup> Zbigniew Brzezinski and Paige Sullivan, նշվ. աշխ., էջ 153:

<sup>347</sup> Milliyet, 14.04.1993.

<sup>348</sup> Коджаман О., նշվ. աշխ., էջ 119-120:

<sup>349</sup> Svante E. Cornell, Turkey and the Conflict in Nagorno Karabakh..., p. 66; Turkish Daily News, 01.06.1994.

ծեղացմամբ: Մյուս կողմից, Վրաստանի նշանակության ուժեղացումը՝ որպես էներգակիրների փոխադրման տարանցիկ երկիր ստիպեց Թուրքիային հակվել Վրաստանի կողմը: Իր հերթին Վրաստանը, ձգտելով հնարավորինս չեզոքացնել Ռուսաստանի՝ իր համար բացասական դերակատարությունը, ցանկանում էր հակամարտության մեջ ներգրավել Արևմուտքը և հստակապես Թուրքիային:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա վրաց-արխազական հակամարտության կարգավորման գործընթացում նա առանձնահատուկ կարևոր դերակատարություն է ունեցել: Ռուսաստանի ներգրավվածությունը վրաց-արխազական հակամարտությունում պայմանավորված էր նախ և առաջ նրանով, որ Աբխազիան, գտնվելով Սևծովյան ավազանում և սահմանակից լինելով ՌԴ մաս կազմող Չյուսիսային Կովկասին, կարևոր ռազմավարական նշանակություն ուներ Ռուսաստանի համար: Բացի այդ, երկրամասում տեղակայված էին ռուսաստանյան զինվորական ստորաբաժանումները, ուստի Մոսկվան հայտարարեց, որ Աբխազիան առանձնակի կարևոր ռազմավարական նշանակություն ունի Ռուսաստանի անվտանգության շահերի տեսանկյունից:

Այդ մասին ավելի հստակորեն հայտարարեց ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովը: Նա մասնավորապես նշեց, որ այս երկրամասը ռազմավարական կարևորություն ունի Ռուսաստանի բանակի համար: Ռուսաստանն ունի որոշակի ռազմավարական շահեր և ձեռք կանցի բոլոր միջոցները՝ ապահովելու ռուսական զորքերի այստեղ գտնվելը: «Պակասակ դեպքում մենք կկորցնենք Սև ծովը»<sup>350</sup>:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վրաց-արխազական պատերազմի սկսվելուն պես սկսվել էր հզոր կամավորական շարժում Չյուսիսային Կովկասից դեպի Աբխազիա, որը տարածաշրջանի ապակայունացման լուրջ սպառնալիք էր: Այսպես, վրաց-արխազական պատերազմի սկզբնական շրջանում վրացական բանակը էական հաջողությունների էր հասել, ինչի կապակցությամբ Աբխազիայի նախագահ Վ. Արժիբրան դիմել էր ոչ միայն Ռուսաստանին, ՄԱԿ-ին և մի շարք այլ երկրներին, այլ նաև արտերկրում բնակվող բոլոր արխազներին և հյուսիսկովկասյան ժողովուրդներին: Արժիբրայի այս կոչն իրեն երկար սպասել չտվեց: Առաջին իրական օգնությունը Աբխազիային ցուցաբերվեց 1989 թ. օգոստոսի 26-ին

<sup>350</sup> Mark Smith, Pax Russica: Russia's Monroe Doctrine. - RUSI, Whitehall Paper Series 1993, p. 54.

հիմնադրված Կովկասի Լեռնական ժողովուրդների Համադաշնության (ԿԼԺՀ) կողմից<sup>351</sup>: Շուտով սկսվեց հյուսիսկովկասյան կամավորների և զինված ջոկատների տեղաշարժը դեպի Աբխազիա:

Իսկ 1992 թ. օգոստոսի 22-ին ԿԼԺՀ-ն, Յուրի Շանիրովի գլխավորությամբ, հրապարակեց իր որոշումը, որով Չյուսիսային Կովկասում ապրող վրացիները հայտարարվեցին պատանդներ, իսկ թիբլիսին՝ աղետի գոտի:<sup>352</sup> Իրադարձությունն ավելի սրվեց, երբ ԿԼԺՀ-ին իրենց աջակցության մասին սկսեցին հայտնել ՌԴ մաս կազմող հանրապետությունների պաշտոնական ղեկավարությունը: Մասնավորապես, Բաշկիրիայի իշխանությունները պաշտոնապես դիմեցին Վրաստանին՝ պահանջելով զորքերը դուրս բերել Աբխազիայից՝ հակառակ դեպքում սպառնալով դիմել Չյուսիսային Կովկասի հանրապետությունների ղեկավարներին համարժեք միջոցներ ձեռք առնելու համար:<sup>353</sup>

Անհայտապահ պայմաններում Ռուսաստանի համար հրատապ դարձավ համապատասխան քայլեր ձեռնարկելը՝ կանխելու տարածաշրջանին սպառնացող ապակայունացման վտանգը, որը լուրջ անհանգստություն էր պատճառում Ռուսաստանին: Այդ կապակցությամբ 1992 թ. օգոստոսի վերջին ՌԴ նախագահ Բորիս Ելցինը կոչով դիմեց Չյուսիսային Կովկասի ժողովուրդներին: ՌԴ նախագահը կոչ արեց չտրվել վտանգավոր սադրանքների՝ խոստանալով վճարված քայլեր ձեռնարկել այրուհիներին և զորքերին ուղղությամբ<sup>354</sup>:

Ռուսաստանի ամենագործուն միջնորդական գործունեության շնորհիվ հաջողվեց դադարեցնել վրաց-արխազական ռազմական դիմակայությունը, որը փաստորեն ավարտվել էր 1993 թ. սեպտեմբերի 30-ին արխազական կողմի հաղթանակով: 1994 թ. ապրիլի 4-ին Մոսկվայում վրացական և արխազական կողմերը ստորագրեցին քաղաքական միջոցներով վրաց-արխազական հակամարտության կարգավորման մասին փաստաթուղթը, որով վերջնականապես ավարտվեց վրաց-արխազական պատերազմը<sup>355</sup>:

<sup>351</sup> Oğuz Cem, The Case of the Confederation of the Peoples of the Caucasus-Perceptions: Journal of International Affairs, June-August 1999, p. 2.

<sup>352</sup> Независимое Газета, 25.08.1992.

<sup>353</sup> Российские вести, 25.08.1992.

<sup>354</sup> Обращение Президента России к народам Северного Кавказа и всему населению юга России. - Красная Звезда, 28.08.1992.

<sup>355</sup> Tom Cooper, Former USSR-Russia Database Georgia and Abkhazia, 1992-1993: The War of Datchas, [http://www.acig.org/artman/publish/article\\_282.shtml](http://www.acig.org/artman/publish/article_282.shtml).

Այսպիսով, Ռուսաստանի միանձնյա միջնորդության շնորհիվ հաջողվեց դադարեցնել վրաց-աբխազական պատերազմը և հրադադր հաստատել այնտեղ, ինչի շնորհիվ նա հնարավորություն ստացավ պահպանել իր ռազմական ներկայությունը Վրաստանում և ռուսական ուժերի ներկայությունը Աբխազիայում ԱՊԴ խաղաղապահ ուժերի շրջանակներում: Սրանով Ռուսաստանը կարողացավ ոչ միայն ամրապնդել իր ազդեցությունը Վրաստանում, այլ նաև, որը շատ կարևոր էր, կասեցնել Թուրքիայի ակտիվ քաղաքական և նաև ռազմական ներթափանցումը Վրաստան:

Թուրք-ռուսական հարաբերությունների լարվածության գլխավոր պատճառներից էր նաև Ռուսաստանի ռազմական ներկայությունը Գարավային Կովկասում և հատկապես 90-ականներին ռուսական ռազմական բազաների հիմնումը Վրաստանում և ԳԳ-ում:

Սառը պատերազմի ժամանակ ռուսական ռազմական ներկայությունը Կովկասում Թուրքիայի կողմից դիտվում էր որպես սպառնալիք: Այդ կապակցությամբ Թուրքիան մեծաթիվ բանակույթյամբ զորք էր տեղակայել իր երկրի արևելյան սահմաններում: Սառը պատերազմի ավարտով Թուրքիայի ղեկավարությունը կարծում էր, որ ռուսական ռազմական ներկայությունը թուրքական սահմանների մոտ և Կովկասում կնվազի, մինչդեռ Ռուսաստանը ջանքեր էր գործադրում մեծացնել իր ռազմական ուժի թվաքանակը Կովկասում: Մասնավորապես, Ռուսաստանը Վրաստանի և ԳԳ-ի հետ ստորագրեց այդ երկրներում իր ռազմակայանների տեղակայման վերաբերյալ պայմանագրեր, որոնց հիման վրա Վրաստանի տարածքում Վազիս-Գիում, Ախալքալաքում, Բաթումիում և Գուդաուտայում, ինչպես նաև ԳԳ-ում՝ Երևանում և Գյումրիում հիմնվեցին ռուսական ռազմակայաններ<sup>356</sup>: Այս ամենը Թուրքիայի կողմից դիտվում էր որպես լուրջ սպառնալիք երկրի անվտանգությանը, ինչը հանգեցրեց նրան, որ Թուրքիան սկսեց ակտիվորեն Ռուսաստանին մեղադրել 1990 թ. Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի դրույթների խախտման մեջ<sup>357</sup>: Բանն այն է, որ ԵԱԳԿ շրջանակներում 1990 թ. նոյեմբերի 19-ին Փարիզում ՆԱՏՕ-ի և ճախսկին Վարշավյան պակտի

22 երկրներ ստորագրել էին Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրը (ԵԱՅՈւ), որն ուժի մեջ էր մտել 1992 թ.: Պայմանագրի հիմնական նպատակն էր՝ նպաստել Եվրոպայի կայունությանը: Ըստ պայմանագրի, սահմանափակվում էին մի շարք ռազմական սարքավորումների և զինատեսակների թվաքանակները<sup>358</sup>, 1995 թ. ապրիլին Ռուսաստանը կասկածի տակ դրեց պայմանագրի դրույթները<sup>359</sup>: Ռուսաստանը դա հիմնավորում էր ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք ընդլայնվելու պլաններով և Չեչնիայում ընթացող ռազմական գործողություններով: ՈՂ այդ ժամանակվա պաշտպանության նախարար Պավել Գրաշովը նշել էր, որ եթե ՆԱՏՕ-ն սկսի արագ շարժվել դեպի Արևելք, ապա Ռուսաստանը չի ենթարկվի պայմանագրի պահանջներին<sup>360</sup>: Թուրքական իշխանությունները վստահ էին, որ ռուսական քաղաքականությունը Կովկասում նպատակ էր հետապնդում բոլոր հնարավոր միջոցներով տարածաշրջանից դուրս մղել Թուրքիան: Ռուսաստանի հրաժարվելը՝ հետևել Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի դրույթներին, ինչպես նաև Գյուլսիս-Կովկասյան ռազմական օկուպացի վերակազմավորումը, միայն հաստատում էին Թուրքիայի մտահոգությունները<sup>361</sup>:

Միս այս մթնոլորտում 1995 թ. աշնանը թուրք-ռուսական հարաբերությունները խիստ լարվեցին, երբ նոյեմբերի 4-ին պաշտոնական ԱՆկարան հայտարարեց, որ պատրաստվում է ԳԳ-ի և Վրաստանի հետ իր սահմանների երկայնքով զորքեր կենտրոնացնել, որպեսզի ստիպի Ռուսաստանին կատարել ԵՍՂՈ-ով ստանձնած իր պարտավորությունները՝ կրճատել իր ուժերի թվաքանակը ՆԱՏՕ-ի իյուսիսային և հարավային թևերում:<sup>362</sup> Բանն այն է, որ Ռուսաստանը, հայտարարելով, որ վերոհիշյալ պայմանագիրը սառը պատերազմի պայմանների արդյունք է, պահանջում էր վերանայել ԵՍՂՈ որոշ դրույթներ: Ռուսաստանը մասնավորապես անընդունելի էր համարում այն դրույթները, համաձայն որի սահմանափակ քանակությամբ զինվոր-

<sup>356</sup> **Idil Tuncer**, The Security Policies of the Russian Federation: The "Near Abroad" and Turkey.- Turkish Studies, vol. 1, № 2, Autumn 2000, p. 105; US Military History Companion: CFE Treaty, www.answers.com/topic/cfe-treaty.

<sup>357</sup> Turk-Rus askeri dengesi. - Turk Silahlı Kuvvetler Dergisi, Vol. 14, 1995, p. 18.

<sup>358</sup> Turkish Weekly, 13.10.2004.

<sup>359</sup> Ibid.:

<sup>360</sup> **Jack Mendelson**, Stiff-Arming Russia.-The Bulletin of the Atomic Scientists, vol. 51, July-August 1995, p. 4.

<sup>361</sup> **Idil Tuncer**, նշվ. աշխ., էջ 104-105:

<sup>362</sup> **Robert Olson**, Turkish and Russian Foreign Policies, 1991-1997: The Kurdish and Chechnya Questions.- Journal of Muslim Minority Affairs, Vol. 18, Issue 2, October 1998, p. 215.

ներ կարող էին տեղակայված լինել իր սահմաններում, ուստի ռուսական իշխանությունները հայտարարեցին, որ դա անընդունելի է և հասկառու է իրենց ազգային ինքնիշխանությանը՝ ընդգծելով Կովկասում անկայունության հետևանքով սպառնացող վտանգը և անհրաժեշտությունը՝ լրացուցիչ ուժեր տեղակայել այդ «թևային գոտում»:<sup>363</sup>

Սակայն թուրքիան հայտարարեց, որ Ռուսաստանի վերաբերմունքը պայմանագրի նկատմամբ պայմանավորված էր լոկ ռուսական կառավարության ցանկությանը՝ ընդլայնել իր ռազմական ներկայությունը Կովկասում: Խնդիրը կայանում է նրանում, որ ԵՍՁՈ-ն թուրքիայի կառավարության կողմից դիտվում էր որպես շատ կարևոր անվտանգության երաշխիք ՌԴ-ի հետ թուրքիայի անվտանգության համատեքստում, ուստի նրա որևէ դրույթի փոփոխություն թուրքիայի կողմից դիտվում էր որպես ռուսական վտանգի վերադարձ: Ուշագրավ է հատկապես թուրքիայի Գլխավոր Շտաբի նախկին պետ գեներալ Դոդան Գյուրեշի հայտարարությունը, ըստ որի, թուրքիան կլինի ՆԱՏՕ-ի այն երկիրը, որը ամենաշատը կազդվի պայմանագրի փոփոխություններին:<sup>364</sup>

Թուրքիան վճռականորեն մերժեց ԵՍՁՈ դրույթների վերանայման ՌԴ-ի փորձերը՝ հայտարարելով, որ եթե Ռուսաստանը մեծացնի իր ռազմական ներկայությունը Կովկասում, ապա թուրքիան ստիպված է լինի լրացուցիչ զորքեր տեղակայել իր հյուսիս-արևելյան սահմաններում, որպեսզի հավասարակշիռ ռուսական զորքերի քվադրանգը:<sup>365</sup> Բացի այդ, թուրքիայի կառավարությունը հայտարարեց, որ ԵՍՁՈ բոլոր մասնակից երկրների համաձայնության արդյունք էր, ուստի այն ինքնակամ և միակողմանի կերպով չէր կարող փոփոխության ենթարկվել:<sup>366</sup> Չնայած թուրքիայի նման արձագանքին, ակնհայտ էր, որ դա չէր ազդելու Ռուսաստանի դրոբորշման վրա: Այս հարցի շուրջ կոնսենսուս ձեռք բերվեց 1995 թ. նոյեմբերի 17-ին, երբ կազմավորվեց ԵՍՁՈ Դամաստեղ Խորհրդակցական Խումբը, որի շրջանակներում էլ քննարկվեցին դրվեցին առկա տարածայնությունները:

Վերջնական փոխզիջումը ձեռք բերվեց 1996 թ. մայիսին 15-31 փեննայում անցկացված ԵՍՁՈ-ի վերանայման կոնֆերանսում, որի

շրջանակներում էլ մայիսի 31-ին կոնֆերանսի մասնակիցների կողմից ստորագրվեց «Թևային Դամաստեղագիրը»: Դրա հիմնական էությունն այն է, որ Ռուսաստանը թուլացնում էր իր դիմադրությունը ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցում, որի դիմաց Ռուսաստանն իրավունք էր ստանում Կովկասյան երկրներում գերազանցել խարտիայով նախանշված սահմանափակումները և այնտեղ ժամանակավորապես տեղակայել խաղաղապահ ուժեր:<sup>367</sup> Բացի այդ, ԱՄՆ ճնշման ներքո թուրքիան հարկադրված էր համաձայնել նաև այն բանի հետ, որ Ռուսաստանին տրվում էր ևս երեք տարի ժամկետ՝ մինչև 1999 թ. մայիսի 31-ը, որպեսզի նա ենթարկվեր խարտիայով սահմանված սահմանափակումներին՝ մինչ այդ իրավունք ստանալով գերազանցել այն:<sup>368</sup>

Այսպիսով, ակնհայտ էր, որ թուրքիայի մտավախությունները ԵՍՁՈ-ի վերանայման հարցի շուրջ հաշվի չառնվեցին ՆԱՏՕ-ի և նրա մյուս դաշնակիցների կողմից, քանզի նրանք չէին ցանկանում ճնշում գործադրել Ռուսաստանի վրա, որպեսզի վտանգի տակ չընկնի ողջ պայմանագիրը: Բացի այդ, այս համաձայնագրով ակնհայտ էր դարձել, որ ռուսական ռազմական ներկայությունը Կովկասում մտուսկա ապագայում շարունակվելու էր: Դրա վառ ապացույցն էր 1999 թ. փետրվարին ռուս գեներալ Անատոլի Կոնոուկովի հայտարարությունը, ըստ որի, Ռուսաստանը ԴԴ-ում տեղակայելու էր S-300 տիպի հրթիռային համակարգեր և Միգ-29 կործանիչներ, որոնց շնորհիվ Ռուսաստանը պաշտպանելու էր ԴԴ-ին թուրքիայից և ՆԱՏՕ-ից:<sup>369</sup>

1999 թ. աշնանը չէնեմական երկրորդ պատերազմի ամենաթեժ պահին Ռուսաստանը ջանքեր գործադրեց կրկին անգամ գերազանցել համաձայնագրով թույլատրված սահմանափակումները Դյուսիսային Կովկասում: Սակայն հանդիպելով Արևմուտքի ուժեր քննադատությանը՝ Ռուսաստանը հարկադրված էր իր համաձայնությունը տալ՝ իրականացնելու համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները, ըստ որի, Ռուսաստանը պարտավոր էր փակել Վրաստանում իր 4 ռազմաբազաներից երկուսը՝ Վազլարնիի և Գուրուստայի բազաները, ինչպես նաև կրճատել զենքի և զինատեսակների քվադրանակը Դյուսիսային Կովկասում Չճնհայում ռազմական գոր-

<sup>363</sup> Steve Bowman, Conventional Armed Forces in Europe (CFE): Flank Agreement and Treaty, Congressional Research Service, <http://www.house.gov/csrce>, 1998.

<sup>364</sup> FBIS, 08.08.1994.

<sup>365</sup> Turkish Weekly, 13.10.2004.

<sup>366</sup> Turkish Daily News, 16.11.1995.

<sup>367</sup> Turkish Weekly, 13.10.2004.

<sup>368</sup> Duygu B. Sezer, From Hegemony to Pluralism: The Changing Politics of the Black Sea. - SAIS Review, vol. 17, № 1, Winter-Spring 1997, p. 22.

<sup>369</sup> Turkish Daily News, 20.02.1999.

ծողություններից հետո: 1999 թ. նոյեմբերի 19-20 եԱԳԿ Ստամբուլ-յան գազաթափողվում ստորագրվեց եԱՁՈՒ-ի վերանշակված տեքստը<sup>370</sup>: Ստամբուլյան գազաթափողվում Ռուսաստանը պարտավորվեց փակել իր բոլոր ռազմակայանները Կրասնոտնում:

Հարավային Կովկասում թուրք-ռուսական հարաբերությունների լարվածության հիմնական գործոններից էր նաև կապիական նավթի արտահանման ուղիների շուրջ թուրք-ռուսական մրցակցությունը: Երկու երկրներն էլ ունեին իրենց սեփական պլանները նավթանոլների կառուցման կապակցությամբ: Թուրքիան հսկայական ջանքեր էր գործադրում, որպեսզի կապիական նավթը հոսի Բաքու-Ջեյհան նավթամուղով, Ռուսաստանն էլ իր հերթին ջանք էր խնայում կասպիական նավթը Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղով անցկացնելու համար: Ահա այս համատեքստում թուրք-ռուսական մրցապայքարը բավականին լուրջ բնույթ էր կրում<sup>371</sup>:

### 3.2 ԹՈՒՐԷ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ 1991-2001 ԹԹ.

Թեև Հարավային Կովկասում թուրք-ռուսական հարաբերություններում տարածայնությունները և մրցակցությունը մի շարք հիմնահարցերի շուրջ լուրջ բնույթ էին կրում, այնուամենայնիվ կային մի շարք ոլորտներ, որտեղ Թուրքիան և Ռուսաստանը բավականին սերտորեն համագործակցում էին: Թուրք-ռուսական հարաբերությունները անմահադատվազ զարգացում էին ստացել հատկապես առևտրատնտեսական ոլորտում, ինչպես նաև լուրջ նախադրյալներ էին ստեղծվել թուրք-ռուսական ռազմական համագործակցության և ահաբեկչության դեմ պայքարում երկկողմ հարաբերությունների տեսակետի վրա զարգացման համար:

Առևտրատնտեսական հարաբերությունների բուռն զարգացումը, որն արձանագրվել էր դեռևս նախորդ տարիներին, 90-ական թվա-

կանների երկրորդ կեսից սկսեց վերածվել աշխարհառազմավարական գործոնի և կատարել այս հարթությունում կայունացնող դեր: Ի հայտ եկան մի շարք նոր երևույթներ, ինչպիսիք էին միլիտարիզմի հասնող «ճանաչարկային առևտուրը» և թուրքական հսկայական ներդրումները Ռուսաստանի մի շարք ոլորտներում, մասնավորապես շինարարական, բանկային, առևտրի, սննդի և այլ ոլորտներում: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի համար մեծ կարևորություն էր ստացել սերտ տնտեսական կապերի հաստատումը Ռուսաստանի հետ, քանզի ռուսական շուկան մեծ կարևորություն էր ներկայացնում թուրքական կազմակերպությունների համար ինչպես ներդրումներ կատարելու, այնպես էլ թուրքական ապրանքներ ու ծառայությունների մատուցման համար: Ռուստի պատահական չէր, որ եթե ստ պաշտոնական տվյալների 1992 թ. Թուրքիայի արտահանումը Ռուսաստան կազմել է 441.9 մլն. դոլար, ապա 1995 թ. թուրքական արտահանման թիվը կազմել էր 1,238 միլիարդ դոլար<sup>372</sup>: Հատկանշական է, որ մինչև 1998 թ. Ռուսաստանի տնտեսական ճգնաժամը թուրք-ռուսական ապրանքաշրջանառության տեմպերը միանշանակ աճել էին: Այդ մասին էին խոսում պաշտոնական տվյալները, համաձայն որի 1995 թ. երկու երկրների միջև պաշտոնական ապրանքաշրջանառությունը կազմել էր 3.3 միլիարդ դոլար, ապա 1997 թ. այն անցել էր արդեն 4 միլիարդ դոլարի սահմանը՝ կազմելով 4.097 միլիարդ դոլար<sup>373</sup>: Ուշագրավ է այն փաստը, որ Թուրքիայի արտահանումը Ռուսաստան իր բարձրագույն մակարդակին էր հասել 1997 թ.: Կազմելով ավելի քան 2 միլիարդ դոլար: Դետագա տարիներին Թուրքական արտահանումը Ռուսաստան գնալով նվազել էր. 2001 թ. այդ ցուցանիշը կազմել էր 923 միլիոն դոլար<sup>374</sup>: Հավելենք, որ 2000 թ. Ռուսաստանի ու Թուրքիայի միջև առևտրաշրջանառությունը կազմում էր 4.5 մլրդ դոլար<sup>375</sup>:

<sup>372</sup> Turkish Weekly, 13.10.2004. Kemal Kaya, Turkish Policy Over Central Asia, I C T S (Italian Center for Turkish Studies), Occasional Papers Series, № 01, 2008, p. 15.

<sup>373</sup> Central Asian Republics and the Republic of Azerbaijan - Istanbul, Foreign Economic Relations Board of Turkey (DEIK), Report, June 1998, Eurasian File (Ankara), April 96/2, № 55, p. 2; Turkish Weekly, 13.10.2004.

<sup>374</sup> Caspian News Agency, 23.05.2001.

<sup>375</sup> Tuncay Babal, Turkey at the Energy Crossroads: Turkey, Present and Past - Middle East Quarterly, Spring 2009, p. 27; Ասոսիա Հարությունյան, Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների շուրջ. - ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ - թիվ 6 (70), 2009, էջ 12:

<sup>370</sup> Agence France-Presse, 19.11.1999, Stephen F Larrabee, Turkish Foreign and Security Policy: New Dimensions and New Challenges.

<sup>371</sup> www.rand.org/publications/MR/MR1241/MR1241\_chap3.pdf - pp. 8-9.

<sup>372</sup> Կասպիական նավթի արտահանման ուղիների շուրջ թուրք-ռուսական մրցապայքարին ավելի հանգամանորեն անդրադարձ կկատարենք 4-րդ գլխում:



րածքով արտահանելու գործում: Ըստ եւթյան, «Երկնագույն հոսք» գազամուղի կառուցումը բխում էր Ռուսաստանի և Թուրքիայի ռազմավարական շահերից:

Ռուսաստանը Թուրքիային կապող 1213 կմ երկարությամբ «Երկնագույն հոսք» գազամուղն իր բնույթով եզակի է, քանզի համընդհանուր է աշխարհի ամենամեծ ստորջրյա գազամուղը, որով տարեկան փոխադրվելու է շուրջ 16 մլրդ խորանարդ մետր գազ<sup>380</sup>: Հավելենք, որ «Երկնագույն հոսք» գազամուղը ռուսական բնական գազն անմիջականորեն Աև ծովի հատակով մատակարարում է Թուրքիա՝ խուսափելով երրորդ երկրների հետ անջվելուց: Այն հանդիսանում է նոր՝ լրացուցիչ գազամուղ, որ հավելումն արդեն տարիներ է վեր գոյություն ունեցող գազամուղի, որն անցնում է Ուկրաինայի, Մոլդովայի, Ռումինիայի և Բուլղարիայի վրայով: Այս նախագծի իրագործման պարագայում Թուրքիայի կախվածությունը ռուսական գազից անհամեմատ մեծանալու է: «Երկնագույն հոսք» նախագծի ամբողջ ծավալով իրականացումից հետո Թուրքիան դառնալու է Գերմանիայից հետո ռուսական գազը ներկրող երկրորդ ամենամեծ երկիրը<sup>381</sup>:

«Երկնագույն հոսք» գազամուղի կառուցման վերաբերյալ Ռուսաստանի և Թուրքիայի միջև միջպետական պայմանագիրը ստորագրվեց 1997 թ. դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չերնոմիրոնի Թուրքիա կատարած այցի շրջանակներում: Համաձայնագրի ստորագրման կապակցությամբ Թուրքիայի վարչապետ Մետուֆ Յըլմազը հայտարարեց որ Թուրքիան ցանկանում է քննարկել ցանկացած հարց և նախընտրում է համագործակցել, քան թե մրցել իր մեծ հարևանի հետ: Իր հերթին Վիկտոր Չերնոմիրոնը ընդգծեց, որ թե Թուրքիան սեղմի Ռուսաստանի կողմից մեկնած ձեռքը, ապա իրենք տնտեսական ոլորտում 21-րդ դարում կդառնան ռազմավարական գործընկերներ: «Մենք ի վիճակի կլինեք միասին ավելի շատ բան անել երրորդ երկրներում և աջակցել տարածաշրջանի կայունությանը և խաղաղությանը»<sup>382</sup>:

Ըստ ձեռք բերված պայմանավորվածության, «Գազպրոմ» ընկերությունը թուրքական «Բոքաշ» ընկերության հետ կնքել էր կոնցրեցիոն պայմանագիր, ըստ որի, «Գազպրոմ» ընկերությունը պարտավորվում էր 25 տարվա ընթացքում մատակարարել 365 մլրդ խորանարդ մետր գազ: Գազամուղի ընդհանուր արժեքը կազմում է 3.2 միլիարդ դոլար՝ ներառյալ գազամուղի ծովային հատվածի կառուցման համար նախատեսված 1.7 մլրդ դոլարը<sup>383</sup>:

Ընդգծենք, որ «Երկնագույն հոսք» նախագիծը լուրջ քննադատության և դժգոհության արժանացավ ԱՄՆ-ի կողմից, որը դեմ լինելով վերոհիշյալ նախագծի իրականացմանը՝ մեծ ջանքեր էր գործադրում՝ խափանելու գործարքը: Ասկայն փաստենք, որ Եւրոքիան, չնայած ԱՄՆ հզոր ճնշմանը, այնուամենայնիվ բարեհաջող ավարտի հասցրեց ռուս-թուրքական բանակցությունները՝ համաձայնելով իրականացնել Թուրքիայի համար հսկայական նշանակություն ունեցող այս նախագիծը: Վերոհիշյալ նախագիծը քննադատվեց նաև Թուրքիայի որոշ շրջանակների կողմից, որոնք այն դիտում էին որպես մրցակից տրանսկապիտալական գազամուղին, որով նախատեսվում էր թուրքմենական գազը հասցնել Թուրքիա: Մասնավորապես, այս նախագիծը հստակորեն ուրվագծեց թուրքական պետական կառույցների և կուլիցիոն կառավարության ներսում առկա տարածայնությունները Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ:

Կուլիցիոն կառավարության ներսում «Երկնագույն հոսք» նախագծի վերաբերյալ տարածայնություններն ավելի ակնառու դարձան Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էլչևիի 1999 թ. նոյեմբերին Մոսկվա այցելության ժամանակ: Կուլիցիոն կառավարության մաս կազմող Ազգային Շարժում Կուսակցությունը ներկայացնող որոշ նախարարներ հայտարարեցին, որ ժողովրդավարական Չափս Կուսակցության և Մայր Հայրենիք Կուսակցությունը ներկայացնող նախարարների մասնակցությամբ Մոսկվայում ռուս դիվանագետների հետ հանդիպման ժամանակ իրենք իրավիճակ չեն եղել, որի գլխավոր պատճառը եղել էր այն, որ վերոհիշյալ կուսակցությունները չէին ցանկացել ռուսական կողմին տեղյակ պահել «Երկնագույն հոսք»

<sup>380</sup> Project: Blue Stream Natural Gas Pipeline, [www.rigzone.com/data/projects/project\\_detail.asp?project\\_id=86](http://www.rigzone.com/data/projects/project_detail.asp?project_id=86).

<sup>381</sup> ITAP-TACC, 20.07.1998.

<sup>382</sup> Duygu B. Sezer, Turkish-Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition-Perceptions: Journal of International Affairs, Volume VI, March – May 2001, p. 10.

<sup>383</sup> Asim Oku, Blue Stream Victory of Putin Over the USA, 20.11.2005, [www.axisglobe.com/article.asp?article=489](http://www.axisglobe.com/article.asp?article=489).

ճախագծի վերաբերյալ ԱՇԿ-ի մտահոգությունների մասին<sup>364</sup>։ Իր հերթին թուրքական «Բոքաշ» ընկերության նախագահ Ռ. Ուզուն հայտարարել էր, որ կառուցվող գազամուղը «սպառնում է թուրքիայի աշխարհաբարդաբազական շահերին և սպառնալիք է ներկայացնում ողջ թյուրքական աշխարհի համար»<sup>365</sup>։

Այս համատեքստում անհրաժեշտ է հիշատակել, որ չնայած ուրուշակի հակազդեցության առկայությանը, այնուամենայնիվ, «Երկնագույն հոսք» գազամուղի աշխատանքները լայն թափով սկսեցին ընթանալ։ Գազամուղի կառուցման աշխատանքների շրջանակներում 1999 թ. փետրվարին «Գազպրոմ» ընկերության և իտալական «Ենի» ընկերության միջև ստորագրվեց «Փոխըմբռնման հուշագիր», ըստ որի, վերոհիշյալ ընկերությունները փոխադարձ ջանքերով իրականացնելու էին «Երկնագույն հոսք» նախագիծը<sup>366</sup>։ 2002 թ. ամռանը ավարտվեց գազամուղի ծովային հատվածի շինարարությունը, իսկ մինչև 2002 թ. վերջին «Երկնագույն հոսք» գազամուղի շինարարական աշխատանքները ամբողջովին ավարտվեցին։

Այսպիսով կարող ենք նշել, որ չնայած պատմական դարավոր մրցակցությանը և հետխորհրդային առաջին տարիներին նկատվող թուրք-ուսական մեծ լարվածությանը, միջազգային և տարածաշրջանային փոփոխությունները 90-ականների երկրորդ կեսին հանգեցրեցին թուրքիայի և Ռուսաստանի միջև մի շարք ոլորտներում և հատկապես տնտեսական ոլորտում սերտ հարաբերությունների հաստատմանը։ Այս գործում շատ կարևոր դերակատարություն են ունեցել հատկապես թուրքական և ռուսական գործարարներն ու խոշոր կազմակերպությունները, որոնք մուտք գործելով ռուսական և թուրքական շուկաներ ակտիվ քայլեր ձեռնարկեցին՝ ազդելու թուրքիայի և Ռուսաստանի արտաքին հարաբերությունների վրա։ Ինչ խոսք, թուրք-ուսական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման գործընթացում հսկայական նշանակություն է ունենալու «Երկնագույն հոսք» գազատարը, որի շահագործումից հետո լուրջ նախարարյալներ կարող են ստեղծվել երկկողմ հարաբերությունները էլ ավելի սերտացնելու համար։

Անդրադառնալով թուրք-ուսական ռազմական հարաբերությունների և ահաբեկչության դեմ համատեղ պայքարի շրջանակներում երկկողմ համագործակցությանը՝ անհրաժեշտ է նշել, որ թուրքիան ԱՆՏՕ-ի անդամ առաջին երկիրն է, որ սկսեց գնել ռուսական զենքեր։ 90-ականների կեսերից թուրքիան սկսեց ակտիվորեն Ռուսաստանից գնել տարատեսակ զինատեսակներ և ռազմական սարքավորումներ՝ ներառյալ ռազմական ուղղաթիռներ, զրահապատ մեքենաներ, տանկեր և ավտոմատ հրացաններ, որոնք թուրքիան գործածում էր ինչպես երկրի հարավ-արևելքում, այնպես էլ Հյուսիսային Իրաքում Զրդական Բանվորական Կուսակցության զինյալների դեմ պայքարում<sup>367</sup>։

1996 թ. փետրվարին Ռուսաստանի Արտաքին Տնտեսական Դաշնաբերությունների նախարար և Ռուսաստանի Ռազմա-Տեխնիկական Քաղաքականությունը Համակարգող Խորհրդի նախագահի առաջին տեղակալ Օլեգ Դավիդովը, անդրադառնալով ռուս-թուրքական ռազմական համագործակցությանը, նշել էր, որ եթե 1993 թ. ռուսական զենքի արտահանումը թուրքիա կազմել էր 25.7 միլիոն դոլար, ապա 1996 թ. սկզբին այն արդեն իսկ կազմել էր 121 մլն. դոլար։ Բացի այդ Դավիդովը հույս էր հայտնել, որ վաճառքների ծավալը մինչև 1996 թ. վերջ կկազմի 300 մլն. դոլար<sup>368</sup>։

1997 թ. դեկտեմբերի 14-17 Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրոյի միջև թուրքիա և 1998 թ. մայիսի 18-21 թուրքիայի Ղիլափոր Շտարի նախկին պետ Հաքքի Քարադայի այցելությունը Ռուսաստան մեծապես նպաստեցին թուրք-ուսական ռազմական հարաբերությունների ամրապնդմանը և ամփոփության ոլորտում ավելի սերտ հարաբերության հաստատմանը։ Երկու այցելությունների հիմնական նպատակն էր ընդլայնելու համագործակցությունը քաղաքական և ռազմաստրատեգիական ոլորտներում։ Թուրքիայում հատկապես մեծ արժագանք ստացավ Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրոյի միջև, քանզի դա Ռուսաստանի առաջին վարչապետի այցն էր ՆԱՅՍ փլուզումից հետո։ Ըստ Չեռնոմիրոյի «Թուրքիան և Ռուսաստանը տարածաշրջանում պետք է հանդես գան ոչ որպես մրցակիցներ, այլ որպես գործընկերներ»<sup>369</sup>։

<sup>364</sup> Turkish Weekly, 13.10.2004.

<sup>365</sup> Старченков Г.И., Нефть и газ в экономике и политике Турции (XIX-начало XXI вв.), М., с. 153-154.

<sup>366</sup> www.gazprom.com/eng/articles/article8895.shtml.

<sup>367</sup> Gareth M. Winrow, Turkey and the Newly Independent States..., p. 4.

<sup>368</sup> Russia anticipates increased arms exports to Turkey.- Monitor (The Jamestown Foundation), Vol. 2, Issue 32, February 14, 1996.

<sup>369</sup> Radikal, 17.12.1997.

1999 թ. նոյեմբերի 4-6 թուրքիայի վարչապետ Բյուլենք Էջևիթի այցը Ռուսաստան մի նոր խթան հանդիսացավ թուրք-ուսական համագործակցությանը ամվտանգության ոլորտում: Նշենք, որ Էջևիթի այցը Մոսկվա համընկավ ռուս-չեչենական երկրորդ պատերազմի սկսման հետ: Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպումից հետո մամլո ասուլիսի ժամանակ թուրքիայի վարչապետը, ընգծելով թուրք-ուսական հարաբերությունների կարևորությունը, չեչենական հիմնահարցը որակել էր որպես «Ռուսաստանի ներքին խնդիրը և կարևորել էր Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը»<sup>390</sup>:

Ռուս-թուրքական ռազմաքաղաքական հարաբերությունների ամրապնդման շրջանակներում մեծ կարևորություն ստացավ հատկապես 2000 թ. հոկտեմբերի 23-25 Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Կապսյանովի պաշտոնական այցը Թուրքիա: Թուրքիայի վարչապետ Բյուլենք Էջևիթի հետ հանդիպումից հետո լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ռուսաստանի վարչապետը հայտարարեց. «Մենք համաձայնություն ենք ձեռք բերել ավելի սերտացնել համագործակցությունը հատկապես ռազմական և անվտանգության ոլորտներում: Մեր հանդիպման ամենակարևոր արդյունքն այն է, որ մենք ոչ թե մրցակից ենք, այլ գործընկերներ»<sup>391</sup>: Իսկ Թուրքիայի վարչապետը նշել էր. «Մենք ցանկանում ենք մրցակցության փոխարեն համագործակցել Ռուսաստանի հետ»<sup>392</sup>:

Հավելենք, որ Թուրքիայի պաշտպանության նախարար Սաբահաթին Չաքմաքոլուն հետ հանդիպման ժամանակ Կապսյանովը նշել էր, որ ռուսական կողմը ցանկանում է, որպեսզի թուրքական ռազմական շուկայում ավելացնի ռուսական մասնաբաժնի ծավալը՝ ընդգծելով Թուրքիայի զինված ուժերի կողմից հայտարարված և հայտարարվելիք տեղեկությունների կարևորությունը ռուսական կողմի համար: Նշենք, որ ռուսական կողմը ցանկանում էր Թուրքիային վաճառել ռուս-խորալեական KA-50 ռազմական ուղղաթիռները<sup>392</sup>:

<sup>390</sup> Duygu B. Sezer, Turkish- Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition, Perceptions: Journal of International Affairs, Volume VI, March – May 2001, p. 9.

<sup>391</sup> Suzan Fraser, PM Eyes \$150Bln Turkish Arms Spree, The Moscow Times Online, 24.10.2000.

<sup>392</sup> Интерфакс, 25.10.2000, FBIS-SOV, 26.10.2000.

Կապսյանովի հետ հանդիպումից հետո արված հայտարարությունում Չաքմաքոլուն հայտնել էր Ռազմա-տեխնիկական Համագործակցության Հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու մասին և նշել էր, որ «այս հանձնաժողովը ի հայտ կբերի, կիզորացնի երկու երկրների ռազմական-պաշտպանական արդյունաբերության հնարավորություններն ու ներուժը»: Բացի այդ թուրքական կողմը հայտնել էր, թե ռազմական արդյունաբերության խնդիրը քաղաքական չէ, այլ ֆինանսական և տեխնիկական, և որ ռուսական արտադրանքը շահելու մեծ հավանականություն կունենա զալիք տեղեկություններում: Ըստ թուրքերի, մոտակա 25 տարիների ընթացքում իրականացվելիք արդիականացման շրջանակներում նրանք նախատեսում էին 150 մլրդ դոլար ծախսել<sup>393</sup>:

2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները իրենց ազդեցությունը ունեցան թուրք-ուսական հարաբերությունների վրա: Վերոհիշյալ իրադարձությունների արդյունքում թե՛ Թուրքիան, և թե՛ Ռուսաստանը միացան ԱՄՆ գլխավորած հավաստարեկշակաև կոալիցիային, թեև որոշ թուրք փորձագետներ մտահոգություն հայտնեցին, որ Ռուսաստանը կարող էր օգտվել ընձեռնված հնարավորությունից՝ ուժեղացնելու իր դիրքերը կովկասյան տարածաշրջանում: Մյուս կողմից էլ Ռուսաստանը հարկադրված էր համակերպվել ԱՄՆ գործողությունների հետ Կենտրոնական Ասիայում, որը շատ հետազոտողների կարծիքով նաև նպատակ էր հետապնդում թուլացնել ռուսական ազդեցությունը այդ տարածաշրջանում, ինչը անկասկած ձեռնատու էր Թուրքիային: Միայն այս համատեքստում էլ 2001 թ. նոյեմբերին 16-ին Թուրքիայի և Ռուսաստանի ԱԳ նախարարներ Իսմայիլ Ջեմը և Իզդր Իվանովը ստորագրեցին «Թուրքիայի և Ռուսաստանի միջև գործողությունների պլանը Եվրասիայում», ըստ որի Թուրքիան և Ռուսաստանը Եվրասիայում համագործակցելու էին առաքելության դեմ պայքարում և ընդլայնելու էին տնտեսական համագործակցությունը<sup>394</sup>:

<sup>393</sup> The Wall Street Journal Europe, 20.11.2000.

<sup>394</sup> Elena Urazova, Russia and Turkey's Eurasian integration processes, Insight Turkey vol. 4 № 2 (April-June 2002), p. 88.

ԹՈՒՐԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՔԱՂԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՆԱԿԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՈՒՄ

4.1. ԹՈՒՐԻԱՆ ԵՎ ԳՆԱԿԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՈՒ  
ԱՇԽԱՐՀԱՏՆԱՅԻՆ ԳՆԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՇԱՐՎԱԳՐԾԱՆ ԴՆԱՍՆԱՆԴԻՐԸ

Կասպիական ավազանը հանդիսանում է նավթի և գազի հանքեր և պաշարներ ունեցող աշխարհի ամենամեծ վայրերից մեկը: ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի համաձայն, Կասպից ծովի նավթի պաշարները կազմում են ավելի քան 200 միլիարդ բարել, որը կբավարարի ԱՄՆ ավելի քան 30 տարվա էներգետիկ պահանջները<sup>395</sup>: Ուստի պատահական չէ, որ Կասպիական ավազանը, Անձովյան տարածաշրջանը և Բալկանները հաճախ գտնվել են Ռուսաստանի, Արևմուտքի և Թուրքիայի շահերի բախման կենտրոնում: Խորհրդային կայսրության փլուզումից հետո վերոհիշյալ տարածաշրջանները նոր թափով ընդգրկվեցին ՌԴ-ի, Եվրամիության, ԱՄՆ-ի և Թուրքիայի աշխարհատնտեսական մրցակցությունում:

ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպայի երկրները և Թուրքիան սկսեցին ակտիվորեն քննարկել Կասպիական էներգետիկ ռեսուրսներն արևմտյան շուկա հասցնելու և այդ կապակցությամբ մի նոր՝ Ռուսաստանին այլևս տարանջատված նավթամուղ կառուցելու հարցը: Եթե թամուղները դարձան տարածաշրջանում գերիշխող դեր ստանձնելու պայքարում գլխավոր ուղղություններից մեկը, առաջին հերթին ԱՄՆ-ի կողմից, որը փորձում էր արագացնել նախկին խորհրդային հանրապետությունների՝ Ռուսաստանից բազաբազկան և տնտեսական տարանջատման գործընթացը: ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերը անդրադարձել էր կասպիական նավթի առանձնահատուկ նշանակությանը՝ նշելով, որ 21-րդ դարում կասպիական նավթը կարող է ունենալ նույնքան նշանակություն արդյունաբերական աշխարհի համար, որքան այսօր ունի Պարսից Շոցի նավթը<sup>396</sup>:

Կասպիական ռեսուրսների արտահանման ուղիների շուրջ պայքարում մեծ հետաքրքրություն է ներկայացնում թուրք-ռուսական մրցապայքարը: Երկու երկրներն էլ ունեն իրենց սեփական նախագծերն Կասպիական նավթը համաշխարհային շուկաներ հասցնելու ուղղությամբ: Թե՛ Թուրքիան, և թե՛ Ռուսաստանը ունեն լուրջ ռազմավարական և տնտեսական շահեր կասպիական ավազանում և մեծապես շահագրգռված են կասպիական նավթի արտահանման ուղիների վերահսկման հարցում, ուստի լուրջ ջանքեր են գործադրում, որպեսզի կասպիական նավթը հոսի իրենց համար նպաստավոր նավթամուղով:

Թե՛ Թուրքիան ունի շատ նպաստավոր ռազմավարական դիրք, քանզի գտնվում է Արևելյան Եվրոպայի, Ռուսաստանի, Կովկասի և Մերձավոր Արևելքի խաչմերուկներում, սակայն Թուրքիան դեռևս ունի երկարաժամկետ ռազմավարական սպառնալիք, այն է՝ էներգետիկ կախվածությունը: Թուրքիայի էներգետիկ պահանջները արագորեն մեծանում են: Մասնավորապես, Թուրքիայի գազի պահանջները 90-ականների ընթացքում տարեկան աճել են ավելի քան 10 տոկոսով և սպասվում է, որ մինչ 2010 թ. Թուրքիայի գազի պահանջները հասնելու են 55, իսկ 2015 թ.՝ 83 միլիարդ խորանարդ մետրի<sup>397</sup>:

Թուրքիայի կախվածությունը նավթից նույնպես չափազանց մեծ է, և կանխատեսվում է, որ մինչ 2010 թ. Թուրքիան պետք է ներմուծի տարեկան 22 միլիոն տոննա նավթ<sup>398</sup>: Ըստ լուրջան, եթե Թուրքիայի ներկայիս կախվածությունը ներկրվող էներգետիկ աղբյուրներից կազմում է մոտ 65%, ապա սպասվում է, որ գալիք երկու տասնամյակներում այս ցուցանիշը հասնելու է մոտ 75%-ի<sup>399</sup>: Որպեսզի ինչ-որ կերպ կանխեն այս զարգացող սպառնալիքը, թուրք բարաբազկան գործիչները նախորդ տասնամյակում մեծ ցանկություն

<sup>395</sup> Stephen Kinzer, Pipe Dreams: A Perilous New Contest For the Next Oil Prize, The New York Times, 24.09.1997: George S.Hishmeh, Caspian Basin Seen Not Replacing Middle East As Oil Source, USIA Washington File, 26 September 1997, www.usia.gov/products/washfile.htm.

<sup>396</sup> **Авакова Р. М., Лисова А.Г.**, նշվ. աշխ., էջ 43:

<sup>397</sup> Terry Adams, Michael Emerson, Laurence Mee and Marius Vahl, Europe's Black Sea Dimensions, Centre for European Policy Studies, Brussels, p. 58.

<sup>398</sup> Brent Sasley, Turkey's Energy Politics in the Post-Cold War Era.- MERIA Volume 2, № 4 - November 1998, p. 2.

<sup>399</sup> Zeyno Baran, The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications For Turkey, The Central Asia-Caucasus Institute.- Silk Road Studies Program, May 2005, p.103.

հայտնեցին լիովին օգտագործելու թուրքիայի ռազմավարական դիրքի առավելությունները:

Լավ հասկանալով, որ էներգետիկ տրանսպորտային ուղիների վերահսկողությունը նույնքան կարևոր է, որքան էներգետիկ պաշարների վերահսկողությունը, նրանք սկսեցին մեծ ուշադրություն դարձնել թուրքիայի երբևիցե իրականացրած ամենակարևոր նախագծերից մեկի՝ Բաբու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի վրա: Հատկանշական է, որ թուրքիան պլանավորել էր ստեղծել «Արևելք-Արևմուտք տրանսպորտային միջանցք», որը Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի նավթի և գազի հանքավայրերը միացնելու է Արևմտյան Եվրոպայի շուկաների հետ: Բացի այդ, Բաբու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի իրագործմամբ թուրքիան ցանկանում էր բավարարել երկրի արագորեն աճող նավթի ներքին պահանջները<sup>400</sup>: Սասնավորապես, 2002 թ. թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Ջեյի Ջաբանը հայտարարել էր, որ թուրքիան աջակցում է կասպիական նավթի և բնական գազի փոխադրումն արևմտյան շուկաներ՝ ընդգծելով, որ թուրքիայի նպատակը եղել է «Արևելք-Արևմուտք տրանսպորտային միջանցքի» հնարավորինս շուտ ստեղծումը և կովկասյան տարածաշրջանի կայունության ու բարգավաճմանը նպաստելը<sup>401</sup>:

Թուրքիայի համար Բաբու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի նախագիծը հսկայական ռազմավարական և տնտեսական նշանակություն ունի: 1990-ականների սկզբին թուրքիայում սկսեցին լրջորեն քննարկել Արևելք-Արևմուտք ուղղությամբ մի նոր, հիմնական նավթամուղ կառուցելու անհրաժեշտության հարցը: Դա ուներ մի քանի պատճառ: Նախ՝ Դարսից Ծոցի պատերազմի հետևանքով 1990 թ. օգոստոսին Միացյալ Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդի 661 բանաձևով փակվեց Քիբուբե-Յուժուրթալը նավթամուղը, որն իրաքյան նավթը հասցնում էր թուրքական Միջերկրական ծովի Ջեյհան նավահանգիստը: Անվտանգության խորհրդի 661 բանաձևը մեծ հարված հասցրեց թուրքիայի տնտեսությանը<sup>402</sup>:

Բացի այդ, լավ հասկանալով Կենտրոնական Ասիայի և Կասպիական նավթի պաշարների պոտենցիալ արժեքը, որն էականորեն բարձրանալու էր Արևմտյան ներդրումներից հետո, թուրքիան, օգտագործելով Ջեյհանի ռազմավարական դիրքը, ձգտում էր Ջեյհանը դարձնել հիմնական միջազգային նավթային կենտրոն, որը հնարավորություն կտար թուրքիային ամհամենատ ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել տարածաշրջանում: Կարևոր պատճառներից էր նաև այն, որ լինելով ԵՄԿԻ-ի անդամ և ԱՄՆ ռազմավարական գործընկերը՝ թուրքիան ջանում էր սերտորեն համագործակցել նորահասակ երկրների հետ, որը կմեծացներ թուրքիայի ռազմավարական նշանակությունը<sup>403</sup>:

Նոր նավթամուղի կառուցման վերաբերյալ քննարկումները սկսվեցին 1990-ականների սկզբներին: Նոր նավթամուղ կառուցելու համար քննարկվում էին մի քանի տարբերակներ: Ռուսաստանն ռաջին երկրներից էր, որ պնդում էր, թե նոր նավթամուղը պետք է անցներ իր տարածքով: Ռուսաստանը ցանկանում էր, որ կասպիական նավթն անցներ գործող հյուսիսային՝ Բաբու-Նովոռոսիյսկ երթուղով, որը սկիզբ էր առնում Բաքվից, այնուհետև անցնելով Չեչենիայի տարածքով՝ հասնում Աև ծովում ռուսական Նովոռոսիյսկ նավահանգիստը, որտեղից էլ նավթը տանկերներով թուրքական նեղուցներով փոխադրվում էր համաշխարհային շուկաներ<sup>404</sup>: 90-ականների սկզբներին Ռուսաստանին հաջողվեց որոշակի հաջողություններ ունենալ: Սասնավորապես, 1993 թ. Ռուսաստանի էներգետիկայի նախարար Յուրի Շաբալինիզ գաղտնի այցելություն կատարեց Բաբու, որտեղ նա ստորագրեց համաձայնագրեր աղբյուրային նավթը Ռուսաստանի տարածքով անցնելու վերաբերյալ<sup>405</sup>:

Հատկանշական է, որ տվյալ ժամանակաշրջանում Աղբյուրային իշխանությունները ջանում էին հավասարակշռված քաղաքականություն վարել թուրքիայի և Ռուսաստանի հետ: Դրա վառ օրինակն

<sup>400</sup> Turkish Weekly, 13.10.2004; Robert Ebel and Rajan Menon, Energy and Conflict in Central Asia and the Caucasus, New York, 2000, pp. 225-229.

<sup>401</sup> Mehmet Bardakci, Russian Interests in the Caspian Region and Turkey, Dokuz Eylul Universitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, Cilt 5, Sayı 1, Nisan-Haziran 2003, p. 16.

<sup>402</sup> Zeyno Baran, նշվ. աշխ., էջ 104:

<sup>403</sup> Mustafa Aydın and Kostas Ifantis, International Security Today: Understanding Change and Debating Strategy, Ankara, Strategic Research Center, 2006, p. 136.

<sup>404</sup> Lester W. Grau, Hydrocarbons and a New Strategic Region: The Caspian Sea and Central Asia, Foreign Military Studies Office, Fort Leavenworth, KS, www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm.

<sup>405</sup> Turan, 02.05.1994.

եր 1995 թ. հոկտեմբերի 9-ի Ադրբեջանի և Միջազգային նավթային կոնսորցիումի (AIOC) որոշումը՝ արդրեջանական «նախնական նավթ» արտահանել արդեն իսկ գործող ինչպես իրևսիային երթուղով՝ Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղով, այնպես էլ արևմտյան երթուղով՝ Վրաստանի տարածքով անցնող Բաքու-Սուպսա նավթամուղով: Այս որոշումը մեծ մասամբ քաղաքական էր քանզի նախատեսվում էր 8 տարվա ընթացքում երկու նավթամուղներով արտահանել միայն 5 միլիոն տոննա նավթ<sup>406</sup>: Չավելելը, որ արդրեջանական «նախնական նավթ» Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղով սկսեց հոսել 1997 թ. նոյեմբերից, իսկ Բաքու-Սուպսա նավթամուղով՝ 1999 թ. ապրիլից<sup>407</sup>:

Ռուսական տարրերակի գլխավոր ընդդիմախոսներից էր Թուրքիան, որը մեծ ջանքեր էր գործադրում՝ խափանելու Ռուսաստանի ծրագրերը: Թուրքիան, հինք ընդունելով Բոսֆորի և Դարդանելի էկոլոգիային և անվտանգությանը սպառնացող վտանգները, փորձում էր խափանել Բաքու-Նովոռոսիյսկ նախագիծը: 1993 թ. օգոստոսին Թուրքիան քայլեր ձեռնարկեց նեղուցներով նավթային տանկերների ազատ երթևեկության վրա սահմանափակումներ մտցնելու համար: Թուրքիայի կառավարությունը, հայտարարելով, թե իբր նավթափոխադրումների հետևանքով էկոլոգիական և անվտանգության տեսանկյունից Ստամբուլին սպառնում է լուրջ վտանգ, պահանջեց վերանայել 1936 թ. Մոնտրեյի կոնվենցիան, որը կարգավորում էր Բոսֆոր և Դարդանել նեղուցներով երթևեկության ռեժիմը, ինչը կատարողի կերպով մերժեց Մոսկվայի կողմից<sup>408</sup>, Սակայն 1994 թ. մարտի 13-ին Բոսֆորի նեղուցի շրջակայքում կիրարկան «Նասսիյա» տանկերի և բեռնափոխադրող նավի բախումը լավ առիթ հանդիսացավ Թուրքիայի համար՝ հայտարարելու, որ նեղուցների շահագործումը որպես նավթափոխադրման երթուղի չափազանց վտանգավոր է 10

միլիոնամոց քնակչություն ունեցող Ստամբուլի համար: Այնուհետև ԱՆԿ-ն արտահայտեց, որ 1994 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ էր մտնելու Մոնտրեյի կոնվենցիայի տարբերվող՝ նեղուցների նոր ռեժիմ<sup>409</sup>:

Մրանով Թուրքիան ցանկանում էր մեծացնել իր տարածքով նոր նավթամուղի կառուցման հնարավորությունները: Ռուսաստանը Թուրքիայի այս քայլը որակեց, որպես դիտավորյալ փորձ՝ խոչընդոտելու Բաքու-Նովոռոսիյսկ նախագիծը և մեղադրեց Թուրքիային Մոնտրեյի կոնվենցիայի միակողմանի խախտման իր տարածքով մեծ մասամբ կառուցման հանքավայրերի շահագործման մեջ ներդրումները թիկ են պարունակում, քանզի Կասպից ծովի բաժանման վերաբերյալ համաձայնություն գոյություն չունի<sup>410</sup>:

Այնուամենայնիվ, Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղը, որպես կասպիական նավթի արտահանման հիմնական տարրերակ, չիրագործվեց մի քանի լուրջ պատճառներից: Նախ՝ Չեչնիայում ռազմական հակամարտության սկսվելու հետևանքով վերսիչյալ նավթամուղի լիարժեք գործարկումը վտանգի ենթարկվեց, քանզի նավթամուղի կարևոր հատվածն անցնում էր Չեչնիայի մայրաքաղաք Գրոզնի: Բացի այդ, ռուսական տարրերակը հանդիպեց Թուրքիայի և ԱՄՆ-ի լուրջ հակազդեցությանը, որոնք մեծապես շահագրգռված էին Ռուսաստանը շրջանցող նավթամուղի կառուցմանը և հսկայական ջանքեր էին գործադրում այդ ուղղությամբ:

Նշենք, որ քննարկվում էին նաև մի քանի այլ տարբերակներ: Շրջանառվում էր իրանական տարրերակը, համաձայն որի, նավթամուղը Կասպից ծովից Իրանի տարածքով պետք է հասներ Պարսից ծով: Այս նախագծի իրականացման դեպքում այն կլիներ ամենակարճ ուղին, սակայն Իրանը մի շարք պատճառներով արևմտյան ներդրողների համար անցանկալի գործընկեր էր համարում: Արևմտյան ներդրողները լրջորեն մտահոգված էին Իրանում իշխող ատավածապետական կառավարության վարած քաղաքականությունից, Իրանի միջուկային ծրագրից: Բացի այդ, Էսկան ազդեցություն

<sup>406</sup> Temel Iskit, Turkey: New Actor in the Field of Energy Politics? - Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, p. 10; Ariel Cohen, The New "Great game": Oil Politics in the Caucasus and Central Asia, The Heritage Foundation, № 1065, 25.01.1996, p. 5, web.nps.navy.mil/~relooney/Caspian\_13.htm; Gareth M. Winrow, Turkey's Relations With the Transcaucasus..., p. 142; Turkish Weekly, 13.10.2004.

<sup>407</sup> Mehmet Bardakçı, նշվ. աշխ., էջ 11:

<sup>408</sup> Гусейнов В., Каспийская нефть, экономика и геополитика, М. 2002, с. 252; Robert Ebel and Rajan Menon, նշվ. աշխ., էջ 179:

<sup>409</sup> Topsis Ozlem, Turkish Regulations Regarding Maritime Traffic in the Turkish Straits and Sea of Marmara, <http://www.mfa.gov.tr/grupi/maritime.htm>; Коджаман О., նշվ. աշխ., էջ 126:

<sup>410</sup> Reuters, 23.06.1994.

ուներ նաև Միացյալ Նահանգների գործոնը, որն Իրանի նկատմամբ մի շարք պատժամիջոցներ էր կիրառում<sup>411</sup>:

Սա էր պատճառը, որ արևմտյան ներդրողները սկսեցին ավելի լուրջ ուշադրություն դարձնել Միջերկրական ծովի թուրքական հատվածին և, ի վերջո, ընտրություն կատարեցին հօգուտ այդ նախագծի: Նախատեսվում էր, որ նավթամուղը պետք է անցներ հարավլուվկասյան երեք հանրապետություններից երկուսի տարածքով: Այն սկիզբ պետք է առներ Ադրբեջանից, այնուհետև պետք է անցներ կամ Վրաստանի, կամ էլ ԳՂ-ի տարածքով: Սակայն ԳՂ-ի տարբերակը Ադրբեջանի և Թուրքիայի համար անընդունելի էր ԼՂ հակամարտության կարգավորված չլինելու և հայ-թուրքական հարաբերություններում առկա հիմնախնդիրների պատճառներով:

Այնուամենայնիվ, ընդգծենք, որ միջազգային շրջանակները չափազանց անապահովություն էին ցուցաբերում նավթամուղի՝ ԳՂ-ով անցնելու տարբերակով՝ այն դիտելով որպես լուրջ գրավական դարաբաղյան հակամարտությունում խաղաղության հաստատման գործընթացում: Մասնավորապես, այս տարբերակի ջատագովներից էր Լեոնային Ղարաբաղի հարցով նախկին բանակցող Ջոն Մարեսկան, որի կարծիքով վերոհիշյալ նավթամուղը կարող էր օգտագործվել որպես լուրջ դրապատճառ հակամարտող կողմերի համար՝ ավարտելու հակամարտությունը և երաշխավորելու կայունությունն ու բարեկեցությունը հայերի և ադրբեջանցիների համար<sup>412</sup>: Իր հերթին 1996 թ. մարտին ԱՄՆ Ազգային անվտանգության հարցերով խորհրդակցանի տեղակալ Ս. Բերգերը հայտարարել էր. «Մենք չենք կարող տեղից շարժել նավթի պորթլենդ առանց ԼՂ հակամարտության հիմնահարցի կարգավորման»<sup>413</sup>:

Դաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ շրջանառության դրվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան երթուղին, որպես քաղաքականապես ամենանպատակահարմարը հիմնական գործընկերների

համար, բեև այն ամենաերկար երթուղի ունեցող և ամենաբանկարծեք նախագիծն էր:

Ինչպես արդեն նշել էինք, ԽՍՀՄ փլուզումից և Ադրբեջանի անկախացումից հետո Թուրքիան հսկայական ջանքեր էր գործադրում, որպեսզի կասախական տարածաշրջանի նավթը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ճանապարհով հասնի համաշխարհային շուկա: Այդ կապակցությամբ Թուրքիան սկսեց ինտենսիվ բանակցություններ վարել Ադրբեջանի հետ: 1993 թ. մարտին Անկարայում ստորագրվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման վերաբերյալ ադրբեջանա-թուրքական առաջին համաձայնագիրը<sup>414</sup>: Իսկ 1994 թ. ապրիլի 20-ին Ադրբեջանի Ազգային Նախարարի Ընկերության՝ SOCAR-ի և օտարերկրյա նավթային ընկերությունների Կոնսորցիումի՝ AIOC-ի միջև կնքվեց համաձայնագիր Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթահանքերի ուսումնասիրման և շահագործման վերաբերյալ: Փաստենք, որ Թուրքիան TPAO ընկերությունը նույնպես իր 6.75% բաժնետոմսերով հանդիսանում է AIOC Կոնսորցիումի անդամ<sup>415</sup>:

1994 թ. սեպտեմբերի 20-ին Ազերի-Չիրազ և Գյունեշլի նավթահանքերի շահագործման վերաբերյալ Ադրբեջանի կառավարության և օտարերկրյա կազմակերպությունների Միջազգային Կոնսորցիումի միջև կնքվեց այսպես կոչված «Ղարի պայմանագիրը»: Միջազգային կոնսորցիումի անդամներն էին՝ ռուսական «Լուկոյլ», ամերիկյան «Ամոնո», «Էքսոն», «Յուկոնոքալ», քիտանական «Բրիթիշ Փեթրոլիում», նորվեգական «Ստատոյլ», ճապոնական «Իոչու» և Ադրբեջանի Ազգային Նախարարի Ընկերություն (SOCAR) կազմակերպությունները: 30 տարով կնքված պայմանագրի համաձայն, նախատեսվում էր արտահանել 540 մլն. տոննա նավթ: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում էր մոտ 9 միլիարդ դոլար<sup>416</sup>:

Նավթային ոլորտում թուրք-ադրբեջանական համագործակցության զարգացմանը մեծապես նպաստեց 1994 թ. փետրվարին Ադրբեջանի նախագահ Դեյդար Ալիևի 80 հոգիանոց պատվիրակու-

<sup>411</sup> Lester W. Grau, Hydrocarbons and a New Strategic Region: The Caspian Sea and Central Asia, Foreign Military Studies Office, Fort Leavenworth, KS, [www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm](http://www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm).

<sup>412</sup> John J. Maresca, Using Oil to Stop a Nasty War-. Journal of Commerce, 01.08.1994.

<sup>413</sup> Жильцов С.С., Зонин И.С., Ушаков А.М., Геополитика Каспийского региона, Москва, Международные Отношения, 2003, с. 122.

<sup>414</sup> Жильцов С. С., Зонин И. С., Ушаков А. М., նշվ. աշխ., էջ 117:

<sup>415</sup> Hürriyet, 22.04.1994.

<sup>416</sup> Авакова Р. М., Лисова А.Г., նշվ. աշխ., էջ 70; Bulent Aras and George Foster, Turkey and the Azerbaijani oil controversies: Looking for a light at the end of the pipeline, <http://meria.idc.ac.il/books/azerbaijan.htm>; Zakir Avşar, Ferruh Solak, նշվ. աշխ., էջ 45.

քյան այցը թուրքիա: Թուրքիայում անցկացրած բանակցությունների ընթացքում կողմերը ձեռք բերեցին համաձայնություն ադրբեջանական և անվթահանքերի շահագործման բնագավառում թուրքական նավթային ընկերությունների ավելի ակտիվ ներգրավվածության հարցի վերաբերյալ<sup>417</sup>: 1995 թ. հոկտեմբերին Թուրքիայի վարչապետ Թանուշ Գիլլերը այցելեց Վրաստան, որտեղ նա հայտարարեց, որ իրենք պայմանավորվել են Վրաստանի տարածքով նավթի տեղափոխման հարցի շուրջ: «Թուրքիան այդ նախագիծը ներկայացրել է բոլոր շահագրգիռ կազմակերպություններին և կողմերին, ու այն լավագույնն է ճանաչվել»<sup>418</sup>:

Անկարայի նախաձեռնությամբ 1998 թ. մայիսի 15-ին Թուրքիան, Ադրբեջանը և Վրաստանը ստորագրեցին «Փոխընթացման հուշագիր», համաձայն որի յուրաքանչյուր երկրում ստեղծվելու էին աշխատանքային խմբեր<sup>419</sup>:

Փաստենք, որ 1998 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան նավթամուղների մրցապայքարում ստացավ շոշափելի առավելություն: 1998 թ. հոկտեմբերի 29-ին Գ. Ալիևը, Ս. Դեմիրելը, Է. Շևարոնձեձե, Ղազախստանի և Ուզբեկստանի նախագահներ և Նազարբաևը և Ի. Բարիմովը ստորագրեցին Անկարայի հռչակագիրը: ԱՄՆ Լենդգետիկայի նախարար Բ. Ռիչարդսոնը դիտորդի կարգավիճակով և ստորագրեց այդ հռչակագիրը: Համաձայն հռչակագրի, մասնակից կողմերն իրենց աջակցությունն էին հայտնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նախագիծին՝ որպես հիմնական նավթամուղի<sup>420</sup>: Անկարայի հռչակագրի ստորագրման կապակցությամբ Ս. Դեմիրելը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով. «Մենք ստորագրեցինք պատմական հռչակագիր, և այսուհետ ոչ ոք չի փնտրի որևէ այլ երթուղի ադրբեջանական նավթի համար»<sup>421</sup>: Հավելենք, որ Անկարայի հռչակագիրը միջազգային մամուլի կողմից մեկնաբանվեց, որպես թուրքական կառավարության դիվանագիտական հաղթանակ<sup>422</sup>:

Բաքու-Ջեյհան նախագիծը իրագործման ուղղությամբ մեկ այլ կարևոր քայլ էր վերոհիշյալ աշխատանքային խմբերի աշխատանքների արդյունքում 1999 թ. նոյեմբերի 18-ին Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի նախագահների կողմից ԵԱՀԿ Ստամբուլյան զազաթաժուրդվում նախագծի առնչությամբ «Միջկառավարական Համաձայնագիր» ստորագրումը: ԱՄՆ նախագահ Բիլ Կլինթոնը նույնպես ստորագրեց այդ համաձայնագիրը, որպես դիտորդ<sup>423</sup>: ԱՄՆ Լենդգետիկայի նախարարը, համաձայնագիրը որակելով, որպես արտաքին քաղաքականության լրջագույն հաղթանակ, նշեց, որ դա ռազմավարական համաձայնագիր է, որը նպաստում է ԱՄՆ ազգային շահերին<sup>424</sup>:

ԱՄՆ նախագահն ավելի ուշ նշել էր, որ այս համաձայնագիրը հանդիսացել է «1999 թ. իր ամենակարևոր արտաքին քաղաքականության ձեռքբերումներից մեկը»<sup>425</sup>: Այս փաստը մեկ անգամ և ապացուցում է, որ ԱՄՆ ղեկավարությունն էապես շահագրգռված էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցմամբ, որպես այլընտրանք արդեն գոյություն ունեցող Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղին: ԱՄՆ կառավարությունը ծգտում էր հնարավորինս թուլացնել Ռուսաստանի և Իրանի ազդեցությունը Կասպիական տարածաշրջանում, ուստի աջակցում էր Թուրքիային այս նավթային նոր նախագծի հարցում: Բազմաթիվ թուրք և ամերիկացի վերլուծաբաններ և քաղաքական գործիչներ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նախագիծը և Արևելք-Արևմուտք Լենդգետիկ միջանցքն ամբողջությամբ համարում են 1990-ականներից մինչև 2000 թ. թուրք-ամերիկյան հարաբերությունների ամենակարևոր իրադարձությունը:

Այսպիսով, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման վերջնական որոշումը կայացվեց 1999 թ. նոյեմբերի 18-ին ԵԱՀԿ Ստամբուլյան զազաթաժուրդի ժամանակ: Հավելենք, որ 3.7 միլիարդ դոլար արժողությամբ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի ամբողջ երկարությունը կազմում է 1,760 կիլոմետր: Նավթամուղի կառուցման համար «Բրիքիշ Գեթրոլիում» գլխավորությամբ Լենդգետիկ ընկերությունների կողմից ստեղծվեց կոնորգիում: «Բրիքիշ

<sup>417</sup> Литературная газета, 16.02.1994.

<sup>418</sup> Независимая Газета, 11.10.1995.

<sup>419</sup> www.btc.com.tr.

<sup>420</sup> Гусейнов В., նշվ. աշխ., էջ 281, Zaman, 30.10.1998; Mustafa Aydın, New geopolitics of Central Asia and the Caucasus..., p. 29.

<sup>421</sup> Yeni Yüzyıl, 31.10.1998.

<sup>422</sup> Financial Times, The Guardian, International Herald Tribune, 30.10.1998.

<sup>423</sup> Hürriyet, 19.11.1999; Robert Ebel and Rajan Menon, նշվ. աշխ., էջ 10; Mehmet Bardakçı, նշվ. աշխ., էջ 11:

<sup>424</sup> Stephen Kinzer, Caspian lands Back a Pipeline Pushed by West, The New York Times, 19.11.1999.

<sup>425</sup> Zeyno Baran, նշվ. աշխ., էջ 107:

Փեթրոլիում» նավթային հսկան հանդիսանում է նավթամուղի օպերատորը: Նրան է պատկանում նաև նավթամուղի բաժնետոմսերի 30.1%-ը: Նավթամուղի կառուցման աշխատանքները սկսվեցին 2002 թ. սեպտեմբերին:

Այսպիսով նշենք, որ Թուրքիան բազմաթիվ աշխարհաքաղաքական և տնտեսական պատճառներով շահագրգռված է Բաքու-Թբիլիսի-Տեյիան նավթամուղի գործարկմամբ: Թուրքիան հույս ունի նավթամուղի գործարկումից հետո տարեկան 140-200 միլիոն դոլար ստանալ տրանզիտից և շահագործումից, իսկ 16 տարի հետո նավթամուղից իր եկամուտները հասցնել մինչև 300-400 միլիոն դոլարի: Թուրքիան, օգտվելով իր աշխարհագրական նպաստավոր դիրքից, հույս ունի ոչ միայն էլ ավելի ամրապնդել տնտեսական և ռազմական համագործակցությունը Ադրբեյջանի և Վրաստանի հետ, որն իրեն թույլ կտա ուժեղացնել իր ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջանում, այլ նաև օգտագործել այն Եվրամիության հետ հարաբերություններում: Այս կապակցությամբ Ստամբուլի Բիլգի համալսարանի էներգետիկ և արտաքին քաղաքականության հարցերով փորձագետ Գարեթ Վինրոուն նշել էր, որ Եվրամիությունը, որը ցանկանում էր ընդլայնել իր ռեսուրսները և կառուցել նոր նավթամուղներ, 2000 թ. իր էներգետիկ քաղաքականության փաստաթղթում Թուրքիան մատնանշել էր, որպես էներգետիկ միջանցք: Այսպիսով, Թուրքիայի, ԵՄ և ԱՄՆ շահերն այս հարցում համընկնում էին, և թուրք պաշտոնյաները կարող էին օգտվել այդ հանգամանքից<sup>426</sup>:

Չարավային Կովկասը և մասնավորապես կասպիական ավազանը հարուստ են նաև գազի հսկայական պաշարներով: Չատկանշական է, որ Կասպից ծովի առափնյա երկրների գազի պաշարները կազմում են մոտ 7.9 տրիլիոն խորանարդ մետր բնական գազ, որը կազմում է ամբողջ աշխարհի գազի ռեսուրսների ավելի քան 50 տոկոսը<sup>427</sup>: Սիս թե ինչու կասպիական ավազանի ռեսուրսների արտահանման ուղիների շուրջ լուրջ մրցակալքար է ընթանում Թուրքիայի, ԱՄՆ, Ռուսաստանի, Իրանի և Չինաստանի միջև:

Թուրքիան, օգտվելով իր նպաստավոր աշխարհագրական դիրքից, փորձում էր հանդիսանալ տարածաշրջանի էներգետիկ կենտրոն, ուստի հսկայական ջանքեր էր գործարկում նաև կասպիական գազամուղների կառուցման շուրջ պայքարում: Մասնավորապես, Թուրքիան ջանում էր, որ Կասպից ծովի գազի ռեսուրսների արտահանման ուղիներն անցնեին իր տարածքով, որը ոչ միայն կմեծացներ Թուրքիայի դերակատարությունը տարածաշրջանում և կապահովեր հսկայական ֆինանսական եկամուտներ, այլ նաև կնպաստեր Թուրքիայի էներգետիկ պահանջների բավարարմանը, քանզի, եթե 2000 թ. Թուրքիան ներմուծում էր իր էներգետիկ պահանջների 60 տոկոսը, ապա 2010 թ. էներգետիկ ներմուծումների ծավալները հասնելու են 70 տոկոսի, իսկ 2030 թ.<sup>428</sup> 80 տոկոսի<sup>429</sup>: Սիս թե ինչու Թուրքիան մեծապես շահագրգռված է գազացնելու իր հարաբերությունները կասպիական տարածաշրջանի և Մերձավոր Արևելքի էներգակիրներ արտահանող երկրների հետ և լրջորեն ներգրավվելու կասպիական ավազանի շուրջ ընթացող մրցակալքարին: Չատկանշական է, որ 1999 թ. Ս. Դեմիրելը, անդրադառնալով Թուրքիայի էներգետիկ կախվածությանը, նշել էր, որ էներգետիկ կախվածությունը և տարեցտարի աճող պահանջները բավարարելու համար Թուրքիան հաջող 20 տարիների ընթացքում էներգետիկ ոլորտում պետք է ներդրեր 130 միլիարդ դոլար<sup>426</sup>:

Թուրքիան մեծապես շահագրգռված էր Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցմամբ, ինչպես նաև մեծ հույսեր է կապում տրանսկասպիական գազամուղի գաղափարի իրագործման հետ, համաձայն որի, Կենտրոնական Ասիայի գազը Կասպից ծովի հատակով և Ադրբեյջանի տարածքով հասնելու էր Թուրքիա: Ակնհայտ է, որ այս նախագծերը հիմնականում նպատակ էին հետապնդում ոչ միայն թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում, այլև նվազեցնել ռուսական «Գազպրոմի» մասնաբաժինը Կենտրոնական Ասիայի գազի շուկայում:

<sup>428</sup> Energy – Through Great Cooperation, Not the 'Great Game'. - PULSE of Turkey №3, 13 May 1998; Mert Arslanalp, Global trends and Turkey's energy policy series: Demand and supply for energy resources, 2006, [www.dspolitikaforumu.org/component/option,com\\_docman/task,doc\\_view/gid,24/](http://www.dspolitikaforumu.org/component/option,com_docman/task,doc_view/gid,24/).

<sup>429</sup> Mehmet Ögütçü, Caspian Energy "Poker Game" and Turkey: Prospects For a New Approach, the CEPMLP Internet Journal, Volume 8, Abstract 5, April 2001, [www.dundee.ac.uk/cepmlp/journal/html/vol8/vol8-5.html](http://www.dundee.ac.uk/cepmlp/journal/html/vol8/vol8-5.html).

<sup>426</sup> Associated Press, 25.05.2005.

<sup>427</sup> Lester W. Grau, Hydrocarbons and a New Strategic Region: The Caspian Sea and Central Asia, Foreign Military Studies Office, Fort Leavenworth, KS, [www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm](http://www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm).

Բաբու-Թրիխի-Էրզրում գազամուղը, որը հայտնի է նաև հարավկովկասյան գազամուղ անվամբ, սկիզբ է առնում Կասպից ծովի Արդեբեյհան պատկանող Շահ Դենիզ գազի հանքավայրից, այնուհետև անցնելով Վրաստանի տարածքով, հասնում է Թուրքիայի Էրզրում քաղաք, որտեղ միանում է բուրքական գազամուղային համակարգին: Անհրաժեշտ է հիշատակել, որ Շահ-Դենիզ հանքավայրը հանդիսանում է կասպիական ավազանի ամենախոշոր գազի պաշարներ ունեցող հանքավայրերից մեկը, որի գազի ռեսուրսները կազմում են ավելի քան 800 միլիարդ խորհանարդ մետր բնական գազ և 200 միլիոն տոննա խտացված գազ: Մեկ միլիարդ դոլար արժեքող գազամուղի երկարությունը կազմում է 1000 կիլոմետր: Գազամուղն ունենալու է տարեկան նախնական 1.5 միլիարդ խորհանարդ մետր տարողություն: Բացի այդ, նախատեսվում է 2009 թ. հասցնել մինչև 8 միլիարդ խորհանարդ մետրի<sup>430</sup>:

Բաբու-Թրիխի-Էրզրում գազամուղի կառուցման համար «Բրիքիշ Փեթրոլիում» և «Ստասոյլ» ընկերությունների գլխավորությամբ ստեղծվեց կոնսորցիում, որի պայմանագիրը կնքվեց 1996 թ. հունիսի 4-ին Բաբվում: Հավելենք, որ վերոհիշյալ երկու ընկերություններին է պատկանում կոնսորցիումի բաժնետոմսերի տոկոսը՝ յուրաքանչյուրին 25.5%: Բաբու-Թրիխի-Էրզրում գազամուղի աշխատանքները սկսեցին 2002 թ. վերջերին<sup>431</sup>:

Շահ-Դենիզ նախագծի իրագործման կարևորագույն համաձայնագրերից էր 2001 թ. մարտի 12-ին Անկարայում Ադրբեյջանի ու Թուրքիայի միջև ստորագրված համաձայնագիրը, համաձայն որի, 2004-2018 թթ. Շահ-Դենիզ հանքավայրից Թուրքիա է մատակարարվելու 89.2 միլիարդ խորհանարդ մետր գազ՝ 1000 խորհանարդ մետր գազի դիմաց 104 դոլար սակագնով: Համաձայնագրի ընդհանուր գումարը կազմել էր 9.28 միլիարդ դոլար: Նախատեսվում է, որ 15 տարվա ընթացքում թուրքական կողմը Ադրբեյջանից ձեռք է բերելու 82.2 մլրդ. խորհանարդ մետր գազ<sup>432</sup>: Ի հավելումն դրա, 2002 թ. մարտին Թուրքիան և Հունաստանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ կառուցելու 300 միլիոն դոլար արժողությամբ գազամուղ, ո-

րը կապելու է երկու երկրները միմյանց, ինչի արդյունքում կասպիական տարածաշրջանի բնական գազը հասնելու է Եվրամիության սպառողներին<sup>433</sup>:

Բաբու-Թրիխի-Էրզրում նախագծի իրագործման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ 2001 թ. սեպտեմբերի 29-ին Ադրբեյջանի և Վրաստանի նախագահների կողմից կասպիական ավազանի գազի պաշարների լայնամասշտաբ շահագործումը խթանելու նպատակով ստորագրված տրանզիտային համաձայնագիրը, որի գլխավոր նպատակն էր՝ կարգավորել Շահ-Դենիզ հանքավայրի գազի ռեսուրսների դեպի Թուրքիա փոխադրելու և վաճառելու շուրջ առկա հիմնական հարցերը:

Անդրադառնալով Կասպից ծովի գազի պաշարների արտահանման ուղիների շուրջ ընթացող մրցապայքարին՝ անհրաժեշտ է հիշատակել նաև տրանսկասպիական գազամուղը: 90-ականների կասպիական գազի արտահանման ուղիների շուրջ մրցապայքարում կարևոր դերակատարություն ստացավ Թուրքմենստանը, որն ունենալով գազի հսկայական պաշարներ՝ հայտնվեց կասպիական ավազանի շուրջ ընթացող մրցապայքարի կիզակետում, քանզի ինչպես Արևմուտքը՝ հատկապես Միացյալ Նահանգները և նրա դաշնակից Թուրքիան, այնպես էլ Ռուսաստանը մեծ ջանքեր էին գործադրում թուրքմենական գազը ի նպաստ իրենց շահերի օգտագործելու համար: Տրանսկասպիական գազամուղի կառուցման մեջ հետաքրքրություն էր ցուցաբերում ԱՄՆ-ը, որը քանակապես էր թուրքմենական գազը արտահանել Եվրոպա Թուրքիայի տարածքով՝ շրջանցելով ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Իրանը: Ուստի պատահական չէ, որ տրանսկասպիական գազամուղի կառուցման գաղափարը 1996 թ. առաջ քաշվեց ԱՄՆ կողմից, որի իրականացման համար ԱՄՆ Անետրի և Զարգացման Գործակալությունը «Երոն» ընկերությանը հատկացրեց 750 հազար դոլար Թուրքմենստանից Ադրբեյջան բնական գազամուղի կառուցման համար անհրաժեշտ հետազոտություններ կատարելու համար<sup>434</sup>:

Թուրքիան նույնպես հսկայական շահագործվածություն էր ցուցաբերում թուրքմենական գազին: 1999 թ. մայիսի 21-ին Թուրքիան և Թուրքմենստանը ստորագրեցին 30-ամյա համաձայնագիր, համա-

<sup>430</sup> Mehmet T. Bilgich, On Both Sides of the Bridge – BOTAS,

[www.caspenenergy.com/23/2004-02-01-02e.htm](http://www.caspenenergy.com/23/2004-02-01-02e.htm).

<sup>431</sup> Гусейнов В., 02լ, աշխ., էջ 332:

<sup>432</sup> Жильцов С.С., Зонин И.С., Ушаков А.М., 02լ, աշխ., էջ 117:

<sup>433</sup> [www.eia.doc.gov/emew/cabs/caspase.html](http://www.eia.doc.gov/emew/cabs/caspase.html).

<sup>434</sup> Ibid.

ծայն որի, 2002 թ. սկսած 30 տարվա ընթացքում թուրքիան թուրք-մենստանից ստանալու էր մոտ 565 միլիարդ խորանարդ մետր գազ, որը արտահանվելու էր նաև Եվրոպա:

Ի հավելումը վերոհիշյալ համաձայնագրի, 1999 թ. նոյեմբերի 18-ին ԵԱԴ ստանդուլյան գազաթափողովի շրջանակներում թուրքիան, Ադրբեջանը, Վրաստանն ու թուրքմենստանը ստորագրեցին միջկառավարական հռչակագիր, որը իրավական հիմք հանդիսացավ տրանսկասպիական գազամուղի (TCGP) կառուցման համար: Դռչակագրի համաձայն, կառուցվելիք գազամուղը սկիզբ էր առնելու թուրքմենստանից, այնուհետև անցնելով Ադրբեջանի և Վրաստանի տարածքով՝ հասնելու էր Թուրքիա, որտեղից էլ հետագայում նախատեսվում էր թուրքմենական գազը արտահանել Եվրոպական շուկա<sup>435</sup>:

1999 թ. փետրվարին թուրքմենստանի նախագահ Սափարուդուղա Նիյազովը «Բեյթել և Ջեներալ էլեկտրիկ» և «Ռոյալ Դաչ/Շելլ» ընկերությունների գլխավորությամբ ստեղծված գազամուղի կառուցման հետազոտական աշխատանքներն իրականացնող միջազգային կոնսորցիումին (PSG) տրամադրեց 1 տարվա մանդատ՝ տրանսկասպիական գազամուղի կառուցման համար իրատեսակներ նախագիծ մշակելու համար: Դատկանշակաճ է, որ թուրքմենստանը ցանկանում էր տրանսկասպիական գազամուղով տարեկան արտահանել 30 միլիարդ խորանարդ մետր գազ, որից 16 միլիարդ խորանարդ մետր գազը գնալու էր թուրքական շուկա, իսկ 14 միլիարդ խորանարդ մետրը թուրքիայի տարածքով՝ Եվրոպա<sup>436</sup>: Այնուամենայնիվ, մոտ 2-3 միլիարդ դոլար գնահատվող տրանսկասպիական գազամուղի իրականացման գործընթացները հանդիպեցին լուրջ խոչընդոտների, ինչի արդյունքում գազամուղի կառուցման նախագծի ապագան հայտնվեց անորոշության մեջ: Գլխավոր խոչընդոտներից մեկն այն էր, որ թուրքմենստանի և միջազգային կոնսորցիումի միջև վճարների և գազի գների շուրջ ընթացող բանակցությունները 2000 թ. հայտնվեցին փակուղու մեջ, որի հետևանքով 2000 թ. հոկտեմբերին նախագծի համակարգող «Ռոյալ Դաչ/Շելլ» ընկերությունը փակեց իր գրասենյակը թուրքմենստանում:

Բացի այդ, վերոհիշյալ նախագիծը հանդիպեց Ռուսաստանի և Իրանի լուրջ հակադեցուքյանը, որոնք ցանկանում էին թուրքմենական գազը արտահանել սեփական տարածքներով: Դատկանշակաճ է, որ տրանսկասպիական գազամուղի կառուցման գաղափարին հսկայական հարված հասցրեց Ադրբեջանը, որն իր Շահ-Ղենիզ համբավարումն հայտնաբերելով գազի մեծ պաշարներ՝ որոշեց արտահանել իր սեփական գազը թուրքմենստանից անկախ: Սա հանգեցրեց նրան, որ Ա.Նիյազովը սկսեց ավելի սերտ բանակցություններ վարել Ռուսաստանի հետ թուրքմենական գազը ՌԴ-ի տարածքով արտահանելու համար, որի արդյունքում թուրքմենստանի և Ռուսաստանի «Գազպրոմ» ընկերության միջև ստորագրվեց երկարամտակետ գազամատակարարման համաձայնագիր, ինչն ըստ էության նշանակում էր տրանսկասպիական գազամուղի գաղափարի ավարտը<sup>437</sup>:

Այս համատեքստում հիշատակման է արժանի այն փաստը, որ 2000 թ. փետրվարին թուրքմենստանի նախագահը խիստ քննադատության ենթարկեց ԱՄՆ Դատուկ բանագնացին՝ նրան մեղադրելով թուրքմենստանի և Ադրբեջանի միջև բանակցությունները ձախողելու, ինչպես նաև գազամուղի կառուցման շուրջ ընթացող բանակցությունները ձգձգելու մեջ<sup>438</sup>: Նշենք, որ 2001 թ. փետրվարին Ռուսաստանն ու թուրքմենստանը վերջնական փոխհամաձայնության եկան թուրքմենական գազը Ռուսաստան մատակարարելու հարցի շուրջ, համաձայն որի Ռուսաստան էր մատակարարվելու 10 մլրդ, խորանարդ մետր գազ՝ 1000 խորանարդ մետրը 40 դոլարի արժույթյամբ<sup>439</sup>:

Այնուամենայնիվ, Նշենք, որ տրանսկասպիական գազամուղի կառուցման նախագիծը հետագայում բավականին հնարավորություններ ունի կյանքի կոչվելու: 2001 թ. հոկտեմբերին Ադրբեջանն ու թուրքմենստանը վերակսեցին բանակցությունները նրա կառուցման շուրջ: Բացի այդ, ԱՄՆ շարունակում է սկզբունքորեն քաջկցել նախագիծն, ինչը նույնպես լուրջ խթան կարող է հանդիսանալ նախագծի հետագա իրագործման համար: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Ռուսաստանի Արդյունաբերության և էներգետիկայի նախարար Վ. խրիստենկոն 2001 թ. հայտարարել էր, որ տրանսկասպիական հա-

<sup>435</sup> Hürriyet, 19.11.1999.

<sup>436</sup> Mehmet Ögütçü, Caspian Energy "Poker Game" and Turkey: Prospects For a New Approach, the CEPMLP Internet Journal, Volume 8, Abstract 5, April 2001, www.dundee.ac.uk/cepmlp/journal/html/vol8/vol8-5.html.

<sup>437</sup> Andrew Neff, Is the Trans-Caspian Gas Pipeline Plan Dead or Just Premature?, www.watan.ru/eng/view.php?noomer=1147&razid=new\_nov\_en&pg=21.

<sup>438</sup> www.eia.doe.gov/emcu/cabs/caspase.html.

<sup>439</sup> Жильцов С.С., Зонин И.С., Ушаков А.М., 02վ. աշխ., էջ 141:

մակարգի իրագործումը հնարավոր է կատարել ավագանի կարգավիճակի վերջնական հստակեցումից հետո միայն, ապա ակնհայտ է, որ տրանսկասպիական զագամուղի նախագիծն ապագայում բավականին լավ հնարավորություններ ունի իրագործվելու:

**4.2. ԹՈՒՐԻԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ  
ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՎՃՈՎՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱՎԵՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԸՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Սևծովյան ավազանի երկրների տնտեսական համագործակցության ստեղծման գլխավոր նախաձեռնողներից էր Թուրքիան: ԽՍՀՄ փլուզման հետևանքով միջազգային քաղաքականության մեջ տեղի ունեցող արժանապատիվ փոփոխությունների պայմաններում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը թևակոխեց որակական նոր փուլ: Օգտվելով իր երկրի նպաստավոր աշխարհագրական և ռազմավարական դիրքից՝ թուրքական կառավարությունը ձգտում էր ընդլայնել իր երկկողմ և բազմակողմ տնտեսական կապերը տարածաշրջանի երկրների հետ: Լինելով միաժամանակ եվրոպական, ասիական, միջերկրածովյան և սևծովյան երկիր՝ Թուրքիան մշտապես փորձում էր գտնվել տարածաշրջանի երկրների քաղաքական և տնտեսական համագործակցության գործընթացի կենտրոնում: Մի կողմից, նա ձգտում էր բազմակողմ տնտեսական հարաբերություններ զարգացնել Արևմուտքի հետ՝ հեռանկարում Եվրամիության լիիրավ անդամ դառնալու նպատակով, մյուս կողմից՝ թուրքական կառավարությունը աշխատանքներ էր տանում զարգացնելու համագործակցությունը Հարավային Կովկասի ու նախկին ԽՍՀՄ մահմեդական հանրապետությունների հետ:

Ելնելով այս նկատառումներից՝ Թուրքիայի կառավարությունը հանդես եկավ Սևծովյան տնտեսական Համագործակցության (ՄՕՏՀ) ստեղծման նախաձեռնությամբ:

ՄՕՏՀ-ի՝ որպես տարածաշրջանային տնտեսական համագործակցության կառուցվածքի հեռանկարների վերաբերյալ թուրքական փորձագետներն ու գործարար շրջանները բավական լավատեսորեն էին տրամադրված: Մասնավորապես, Թուրքիա-ՄԴՀ գործարար խորհուրդների նախագահ Ն. Գյոքլիլիթը գտնում էր, որ ՄՕՏՀ-ն իրա-

կան ծրագիր է և ունի մի շարք նախադրյալներ հաջողության հասնելու համար: Նա մասնավորապես նշել էր. «Սևծովյան ավազանն իր բազմաթիվ նավարկելի գետերով և հարդրակցությունների լայն ցանցով եզակի է աշխարհում: Տարածաշրջանը բավականաչափ հարուստ է էներգակիրներով և բնական պաշարներով՝ մասնավորապես նավթով, բնական գազով և այլ ռեսուրսներով: Բացի այդ, մասնակից երկրներն ունեն մեծ ազգաբնակչություն և սեփական ընդարձակ շուկաներ, որոնք կարող են ինտեգրվել Սերժավոր և Միջին Արևելքի, Միջին Ասիայի և Եվրոպայի կարևոր շուկաների հետ, որոնք իրենց հեղինակապետներն իտալո գերդրուսներ մի շարք ոլորտներում»<sup>440</sup>:

Թուրքիան 1990 թ. ընթացքում մի շարք բարձր մակարդակի հանդիպումներ ունեցավ Բուլղարիայի, Ռուսիայի և նախկին ԽՍՀՄ ղեկավարների հետ: Դրանց արդյունքը եղավ Նշված երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպումը Անկարայում 1990 թ. դեկտեմբերի 19-21-ը: Այդ հանդիպման ժամանակ, որտեղ ԽՍՀՄ-ը ներկայացնում էին ՌԴ, Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի պատվիրակությունները, որոնց ավելի ուշ միացան Հայաստանն ու Ադրբեջանը, սկզբունքային համաձայնություն էր ձեռք բերվել Սևծովյան ավազանի երկրների միջև տնտեսական համագործակցության կազմակերպման շուրջ<sup>441</sup>:

Անկարայի հանդիպումը սկիզբ դրեց Սևծովյան ավազանի երկրների տնտեսական համագործակցության ձևավորման գործընթացին: 1992 թ. փետրվարի 3-ին Մոսմաբուլում կայացավ ՄՕՏՀ արտգործնախարարների հանդիպումը, որի ժամանակ որոշվեց ՄՕՏՀ հիմնադիր անդամներ հռչակել Ադրբեջանին, Բուլղարիային, Թուրքիային, ԴՀ-ին, Մոլդովային, Ռուսաստանին, Ուկրաինային և Ռուսիային: Բուսն վեճ էր ծագել Հունաստանին, որպես Համագործակցության հիմնադիր անդամ ընդունելու շուրջ: Ի վերջո որոշվել էր Հունաստանին և Հարավսլավիային այդ իրավունքը վերապահել, եթե վերջինները պաշտոնական դիմում ներկայացնեին մինչև 1992 թ. մայիսը: Այն բանից հետո, երբ Հունաստանի կառավարությունը Նշված ժամկետում համապատասխան դիմում ներկայացրեց, այս երկրի անդամակցության հարցը լուծվեց դրականորեն:

<sup>440</sup> Turkish Daily News, 23.06.1992.

<sup>441</sup> www.mfa.gov.tr/grupa/af/Bsec7.htm.

Այս համատեքստում բավականին ուշագրավ էր Ալբանիայի ՄՕՏԳ-ի հիմնադիր անդամ դառնալը, որի գլխավոր ջատագովը թուրքիան էր: Մասնավորապես, թուրքիան, ճերմարվելով մասնաշաղկապ Ալբանիային, ցանկանում էր ՄՕՏԳ-ում ամրապնդել իր դիրքերը՝ մասնաշաղկապ երկրներին հեծարան դարձնելով: Ուստի Տիրանա կատարած իր պաշտոնական այցի ընթացքում թուրքիայի վարչապետ Սուլեյման Ղեմիրլին Ալբանիային առաջարկեց ընդգրկվել ՄՕՏԳ-ի մեջ՝ որպես հիմնադիր անդամ: Ալբանիայի անդամակցության հարցը դրական լուծում ստացավ 1992 թ. հունիսի 24-25-ին Ստամբուլում կայացած ՄՕՏԳ զագաթաժողովում, որտեղ և ստորագրվեց ՄՕՏԳ Գոչակագիրը և 11 երկրների ղեկավարների համատեղ «Բուսֆորյան հայատարաբությունը»: Այսպիսով, ՄՕՏԳ հիմնադիր անդամներ դարձան Ալբանիան, ԳՅ-ն, Ադրբեջանը, Բուլղարիան, Վրաստանը, Դունաստանը, Մոլդովան, ՌԴ-ն, թուրքիան, Ուկրաինան և Ռումինիան<sup>442</sup>:

ՄՕՏԳ ձևավորման գործընթացի շրջանակներում կարևոր իրադարձություններից էին 1994 թ. Ստամբուլում ՄՕՏԳ մշտական քարտուղարության հիմնումը, մեկ միլիարդ դոլար կապիտալով Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի հիմնադրումը Մալդոնիլում, ինչպես նաև վիճակագրական, տնտեսական և վերլուծական տվյալների փոխանակման համար Անկարայում ՄՕՏԳ համակարգող կենտրոնի ստեղծումը<sup>443</sup>: Հավելենք, որ ՄՕՏԳ-ն, որպես տարածաշրջանային տնտեսական կազմակերպություն իր իրավական կարգավիճակը ստացավ 1998 թ. հունիսի 5-ին Յաթբայում անցկացված ՄՕՏԳ զագաթաժողովի շրջանակներում անդամ-երկրների կողմից ՄՕՏԳ նոր Գոչակագրի ստորագրումից հետո, որով իրավական հիմք և հնարավորություններ ստեղծվեցին ինտենսիվորեն համագործակցել մյուս տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ: 1999 թ. մայիսի 1-ին ավարտվեց ՄՕՏԳ-ի որպես տարածաշրջանային կազմակերպության ձևավորման գործընթացը<sup>444</sup>:

<sup>442</sup> Борисенко Е.Н., Кононенко А.П., Семененко И.В., Экономическое сотрудничество-от региональной инициативы к международной организации, Стамбул, 1998, с. 4.

<sup>443</sup> Mustafa Aydın, Regional Cooperation in the Black Sea and the Role of Institutions. - Perceptions: Journal of International Affairs, Volume X, Autumn 2005, pp. 64-66.

<sup>444</sup> Breffni O'Rourke, East: New Black Sea Organization Sets Sail, RFE/RL, 11 June 1998, <http://www.b-info.com/places/Bulgaria/news/98-06/jun11a.rfe>; [www.mfa.gov.tr/grupa/af/bsec10.htm](http://www.mfa.gov.tr/grupa/af/bsec10.htm).

Մի շարք երկրներ, ինչպիսիք են Ավստրիան, Եգիպտոսը, Իսրայելը, Իտալիան, Լեհաստանը, Սլովակիան, Թունիսը, ինչպես նաև Ֆրանսիան, Գերմանիան և Եվրոպական Ենթաշտիկ խարտիան, դիմեցին ՄՕՏԳ-ին և իրավունք ստացան մասնակցելու ՄՕՏԳ աշխատանքներին դիտորդի կարգավիճակով<sup>445</sup>: Սա վկայում է ՄՕՏԳ-ի, որպես լուրջ տարածաշրջանային կազմակերպության փաստի մասին:

Անդադառնալով ՄՕՏԳ ստեղծման թուրքիայի հետապնդած նպատակներին՝ անդամեշտ է մշել, որ 90-ականների սկզբին թուրքիան ակտիվորեն փորձում էր ներթափանցել նախկին խորհրդային մի շարք հանրապետություններ և օգտվելով ստեղծված նպաստավոր հնարավորությունից՝ ջանում էր ընդլայնել իր ազդեցությունը հետխորհրդային տարածաշրջանում՝ մասնավորապես Սևծովյան ավազանում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում, ինչը հանգեցրել էր լուրջ տարածաշրջանային թուրքիայի և Ռուսաստանի միջև, քանզի ՌԴ-ն հետխորհրդային տարածաշրջանում ուներ բավականին լուրջ ազնակարգական շահեր: Բացի այդ, թուրքիայի գլխավոր նպատակներից էր հետխորհրդային նորանկախ հանրապետություններ արտահանել իր սեփական գաղափարները և օգտագործել դրանք մշակութային և տնտեսական հարաբերությունների ամրապնդման գործում<sup>446</sup>:

Թուրքական կառավարությունը նաև գիտակցում էր, որ ԽՍՀՄ փլուզմանը աշխարհում տեղի ունեցող արմատական փոփոխությունները չէին նվազեցրել թուրքիայի ռազմավարական նշանակությունը Արևմուտքի համար: Արևմտյան տերությունները սկսել էին դիտարկել թուրքիային իբրև մասնաշաղկապ արմատականության տարածումը զգալի գործոնի և Գաբալային Կովկաս ու Կենտրոնական Ասիա ներթափանցման ցատկահարթակի: Վերջինիս կարևոր դեր էր հատկացվում նաև մշված տարածաշրջաններում Ռուսաստանի ազդեցության թուլացման գործում:

Թուրքիան օգտագործեց նաև այն հանգամանքը, որ իր դիմամիկ և հիմնականում արտահանման վրա հիմնված տնտեսությամբ նա կարող էր շահավետ գործընկեր լինել ԱՊՅ-ի ու Արևելյան Եվրոպայի երկրների համար և օգտվելով այդ երկրների տնտեսության կազմա-

<sup>445</sup> Галжиев К.С., նշվ. աշխ., էջ 363; Mustafa Aydın, Regional Cooperation in the Black Sea... p. 62:

<sup>446</sup> Yannis Valinakis, The Black Sea Region: Challenges and Opportunities for Europe. - Institute for Security Studies of WEU, 1999, p. 15.

լուծված լինելու հանգամանքից՝ ստանձնել առաջնորդի դերը տարածաշրջանային համագործակցության մեջ: Այս համատեքստում բավական հետաքրքիր է հնչում Ա. Դեմիրելի հայտարարությունն այն մասին, թե ոչ ոք չի կարող թեկուզ մի քայլ կատարել Բալկաններում, Կովկասում և Եվրոպայում առանց Թուրքիայի գիտության, և Թուրքիայի նախկին նախագահ Թ. Օզալի այն միտքը, որ եթե կուպիտ սխալներ թույլ չտրվեն, ապա 21-րդ դարը կպատկանի Թուրքիային<sup>447</sup>: Թուրքիան ծգտում էր ՍՃՏ-ում առաջատարի դեր ստանձնել: Ուստի պատահական չէր, որ ՍՃՏ-ի ստեղծումն ու զարգացումը հանդիսանում էր թուրքական դիվանագիտության կարևոր ուղղություններից մեկը, այլ խնդիրների հետ մեկտեղ, որոնց վերջնական նպատակը Թուրքիան տարածաշրջանի առաջատար պետության վերածելն էր:

Այժմ անդրադառնանք ՍՃՏ շրջանակներում Թուրքիայի և Չառավային Կովկասի երկրների հարաբերություններին: Գ-ի տեսակետից բավականին շահեկան է ՍՃՏ անդամ հանդիսանալը, քանզի լինելով ՍՃՏ հիմնադիր անդամ՝ Գ-ն օգտագործում է այն՝ չեզոքացնելու իր աշխարհագրական մեկուսացումը տարածաշրջանում: Գ-ն, չունենալով անմիջական ելք դեպի ծով և լարված հարաբերություններ ունենալով Թուրքիայի և Ադրբեջանի հետ, Սևծովյան տնտեսական կազմակերպության շրջանակներում փորձում է ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային համագործակցության գործունեությանը՝ պահանջելով բացել տրանսպորտային ուղիները և տարածաշրջանում ստեղծել ազատ ապրանքաշրջանառության հնարավորություններ:

Զմայած 1993 թ. ապրիլից Թուրքիան Թուրք հետազոտողների և վերլուծաբանների, նույնիսկ փակ ասիանների և ուղղակի շփումների բացակայության պայմաններում, Թուրքիայի և Գ-ի միջև առևտուր գոյություն ունի: Տարեկան ապրանքաշրջանառությունը կազմում է մոտ 70-150 մլն. դոլար, որի գերակշիռ մասը կազմում է Թուրքիայից ներմուծումը<sup>448</sup>:

Թուրքիայի միջև Գ-ի և Թուրքիայի միջև դիվանագիտական և առևտրատնտեսական հարաբերությունների բացակայության պայմաններում ՍՃՏ-ն այն վայրն է, որտեղ հայ-թուրքական շփումները բնականոն ընթացք են կրում, և Գ-ն կազմակերպության շրջանակներում ջանքեր է գործադրում ակտիվացնել Գայաստան-Թուրքիա շփումները և բարելավել երկկողմ հարաբերությունները: Գայ-թուրքական հարաբերությունների բարելավման նպատակով 1995 թ. հոկտեմբերի 18-21-ը Գ Լզգային ժողովի նախագահ, ՍՃՏ հորիորդարանական Վեհաժողովի նախագահող Բաբկեն Արարեցյանը պաշտոնական այցով մեկնեց Թուրքիա, որի ընթացքում նա մի շարք պաշտոնական հանդիպումներ ունեցավ Թուրքիայի քաղաքական և գործարար շրջանակների, ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչների հետ<sup>449</sup>:

Թուրքական լրատվամիջոցների հետ հանդիպման ժամանակ, անդրադառնալով Թուրքիայում իր ունեցած հանդիպումների արդյունքներին և հայ-թուրքական հարաբերություններին, Բ. Արարեցյանը մասնավորապես նշեց. «Մենք անշուշտ պատմությունը չենք մոռանում, սակայն սխալ է պետական քաղաքականությունը կառուցել պատմության վրա: Երկխոսության գործընթացում մենք կարող ենք գտնել ճշմարտությունը: Թե՛ Թուրքիայի, և թե՛ Գայաստանի ժողովուրդները կսովորեն պատմությունը միասնաբար արժեքավորել: Մենք պաշտպանում ենք այն տեսակետը, ըստ որի երկու երկրների սահմանները պետք է բացվեն: Մեր նպատակն է՝ խթանել հարաբերությունները ժամ առ ժամ»<sup>450</sup>:

Թուրքիան 90-ականներին որոշակի շահագրգռվածություն էր ցուցաբերում Թուրքիայի և Գ-ի միջև դիվանագիտական երկխոսության ակտիվացմամբ: ՍՃՏ շրջանակներում հայ-թուրքական շփումները Թուրքիան դիտում էր որպես այդ քաղաքականության կարևոր բաղադրիչներից մեկը: Ուստի պատահական չէր, երբ 1995 թ. նոյեմբերի 26-29-ին Բ. Արարեցյանը ՍՃՏ հորիորդարանական Վեհաժողովի վեցերորդ լիագումար նստաշրջանին մասնակցելու նպատակով ժամանեց Թուրքիա, թուրքական մամուլը լայնորեն լուսաբանեց ինչպես նստաշրջանը, որն ի պաշտոնե նախագահում էր Բաբկեն Արարեցյանը, այնպես էլ Գ Լժ նախագահի երկկողմ հանդիպումները:

<sup>447</sup> Turkish Daily News, 05.06.1992.

<sup>448</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Գультекин Б., Турция-Южный Кавказ: анализ современной ситуации, Южный Кавказ: региональная безопасность и стабильность. - Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой. Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, 2004, сс. 62-63.

<sup>449</sup> Ազգ., 19.10.1995:

<sup>450</sup> Ազգ., 25.10.1995:

1995 թ. նոյեմբերի 28-ին ՍԱՄԺ-ի նախագահ Իսմեթ Սեզգինը հանդիպեց Բ. Արարքյանի հետ: Հանդիպման ընթացքում ընձարկվեցին ՍՕՏՅ ինչպես խորհրդարանական վեհաժողովի, այնպես էլ Ռուրբիա-Պայաստան փոխարքեպիսկոպոստներին առնչվող հարցեր: Ըստ Ռուրբիայում լույս տեսնող «ժամանակ» օրաթերթի, կողմերը, կարևորելով ՍՕՏՅ շրջանակներում միջխորհրդարանական համագործակցությունը, անդրադարձան Ռուրբիա-Պայաստան հարաբերություններին՝ ընդգծելով, որ դրանք պետք է լինեն բարիդասցիական և փոխշահավետ: Իսմեթ Սեզգինը գոհունակություն հայտնեց, որ հայկական պատվիրակությունը Ռուրբիա էր մուտք գործել Կարսի սահմանային դռնից, իսկ Արարքյանը հույս հայտնեց, որ ապագայում այդ դուռը լայն կբացվի երկկողմանի երթևեկության համար<sup>451</sup>:

Նույն օրը Չանկայա պալատում, վեհաժողովին մասնակից պատվիրակությունների ղեկավարներին՝ Բ. Արարքյանի գլխավորությամբ, ընդունեց Ռուրբիայի նախագահ Ս. Դեմիրելը և ընդգծելով ՍՕՏՅ-ի կարևորությունը տարածաշրջանային աշխատանքներին: Իր գլխավորած պատվիրակության անունից Բ. Արարքյանը շնորհակալություն էր հայտնել վեհաժողովի աշխատանքների համար ստեղծված նպաստավոր պայմանների համար և շեշտել էր այդ աշխատանքների կարևորությունը տարածաշրջանի կայունության և տնտեսական համագործակցության տեսանկյունից<sup>452</sup>:

Հայ-թուրքական հարաբերությունները զարգացնելու և երկկողմ հարաբերություններում առկա խնդիրները ընձարկելու նպատակով 1997 թ. փետրվարի 7-ին Ստամբուլում ՍՕՏՅ անդամ երկրների ԱԳ նախարարների հանդիպման ժամանակ տեղի ունեցավ Ռուրբիայի ԱԳ նախարար Թանուր Չիլլերի և ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանի հանդիպումը: Հանդիպման ընթացքում անդրադառնալով երկկողմ հարաբերությունների տարելավման հարցին՝ Ռուրբիայի ԱԳ նախարարը հայ-թուրքական հարաբերությունների զարգացումը կրկին անգամ կապել էր արդրեջանական գործունի հետ՝ նշելով, որ հայ-թուրքական հարաբերություններում գյուղություն ունեին մի շարք հանգամանքներ՝ մասնավորապես, հայ-արքեպեջանական հավանաբարությունը, Ռուրբիայի հասարակական կարծիքի բացասա-

կան դիրքորոշումը, որոնք բույլ չէին տալիս Ռուրբիայի կառավարությանը դիմել երկկողմ հարաբերությունները զարգացնող քայլերի: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել պարբերական հանդիպումներ անցկացնել երկու երկրների ԱԳ նախարարությունների միջև<sup>453</sup>:

Պատկանշական է, որ 90-ականների կեսերին Ռուրբիան ջանքեր էր գործադրում Սևծովյան տնտեսական կազմակերպությանը, որն ի սկզբանե ստեղծվել էր որպես առևտրատնտեսական կազմակերպություն, տալ քաղաքական երանգ՝ փորձելով այն վերածել իր քաղաքական ազդեցությունը տարածելու ոլորտի: Մասնավորապես, 1997 թ. ապրիլի 28-30-ը Ստամբուլում ՍՕՏՅ շրջանակներում տեղի էր ունեցել «Հնարավորություններ բիզնեսի համար» խորագրով խորհրդաժողով, որին մասնակցել էին ՀՀ-ի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Մոլդովայի, Կրաստանի և Ռումինիայի նախագահները և ավելի քան 400 գործարարներ:

Իր բացման խոսքում Ս.Դեմիրելը, նշելով, որ կոնֆերանսին մասնակից ՀՀ-ի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Մոլդովայի, Կրաստանի և Ռումինիայի պատվիրակությունները ներկայացված էին նախագահների մակարդակով, հայտարարել էր, որ հանդիպումը վերածվել է ՍՕՏՅ գագաթաժողովի: Այնուհետև տարածաշրջանի երկրներին խորհուրդ տալով համագործակցել տարածաշրջանային հավանաբարությունների դեմ պայքարելու համար՝ հայտարարել էր. «Մենք լիափուս ենք, որ մեր տարածաշրջանը վերածվելու է խաղաղության տարածաշրջանի և խուսափելու է վեճերի»<sup>454</sup>:

Վերոհիշյալ կոնֆերանսի շրջանակներում Ռուրբիայի նախագահը մի շարք հանդիպումներ էր ունեցել մասնակից երկրների ղեկավարների հետ՝ կոնֆերանսը վերածելով դիվանագիտական գագաթաժողովի: Լ. Տեր-Պետրոսյանի հետ հանդիպման ժամանակ Ս. Դեմիրելը հիմնականում անդրադարձել էր ԼՂ հիմնահարցին՝ ընդգծելով, որ հավանաբարության խաղաղ կարգավորումը հիմնական գրավական էր Կովկասում հարատև խաղաղության և կայունության հաստատման համար, և խորհուրդ էր տվել ՀՀ նախագահին՝ դուրս բերել հայկական գործերն Ադրբեջանից «գրավված» տարածքներից և երաշխավորել ա-

<sup>451</sup> Ժամանակ, 29.11.1995:  
<sup>452</sup> Ազգ, 30.11.1995:

<sup>453</sup> Պայաստան-Ռուրբիա. Բաց երկխոսություն. Հասարակական երկխոսության և գաղափարների կենտրոն, Երևան 2005, էջ 110-111:

<sup>454</sup> [www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintaribi/1997/nisan1997.htm](http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintaribi/1997/nisan1997.htm).

վելի քան «մեկ միլիոն գաղթականների վերադարձն իրենց բնակավայրեր»։ Այնուհետև Դեմիրիելը ԳՅ նախագահին վստահեցրել էր, որ Թուրքիան որևէ նախապաշարմունք ԳՅ-ի նկատմամբ չուներ, և որ համագործակցությունը կնպաստեր տարածաշրջանի բոլոր երկրներին<sup>455</sup>։

Գալթուրքական հարաբերությունները կարգավորելու նպատակով 1998 թ. ապրիլի 30-ին ԳՅ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ընդունեց երևանում անցկացվող ՄՕՏՅ արտգործնախարարների գագաթաժողովին մասնակցող բուրքական պատվիրակությանը, որի կազմում էին Թուրքիայի պետնախարար Ռեֆաադդին Շահինը, ԹՄՍԺ-ի պատգամավոր Ջեֆի Քամին և Թուրքիայի ԱԳև ներկայացուցիչ Անմեթ Էրոզանը։ Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրները, ԳՅ-ի և Թուրքիայի տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները և սահմանների վերաբաժանման անընթաց հարցերը<sup>456</sup>։

ԳՅ-ի և Թուրքիայի միջև առկա տարածայնությունները հաղթահարելու և երկկողմ հարաբերությունները բարելավելու նպատակով 1998 թ. հունիսի 5-ին Յաթայում անցկացվող ՄՕՏՅ անդամ երկրների նախագահների վեիստիզովի շրջանակներում տեղի ունեցավ Ա. Դեմիրելի և Ռ. Քոչարյանի հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին ինչպես հայ-թուրքական հարաբերությունները, այնպես էլ ԼՂ հիմնահարցի շուրջ ընթացող գործընթացները։ ԳՅ նախագահը, մասնավորապես, առաջարկել էր բանակցությունների ընթացքում քննարկել հայ-թուրքական հարաբերություններում առկա դժվարին խնդիրները<sup>457</sup>։

ՄՕՏՅ-ում ԳՅ-ի գործունեությունը որակական նոր փուլ բնական խեց Անժուկյան Տնտեսական Համագործակցության կազմակերպության շրջանակներում ՄՕՏՅ-ում ԳՅ մշտական ներկայացուցչության հիմնմամբ, որի հիմնական նպատակն էր ԳՅ-ի գործունեությունը արգելափակելու դարձնել, ինչպես նաև բարելավել հայ-թուրքական հարաբերությունները։ 2000 թ. սեպտեմբերի 8-12-ը ՄՕՏՅ շրջանակներում ԳՅ ներկայացուցչության հիմնման հետ կապված խնդիրների կարգավորման նպատակով Ստամբուլ է մեկնում ԳՅ ԱԳև պատվիրակությունը Անրժուկյան և Միջին Արևելքի վարչության պետ Գ. Սուպեյանի գլխավորությամբ։ Սեպտեմբերի 11-ին հայկական պատվիրակությունը

հր հանդիպում է ՄՕՏՅ գլխավոր քարտուղարի առաջին տեղակալ Թանջուլ Բլեդայի հետ, որին տեղեկացնում է ներկայացուցչություն բացելու ԳՅ-ի մտադրության մասին, ինչպես նաև քննարկում է այդ ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ քայլերը։

Հատկանշական է, որ Բլեդան նշել էր, թե իր կարծիքով տնտեսական հարցերից բացի, ԳՅ ներկայացուցչությունն ավելի կարևոր դեր կարող էր խաղալ երկու երկրների հարաբերությունների բարելավման, ժողովուրդների մոտեցման հարցերում տեղեկացնելով Թուրքիայում կատարվող իրադարձությունների մասին։ Բլեդան նաև ընդգծել էր, որ ներկայացուցչությունը դիվանագիտական կարգավիճակ էր ունենալու և Թուրքիայի կառավարությունը ավտոմեքենաների տրամադրելու էր դիվանագիտական պետհամարանիշներ<sup>458</sup>։ Հավելենք, որ 2001 թ. սեպտեմբերին ՄՕՏՅ-ում հիմնվեց ԳՅ մշտական ներկայացուցչությունը, ինչը մեծ նշանակություն ունի ոչ միայն այդ կազմակերպությունում ԳՅ-ի քաղաքականության ակտիվացման, այլև Հայաստան-Թուրքիա երկկողմանի հարաբերությունների բարելավման տեսանկյունից։

Ի տարբերություն ԳՅ-ի, Թուրքիան բավականին սերտ հարաբերություններ էր հաստատել Ադրբեջանի և Վրաստանի հետ և վերջին տասնամյակում ՄՕՏՅ շրջանակներում համատեղ իրականացրեց մի շարք նախագծեր, որոնց արդյունքում թուրքական մի շարք ընկերություններ ոչ միայն խոշոր ներդրումներ կատարեցին Ադրբեջանում և Վրաստանում, այլև բավականին լուրջ նախադրյալներ տեսնեցին թուրքական բիզնեսի հետագա ընդլայնման համար։ Ադրբեջանը, լինելով տարածաշրջանի խոշոր նավթարդյունահանող երկրներից մեկը, ՄՕՏՅ-ն մեծամասամբ դիտում էր որպես նոր նավթամուղներ կառուցելու համար նպաստավոր և Ադրբեջանի տնտեսությունում ներդրում կատարելու հիանալի հնարավորություն ընձեռնող տարածաշրջանային կազմակերպություն։ Բացի այդ, ՄՕՏՅ միջոցով Ադրբեջանը ցանկանում էր ավելի արագորեն ներգրավվել տարածաշրջանի ինտեգրման գործընթացներին<sup>459</sup>։

<sup>455</sup> www.byecgm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintarhi/1997/nisan1997.htm.

<sup>456</sup> Ազգ. 01.05.1998:

<sup>457</sup> Հայաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան 2005, էջ 111:

<sup>458</sup> ԳՅ ԱԳև, Սերժավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հաշվետվություն, 2000 թ. սեպտեմբերի 8-12-ը ԳՅ ԱԳև Սերժավոր և Միջին Արևելքի վարչության պետ Գ. Սուպեյանի գլխավորած պատվիրակության Ստամբուլ կատարված գործընթացի վերաբերյալ, էջ 2:

<sup>459</sup> Elizabeth Fuller, Between Neo-Stalinism and Democratization - Transition, vol. 2, № 18, 1996, p. 37.

Թուրք-ադրբեջանական առևտրատնտեսական հարաբերությունները ԽՍՀՄ փլուզումից հետո բավականին դինամիկ զարգացում ունեցան: Ինչպես ՄՕՏՅ շրջանակներում, այնպես էլ երկկողմ միջպետական հարաբերություններում բուրք-ադրբեջանական համագործակցությունն էապես նպաստեց երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը: Մասնավորապես, ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած տասնամյակի ընթացքում Թուրքիան դարձավ Ադրբեջանի ամենախոշոր ներդրող երկրներից մեկը, ընդ որում, Թուրքիան հանդիսանում էր Ադրբեջանի ոչ նավթային սեկտորում ամենախոշոր ներդրում կատարած պետությունը: Վերջին տասնամյակում Ադրբեջանում գրանցվել էին ավելի քան 1200 կազմակերպություններ թուրքական կապիտալով, իսկ ադրբեջանական տնտեսությունում թուրքական ներդրումների ընդհանուր ծավալը կազմել էր մոտ 1,5 միլիարդ դոլար<sup>460</sup>: Ադրբեջանում Թուրքական ներդրումների հիմնական ոլորտներն էին՝ նավթային, հեռահաղորդակցային, բանկային և ապահովագրական, շինարարական, սննդամթերքի, տեքստիլի և մի շարք այլ ոլորտներ:

Անշուշտ, Թուրքիայի և Ադրբեջանի տնտեսական համագործակցության կարևոր ոլորտներից էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումը: Թուրքական Ազգային Նավթային Ընկերությունը (ՏՊԱՕ) Ադրբեջանում ներգրավված էր 5 խոշոր նախագծերում: Ամենամեծ նախագիծը Ադրբեջանի Սիջազգային Կոնսուրցիոն Ընկերությունն էր, որտեղ ՏՊԱՕ-ն ուներ 6.75 տոկոս բաժնեմաս և կատարել էր ավելի քան 441.1 միլիոն դոլարի ներդրում: ՏՊԱՕ-ին էր պատկանում նաև Շահ Դենիզ նախագծի 9 տոկոսը, որտեղ նա կատարել էր ավելի քան 405 մլն. դոլարի ներդրում: Թուրքական ներդրումները ադրբեջանական տնտեսությունում էապես խթանում էին թուրք-ադրբեջանական հարաբերությունները: Բացի նավթային ոլորտից, թուրքական մի շարք ազդեցիկ կազմակերպություններ ակտիվորեն գործում էին նաև մի շարք այլ ոլորտներում: Թուրք-ադրբեջանական համատեղ գործարքներից թերևս ամենահաջողվածներից էր Թուրքիայի առաջատար բջջային օպերատորներից մեկի «Թուրքսել» ընկերության մուտքն Ադրբեջանի հեռահաղորդակցության ոլորտ՝ ձեռք

բերելով Ադրբեջանի «Ազերսել» ընկերությունը և ստեղծելով ավելի քան 25 հազար նոր աշխատատեղեր, ինչի արդյունքում 2001 թ. կազմակերպության բաժանորդների թիվն անցել էր 500 հազարը<sup>461</sup>:

Ադրբեջանի տնտեսությունում խոշոր ներդրողներից էր նաև թուրքական «Ազերսան գրուպը», որն իր ադրբեջանցի գործընկերների հետ ծառայություններ էր մատուցում մի շարք ոլորտներում, ներառյալ առևտրի, շինարարության, տրանսպորտային, բանկային և այլ ոլորտները: Այս կոնցեռնի ամենախոշոր ներդրումները նավթի և սննդամթերքի գործարանների կառուցումն էր Բաքվում: Ադրբեջանում խոշոր ներդրումներ էր կատարել նաև թուրքական ամենաազդեցիկ կոնցեռներից մեկը՝ Քոչ Գուլդինգը, որը մեծամասամբ իր ներդրումները կատարել էր ավտոմոբիլային և բանկային ոլորտներում: Մասնավորապես, ավտոմոբիլային ոլորտում հիմնել էին «RamAuto Baku» և «SetAuto Avis» ընկերությունները, իսկ բանկային ոլորտում Քոչ բանկը մատուցում էր բանկային ծառայություններ:

Թուրքական շինարարական կազմակերպությունները նույնպես ակտիվորեն ներդրումներ էին կատարել Ադրբեջանում: Ադրբեջանում թուրքական շինարարական կազմակերպությունները ամենակարևոր գործերից էին Բաքվի միջազգային օդանավակայանի, Կենտրոնական բանկի շենքի, Թուրքիայի դեսպանության, Կոկա Կոլայի գործարանի և բազմաթիվ այլ շինությունների կառուցումը<sup>462</sup>: Այսպիսով, ակնհայտ է, որ ՄՕՏՅ-ում թուրք-ադրբեջանական առևտրատնտեսական հետագա համագործակցության համար լավ նախադրյալներ են ստեղծվել:

Թուրքիան ՄՕՏՅ շրջանակներում բավականին ակտիվորեն համագործակցում էր նաև Վրաստանի հետ՝ մի շարք համատեղ և բազմակողմանի նախագծերի շրջանակներում: Վրաստանը մեծ կարևորություն էր տալիս ՄՕՏՅ-ին իր անդամակցությանը՝ այն համարելով եվրասիատեղաման գործընթացներին ուղղված կարևոր քայլ: Վրաստանի ղեկավարությունը բազմիցս էր ընդգծել Սև ծովի կարողությունը, որպես նշանակալի առևտրային ուղի հատկապես բեռնափոխադրումների և տրանսպորտային փոխադրումների տեսանկյունից<sup>463</sup>:

<sup>460</sup> Turkish Business in the BSEC Region. Direct Investments Contracting Services: Prospects For Cooperation.- Foreign Economic Relations Board of Turkey(DEIK), Istanbul, February 2005, p. 4.

<sup>461</sup> Turkish Business in the BSEC Region. Direct Investments ..., p. 5.

<sup>462</sup> Ibid, pp. 5-6.

<sup>463</sup> Yannis Valinakis, նշվ. աշխ., էջ 20.

Թուրքիայի և Վրաստանի միջև երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները զարգանում էին ոչ միայն ՍՕՏՀ, այլ նաև երկու երկրների միջպետական հարաբերությունների շրջանակներում: Սակայն նշենք, որ չնայած Թուրքիայի և Վրաստանի միջև ցամաքային սահմանի առկայությանը, Թուրքիայի ուղղակի ներդրումները Վրաստանում այդքան էլ մեծ չէին: Դրա հիմնական պատճառը թերևս Վրաստանի քաղաքական անկայունությունն էր և տնտեսական խնդիրները, որոնք անհանգստացնում էին ներդրողներին: Այնուամենայնիվ, 90-ականներից ի վեր թուրքական որոշ ազդեցիկ ընկերություններ խոշոր ներդրումներ էին կատարել վրացական տնտեսությունում: Թուրքական կապիտալի և ներդրումների հոսքը վերջին տասնամյակում կազմել էր ավելի քան 125 միլիոն դոլար, որոնք մեծ մասամբ ուղված էին հեռահաղորդակցության և մանուֆակտուրային ոլորտներ, ինչպես նաև տեքստիլի, շինարարական և այլ ոլորտներ: Վրաստանում խոշոր ներդրողներից էին «Թուրքսել» ընկերությունը, որը 1997 թ. 10 տարով ձեռք էր բերել «Ջեոսել» ընկերության լիցենզիան: Վերջինի ծառայության շրջանակները ներառում էին Վրաստանի բնակչության 85 տոկոսը<sup>464</sup>:

Վրաստանում ակտիվորեն գործում էր նաև թուրքական «Շեներ Արդա Գրուպը», որը Վրաստանում ներգրավված էր ծանր արդյունաբերության, շինարարության և սննդամթերքի արտադրության ոլորտներում: Այս կոնցեռնը կառուցել էր Բթումի նավահանգստի լաստանավային նավամորթգարանը, թուրք-վրացական առևտրի կենտրոնը ու մի շարք այլ շինություններ: Շինարարական ոլորտում 2002 թ. յոթներեթի տվյալներով, թուրքական 16 ընկերություններ իրականացրել էին մոտ 19 խոշոր նախագծեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել էր 270 մլն. դոլար: Թուրքական շինարարական կազմակերպություններից հատկապես աչքի էին ընկնում «Բորովա», «Ջաֆեր», «Բայալուր» ընկերությունները, որոնք իրականացրել էին Սուպայի նավթային տերմինալի, Թուրքիայի դեսպանության, Թբիլիսիի միջազգային օդանավակայանի, Բթումի նավահանգստի տերմինալների կառուցման աշխատանքները<sup>465</sup>:

<sup>464</sup> Turkish Business in the BSEC Region. Direct Investments Contracting Services: Prospects For Cooperation.- Foreign Economic Relations Board of Turkey (DEIK), Istanbul, February 2005, p. 9.

<sup>465</sup> Turkish Business in the BSEC Region. Direct Investments Contracting ..., p. 10.

Թուրք-վրացական տնտեսական համագործակցությունն ընդլայնելու նպատակով 1996 թ. դեկտեմբերի 11-ին Թբիլիսիում անցկացվող ՍՕՏՀ հարիդարանական Վեհաժողովի շրջանակներում թուրքական պատվիրակությունը, Թուրքիայի խորհրդարանի փոխնախագահ Դ. Քորքմազջանի ղեկավարությամբ հանդիպեց Վրաստանի ղեկավարության հետ: Դանդիպումների ընթացքում Քորքմազջանը ընդգծեց Վրաստանի հետ Թուրքիայի համագործակցության կարևորությունը՝ նշելով Վրաստանի կողմից իր ենթակառուցվածքների ծառայությունների բարելավման ղեպչուն Կենտրոնական Ասիայի և Կովկասի հետ Թուրքիայի հարաբերությունների զարգացման լուրջ հեռանկարների մասին<sup>466</sup>:

ՍՕՏՀ-ում Թուրքիան և Վրաստանը ակտիվորեն համագործակցում էին նաև տարածաշրջանի անվտանգությանը և կայունությանն ուղված նախագծերում: Մասնավորապես, 2006 թ. ապրիլի 27-ին Բուխարեստում տեղի ունեցած ՍՕՏՀ անդամ-երկրների ՍԳ նախարարների հանդիպման ժամանակ Վրաստանի արտգործնախարար Իրակլի Սենաղաիշվիլին իր ելույթում առանձնակի ուշադրություն դարձրեց տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատանը՝ ընդգծելով ՍՕՏՀ ազգերի միջև համագործակցության կարևորությունը կազմակերպված հանցավորության, զենքի և զինամթերքի անօրինական շրջանառության, ինչպես նաև ահաբեկչության դեմ պայքարում<sup>467</sup>: Դատկանշական է, որ 1996 թ. հոկտեմբերին երևանում ՍՕՏՀ ներքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ մասնակից որոշ երկրների կողմից առաջարկ եղավ տարածաշրջանում անվտանգության և կայունության համար ՍՕՏՀ շրջանակներում ստեղծել քաղաքական կառույցներ: Դետազայում Վրաստանի նախագահ է. Շևարդնաձեն ավելի հեռու գնաց՝ առաջարկելով ստեղծել «Դակամարտությունների Կարգավորման Կենտրոն», որի նպատակն էր դարաբաղյան հակամարտության կարգավորման արդյունքում ակտիվացնել տնտեսական նախաձեռնությունները<sup>468</sup>:

<sup>466</sup> www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintarihi/1996/aralik/1996.htm.

<sup>467</sup> Nicolae Micu, Black Sea Economic Cooperation As a Confidence-Building Measure. - Perceptions: Journal of International Affairs, December 1996-February 1997, pp. 6-7.

<sup>468</sup> Yannis Valinakis, նշվ. աշխ., էջ 21-22:

ՄՕՏՀ շրջանակներում անվտանգության ոլորտում թուրք-վրացական համագործակցությունը ընդլայնելու նպատակով 1998 թ. փետրվարին թուրք-վրացական միջխորհրդայնական համագործակցության խմբի համանախագահ Ռոստոմ Դոլդոնե այցելեց Թուրքիա և հանդիպեց ԼԳ նախարար Մուրադ Բասետիօղլիի հետ: Հանդիպման ընթացքում Բասետիօղլին, մեծապես կարևորելով ՄՕՏՀ շրջանակներում թուրք-վրացական արդյունավետ համագործակցությունը, ընդգծել էր, որ ՄՕՏՀ անդամ երկրների հիմնական նպատակը պետք է լիներ Սև ծովում խաղաղության և կայունության պաշտպանությունը, որի համար, ըստ Բասետիօղլիի, անհրաժեշտ էր ստեղծել անհրաժեշտ կառույցներ՝ Սևծովյան ոստիկանություն: Այցի շրջանակներում Թուրքիան և Վրաստանը ստորագրել էին «Անվտանգության համագործակցության և Իրավական Աջակցության» համաձայնագիրը<sup>469</sup>:

2000 թ. հունիսի 26-ին թուրքական «Ձըրքիշ Դելի Խյուզ» օրաթերթը հրատարակել էր ուշագրավ հարցազրույց ՄՕՏՀ նորընտիր գլխավոր քարտուղար, դեսպան Վալերի Չեչելաշվիլիի հետ, որը մինչ այդ եղել էր Վրաստանի նախկին փոխարտգործնախարարը: Հարցազրույցում Վալերի Չեչելաշվիլին հանգամանորեն անդրադարձել էր Թուրքիա-Վրաստան հարաբերություններին և ՄՕՏՀ-ում համագործակցության հեռանկարներին: Անդրադառնալով թուրք-վրացական հարաբերություններին՝ Չեչելաշվիլին, դրանք որակելով որպես շատ կարևոր և դինամիկ զարգացող, ընդգծեց, որ Վրաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները կարող են ծառայել որպես դրական մոդել՝ ցուցադրելով, թե ինչպես երկու երկրները նոր հանգամանքների ներքո կարող են զարգացնել նոր հարաբերություններ՝ հիմնվելով որակական նոր հիմքի վրա<sup>470</sup>:

Թուրքիան Վրաստանի և Ադրբեջանի հետ միասին իրականացնում էր նաև համատեղ խոշոր նախագծեր: Այդ նախագծերից իրենց մասշտաբներով հատկապես աչքի էին ընկնում Բաբու-Սուփաս ճակատում ի նախագիծը, որը շահագործման հանձնվեց 1999 թ. ապրիլին և Բաբու-Թբիլիսի-Տեյիան նախագիծը, որը վերջնական շահագործման է հանձնվել 2005 թ. առանց: Մյուս խոշոր եռակողմ նախագծերից էր հեռահաղորդակցության ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև Արևելյան Սևծովյան Հեռահաղորդակցու-

թյան Լախագծի (DOKAP) իրականացումը, որի շինարարական աշխատանքները սկսվեցին 1996 թ.<sup>471</sup>:

Թուրքիան նաև ակտիվորեն մասնակցում է սևծովյան տարածաշրջանի անվտանգության և կայունության ամրապնդման շրջանակներում իրականացվող միջոցառումներին: 1997 թ. սեպտեմբերի 6 երկրների՝ Բուլղարիայի, Վրաստանի, Ռումինիայի, Ռուսաստանի, Թուրքիայի և Ուկրաինայի ռազմածովային նավատորմերի գլխավոր հրամանատարները որոշեցին տարածաշրջանում կայունությունը, փոխհամագործակցությունը ու բարիդրացիությունն ամրապնդելու նպատակով կազմակերպել ամենամյա հանդիպումներ, որի գլխավոր նպատակն էր՝ ընդլայնել համագործակցությունը տարածաշրջանային ռազմածովային նավատորմերի միջև տարրեր բնագավառներում:

Սև ծովում միջազգային զորամիավորման ստեղծման գաղափարն առաջ քաշվեց 1998 թ. Վասոնայում անցկացված Սև ծովի բոլոր 6 երկրների սևծովյան նավատորմերի գլխավոր հրամանատարների երկրորդ հանդիպման ժամանակ, որը լուրջ աջակցություն ստացավ մասնակից բոլոր երկրների կողմից<sup>472</sup>: Վերոհիշյալ հանդիպման ընթացքում ձևավորվեցին փորձագետների խմբեր, որոնք ուսումնասիրելու էին համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Փորձագետների ավելի քան 10 հանդիպումների արդյունքում 2001 թ. ապրիլի 2-ին Ստամբուլում Սև ծովի 6 պետությունների ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ ստորագրվեց Սևծովյան Նավատորմային Համագործակցության Հետազոտական Խմբի (BLACKSEAFOR) ստեղծման համաձայնագիրը, որով և իրականացվեց BLACKSEAFOR-ի ստեղծման գաղափարը<sup>473</sup>:

Անդրադառնալով ՄՕՏՀ-ում ընթացող գործընթացներին և կազմակերպության զարգացման հեռանկարներին՝ նշեց, որ կազմակերպության անդամ մի շարք երկրների միջև առկա էին զգալի տարածայնություններ, որոնք խոչընդոտում էին ՄՕՏՀ-ում տնտեսական ինտեգրացման գործընթացներին: Մասնավորապես, մի շարք վերլուծարանների կարծիքով Սևծովյան ավազանում, Բալկաններում և

<sup>471</sup> Valinakis Yannis, նշվ. աշխ., էջ 23:

<sup>472</sup> Мирче Ника, Программа по вопросам безопасности стран черноморского региона. - Школа им. Д.Ф.Кенеди, 2002 г., с. 12.

<sup>473</sup> См. в том же месте, с.13; Mustafa Aydin, Regional Cooperation in the Black Sea..., p. 69.

<sup>469</sup> Anatolia news agency, 11.02.1998.

<sup>470</sup> Turkish Daily News, 26.06.2000.

Կովկասում խաղաղության և անվտանգության զգեսավոր խոչընդոտներից էին վրաց-աբխազական և վրաց-օսական, ինչպես նաև դարաբաղյան հակամարտությունները, ինչպես և Թուրքիայի և Յունաստանի միջև լուրջ տարածայնությունները Կիպրոսի և Էգեյան ծովի սահմանագծի հարցերի շուրջ: Բացի այդ, լուրջ տարածայնություններ էին առկա ալբանա-հունական հարաբերություններում՝ կապված վերանիայում բնակվող հույն փոքրամասնության հետ և այլն:

Ըստ էության, ՄՕՏԳ-ում լուրջ մրցակցություն էր բերանում նաև տարածաշրջանում գերիշխող դիրք գրավելու և ինտեգրման գործընթացներն ուղղորդելու մեջ: Դրա մասին են վկայում մի շարք հետազոտողների կողմից պատրաստված զեկույցները, որտեղ հեղինակները ճշում էին, որ Սևծովյան տարածաշրջանում կազմավորվել էին իրար հակասական շահեր ունեցող երկու խմբավորումներ: Առաջին խմբավորման մաս էին կազմում Ռուսաստանը, Բուլղարիան, Յունաստանն ու ԴՅ-ն, իսկ երկրորդ խմբավորումը՝ Թուրքիան, Ուկրաինան, Ադրբեջանն ու Վրաստանը<sup>474</sup>: Դա մեկ անգամ ևս վկայում է, որ ՄՕՏԳ-ում, բացի տնտեսական խոչընդոտներից, առկա էին նաև բավականին լուրջ բաղաբաբական խոչընդոտներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն էին բողոնում տարածաշրջանի հետագա զարգացման գործընթացների վրա:

ՄՕՏԳ-ի հիմնադրումից ի վեր, կազմակերպության հիմնական նպատակներից մեկը հանդիսանում է միջազգային և եվրոպական համակարգերին ինտեգրման գործընթացը, որն էապես նպաստելու էր կազմակերպության հետագա զարգացմանը: 1998 թ. հունիսին Յալթայի գազաթափուկի ժամանակ ՄՕՏԳ անդամ-երկրների որոշմամբ ՄՕՏԳ-ն վերափոխվեց որպես հաստատուն տարածաշրջանային տնտեսական կազմակերպություն, ինչը ՄՕՏԳ-ին ավելի շատ հնարավորություն ընձեռեց զարգացնելու հարաբերությունները և փոխադարձաբար ներազդելու այլ միջազգային կազմակերպությունների վրա:

ՄՕՏԳ անդամ-երկրների համար մեծ կարևորություն է ներկայացնում համագործակցությունը եվրամիության հետ, քանզի սևծովյան տարածաշրջանի պետությունների արտաքին առևտուրը կողմնորոշված է հիմնականում դեպի տնտեսապես զարգացած եվրամիության երկրներ: Բացի այդ, սառը պատերազմի ավարտի արդյունքում տարածաշրջանի երկրները մի շարք բաղաբաբական, տնտեսական և գաղափարական դրդապատճառներով ցանկանում էին

մասնակցել տարածաշրջանային գործընթացներին՝ ներգրավվելով տարբեր նպատակներ հետապնդող կազմակերպությունների մեջ<sup>475</sup>:

Իր հերթին սևծովյան տարածաշրջանը բավականին լուրջ կարևորություն ունի Արևմուտքի՝ մասնավորապես եվրոպայի համար, քանզի տարածաշրջանի աշխարհառաջավարական դիրքը բավականին նպաստավոր է և, հանդիսանալով, որպես բնական կապող օղակ եվրոպայի և Ասիայի, Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի միջև, այն հանդիսանում է կարևոր տարանջնիկ տարածաշրջան: Չեռևարաբ, տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսները և տնտեսական հեռանկարները, որոնք անկալյունության և հակամարտության պոտենցիալ կոլեկտիվներ են Սևծովյան տարածաշրջանում, մեծ կարևորություն են ներկայացնում եվրոպայի համար: Ուստի պատահական չէ, որ եվրամիությունը ուղղակիորեն շահագրգռված է, որպեսզի ՄՕՏԳ-ն գործի ավելի արդյունավետ և հանդես գա որպես միասնական կառույց, այլ ոչ թե կազմակերպության ներսում առկա տարածայնությունների հետևանքով տարանջատված լինի:

Միևնույն ժամանակ եվրամիություն-ՄՕՏԳ հարաբերությունների կարևորությունը Սևծովյան տնտեսական կազմակերպության անդամ-երկրներից շատերի համար պայմանավորված էր նաև նրանով, որ նրանք ցանկանում էին սերտորեն համագործակցել եվրամիության հետ, իսկ որոշ երկրներ՝ նույնիսկ անդամակցել եՄ-ին: Եվրամիության հետ համագործակցությունը հիանալի հնարավորություն էր հարավկովկասյան երկրների համար ավելի ամրապնդելու իրենց դիրքերը եվրասիանտեգրման գործընթացներում:

ԵՄ-ՄՕՏԳ համագործակցությունն արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծվեցին մի շարք կառույցներ, որոնց շրջանակներում իրականացվում էին բազմաթիվ նախագծեր, որոնք ներառում էին տարբեր ոլորտներ: Մասնավորապես, էներգետիկայի բնագավառում ներկատեք համագործակցությունը ընդլայնելու նպատակով 1997 թ. Սոֆիայում հիմնադրվեց ՄՕՏԳ էներգետիկ Կենտրոնը: Բացի այդ, եվրամիության անմիջական աջակցությամբ 1998 թ. Արևմուտքում հիմնադրվեց Սևծովյան Չեռազոտությունների Միջազգային Կենտրոնը (ICBSS), որի հիմնական նպատակն էր իրականացնել քաղա-

<sup>475</sup> Richard Rosecrance, Regionalism and the Post-Cold War Era. - International Journal, 46, Summer 1991, Kenicki Ohmae, The Rise of the Region state. - Foreign Affairs, Spring 1993, pp. 81-82.

<sup>474</sup> Гаджиев К.С., 624, աշխ., էջ 366:

քական և պրակտիկ հետազոտություններ, որոնք պետք է նպաստեին տնտեսության, արդյունաբերության և տեխնոլոգիաների ոլորտներում ՄՕՏՅ նպատակների իրականացմանը<sup>476</sup>: Ըստ էության Աթենքում հիմնադրված այս կառույցը հանդիսանում է յուրահատուկ կամուրջ ՄՕՏՅ երկրների և ԵՄ միջև<sup>477</sup>:

Եվրամիությունը սևծովյան տարածաշրջանում տարածաշրջանային համագործակցությունը զարգացնելու նպատակով տարածաշրջանի երկրներին 1991-1997 թթ. հատկացրեց ավելի քան 2,589 միլիոն Էբլու<sup>478</sup>: Այս գումարից 410 միլիոնը հատկացվել էր Սևծովյան ավազանում տարածաշրջանային համագործակցության զարգացման խթանմանը: Այն ՄՕՏՅ անդամ պետությունների կողմից պետք է օգտագործվեր ենթակառուցվածքների զարգացման համար<sup>479</sup>: Բացի այդ, տվյալ ժամանակաշրջանում Եվրամիությունը տարածաշրջանի զարգացման նպատակով մոտ 500 միլիոն Եվրո հատկացրեց մի շարք խոշոր տարածաշրջանային նախագծերի իրականացման համար, որոնցից իրենց մասշտաբներով աչքի էին ընկնում «ՏՐԱՍԵԿԱ» և «ԻՆՈՂԵՅԹ» նախագծերը:

Եվրամիության համագործակցությունը ՄՕՏՅ անդամ երկրների հետ բավականին կառուցողական բնույթ է կրում՝ սկսած Զուլաստանի լիիրավ անդամակցությունից և Թուրքիայի Մաքսային Միության անդամ լինելուց, մինչև ԳԳ-ի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի և Ուկրաինայի հետ Գործընկերության և Զամագործակցության պայմանագրի շրջանակներում համագործակցությունից: Եթե հաշվի առնենք այն համագամաբը, որ Բուլղարիան և Ռումինիան Եվրամիությանն անդամակցելու թույլատվություն են ստացել, ապա ակնհայտ է, որ Եվրամիության համար ոչ միայն մեծ հնարավորություններ են ստեղծվել ներազդելու Սևծովյան տարածաշրջանի վրա, այլև լուրջ նախադրյալներ են ստեղծվել ՄՕՏՅ-ԵՄ ինտեգրման գործընթացների համար: 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունների արդյունքում Վաշինգտոնն ու Բրյուսելը սկսեցին ավելի ակտիվ ջանքեր գործադրել՝ Սևծովյան տարածաշրջանը ներառելու իրենց ազդեցության ոլորտում:

<sup>476</sup> Yannis Valinakis, նշվ. աշխ., էջ 31; Mustafa Aydin, Regional Cooperation in the Black Sea..., p. 65:

<sup>477</sup> **Борисенко Е.Н., Кононенко А.П., Семененко И.В.**, նշվ. աշխ., էջ 151:

<sup>478</sup> Turkish Daily News, 09.09.1998.

<sup>479</sup> **Борисенко Е.Н., Кононенко А.П., Семененко И.В.**, նշվ. աշխ., էջ 158:

## ՎԵՐԱԳՐԱՆ

Ամփոփելով աշխատության հիմնական արդյունքները՝ կարելի է գալ հետևյալ հիմնական եզրակացություններին.

- ԽՍՀՄ-ի փլուզումը և Արևմուտքի գործում աջակցությունը Թուրքիային դարձան 1990-ական թթ. սկզբին Զարավային Կովկասի տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականության ակտիվացման հիմնական դրդապատճառները: Եական նշանակություն ուներ նաև տարածաշրջանում ՌԴ-ի սկզբնական թուլությունը: Վերտիշալից ելնելով՝ ինչպես նաև հաշվի առնելով Ադրբեջանում, ԳԳ-ում և Վրաստանում առկա սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը և տարածաշրջանում ընթացող միջբնիկական հակամարտությունները՝ Թուրքիան ակտիվ ջանքեր գործադրեց՝ ամրապնդելու իր դիրքերը Զարավային Կովկասի նորանկախ հանրապետություններում, որտեղ նա աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից լուրջ շահեր էր հետապնդում:

- 1990-ականների սկզբներին Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ակտիվացման կարևոր դրդապատճառներից են ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված՝ Թուրքիայում նոր թափով սկիզբ առած պանթյուրքիզմի գաղափարախոսության դրսևորումները: Այդ իսկ պատճառով Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության առանցքային բաղադրիչներից են թուրք-ադրբեջանական հարաբերությունները: Թուրք-ադրբեջանական հարաբերությունների զարգացման և ամրապնդման հարցում առանձնակի կարևոր գործոն հանդիսացավ պանթյուրքիստական հայացքներ կրող և ընդգծված թուրքամետ կողմնորոշում ունեցող Աբուլֆազ Էլչիբեյի իշխանության գալը:

- Սակայն 1990-ականների սկզբին Թուրքիան մի շարք ներքին և արտաքին պատճառներով մեծ մասամբ չկարողացավ իրականացնել իր ակնկալիքները Զարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Արտաքին պատճառներից անդրադառնալիս հարկ է նշել, որ մեր կարծիքով, թերևս գլխավոր պատճառն այն է, որ Ռուսաստանը 1993-1994 թթ. կարողացավ հստակեցնել իր արտաքին քաղաքականության հիմնական գերակայությունները, ինչի արդյունքում հետխորհրդային տարածաշրջանը և մասնավորապես Զարավային Կով-

կասը հայտարարվեցին Ռուսաստանի համար կարևոր ռազմավարական տարածաշրջան: Ռուսաստանը սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել հարավկովկասյան տարածաշրջանում, ինչի արդյունքում զգալի կասեցվեց Թուրքիայի ներթափանցման ակտիվ փորձերը Հարավային Կովկաս:

- Ներքին պատճառներից կարելի է առանձնացնել այն, որ Թուրքիան չունի բավականաչափ տնտեսական ներուժ՝ իրականացնելու իր հավակնոտ տարածաշրջանային նախագծերը: Այդ իսկ պատճառով չնայած 90-ականների սկզբին թյուրքապետու երկրների միջև մեղմեցման մեծ ներուժին և ձգտումներին, Կենտրոնական Ասիայի հանրապետությունները, գերադասեցին «թուրքական մոդելից» դրական օրինակներ քաղելով հանդերձ, զարգացման սեփական ուղի ընտրել:

- Վրաց-աբխազական հակամարտության ընթացքում Թուրքիան, ելնելով իր ռազմավարական շահերից, խուսաճավում էր վրացական և աբխազական կողմերի միջև՝ ջանալով օգտագործել հակամարտության յուրաքանչյուր կողմին՝ Վրաստանում իր դիրքերի ամրապնդման համար: Մի կողմից՝ Թուրքիան պաշտոնապես հանդես էր գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին, մյուս կողմից՝ չէր խոչընդոտում Թուրքիայի հասարակական շրջանակներին և չերեքզակվան սփյուռքին ակտիվ օգնության ցուցաբերել Աբխազիային: Մեր կարծիքով Աբխազական հիմնահարցում Թուրքիայի ոչ հստակ դիրքորոշումն իր բացասական ազդեցությունը բողոք թուրք-վրացական հարաբերությունների վրա:

- Ջայաստանի անկախության սկզբնական շրջանում նրա նկատմամբ քաղաքականության մեջ թուրքական կողմը առանձնակի կարևորություն էր տալիս արցախյան հիմնահարցի կարգավորման ու հայ-թուրքական գոյություն ունեցող սահմանի ճանաչման հարցերին: Բացի այդ, 1990-ականների սկզբներին պաշտոնական Անկարան ձգտում էր որոշակի հարաբերություններ հաստատել ՀՀ-ի հետ, մասնավորապես տնտեսական բնագավառում՝ հավակնություն տալով Իջևակ Ալաթոնի ծրագրին և պատրաստակամություն հայտնելով Տրապիզոնի նավահանգիստը ՀՀ տրամադրության տակ դնել: Դրա հետ մեկտեղ Թուրքիան փորձեց հայտ ներկայացնել՝ հայ-թուրքական հարաբերությունները տնտեսականից քաղաքական հարթություն տեղափոխելու՝ ջանալով Դարաբաղի հիմնահարցում միջնորդի դեր ստանձնել:

- Թուրքիան Դարաբաղյան հակամարտության ընթացքում Ադրբեջանին ցուցաբերեց ոչ միայն հսկայական ռազմատեխնիկական, ֆինանսական աջակցություն, այլև իր անվերապահ աջակցությունը հայտնեց ադրբեջանական կողմին միջազգային առյուծախնամ: Այսպիսով, ԼՂ հակամարտությունում Թուրքիայի ակնհայտ հակառակակազմի դիրքորոշման արդյունքում հոյս ցնդեցին Անկարայի միջնորդ հանդիսանալու ջանքերը: Մեր կարծիքով, Թուրքիայի նմանափակ մերժողական և հակահայկական քաղաքականությունը իր բացասական ազդեցությունը ունեցավ ՀՀ անկախության հռչակումից հետո Թուրքիայի և ՀՀ-ի միջև հարաբերությունների որակական նոր փուլ բնակոխելու գործում:

- Թեև ԼՂ հակամարտությունում զինադադարի հաստատումից հետո հայ-թուրքական հարաբերություններում նկատվում էին մեղմեցման միտումներ, դրանք որևէ եակակ արդյունքի չհասնեցին: Ինչպես նախկինում, այնպես էլ 1990-ականների երկրորդ կեսին Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները շարունակում էր պայմանավորել հիմնականում ադրբեջանական գործոնով և ԼՂ հիմնահարցի չկարգավորված լինելով՝ միաժամանակ ջանալով պահպանել երկխոսության հնարավորությունները: Մյուս կողմից՝ Վայոց ցեղասպանության միջազգայնացումը Թուրքիայի կողմից ընկալվում է որպես իրական վտանգ: Դրա դեմ պայքարը բարձրացվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգ՝ առանցքային խնդրի վերածվելու և հայ-թուրքական հարաբերություններում ԼՂ հիմնահարցը ետին պլան մղելու ռեալ հնարավորությամբ:

- 1990-ականների կեսերին Թուրքիային հաջողվեց եպես ամրապնդել իր դիրքերը Ադրբեջանում և Վրաստանում, որը մեծապես կապված էր թուրք-ադրբեջանական և թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության սերտացման հետ: Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության ընդլայնումը դարձավ լուրջ սպառնալիք ՀՀ-ի ազգային անվտանգության համար:

- 1990-ականների սկզբին Վրաստանի նկատմամբ Թուրքիայի զգուշավոր քաղաքականության ժամանակաշրջանը 90-ականների երկրորդ կեսից քակոխեց համընդհանուր համագործակցության փուլ, ինչին նպաստեց տարածաշրջանում ՌԴ-ի դիրքերի ամրապնդմամբ պայմանավորված Վրաստանի մտահոգությունը:

Թուրք-վրացական հարաբերությունների ամրապնդման նպատակով գործունեների թվում էին նաև՝ Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ լինելը և 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական իրադարձությունների արդյունքում ՄԱՆ ակտիվ մերձգրվածությունը տարածաշրջանում:

- 77-ի անվտանգության տեսանկյունից թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության սերտացումը կարող է ունենալ բավականին անվանխտեսելի հետևանքներ: Ներկայումս Վրաստանը 77-ի համար շատ կարևոր տարանցիկ երկիր է, ուստի թուրք-վրացական հետագա մերձեցումը կարող է լուրջ վտանգի ենթարկել հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները: Բացի այդ, Թուրքիան, շրջափակման ենթարկելով 77-ն, ձգտում է Վրաստանին ներառել թուրք-ադրբեջանական համագործակցության ոլորտի մեջ, ինչը նույնպես շատ վտանգավոր է 77-ի ազգային անվտանգության համար, քանզի դա կարող է հանգեցնել ոչ միայն 77-ի արտաքին առևտրի ծավալների ու բեռնափոխադրումների կտրուկ նվազմանը, այլև լրջորեն սպառնալ Վրաստանի հայաբնակ շրջանների անվտանգությանը:

- Կովկասյան տարածաշրջանում թուրք-ռուսական մրցակցության հիմնական հարթակներն էին արցախյան և վրաց-արխազական հակամարտությունները, չեչեպեական և բրդական գործոնները, կասպիական նավթի արտահանման ուղիների շուրջ թուրք-ռուսական մրցապայքարը, ինչպես նաև Ռուսաստանի ռազմական ներկայությունը Վրաստանում և 77-ում, որը Թուրքիայի կողմից դիտվում էր, իբրև եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի խախտում:

- Եթե 1990-ական թվականների առաջին կեսին Թուրքիայի և Ռուսաստանի միջև նկատվում էր ակնհայտ լարվածություն, ապա 1990-ականների երկրորդ կեսից թուրք-ռուսական հարաբերություններում հաստատվեց հարաբերական կայունություն, որը ոչ միայն նպաստեց նախկին տարիներին երկկողմ հարաբերություններում առկա լարվածության արության թուլացմանը, այլև լուրջ նախադրյալներ ստեղծեց երկկողմ հարաբերությունների մերձեցման համար:

- 1990-ական թվականներին թուրք-ռուսական հարաբերությունները աննախադեպ զարգացում ստացան հատկապես առևտրատնտեսական ոլորտում, ինչպես նաև լուրջ նախադրյալներ էին ստեղծվել թուրք-ռուսական ռազմական համագործակցության և

ահաբեկչության դեմ պայքարում երկկողմ հարաբերությունների եական զարգացման համար: Այդ հարաբերությունների բարելավման հարցում մեծ ազդեցություն ունեցավ երկու երկրները իրար ամփոփախանալով կապող զազամուղ ստեղծելու զարափարի իրականացումը, որի իրականացման շուրջ ինտենսիվ բանակցություններ սկսվեցին:

- 1990-ականների երկրորդ կեսից երկկողմ հարաբերությունները էական զարգացում ունեցան նաև ռազմական ոլորտում: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Թուրքիան հանդիսանում է ՆԱՏՕ-ի ակտիվ անդամներից մեկը, ապա այս հարաբերությունները էլ ավելի կարևոր նշանակություն են ստանում: Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո թուրք-ռուսական ռազմական համագործակցությունը իր մեջ ներառեց նաև ահաբեկչության դեմ պայքարը, որի շրջանակներում երկկողմ համագործակցությունը բավականին ակտիվորեն զարգանում էր: Ուստի կարող ենք նշել, որ թուրք-ռուսական ռազմական համագործակցությունը և ահաբեկչության դեմ պայքարը հետագայում էլ ավելի է զարգանալու և համագործակցության նոր ոլորտներ է ներառելու:

- Մեր կարծիքով Բաքու-Թբիլիսի-Տեյխան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նախագծերի իրականացումը հանդիսանում է Թուրքիայի լուրջ հաջողությունը, որը դրանով էականորեն ամրապնդում է իր աշխարհաքաղաքական դիրքերը Հարավային Կովկասում և Կասպիական ավազանում:

- Բաքու-Թբիլիսի-Տեյխան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նախագծերի իրականացումը այն ձևով, ինչպես այն կառուցվեց, չի բխում 77-ի շահերից: Դրանց կարևոր նպատակներից է ոչ միայն նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում, այլև 77-ն մեկուսացնել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներից: Մեր կարծիքով, եթե վերոհիշյալ նախագծերի իրականացման գործընթացում ներգրավված լիներ 77-ն, որի տարբերակ 1990-ականների սկզբներին լրջորեն քննարկվում էր որպես տարանցիկ երկիր, ապա անշուշտ այս նախագծերը բավականին շահեկան կլինեին 77-ի համար:

- ՍՕՏ7 ստեղծմամբ Թուրքիան ձեռք բերեց նոր հնարավորություն՝ բազմակողմ այդ ձևաչափի շրջանակներում սեծովյան տարածաշրջանում իր քաղաքական և տնտեսական ազդեցությունը ամ-

րպանդելու և ԵՄ-ին անդամակցելու գործընթացում ՄԾՏԳ-ն որպես ցատկահարթակ օգտագործելու համար: Այդ իսկ պատճառով ՄԾՏԳ ստեղծումը կարելի է դիտարկել որպես թուրքական դիվանագիտության հաջողություն՝ նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ կառույցի շրջանակներում Թուրքիայի կարևոր դերին զուգարվում է լուրջ հենարանը, ի դեմս ՄԾՏԳ անդամ-մահմեդական հանրապետությունների՝ դրանով իսկ բարձրացնելով նրա կշիռը կազմակերպության մեջ:

• ԳԳ-ի տեսակետից բավականին շահեկան է ՄԾՏԳ անդամ հանդիսանալը, քանզի լինելով ՄԾՏԳ հիմնադիր անդամ՝ կազմակերպության շրջանակներում ԳԳ-ն փորձում է ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային համագործակցությանը՝ ձգտելով իր համար ստեղծել տարածաշրջանում ազատ ապրանքաշրջանառության հնարավորություններ: Բացի այդ, սա այն կառույցն է, որտեղ ԳԳ-ն ու Թուրքիան կարող են ինստիտուցիոնալ առումով համագործակցել:

## RESUME

### THE POLICY OF TURKEY IN THE SOUTH CAUCASUS IN 1991-2001

After the five-day Georgian - Russian war in August 2008, the South Caucasus became an eyewitness of new geopolitical reformations.. After Russia's recognition of the independence of Abkhazia and South Ossetia, Turkey became an important factor of the military-political area in South Caucasus. The evidence of it are idea of the "Caucasus Platform" presented by Turkey and the recent obvious changes in Armenian-Turkish relations.

The diplomatic discussions held in September 6, 2008, after RA and Turkey president's meeting in Yerevan it seemed to come to an end on October 10, 2009 when the Ministers of Foreign Affairs of Armenia and Turkey Edward Nalbandyan and Ahmed Davutoghlu signed a Protocol in Zurich on the Establishment of Diplomatic Relations between two countries and the Protocol on Development of the Bilateral Relations between Armenia and Turkey. In fact, we can record that Armenian-Turkish relations were moved to a new qualitative level.

So, the full and complex study of Turkey's South-Caucasus policy in 1991-2001 is of great importance for the Republic of Armenia from the angle of national security and Armenian-Turkish diplomatic discussions and developments. The topic of the research is quite current and it is very important to fully understand the main purposes and priorities of Turkey's South-Caucasus policy. The detailed research of the Turkish Republic's South-Caucasus policy has a great political importance and from the point of view of revealing one of the main directions of Turkey's post-Soviet, 10-year foreign policy's peculiarities and purposes. It shouldn't be forgotten that the South-Caucasus region has traditionally been a great priority in Turkey's foreign policy.

It is necessary to mention that Turkey's policy in the South Caucasus is of significant importance for South-Caucasus countries, particularly Armenia. The conclusion and commentaries made here

can be useful from the angle of working out the directions of the RA regional policy and in the sense of normalizing Turkish-Armenian relations. This work is directly related to a number of fundamental terms of the conception of the RA security and the research shows a great importance for deeply realizing some problems connected to the national security of the Republic of Armenia.

The work is also important because it gives an opportunity to understand the real directions and purposes of our neighboring country's South-Caucasus policy and its influence on the further process of Turkey's regional policy. One of the main sources of research for discussing problems in the work is the materials from the Armenian National Archives. Important primary source origins are also the materials and reports by the Turkish division of the Middle and Near East Department of the RA Ministry of Foreign Affairs. The most valuable are the collected works regarding the South-Caucasus policy of Turkey in the beginning of 1990s. Official publications were of great importance for this research, as well as the statements and speeches by well known Armenian and foreign state-political figures, the valuable works and articles by Armenian foreign researchers on the above mentioned theme.

Different sources, research and periodicals in Armenian, Russian, English and Turkish contain valuable documentary materials concerning the investigated materials.

The work consists of a preface, four chapters, which are divided into nine subsections, a conclusion, and a list of used sources and literature.

The first chapter of the work is entitled "**The priorities of Turkey's foreign policy in South Caucasus after the collapse of the USSR**" consists of three subsections. The first subsection touches upon Turkey's actions in the post-Soviet region, particularly preconditions and a number of favorable factors of Turkey's activation in the South Caucasus and Central Asia in those years. In addition, the competition against Russia and geopolitical purposes of Turkey in the South Caucasus are thoroughly studied.

The second subsection goes into detail on Turkey's position in the Georgian-Abkhazian conflict in the 1990s.

It also investigates the contribution of Northern Caucasus people living abroad to the victory of the Abkhazian side.

In the third subsection, an attempt is made to shed light on Armenian-Turkish relations after the collapse of the USSR and reestablishment of Armenia's independence, particularly the discussion on the large-scale purpose of Turkey in the South Caucasus region in the 1990s and Turkey's position on Armenia in that political area. In addition, the subsection sheds light on Turkey's pro-Azerbaijan policy on the Nagorno-Karabakh conflict and enormous technical, military, financial and diplomatic support for Azerbaijan.

The second chapter of the work is entitled "**Turkey and South Caucasus in 1995-2001 (political aspect)**". It studies Turkey's foreign policy in South Caucasus since the second half of the 1990s.

The first subsection goes into detail about the main approaches of Turkey's policy towards Armenia in the discussed region. Turkey's policy towards Armenia after the ceasefire of the Nagorno-Karabakh conflict is carefully stated, as well as Armenian-Turkish businessmen's attempts to establish trade relations and political and diplomatic contacts between Turkey and Armenia. In this subsection, there is great focus on the emergence of the issue of international recognition of the Armenian Genocide in the RA foreign policy agenda as a result of change of power, as well as the steps taken for recognition of the Genocide and Turkey's position.

The second subsection investigates Turkey's policy to confirm its military-political position on Azerbaijan and Georgia and the important contributing factors and prerequisites. In the middle of the 1990s, Turkey succeeded to consolidate its position on Azerbaijan and Georgia, which was greatly connected with closely related Turkish-Azerbaijan and Turkish-Georgian political-military collaboration.

The third chapter of the work entitled "**Russian-Turkish relations and the South Caucasus: 1991-2001**"- consists of two subsections. The first subsection speaks about a number of essential questions concerning Turkish-Russian relations in the 1990s, which were kept strained. The main factors in the competition between Turkey and Russia in the Caucasus region were mainly the Chechens and Kurds, as well as the Armenian-Azerbaijan and Georgian-Abkhazian conflict, the struggle of Turkey and Russia concerning the foreign lines of Caspian oil and Russia's military presence in Georgia and Armenia.

The second subsection is related to "Russian-Turkish trade-economic and military collaboration which have been developing intensively since the late 1990s".

The fourth chapter is entitled "**Turkey's geo-economical policy in the South Caucasus**". The chapter includes a thorough research on Turkey's geo-political, geographical-economical purposes in the South Caucasus, Turkey's active policy concerning the realization of those purposes and Turkey's attempts to be the most important geo-economical and political factor.

In the first subsection, the exploitation of South Caucasian hydro carbonic resources, the struggle for the main exporting roads and Turkey's role in all these areas are discussed, particularly the important projects such as the Baku-Tbilisi-Jeihan and Baku-Tbilisi-Erzrum.

The last subsection of the third chapter discusses Turkey's policy in the economical collaboration process with the Black Sea coastal countries, its purposes and expectations.

The conclusion summarizes the results of the work and comes to the following conclusion.

- So, the collapse of the USSR and the support from the West became the main cause of the activation of Turkey's policy. The Russian Federation's first period of weakening in the region is of essential importance. As a result of this and taking into consideration the difficult social-economic situation in Armenia, Azerbaijan and Georgia and the interethnic antagonism in the region, Turkey made active efforts to consolidate its positions in newly independent countries of the South Caucasus where it benefited from the point of strategy and security.

- In the early 1990s, one of the motives of Turkey's South Caucasus policy's activation connected to the collapse of the USSR is the manifestation of Pan-Turkism ideology, which started very swiftly. That's why the pivotal component of Turkey's South Caucasus policy is the relationship between Turkey and Azerbaijan.

Abulfaz Elchibey's coming to power was an important factor in the development and strengthening of Turkish-Azerbaijan relations. He emphasized Turkey's favor in Pan-Turkism views.

- But in the beginning of the 1990s, for a number of internal and external reasons, Turkey could not generally realize its

expectations in the South Caucasus and Central Asia. Returning to external reasons, in our opinion the main reason was that in 1993-1994, Russia couldn't clear out the main priorities of its foreign policy and as a result, the post Soviet region, particularly the South Caucasus, was declared as an important strategic region for Russia. Russia began to take active steps towards the South Caucasus region and as a result, Turkey's active attempts to penetrate into the South Caucasus were put to an end.

- Looking at the internal reasons, we can say that Turkey didn't have enough economic power to realize its claims on regional plans. That's why, though the power and aspirations for rapprochement between Turkic language-speaking countries, the republics of Central Asia preferred taking positive examples from the "Turkish model" to choose one way for development.

- Based on its strategic interests, Turkey was maneuvering between Georgian and Abkhazian sides during the Georgian-Abkhazian conflict, trying to use each side to consolidate its position in Georgia. On the one side, Turkey officially acted in favor of Georgia's territorial integrity, on the other side, it didn't prevent the Turkish social circles and Cherkez Diaspora to actively support Abkhazia. In our opinion, Turkey's similar position on the Abkhazian issue had its negative influence on Turkish-Georgian relations.

- In the beginning of Armenia's independence, in its policy towards Armenia, the Turkish side gave special importance to resolution to the Artsakh issue and recognition of the existing borders between Turkey and Armenia. In addition, in the beginning of the 1990s, the official Ankara was aspired to establish certain relations with Armenia, particularly in the economic field, approving Itsak Alaton's plan and announced its readiness to put Trapizon port at RA disposal mine while Turkey tried to claim for shifting Armenian-Turkish economic relations to the political level. Turkey was trying to play the role of a mediator in the Nagorno-Karabakh conflict.

- During the Nagorno-Karabakh conflict, Turkey not only provided Azerbaijan with enormous military-technical, financial support, but also expressed unconditional assistance to Azerbaijan in the international instances. So, Turkey's openly anti-Armenian position on the NK conflict killed Ankara's efforts to be an intermediary.

In our opinion, Turkey's repulsive, anti-Armenian policy had its negative effect on starting a new phase of qualitative relations between Turkey and Armenia after declaration of the RA independence.

- Despite the trends in Turkish-Armenian relations after the ceasefire of the Nagorno-Karabakh conflict, there were no substantial results. As in the second half of the 1990s, Turkey continued to stipulate mainly with the Azerbaijan factor and no resolution to the Nagorno-Karabakh conflict, but at the same time, it tried to keep the possibility of dialogue. On the other hand, the internationalizing of Armenian genocide was accepted by Turkey as a real danger. The struggle against it was put on the Turkish foreign policy agenda as a serious problem and the real possibility of pushing back the NK conflict in Armenian-Turkish relations.

- In the middle of the 1990s, Turkey managed to strengthen its position in Azerbaijan and Georgia and that was connected with the closer military-political relations between Turkey and Azerbaijan and Turkey and Georgia. The expanding of Turkish-Azerbaijan military-political relations became a serious threat to Armenia's national security.

- At the beginning of the 1990s, Turkey's cautious policy towards Georgia came into a general relation phase in the second half of the 1990s, which was contributed by anxiety concerning the consolidation of Russia's position in the region. One of the favorable factors of strengthening Turkish-Georgian relations was also Turkey's membership in NATO and the US active involvement in the region in the wake of the terrorist acts of September 11, 2001.

- From the angle of Armenian's security, the Turkish-Georgian military-political rapprochement can have rather unpredictable consequences. At present, Georgia is a very important transit country for Armenia, so further strengthening of relations between Turkey and Georgia can be a serious danger for the friendly relations between Armenia and Georgia. In addition, by forming a blockade against Armenia, Turkey is trying to draw Georgia into the Turkish-Azerbaijan relationship, which is also very dangerous for Armenian national security as it can lead not only to the decrease of Armenian foreign trade and transportation, but also seriously threaten the security of Armenian-populated regions in Georgia.

- The main platforms of the competition between Turkey and Russia in the South Caucasus were the Nagorno-Karabakh and Georgian-Abkhazian conflicts, the Chechen-Kurdish factor, the Turkish-Russian struggle over ways to export Caspian oil, as well as Russia's military presence in Georgia and Armenia which Turkey considered as a violation of the contract about armed forces in Europe.

- In the second half of the 1990s, Russia rearranged its powers, specified the primary goals of its foreign policy and started reinforcing its policy in the South Caucasus, causing a serious blow to Turkey's policy in the region. Russia's direct intervention in the region led to the declaration of ceasefires in the Nagorno-Karabakh and Georgian-Abkhazian conflict zones and thanks to that, Russia not only managed to put an end to Turkey's active efforts aimed at engaging the South Caucasus in its zone of influence, but restored its geopolitical positions in the region to a significant extent.

- Whereas Turkish-Russian relations were overtly tense in the first half of the 1990s, in the second half of the 1990s, Turkey and Russia established relatively stable relations which not only helped weaken the sharp tension in the relations, but created serious preconditions for reinforcement of bilateral relations.

- The bilateral relations also developed significantly in the military sphere in the middle of the 1990s. These relations become more significant, if we also take into account the fact that Turkey is one of the active members of NATO. In the aftermath of the events of September 11, part of the Turkish-Russian military partnership was the fight against terrorism and the bilateral cooperation was developing rather actively. Thus, it could be stated that the Turkish-Russian military partnership and the fight against terrorism will further develop in the years to come and will include new spheres of cooperation.

- In the 1990s, Turkish-Russian relations saw an unprecedented development, especially in the sphere of trade and serious preconditions emerged for the development of the military partnership and bilateral relations in the fight against terrorism. The implementation of the idea of creating a gas pipeline that would directly connect the two countries together had an enormous impact on the improvement of relations and the two countries began intensive negotiations regarding implementation of that idea.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՑԱԿ

ԱԿՋԲԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1. *Հայաստանի Ազգային արխիվ.*
  - Ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 70:
  - Ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 192:
2. *ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին*
  - Ցուցակ 3, գործ 159
  - Ցուցակ 5, գործ 243
  - Ցուցակ 6, գործ 63
  - Ցուցակ 6, գործ 64:
3. *ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին*
  - Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն:
  - Հաշվետվություն, 2000 թ. սեպտեմբերի 8-12-ը ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության պետ Գ. Առաքելյանի գլխավորած պատվիրակության Ստամբուլ կատարված գործուղման վերաբերյալ:
4. *ՀՀ ԳԽ Իրազեկման և Վերլուծության Բաժին*
  - Ձեկույց Բ 5, Երևան, 1992, էջ 1-7:

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

5. «Ata Toprağına Dönün», Abhazya Cumhuriyeti Cumhurbaşkanı Vladislav Ardzınba'nın, Abhazya Dışında Yaşayan Abhazlar'a ve Tüm Çerkesler'e Abhazya'ya Dönme Çağrısı.- Yedi Yıldız, Aylık Dergisi, Ocak 1993, s. 11-12.
6. Обращение Президента России к народам Северного Кавказа и всему населению юга России, Красная Звезда, 28.08.1992.

• In our opinion, realization of the Baku-Tbilisi-Jeihan and Baku-Tbilisi-Erzrum projects is Turkey's serious success which essentially strengthens its geographical-political position in the South Caucasus and the Caspian region.

• The realizing of Baku-Tbilisi-Jeihan and Baku-Tbilisi-Erzrum projects in the form it was built is not in the interest of Armenia. One of the important purposes is not only to decrease the influence of Russia in the region, but also to isolate Armenia from the course of regional economic integration. In our opinion, if Armenia was involved in the implementation of the above mentioned project, the version of which was seriously discussed as a transit country at the beginning of 1990s, these projects would be quite profitable for Armenia.

• Creating the BSEC, Turkey gained a new opportunity to consolidate its political and economical influence in the region and in the process of becoming a member of EU, use the BSEC as a trampoline. That's why forming BSEC may be considered as Turkey's diplomatic success if we also take into consideration the point that besides Turkey's important role in the organization, there is also serious support from the BSEC-member Muslim republics and with this, comes the increase of the role in the organization.

• From Armenia's point of view, it is very profitable to be a BSEC-member. Being a BSEC founder-member in the organization, it tries to take part actively in the regional relationship aiming to create free commodity circulation in the region. Besides, it is the organization where Armenia and Turkey can collaborate in the institutional sense.

7. Անանյան Ա., Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում.- Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, 2004, էջ 3-27;
8. Արշակյան Գ., Թուրքիայի ռազմաքաղաքական հարաբերությունները Վրաստանի հետ 1995-2001 թթ.- Հայկական բանակ, 4 (54), «Ամարաս», 2007, էջ 7-30:
9. Ավագյան Ա., Թուրք ազգայնամուլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ.-Հայկական բանակ, 3 (49), «Ամարաս», 2006, էջ 48-56:
10. Զարեվանդ, Միացյալ անկախ Թուրանիա,- Երևան, «Հայաստան», 1993, 158 էջ:
11. Հայաստան-Թուրքիա. Բաց խոսակցություն,- Երևան, «Վան Արյան», 2005, 120 էջ:
12. Հարությունյան Ա., Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների շուրջ.- ՀԱՆՐԱՊԵՏԱՎԱՆ, թիվ 6 (70), Երևան, «Ամարաս», 2009, էջ 11-16:
13. Հովհաննիսյան Ա., ԽՍՀՄ-ի փլուզումը, «Թուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-1995-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ).- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 20, Երևան, «Զանգակ-97», 2001, էջ 74-81:
14. Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը.- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 16, Երևան, «Զանգակ-97», 1996, էջ 9-19:
15. Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում,- Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 1998, 44 էջ:
16. Չաքրյան Հ., Հայ-թուրքական հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական զարգացումների ենթատեքստում.- 21-րդ դար, թիվ 1, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003, էջ 101-114:
17. Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատմեչներ ստեղծել հարևանների միջև...- Երևան, «Զանգակ-97», 2003, 96 էջ:

18. Սաֆրաստյան Ռ., Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադա՞ր.- 21-րդ դար, թիվ 4, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2005, էջ 34-46:
19. Վալդ դե Թոմաս, Սև այգի: Հայաստանն ու Ադրբեջանը՝ խաղաղության և պատերազմի միջով.- Երևան, «Զանգակ-97», 2007, 432 էջ:
20. Վերանյան Կ., Արիագիան աշխարհաքաղաքական շահերի խայնբուկում.- 21-րդ դար, թիվ 4, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2005, էջ 47-62:
21. Avşar Zakir, Solak Ferruh, Türkiye ve Türk Cumhuriyetleri,- Ankara, «Vadi Yayınları», 1998, 286 s.
22. Çora Nazmi, Birleşik Türk Devletleri,- İstanbul, «Q-Matris Yayınları», 2004, 227 s.
23. Metin Sever, Kafkağrı'nın Bu Yüzü: Türkiye'deki Kafkas Kökenliler,- İstanbul, «Doğan Kitapçılık», 1999, 190 s.
24. Özdag Muzaffer, Derleyen: Çetin Güney, Türkiye ve Türk Dünyası Jeopolitiği,- Ankara, «Avrasya-Bir Vakfı Yayınları», 2003, 321 s.
25. Özey Ramzan, Dünya Platformunda Türk Dünyası,- İstanbul, «Aktif Yayınevi», 1999, 353 s.
26. Toker Yalçın, Büyük Uyanış,- İstanbul, «Toker Yayınları», 1992, 256 s.
27. Авахова Р. М., Лисова А.Г., Россия и Закавказье: Реалии независимости и новое партнерство,- ИМЭМО РАН, М., «Финстатинформ», 2000, 224 с.
28. Авакян А., Черкеский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX — первая четверть XX вв.),- Ереван, «Гитутюн», 2001, 421 с.
29. Бжезинский З. Великая Шахматная Доска. Господство Америки и его геостратегические императивы,- М., «Международные Отношения», 2002, 256 с.
30. Борисенко Е. Н., Кононенко А. П., Семенов И. В., Черноморское Экономическое Сотрудничество-от региональной инициативы к международной организации,- Стамбул, «Узман Ник», 1998, 274 с.
31. Гаджиев К.С., Геополитика Кавказа,- М., «Международные Отношения», 2003, 464 с.
32. Гусейнов В., Каспийская нефть, экономика и геополитика,- М., «Олма Пресс», 2002, 380 с.

33. Гюльтекин Б., Турция-Южный Кавказ: анализ современной ситуации,- «Южный Кавказ: региональная безопасность и стабильность», Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой. Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, «Амроц груп», 2004, сс. 58-69.
34. Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX — начала XXI веков,- Ереван, Авторское издание, 2006, 255 с.
35. Ельцин Б., Записки президента,- М., «Огонек», 1994, 415 с.
36. Жильцов С. С., Зоин И. С., Ушаков А. М., Геополитика Каспийского региона,- М., «Международные Отношения», 2003, 280 с.
37. Киреев И., Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XXI века,- М., ИВ РАН- Крафт+, 2001, 536 с.
38. Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период,- М., «Русская панорама», 2004, 296 с.
39. Куратов А., Турция и тюркоязычные государства Центральной Азии: любовь по расчету?,- «Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Евразию?», Науч. доклады, Под ред. И. Кобринской,- М., Московский Центр Карнеги, вып. 14, 1997, сс. 22-45.
40. Митяев В. Г., Внутриполитическое развитие независимого Азербайджана в свете его геополитического положения: Независимый Азербайджан: новые ориентиры,- Монография. Т. 1. М., РИСИ, 2000.
41. Ника М., Пример флотского сотрудничества. BLACKSEAFOR. «Программа по вопросам безопасности стран черноморского региона»,- Нью Йорк, Школа им. Д.Ф.Кенеди, 2002, сс. 12-14.
42. Оганесян Н., Некоторые особенности этнорегиональной политики Армении,- «Этническая и региональная политика Армении и Грузии»,- Ереван, «Эгея», 1999, сс. 53-66.
43. Сафрастян Р., Об идеологическом обосновании региональной политики Турции: Концепция Евразии,- «Южный Кавказ: региональная безопасность и стабильность», Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой. Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян,- Ереван, «Амроц груп», 2004, сс. 70-77.
44. Сафрастян Р., Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания,- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 21, երևան, «Չափազակ-97», 2002, էջ 147-155:
45. Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе,- Академия гуманитарных исследований, Монография, М., «Гуманитарий», 2002, 600 с.
46. Старченков Г.И., Нефть и газ в экономике и политике Турции (XIX-начало XXI вв.),- М., ИВ РАН, 2003, 200 с.
47. Уразова Е., Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ,- М., «АСТИ-ИЗДО», 2003, 208 с.
48. Хилл Ф., Тасплинар О., Россия и Турция на Кавказе: сближение ради сохранения статус кво?,- М., Программа исследований по России и СНГ, 2006, сс. 1-23.
49. Шорохов В., Политика Турции в Закавказье и национальные интересы России,- «Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Евразию?», Науч. доклады. Под ред. И. Кобринской,- М., Московский Центр Карнеги, вып. 14, 1997, сс. 46-67.
50. Adams Terry, Michael Emerson, Laurence Mee and Marius Vahl, Europe's Black Sea Dimensions,- Brussels, Centre for European Policy Studies, 2002, 142 p.
51. Allison Roy, Military Forces in the Soviet Successor States.- Adelphi Paper, Volume 33, Issue 280, London, The International Institute for Strategic Studies, Routledge, October 1993, pp. 1-46.
52. Aras Bülent and Foster George, Turkey and the Azerbaijani Oil Controversies: Looking for a Light at the End of the Pipeline, <http://meria.idc.ac.il/books/azerbaijan.htm>.
53. Arslanalp Mert, Global trends and Turkey's energy policy series: Demand and supply for energy resources, 2006, [www.dispolitikaforumu.org/component/option,com\\_docman/task,doc\\_view/gid,24/](http://www.dispolitikaforumu.org/component/option,com_docman/task,doc_view/gid,24/).
54. Aydın Mustafa, Regional Cooperation in the Black Sea and the Role of Institutions.- Perceptions: Journal of International Affairs, Volume X, Autumn 2005, pp. 57-85.
55. Aydın Mustafa and Ifantis Kostas, International Security Today: Understanding Change and Debating Strateg.- Ankara, Strategic Research Center, 2006, 249 p.
56. Aydın Mustafa, Turkish Foreign Policy: Framework and Analysis,- Ankara, Stratejik Araştırmalar Merkezi, 2005, 70 p.
57. Aydın Mustafa, Turkey and Central Asia: Challenges of Change.- Central Asian Survey, Vol. 15, Routledge, 1996, pp. 157-177.

58. Aydın Mustafa, *Ethnic Conflict and Security in Central Asia and Caucasus: The Role of Turkey*.- Marco Polo Magazine, Vol. 3, Roma, Marco Polo Institute, 1998, pp. 21-26.
59. Aydın Mustafa, *New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament*, pp. 1-40, <http://www.sam.gov.tr/sampapers.php>.
60. Aydın Mustafa, *Turkish Policy Toward the Caucasus* [www.ciaonet.org/olj/co/co\\_jul02/co\\_jul02f.pdf](http://www.ciaonet.org/olj/co/co_jul02/co_jul02f.pdf).
61. Aydinli Erel, *Russia's Kurdish Card In Turkish-Russian Rivalry*.- Caspian Crossroads Magazine, Volume 2, Issue № 3, Winter 1997, pp. 1-25.
62. Bal Idris, *The Turkish Model and the Turkic Republics*.-Perceptions: Journal of International Affairs, Volume III, September-November 1998, pp. 1-17.
63. Bahalı Tuncay, *Turkey at the Energy Crossroads: Turkey, Present and Past*.- Middle East Quarterly, Spring 2009, pp. 25-33.
64. Baran Zeyno, "The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline", in S. Frederick Starr and Svante E. Cornell Oil (ed.), *The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Oil Window to the West*.- Washington, The Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program, 2005, 150 p.
65. Baran Zeyno, *The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey*.- The Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, May 2005, pp. 103-118.
66. Bardakçı Mehmet, *Russian Interests in the Caspian Region and Turkey*.- Dokuz Eylül Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, Cilt 5, Sayı 2, Nisan-Haziran 2003, pp. 1-28.
67. Bezanis Lowell, *Soviet Muslim Emigrés in the Republic of Turkey*.- Central Asian Survey, Vol. 13, № 1, Routledge, Winter 1994, pp. 59-177.
68. Bezanis Lowell, *Open Media Research Institute (OMRI)*, pt.1, № 176, September 11, 1996, pp. 1-50.
69. Bilge Saat, *An analysis of Turkish- Russian Relations*.- Perceptions: Journal of International Affairs, Volume II, June-August 1997, pp.1-12.
70. Bilgich Mehmet T., *On Both Sides of the Bridge – BOTAS*, [www.casenergy.com/23/2004-02-01-02e.htm](http://www.casenergy.com/23/2004-02-01-02e.htm).
71. Bishku Michael B., *Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus*.- Journal of Third World Studies, Vol.18, № 2, Fall 2001, pp.1-9, [http://findarticles.com/p/articles/mi\\_qa3821/is\\_200110/vai\\_n8988897/pg\\_8](http://findarticles.com/p/articles/mi_qa3821/is_200110/vai_n8988897/pg_8).
72. Blum Douglas W., *Russia's Future: Consolidation or Disintegration?*.- San Francisco, Westview Press, 1994, 173 p.
73. Bowman Steve, *Conventional Armed Forces in Europe (CFE): Flank Agreement and Treaty*, Congressional Research Service, <http://www.house.gov/csce>, 1998.
74. Brzezinski Zbigniew and Sullivan Paige, *Russia and Commonwealth of independent States: Documents, Data, and Analysis*.- New York, ME. Sharpe, 1997, 866 p.
75. Cem Oğuz, *The Case of the Confederation of the Peoples of the Caucasus*.- Perceptions: Journal of International Affairs, Volume IV, June-August 1999, pp. 1-8.
76. *Central Asian Republics and the Republic of Azerbaijan*.- Istanbul, Foreign Economic Relations Board of Turkey (DEİK), Report, June 1998, Eurasian File (Ankara), April 96/2, № 55, pp. 1-25.
77. Chirikba Vyacheslav, *The Georgian – Abkhazian Conflict: In Search of Ways Out*, [http://www.circassianworld.com/Conflict\\_Georgian\\_Abkhazian.html](http://www.circassianworld.com/Conflict_Georgian_Abkhazian.html).
78. Chorbatjan Levon, Donabedian Patrick and Mutafian Claude, *The Caucasian Knot: The History of Geopolitics of Nagorno- Karabagh*.- London, Zed Books, 1994, 198 p.
79. Chrysanthopoulos T. Leonidas, *Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994*.- Princeton and London, Gomidas Institute Books, 2002, 200 p.
80. Cohen Ariel, *The New "Great Game": Oil Politics in the Caucasus and Central Asia*, The Heritage Foundation Background, № 1065, 25 January 1996, pp. 1-11, [web.nps.navy.mil/~relooney/Caspian\\_13.htm](http://web.nps.navy.mil/~relooney/Caspian_13.htm).
81. Cooper Tom, *Former USSR-Russia Database Georgia and Abkhazia, 1992-1993: The War of Datchas*, [http://www.acig.org/artman/publish/article\\_282.shtml](http://www.acig.org/artman/publish/article_282.shtml).
82. Coppiteres Bruno, Zverev Alexei and Trenin Dmitri, *Commonwealth and Independence in Post Soviet Eurasia*.- London, Frank Cass Publishers, 1998, 224 p.
83. Cornell Svante E., *Undeclared War: The Nagorno-Karabakh Conflict Reconsidered*.- Journal of South Asian and Middle Eastern Studies, vol. 20, № 4, Summer 1997, pp.1-24, [http://www.pcr.uu.se/publications/cornell\\_pub/main\\_doc.pdf](http://www.pcr.uu.se/publications/cornell_pub/main_doc.pdf).
84. Cornell Svante E., *Turkey and the Conflict in Nagorno Karbakh: A Delicate Balance*. - Middle Eastern Studies, vol. 34, № I, London, Frank Cass Publishers, January 1998, pp. 51-72.

85. Cornell Svante E., *The Nagorno-Karabakh Conflict*, - Uppsala, Uppsala University: Department of East European Studies, 1999, 164 p.
86. Curtis Glenn E., *Armenia, Azerbaijan, and Georgia: Country Studies*, - Washington D.C., Federal Research Division, Library of Congress 1995, 298 p.
87. Danilov Vladimir I., *Some Features of Russian-Turkish Relations in the 1990s*, - Perceptions: Journal of International Affairs, Volume IV, December 2001- February 2002, pp. 1-5.
88. Dawisha Adeed and Dawisha Karen, *The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia*, - London and New York, ME. Sharpe, 1995, 360 p.
89. Ebel Robert and Menon Rajan, *Energy and Conflict in Central Asia and the Caucasus*, - New York, Roman & Littlefield Publishers, 2000, 267 p.
90. Economic Brief: *The Blue Stream Gas Pipeline, Power and Interest* News Report (PINR), 22.11. 2005, [www.pinr.com/report.php?ac=view\\_report&report\\_id=403&language\\_id=1](http://www.pinr.com/report.php?ac=view_report&report_id=403&language_id=1).
91. Ekedahl McGiffert C. and Goodman Melvin A., *The Wars of Eduard Shevardnadze*, - Pennsylvania: The Pennsylvania State University Press, 1997, 331 p.
92. Energy – Through Great Cooperation, Not the "Great Game". - PULSE of Turkey № 3, 13 May 1998, pp. 1-3, <http://www.turkpulse.com/energy.htm>.
93. Fuller Elizabeth, *Between Neo-Stalinism and Democratization*, - Transition, vol. 2, № 18, 1996, pp. 35 – 39.
94. Fuller Graham E., *Turkey faces East: New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union*, - Santa Monica, Rand Study, 1992, 70 p.
95. Gajendra Singh, *Russian Bear Calls on Gray Wolf*, Asia Times Online, 31.08.2004, [http://www.atimes.com/atimes/Central\\_Asia/FH28Ag01.html](http://www.atimes.com/atimes/Central_Asia/FH28Ag01.html).
96. Goltz Thomas, *Letter From Eurasia: The Hidden Russian Hand*, - Foreign Policy, № 92, Carnegie Endowment for International Peace, Autumn 1993, pp. 92–116.
97. Grau Lester W., *Hydrocarbons and a New Strategic Region: The Caspian Sea and Central Asia*, Foreign Military Studies Office, Fort Leavenworth, KS, [www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm](http://www.globalsecurity.org/military/library/report/2001/hydrocarbons.htm).
98. Gürkan ŞEN Cihangir, *Turkish-Russian Economic Relations: Today's Issues and Perspectives*, [http://www.stradigma.com/english/august2003/articles\\_01.html](http://www.stradigma.com/english/august2003/articles_01.html).
99. Hale William, "Turkey, the Black Sea, and Transcaucasia," John F.R. Wright, Suzanne Goldenberg, and Richard Schofield, eds., *Transcaucasian Boundaries*, - New York: St. Martin's Press, 1996, pp. 54-70.
100. Hale William, *Turkish Foreign Policy, 1774-2000*, - London, Frank Cass Publishers, 2000, 392 p.
101. Henze Paul B., *Turkey's Caucasian Initiatives*, - Foreign Policy Research Institute, Elsevier Science Limited, 2001, pp. 81-91.
102. Herzog Edmund, *The New Caucasus, Armenia, Azerbaijan and Georgia*, - London, The Royal Institute of International Affairs, 1999, 165 p.
103. Hishmeh George S., *Caspian Basin Seen Not Replacing Middle East as Oil Source*, USIA Washington File, 26 September 1997, [www.usia.gov/products/washfile.htm](http://www.usia.gov/products/washfile.htm).
104. Hovhannisyan Nicolay, *The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution*, - Erevan, Zangak-97, 1999, 112 p.
105. İskit Temel, *Turkey: New Actor in the Field of Energy Politics?* - Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, pp. 1-11.
106. İsmail Tareq Y. and Aydın Mustafa, *Turkey's Foreign Policy in the Twenty-First Century: A Changing Role in World Politics*, - London, Ashgate Publishing, 2003, 224 p.
107. Karagiannis Manos, *The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil*, <http://ourworld.comuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>.
108. Karaosmanoglu Ali, "Turkey Objectives in the Caspian Region", in Gennady Chufirin, (ed.), *The Security of the Caspian Region*, - Oxford: Oxford University Press, SIPRI Publication, 2002, 392 p.
109. Kaufman Stuart, *Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War*, - London, Cornell University Press, 2001, 263 p.
110. Kaya Kemal, *Turkish Policy Over Central Asia*, - I C T S (Italian Center for Turkish Studies), Occasional Papers Series, № 01, 2008, pp. 1-36.
111. Ketcherside Robert, *Georgia: A Country Out of Control*, [www.zombiezodiac.com/rob/ps271.htm](http://www.zombiezodiac.com/rob/ps271.htm).
112. Kramer Heinz, *Will Central Asia Become Turkey's Sphere of Influence*, - Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, pp. 1-7.

113. Krylov Alexander, The Georgian-Abkhazian Conflict, <http://www.kapba.de/TheGeorgian-AbkhazianConflict.html>.
114. Larrabee Stephen, Turkish Foreign and Security Policy: New Dimensions and New Challenges, [www.rand.org/pubs/monograph\\_reports/MR1241/MR1241\\_chap3.pdf](http://www.rand.org/pubs/monograph_reports/MR1241/MR1241_chap3.pdf).
115. Libaridian Gerard J., Modern Armenia: People, Nation, State.- Chicago, Transaction Publishers, 2004, 327 p.
116. Maresca John J., Using Oil to Stop a Nasty War.- Journal of Commerce, 01.08.1994.
117. Mendelsohn Jack, "Stiff-Arming Russia, 51 Bulletin of the Atomic Scientists № 4, (August 1995)", in David Koplow, (ed.), Fire and Ice: Dismantling Chemical Weapons while Preserving the Environment.- Amsterdam, Gordon and Breach Publishers, 1997, 354 p.
118. Mesbahi Mohiaddin, Central Asia and the Caucasus after the Soviet Union Domestic and International Dynamics.- Gainesville: University Press of Florida, 1994, 353 p.
119. Micu Nicolae, Black Sea Economic Cooperation as a Confidence-Building Measure.- Perceptions: Journal of International Affairs, Volume I, December 1996-February 1997. pp. 1-5.
120. Migdalovitz Carol, Armenia-Azerbaijan Conflict.- CRS Issue Brief, Congressional Research Service: The Library of Congress, 2001, pp. 1-19.
121. Naegele Jolyon, Turkey: Foreign Policy Objectives- Part Two, RFE/RL, 13.08.1998, [www.b-info.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe](http://www.b-info.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe).
122. Neff Andrew, Is the Trans-Caspian Gas Pipeline Plan Dead or Just Premature?, [www.watan.ru/eng/view.php?number=1147&razd=new\\_nov\\_en&pg=21](http://www.watan.ru/eng/view.php?number=1147&razd=new_nov_en&pg=21).
123. Nodia Ghia, Georgian Perspectives, [www.abkhazia-georgia.parliament.ge/Publications/Georgian/ghia\\_nodia.htm](http://www.abkhazia-georgia.parliament.ge/Publications/Georgian/ghia_nodia.htm).
124. Ögütçü Mehmet, Caspian Energy "Poker Game" and Turkey: Prospects for a New Approach.- the CEPMLP Internet Journal, Volume 8, Abstract 5, April 2001, [www.dundee.ac.uk/cepmlp/journal/html/vol8/vol8-5.html](http://www.dundee.ac.uk/cepmlp/journal/html/vol8/vol8-5.html).
125. Ohmae Kenichi, The Rise of the Region State.- Foreign Affairs, Vol. 72, № 2, Council on Foreign Relations, Spring 1993, pp.78-87.
126. Oku Asim, Blue Stream Victory of Putin Over the USA, 20.11.2005, [www.axisglobe.com/article.asp?article=489](http://www.axisglobe.com/article.asp?article=489).
127. Olson Robert, Turkish and Russian Foreign Policies, 1991-1997: The Kurdish and Chechnya Questions.- Journal of Muslim Minority Affairs, Vol. 18, Issue 2, Routledge, October 1998, pp. 209-228.
128. Onis Ziya, Turkey and Post-Soviet States: Potential and Limits of Regional Power.- MERIA Volume 5, № 2, June 2001, pp. 66-74.
129. Oran Baskin, "The Turkish Approach to Transcaucasia and Central Asia", in Ole Hoiris and Sefa MartinYürükel (ed.), Contrasts and Solutions in the Caucasus.- Aarhus: Aarhus University Press, 1998, 490 p.
130. O'Rourke Breffni, East: New Black Sea Organization Sets Sail, RFE/RL, 11.06.1998: <http://www.b-info.com/places/Bulgaria/news/98-06/jun11a.rfe>.
131. Pauw De Freddy, Turkey's Policies in Transcaucasia, - Bruno Coppiters (ed.) Contested borders in the Caucasus, VUB University Press, 1996, <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0801.htm>.
132. Pipes Daniel, The Event of Our Era.- New York: Council on Foreign Relations Press, 1994, pp. 1-28, <http://www.danielpipes.org/article/242>.
133. Project: Blue Stream Natural Gas Pipeline, [www.rigzone.com/data/projects/project\\_detail.asp?project\\_id=86](http://www.rigzone.com/data/projects/project_detail.asp?project_id=86).
134. Robin Bhatti and Bronson Rachel, NATO's Mixed Signals in the Caucasus and Central Asia.- Survival, vol. 42, № 3, Routledge, Autumn 2000, pp.129-146.
135. Rosecrance Richard, Regionalism and the Post-Cold War Era.- International Journal, Vol. 46, № 3, Summer 1991, pp. 373-393.
136. Rubin Barry, Kirişçi Kemal, Turkey in World Politics: An Emerging Multiregional Power, Boulder, CO, Lynne Rienner Publishers, 2001, 270 p.
137. Sasley Brent, Turkey's Energy Politics in the Post-Cold War Era.- MERIA, Volume 2, № 4 - November 1998, pp. 1-9.
138. Sayari Sabri, Turkey: The Changing European Security Environment and the Gulf Crisis.- Middle East Journal, Vol. 46, No 1, Middle East Institute, Winter 1992, pp. 9-22.
139. Sezer Duygu B., From Hegemony to Pluralism: The Changing Politics of the Black Sea.- SAIS Review, vol. 17, № 1, Johns Hopkins University Press, Winter-Spring 1997, pp. 1-30.
140. Sezer Duygu B., Turkish- Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition.- Perceptions: Journal of International Affairs, Volume VI, March - May 2001, pp. 1-11.

141. SIPRI YEARBOOK 1995: Armaments, Disarmament and International Security.- Oxford: Oxford University Press, 1995, 920 p.
142. Smeets Riëks, Circassia.- Central Asian Survey, Vol. 14, № 1, Routledge, March 1995, pp. 107-125.
143. Smith Mark, Pax Russica: Russia's Monroe Doctrine.- London, Royal United Services Institute for Defence Studies, 1993, 69 p.
144. Szporluk Roman, National Identity and Ethnicity in Russia and the New States of Eurasia.- New York, ME. Sharpe, 1994, 328 p.
145. Tarkhan-Mouravi Gia, The Georgian-Abkhazian Conflict in a Regional Context, Chapter 6, Part 1, Vrije Universiteit Brussel, August 1998, pp. 1-25, <http://poli.vub.ac.be/publi/Georgians/notes.html>.
146. Töpses Özlem, Turkish Regulations Regarding Maritime Traffic in the Turkish Straits and Sea of Marmara, <http://www.mfa.gov.tr/grupi/maritime.htm>.
147. Torbakov Igor, Ankara's Post-Soviet Efforts in the Caucasus and Central Asia: The Failure of the "Turkic World" Model, [www.eurasianet.org/departments/insight/articles/eav122602\\_pr.shtml](http://www.eurasianet.org/departments/insight/articles/eav122602_pr.shtml).
148. Tuncer İdil, The Security Policies of the Russian Federation: The "Near Abroad" and Turkey.- Turkish Studies, vol. 1, № 2, Routledge, Autumn 2000, pp. 95-112.
149. Turkish Business in the BSEC Region. Direct Investments Contracting Services: Prospects for Cooperation.- Istanbul, Foreign Economic Relations Board of Turkey (DEİK), February 2005, pp. 1-22.
150. Tütüncü Mehmet, "The Caucasus Policy of Turkey (1990-97): An Evaluation", in Tütüncü, (ed.), Caucasus: War and Peace: The News World Disorder and Caucasia.- Haarlem: SOTA, 1998, 224 p.
151. US military history companion: CFE Treaty, [www.answers.com/topic/cfe-treaty](http://www.answers.com/topic/cfe-treaty).
152. Urazova Elena, Russia and Turkey's Eurasian integration processes.- Insight Turkey, vol. 4 Number 2, (April-June 2002), pp. 85-94.
153. Valinakis Yannis, The Black Sea Region: Challenges and Opportunities for Europe.- Paris: WEU Institute for Security Studies, Chailott Paper, № 36, July 1999. pp. 1-45.
154. Wennmann Achim, Renewed Armed Conflict in Georgia? Options for Peace Policy in a New Phase of Conflict Resolution.- Program for the Study of International Organization(s) Graduate Institute of International Studies, Geneva, PSIO Occasional Paper Number 3, May 2006, pp. 1-76.

155. Wesselink Egbert, The North Caucasian Diaspora in Turkey, <http://www.kapba.de/CaucasianDiaspora.html>.
156. Winrow Gareth M., Turkey and the Caucasus: Domestic Interests and Security Concerns.- London, Royal Institute of International Affairs, 2000, 67 p.
157. Winrow Gareth M., Turkey and Newly Independent States of Central Asia and Transcaucasus.- MERIA, Volume 1, № 2 - July 1997, pp. 1-10.
158. Winrow Gareth M., Turkey's relations with the Transcaucasus and the Central Asian republics.- Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, pp. 128-145.
159. Zaman Amberin, Azerbaijan Looks To Ankara.- The Middle East, № 213, July 1992, pp. 1-8.
160. Zverev Alexei, Icontested Borders in the Caucasus. Ethnic Conflicts in the Caucasus 1988-1994, Chapter 1, VUB University Press, 1996, <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0101.htm>.

#### ՊԱՐԵՐԱԿԱՆՆԵՐ

161. Ազգ. 1991–1992, 1995–1998, 2000.
162. Հայկական բանակ. 2006–2007.
163. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ. 2009.
164. Ժամանակ. 1995.
165. 21-րդ դար. 2003, 2005.
166. Akşam. 2001.
167. Cumhuriyet. 1992–1996, 2001–2002.
168. Gerçek. 1992.
169. Hürriyet. 1991–2000.
170. Marje. 1992.
171. Milliyet. 1991–1993, 1995, 1999–2002.
172. Radikal. 1997, 2000, 2001.
173. Sabah. 1993, 1995, 2000.
174. Star. 1999, 2002.
175. Tercüman. 1991.
176. Turkish Daily News. 1992, 1994–1996, 1998–2001.
177. Turkish Weekly. 2004.

178. Türkiye. 2000.
179. Türk Silahlı Kuvvetler Dergisi. 1995.
180. Yedi Yıldız. 1993–1994.
181. Yeni Safak. 2000, 2002.
182. Yeni Yüzyıl. 1996, 1998.
183. Zaman. 1995, 2000, 2001.
184. 525-ci gazetesi. 2002.
185. Аргументы и факты. 1991.
186. Зеркало. 1999.
187. Коммерсант. 2001.
188. Красная Звезда. 1992.
189. Литературная газета. 1994.
190. Независимая Газета. 1991.1992.1995–1996, 1998–1999.
191. Новое Время. 2001.
192. Российские вести. 1992.
193. Свободная Грузия. 1992.
194. Caspian Crossroads Magazine. 1997.
195. CEPMLP Internet Journal. 2001.
196. Central Asian Survey.1994–1996.
197. Chicago Tribune. 1992.
198. FBIS-SOV. 1996, 2000.
199. Financial Times. 1998.
200. Foreign Policy. 1993.
201. International Herald Tribune. 1998.
202. International Journal. 1991.
203. Insight Turkey. 2002.
204. Jamestown Monitor. 1996.
205. Journal of Commerce. 1994.
206. Journal of Muslim Minority Affairs. 1998.
207. Journal of South Asian and Middle Eastern Studies. 1997.
208. Journal of Third World Studies. 2001.
209. Marco Polo Magazine. 1998.
210. Middle East Quarterly. 2009.
211. Middle East Review of International Affairs Journal (MERIA). 1997–1998, 2001.
212. Middle Eastern Studies. 1998.

208

213. Perceptions: Journal of International Affairs. 1996–1999, 2001–2002, 2005.
214. PULSE of Turkey. 1998.
215. Survival. 2000.
216. The Guardian. 1998.
217. The Middle East Journal. 1992.
218. The New York Times. 1997, 1999.
219. The Wall Street Journal Europe. 2000.
220. Transition. 1996.
221. Turkish Studies. 2000.

#### ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

222. Արմենպրես գործակալություն
223. Մեդիամաքս գործակալություն
224. Anadolu news agency.1992.1998, 2001.
225. Turan. 1994, 2001.
226. ИТАР-ТАСС. 1995.1998.
227. Интерфакс. 2000.
228. Agence France-Presse. 1969.
229. Associated Press. 2005.
230. Caspian news agency. 2001.
231. Reuters. 1994.
232. RFE/RL. 1998.

#### ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅԹԵՐ

233. [www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintarihi/1997/nisan1997.htm](http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintarihi/1997/nisan1997.htm)
234. [www.btc.com.tr](http://www.btc.com.tr)
235. [www.mfa.gov.tr/grupa/af/Bsec7.htm](http://www.mfa.gov.tr/grupa/af/Bsec7.htm)
236. [www.mfa.gov.tr/grupa/af/bsec10.htm](http://www.mfa.gov.tr/grupa/af/bsec10.htm)
237. [www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintarihi/1996/araik1996.htm](http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ayintarihi/1996/araik1996.htm)
238. [www.tabde.org](http://www.tabde.org)
239. [www.gazprom.com/eng/articles/article8895.shtml](http://www.gazprom.com/eng/articles/article8895.shtml)
240. [www.eia.doe.gov/emcu/cabs/caspase.html](http://www.eia.doe.gov/emcu/cabs/caspase.html)

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԱՌԱՋԱԲԱՆ.....5

**ԳԼՈՒԽ 1**  
 ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐՏԱԹԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
 ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽՍՀՄ ՓԼՈՒՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ..... 13

**ԳԼՈՒԽ 2**  
 ԹՈՒՐԹԻԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ 1995-2001 ԹԹ.  
 (ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՊԵԿՏ).....75

**ԳԼՈՒԽ 3**  
 ԹՈՒՐԹ-ՈՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԿԱՅԻՆ  
 ԿՈՎԿԱՍԸ 1991-2001 ԹԹ..... 112

**ԳԼՈՒԽ 4**  
 ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
 ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ..... 146

ՎԵՐՋԱԲԱՆ.....181

RESUME.....187

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....195

ԳՐԻԳՈՐ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՐՇԱԿՅԱՆ

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
 ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
 1991-2001 ԹԹ.**

Գիրքը տպագրվում է հեղինակի ֆինանսավորմամբ

Խմբագիրներ՝ Ա.Ա. Եղիազարյան  
 Գ.Կ. Վարդանյան  
 Համակարգչային ձևավորող՝ Ն.Օ. Խնկիկյան

Համընկված է տպագրության 23.11.2009 թ.:  
 Օպիսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթը՝ օլիսեր № 1, 80 գ:  
 Տպագր. 13.25 մամուլ: Տպարանակ՝ 500:  
 Գինը պայմանագրային:  
 ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն  
 Բաղրանյան 24գ:



ԳՐԻԳՈՐ ՄԻՔԱՅԵԼԻ  
ԱՐԵՆԱԿՅԱՆ

32106  
+ 24-  
հղ

Գ. Արշակյանը 1999-2005թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

2005-2008թթ. սովորել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում:  
Հարավային Կովկասում Թուրքիայի վարած քաղաքականության (1991-2001թթ.) վերաբերյալ 2008թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:  
Հեղինակ է շուրջ երկու տասնյակ գիտական հոդվածների և զեկուցումների:

Ներկայումս ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս է:

Շարունակելով գիտահետազոտական գործունեությունը՝ հեղինակը նախապատրաստում է Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ դոկտորական ատենախոսություն: